

Հավելված  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
օգոստոսի 27-ի N 1411 - Լ որոշման

**«Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախտորյան գետ,  
փուլ 1» ծրագրի շրջանակներում Հողերի ձեռքբերման և  
վերաբնակեցման գործողությունների պլան**



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |      |
|---|------|
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....  | II   |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....   | XI   |
| ՆԱԽԱԲԱՆ.....  | XIII |
| ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ .....  | 1    |
| ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ .....  | 4    |
| 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....  | 10   |
| 1.1 Ծրագրի նախապատմությունը.....  | 11   |
| 1.2 Ծրագրի նկարագրությունը .....  | 12   |
| 1.3 Աշխատանքների նկարագրությունը.....   | 13   |
| 1.4 Ծրագրի ազդեցության տարածքներ .....  | 15   |
| 2. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ.....  | 19   |
| 2.1 Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման հետ կապված սկզբունքները / նպատակները .....             | 19   |
| 2.2 Ազգային օրենսդրության շրջանակը.....   | 20   |
| 2.3 ՀՀ օրենսդրության և հարկադիր վերաբնակեցման վերաբերյալ Բանկի չափանիշների համեմատական աղյուսակ ..... | 28   |
| 2.4 Բացերի/տարբերությունների վերլուծություն .....   | 39   |
| 3. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ .....   | 40   |
| 3.1 Շահառուների ներգրավման պլան .....   | 40   |
| 3.2 Տեղեկատվության հրապարակում .....  | 41   |
| 3.3 Հանրային լսումներ/խորհրդատվություններ .....   | 41   |
| 3.3.1 Հանրային լսումներ ՀԶՎԳՊ մշակման փուլում .....   | 42   |
| 3.3.2 Այլ խորհրդատվական հանդիպումներ .....  | 45   |
| 3.4 Հանրային լսումներ/խորհրդատվություններ ՀԶՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում .....         | 45   |
| 4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....  | 46   |
| 4.1 Ներածություն.....   | 46   |
| 4.2 Ուսումնասիրության մեթոդոլոգիան .....  | 47   |
| 4.3 Բնակավայրի նկարագիրը.....   | 48   |
| 4.3.1 Բնակավայրի տարածքը .....  | 48   |



|             |  |           |
|-------------|--|-----------|
| 4.3.2       | Տնտեսական նկարագիր.....  | 49        |
| 4.3.3       | Ոլորտային ենթակառուցվածք.....  | 52        |
| <b>4.4</b>  | <b>Ազդակիր տնային տնտեսություններն ու նրանց կենսամակարդակը .....</b> | <b>52</b> |
| 4.4.1       | Ընդհանուր բնութագիր .....  | 52        |
| 4.4.2       | Զբաղվածություն .....   | 55        |
| 4.4.3       | Աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա ազդեցությունը.....        | 58        |
| 4.4.4       | Խիստ ազդեցություն .....  | 60        |
| 4.4.5       | Կենսապայմանները .....  | 60        |
| 4.4.6       | Կենցաղային ծախսեր.....   | 61        |
| <b>4.5</b>  | <b>Ծրագրի Ազդեցությունը հողի վրա .....</b>                           | <b>63</b> |
| 4.5.1       | Ազդեցություն հողի վրա՝ տարբերակ մեկ .....                            | 63        |
| 4.5.2       | Ազդեցություն հողի վրա՝ տարբերակ երկու.....                           | 64        |
| <b>4.6</b>  | <b>Ազդեցություն մշակաբույսերի վրա.....</b>                           | <b>65</b> |
| 4.6.1       | Ազդեցություն մշակաբույսերի վրա՝ տարբերակ մեկ .....                   | 65        |
| 4.6.2       | Ազդեցություն մշակաբույսերի վրա՝ տարբերակ երկու.....                  | 66        |
| <b>4.7</b>  | <b>Ազդեցություն ծառերի և թփերի վրա .....</b>                         | <b>66</b> |
| <b>4.8</b>  | <b>Ազդեցություն շինությունների վրա.....</b>                          | <b>67</b> |
| <b>4.9</b>  | <b>Աշխատանքի մշտական կորուստ.....</b>                                | <b>68</b> |
| <b>4.10</b> | <b>Ազդեցությունը էկոհամակարգի ծառայությունների վրա .....</b>         | <b>69</b> |
| <b>4.11</b> | <b>Ազդեցություն մշակութային ժառանգության վրա .....</b>               | <b>69</b> |
| <b>5.</b>   | <b>ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ.....</b>                        | <b>71</b> |
| <b>5.1</b>  | <b>Իրավասություն.....</b>  | <b>71</b> |
| <b>5.2</b>  | <b>Փոխհատուցման իրավունքի շրջանակը .....</b>                         | <b>71</b> |
| 5.2.1       | Հողի կորուստ.....  | 72        |
| 5.2.2       | Մասնավոր շինություններ .....   | 74        |
| 5.2.3       | Հանրային սեփականության կորուստ.....                                  | 75        |
| 5.2.4       | Մշակաբույսերի/բերքի կորուստ.....                                     | 75        |
| 5.2.5       | Ծառերի և բերքի կորուստ .....   | 75        |
| 5.2.6       | Ձեռնարկատիրական գործունեության ընդհատում.....                        | 76        |
| 5.2.7       | Ժամանակավոր ազդեցություն .....                                       | 76        |
| 5.2.8       | Չնախատեսված ՀՁՎ ազդեցություններ, եթե այդպիսիք կան .....              | 77        |
| 5.2.9       | Բարելավումների համար փոխհատուցում .....                              | 77        |

|            |   |            |
|------------|---|------------|
| 5.2.10     | Գույքի հասանելիության կորուստ.....  | 77         |
| 5.2.11     | Լրացուցիչ օժանդակություն.....   | 77         |
| 5.2.12     | Վերաբնակեցման և կենսամակարդակի վերականգնման միջոցառումներ.....                              | 77         |
| <b>5.3</b> | <b>Բնակարանային շինարարության պետական ծրագրերում գրանցված ԱԱ/ԱՏՏ-երին փոխհատուցում.....</b> | <b>78</b>  |
| 5.4        | Գույքի գնահատման մեթոդները.....   | 79         |
| 5.5        | Իրավունքի և փոխհատուցման մատրիցա .....  | 79         |
| <b>6.</b>  | <b>ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....</b>  | <b>86</b>  |
| 6.1        | Վերաբնակեցման տեղանքը.....  | 86         |
| 6.2        | ԲՍԱԳ պահանջները .....   | 87         |
| <b>7.</b>  | <b>ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....</b>                    | <b>89</b>  |
| 7.1        | Ներածություն.....   | 89         |
| 7.2        | Կենսաապահովման միջոցների վերականգնման պլանի մշակման հիմնական սկզբունքները .....             | 90         |
| 7.3        | Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների հատկորոշման ընթացակարգը ..... | 90         |
| 7.4        | Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված ծրագրեր.....                                 | 91         |
| 7.4.1.     | Անցումային աջակցություն.....  | 92         |
| 7.4.2.     | Տեխնիկական կարողությունների զարգացում.....  | 93         |
| 7.4.3.     | Զբաղվածություն և հմտությունների զարգացում.....  | 94         |
| 7.4.4.     | Խոցելի տնային տնտեսություններին տրամադրվող աջակցություն.....                                | 96         |
| <b>8.</b>  | <b>ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....</b>           | <b>98</b>  |
| 8.1.       | Կենսաապահովման ծրագրի մոտեցումը .....   | 99         |
| 8.2.       | Տնտեսական զարգացման հնարավորությունը.....   | 100        |
| 8.3.       | Համայնքի կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներ .....                 | 101        |
| 8.3.1      | Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներ .....                          | 101        |
| 8.3.2      | Ներառականության ապահովմանն ուղղված միջոցառումներ .....                                      | 102        |
| 8.3.3      | Ճանապարհային ենթակառուցվածքների բարելավում.....   | 102        |
| 8.3.4      | Համայնքի այլ ենթակառուցվածքներ / հարմարություններ.....                                      | 103        |
| 8.3.5      | Կադաստրային քարտեզների ուղղում.....   | 103        |
| <b>9.</b>  | <b>ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ.....</b>   | <b>105</b> |

|         |  |     |
|---------|--|-----|
| 9.1     | Բողոքների կարգավորման մեխանիզմների նպատակը .....                               | 105 |
| 9.2     | Բողոքարկման ընթացակարգը.....   | 105 |
| 9.2.1   | Քայլ առաջին .....  | 106 |
| 9.2.2   | Քայլ երկրորդ.....  | 107 |
| 9.2.3   | Քայլ երրորդ.....   | 107 |
| 10.     | ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ .....                        | 111 |
| 10.1    | Ընդհանուր նկարագիր .....   | 111 |
| 10.2    | Առաջընթացի և կատարողականի մշտադիտարկում/ներքին մշտադիտարկման ցուցանիշները..... | 112 |
| 10.3    | Արդյունքների մշտադիտարկում և գնահատում/Արտաքին մշտադիտարկման ցուցանիշներ ..... | 113 |
| 11.     | ՀՁՎԳԴ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ .....                                 | 115 |
| 11.1    | Ինստիտուցիոնալ շրջանակ .....   | 115 |
| 11.2    | Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ և խորհրդատուներ.....                   | 115 |
| 11.3    | Շահագրգիռ կողմեր.....  | 118 |
| 11.4    | ՀՁՎԳԴ կարողությունների զարգացում .....   | 122 |
| 12.     | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ.....  | 123 |
| 12.1    | Նախապատմություն .....  | 123 |
| 12.2    | Տարբերակ մեկ՝ միայն դրամական փոխհատուցում.....                                 | 124 |
| 12.2.1  | Հողի դիմաց փոխհատուցում .....  | 124 |
| 12.2.2  | Շինությունների փոխհատուցում.....   | 126 |
| 12.2.3  | Մշակաբույսերի դիմաց փոխհատուցում .....   | 130 |
| 12.2.4  | Ծառերի դիմաց փոխհատուցում .....  | 130 |
| 12.2.5  | Գրանցման ծախսերի փոխհատուցում.....   | 132 |
| 12.2.6  | Տեղափոխման և կենսաապահովման միջոցների վերականգնման օժանդակություններ .....     | 133 |
| 12.2.7  | Ձեռնարկատիրական գործունեության դադարեցման փոխհատուցում.....                    | 135 |
| 12.2.8  | Ազդակիր տարածքներում պլանավորված ՓՀԷԿ-եր .....                                 | 135 |
| 12.2.9  | Աշխատանքի կորստի դիմաց օժանդակություն.....                                     | 137 |
| 12.2.10 | Համայնքի կենսաապահովման միջոցառումներ .....                                    | 138 |
| 12.2.11 | ՀՁՎԳԴ-ի իրականացման խորհրդատվական ծառայություններ.....                         | 138 |
| 12.2.12 | ՀՏԶՀ անձնակազմի կարողությունների զարգացում.....                                | 139 |
| 12.2.13 | Բյուջեի ամփոփում՝ տարբերակ մեկ.....  | 139 |

|   |     |
|---|-----|
| <b>12.3 Տարբերակ երկու (Նոր գյուղի կառուցում)</b> .....   | 140 |
| 12.3.1 Գյուղի կառուցման ծախսեր.....   | 140 |
| 12.3.2 Հողի դիմաց փոխհատուցում (տարբերակ երկու) .....   | 142 |
| 12.3.3 Մշակաբույսերի դիմաց փոխհատուցում (տարբերակ երկու).....   | 145 |
| 12.3.4 Գրանցման ծախսերի և հարկերի փոխհատուցում (տարբերակ երկու) .....   | 145 |
| 12.3.5 Տեղափոխման և կենսաապահովման միջոցների վերականգնման<br>օժանդակություններ (երկրորդ տարբերակ).....  | 146 |
| 12.3.6 Կաթի արտադրության կոոպերատիվ և հավաքման կետ .....  | 147 |
| 12.3.7 ՀԶՎԳՊ-ի իրականացման խորհրդատվական ծառայություններ.....   | 148 |
| 12.3.8 Բյուջեի ամփոփում՝ տարբերակ երկու.....  | 148 |
| <b>13. ՀԶՎԳՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ</b> .....   | 150 |
| 13.1 ՀԶՎԳՊ-ի իրականացման հիմնական փուլերը.....  | 150 |
| 13.2 Իրականացման ժամանակացույց .....  | 153 |
| <b>14. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b> .....  | 156 |
| <b>15. ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ՝ ԿԱՊՍ ՊԱՏՆԵՇԻ ԵՎ ԶՐԱՄԲԱՐԻ ՔԱՐՏԵԶ՝ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ<br/>ՄԱԿԱՐԴԱԿ (ՓՈՒԼ 1)</b> .....  | 158 |
| <b>16. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒ՝ ԾՐԱԳՐԻ ԱԶԴԱԿԻՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ</b> .....   | 159 |
| <b>17. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> ....   | 161 |
| <b>18. ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՍ՝ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ<br/>ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ</b> .....   | 175 |
| <b>19. ՀԱՎԵԼՎԱԾ ՀԻՆԳ՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....  | 185 |
| <b>20. ՀԱՎԵԼՎԱԾ ՎԵՑ՝ ԱՐՏԱՔԻՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ<br/>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ</b> .....  | 200 |
| <b>21. ՀԱՎԵԼՎԱԾ ՅՈՒԹ՝ ՀԶՎԳՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ<br/>ԱՌԱՋԱԴՐԱՆՔ</b> .....   | 205 |
| <b>22. ՀԱՎԵԼՎԱԾ ՈՒԹ՝ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ</b> .....   | 220 |
| <b>23. ՀԱՎԵԼՎԱԾ ԻՆԸ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ</b> .....   | 222 |
| <b>24. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍ՝ ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԳՈՒՅՔԵՐԻ ՑՈՒՑԱԿ</b> .....  | 224 |
| <b>25. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍՆՄԵԿ՝ ՀԶՎԳՊ ՇՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ<br/>ԿՆՔՄԱՆ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՏԱՆ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ<br/>ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ</b> ..... | 268 |
| <b>26. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍՆԵՐԿՈՒ՝ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐ</b> .....   | 292 |
| <b>27. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍՆԵՐԵՔ՝ ԿԱՄՈՒՐՁԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐ</b> .....   | 295 |
| <b>28. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍՆՉՈՐՍ՝ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b> .....   | 297 |

## Գծապատկերների Ցանկը

|  |     |
|--|-----|
| Գծապատկեր 1: Կապսի պատվարի տեղադիրքը .....   | 13  |
| Գծապատկեր 2: Կապսի պատվարի և ջրամբարի առավելագույն ընդլայնման քարտեզը (փուլ 1) ..... | 14  |
| Գծապատկեր 3: Ծրագրի ազդեցության տարածքներ.....                                       | 18  |
| Գծապատկեր 4: Ազգային օտարման գործընթացի ընթացքի աղյուսակը .....                      | 24  |
| Գծապատկեր 5: Բնակավայրի հողերի դասակարգումը.....                                     | 49  |
| Գծապատկեր 6: Համայնքի բնակչության հիմնական զբաղվածության ոլորտները.....              | 50  |
| Գծապատկեր 7: Տնտեսության հիմնական ճյուղերը .....                                     | 51  |
| Գծապատկեր 8: ԱՏՏ-ների միջին ամսական ծախսերը (%) .....                                | 62  |
| Գծապատկեր 9: Զրաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող վերաբնակեցման տարածքը.....      | 86  |
| Գծապատկեր 10: Բողոքների կարգավորման մեխանիզմը.....                                   | 110 |
| Գծապատկեր 11: Ներգրավված հաստատությունների կառուցվածքի դիագրամ .....                 | 122 |

## Աղյուսակների Ցանկը

|  |    |
|--|----|
| Աղյուսակ 1: Ազդեցությունների համառոտ նկարագիր .....  | 17 |
| Աղյուսակ 2: Հանրային լուսմներին մասնակցած ԱԱ-ների թիվը՝ ըստ համայնքների.....                   | 43 |
| Աղյուսակ 3: ԱԱ-ների կողմից բարձրաձայնված հիմնական հարցերն ու մտահոգությունները .....           | 44 |
| Աղյուսակ 4: Մարդահամարում և ՄՏՈՒ-ում ընդգրկված ԱԱ/ԱՏՏ-ները .....                               | 48 |
| Աղյուսակ 5: Զրաձորի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը .....                                  | 51 |
| Աղյուսակ 6: Ազդակիր անձանց գենդերային բաշխումը.....  | 52 |
| Աղյուսակ 7: ԱՏՏ-ների ղեկավարների և անդամների գենդերային բաշխումը.....                          | 52 |
| Աղյուսակ 8: ԱՏՏ-ների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելիության.....                                | 53 |
| Աղյուսակ 9: Ազդակիր ԱՏՏ-ների ղեկավարների և ԱՏՏ-ների անդամների տարիքը.....                      | 53 |
| Աղյուսակ 10: ԱՏՏ-ների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի.....  | 53 |
| Աղյուսակ 11: ԱՏՏ-ների ղեկավարների ամուսնական կարգավիճակը.....                                  | 54 |
| Աղյուսակ 12: ԱՏՏ-ների ղեկավարների և անդամների կրթական մակարդակը (16 տարեկան և բարձր).....      | 54 |
| Աղյուսակ 13: ԱՏՏ ղեկավարների և անդամների կրթական մակարդակը՝ ըստ սեռի (16 տարեկան և բարձր)..... | 54 |
| Աղյուսակ 14: ԱՏՏ ղեկավարների և անդամների աշխատանքային/զբաղվածության կարգավիճակը (16+).....     | 55 |
| Աղյուսակ 15: ԱԱ-ների առաջնային զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի (16+) .....                 | 56 |
| Աղյուսակ 16: Զբաղվածության տեսակը.....   | 57 |
| Աղյուսակ 17: Ազդակիր ԱՏՏ-ների կողմից նշված ամսական եկամուտը .....                              | 57 |

|   |     |
|---|-----|
| Աղյուսակ 18: ԱՏՏ-երի կողմից նշված ԱՏՏ-ի և անհատների եկամուտը՝ ըստ եկամտի աղբյուրի (<< դրամ).....                        | 57  |
| Աղյուսակ 19: Տնային կենդանիների բուծում.....  | 58  |
| Աղյուսակ 20: Խոցելի ԱՏՏ-ները՝ ըստ խոցելիության տեսակի .....   | 58  |
| Աղյուսակ 21: Ազդակիր ԱՏՏ-ները՝ ըստ աղքատության կարգավիճակի՝ հիմք ընդունելով ԱԱ-ների հայտարարված եկամտի չափը.....        | 59  |
| Աղյուսակ 22: Խիստ ազդեցություն .....  | 60  |
| Աղյուսակ 23: Կենսապայմաններն ու շինությունների կարգավիճակը.....   | 60  |
| Աղյուսակ 24: Կոմունալ ծառայությունների առկայություն.....  | 61  |
| Աղյուսակ 25: Տները տաքացնելու էներգիայի աղբյուրը .....  | 61  |
| Աղյուսակ 26: ԱՏՏ-ների միջին ամսական ծախսերը.....  | 61  |
| Աղյուսակ 27: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ բնակավայրերի (Տարբերակ 1) .....  | 63  |
| Աղյուսակ 28: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի (Տարբերակ 1) .....                                      | 63  |
| Աղյուսակ 29: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ բնակավայրերի (Տարբերակ 2) .....  | 64  |
| Աղյուսակ 30: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի (Տարբերակ 2) .....                                      | 64  |
| Աղյուսակ 31: Ընդամենը ազդեցություն հողերի վրա, ըստ բնակավայրերի (Տարբերակ 2)..  | 65  |
| Աղյուսակ 32: Ազդակիր մշակաբույսեր.....  | 66  |
| Աղյուսակ 33: Ազդակիր մշակաբույսեր .....   | 66  |
| Աղյուսակ 34: Բերքատու ծառեր և թփատեսակներ.....  | 66  |
| Աղյուսակ 35: Փայտանյութ տվող ծառերի տեսակը և քանակը.....  | 67  |
| Աղյուսակ 36: Դեկորատիվ Ծառերի Տեսակը և Քանակը .....   | 67  |
| Աղյուսակ 37: Ազդակիր շինություններ.....   | 67  |
| Աղյուսակ 38: Ազդակիր այլ բարելավումներ.....   | 68  |
| Աղյուսակ 39: Հողի վրա առկա տեղափոխման ենթակա (շարժական) գույք.....  | 68  |
| Աղյուսակ 40: ԱՏՏ նախասիրությունները փոխհատուցման տարբերակի վերաբերյալ .....   | 86  |
| Աղյուսակ 41: ԱՏՏ նախասիրությունները վերաբնակեցման տեղանքի վերաբերյալ .....  | 87  |
| Աղյուսակ 42: Զբաղվածության աջակցության տեսակները .....  | 95  |
| Աղյուսակ 43: Եկամտի աճի հնարավորությունները* .....  | 101 |
| Աղյուսակ 44: ՀԶՎԳՊ մշակման ընթացքում ստացված բողոքների ամփոփում .....   | 108 |
| Աղյուսակ 45: Ծրագրի իրականացնող կազմակերպություններ .....   | 116 |
| Աղյուսակ 46: Շահագրգիռ կողմերի մատրիցա .....  | 118 |
| Աղյուսակ 47: Մասնավոր գրանցված կամ առանց գրանցման հողամասերի փոխհատուցման արժեքը .....                                  | 124 |
| Աղյուսակ 48: Համայնքային գրանցված կամ պետական գրանցում չունեցող հողամասերի փոխհատուցման արժեքը.....                     | 125 |
| Աղյուսակ 49: Հողի վարձակալության և ենթավարձակալության փոխհատուցման արժեքը .....   | 126 |
| Աղյուսակ 50: Ազդեցության ենթակա շինությունների փոխհատուցման հաշվարկ.....  | 127 |
| Աղյուսակ 51: Էլեկտրամատակարարման վերականգնում (Վիվասել-ՄՏՍ-ի բջջային կայան և <<Աշոցք>> ՍՊԸ՝ հանրային սննդի օբյեկտ)..... | 128 |
| Աղյուսակ 52: ՀԶՎԳՊ-ի շրջանակներում փոխհատուցման (փոխարինման արժեք) և Պետական ծրագրով փոխհատուցման համեմատություն.....   | 128 |

|  |     |
|--|-----|
| Աղյուսակ 53: Բարելավումների համար փոխհատուցում.....  | 129 |
| Աղյուսակ 54: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցման արժեքը .....   | 130 |
| Աղյուսակ 55: Տնկիների փոխհատուցման արժեքը .....  | 130 |
| Աղյուսակ 56: Ոչ-բերքատու մրգատու ծառերի փոխհատուցման արժեքները .....   | 130 |
| Աղյուսակ 57: Բերքատու մրգատու ծառերի փոխհատուցման արժեքները .....  | 131 |
| Աղյուսակ 58: Դեկորատիվ ծառերի փոխհատուցման արժեքները.....  | 132 |
| Աղյուսակ 59: Փայտանյութ տվող ծառերի փոխհատուցման արժեքները .....   | 132 |
| Աղյուսակ 60: Ամբողջությամբ ձեռքբերվող գյուղատնտեսական հողերի գրանցման<br>ծախսերը.....  | 132 |
| Աղյուսակ 61: Մասնակի ձեռքբերվող գյուղատնտեսական հողերի գրանցման ծախսերը ..   | 133 |
| Աղյուսակ 62: Ամբողջությամբ ձեռքբերվող բնակավայրերի և էներգետիկ նշանակության<br>հողերի գրանցման ծախսերը .....                                       | 133 |
| Աղյուսակ 63: Օժանդակություն շարժական կառույցների և գույքի տեղափոխման ծախսերը<br>հոգալու համար .....  | 134 |
| Աղյուսակ 64: Խիստ ազդեցության դիմաց օժանդակություն.....  | 134 |
| Աղյուսակ 65: Դրամական աջակցություն սոցիալապես խոցելի խմբերին .....   | 134 |
| Աղյուսակ 66: Ձեռնարկատիրական գործունեության դադարեցման փոխհատուցում .....  | 135 |
| Աղյուսակ 67: Ազդակիր ընկերությունների (պլանավորված ՓՀԷԿ-եր) կատարած ծախսերի<br>հաշվարկ.....  | 136 |
| Աղյուսակ 68: Աշխատանքի կորստի դիմաց օժանդակություն՝ «Լեռքար» ՍՊԸ.....  | 137 |
| Աղյուսակ 69: Սիլոսահավաք կոմբայնի ձեռքբերման բյուջե.....   | 138 |
| Աղյուսակ 70: Խորհրդատվական ծառայությունների բյուջեն .....  | 139 |
| Աղյուսակ 71: Բյուջեի ամփոփում. առաջին տարբերակ.....  | 140 |
| Աղյուսակ 72: Գյուղի Վերաբնակեցման վայրում վերակառուցման բյուջե.....  | 141 |
| Աղյուսակ 73: Ազդակիր տնամերձ հողամասերի և Նոր Զրաձորում փոխարինող<br>հողամասերի տարբերության փոխհատուցում.....                                     | 143 |
| Աղյուսակ 74: Մասնավոր գրանցված և պետական գրանցում չունեցող հողերի կորստի<br>փոխհատուցման արժեքը (երկրորդ տարբերակ).....                            | 143 |
| Աղյուսակ 75: Համայնքային գրանցված և պետական գրանցում չունեցող հողերի<br>ձեռքբերման բյուջե՝ հաշվարկված կադաստրային արժեքով (երկրորդ տարբերակ) ..... | 144 |
| Աղյուսակ 76: Մշակաբույսերի դիմաց փոխհատուցման գումարը.....   | 145 |
| Աղյուսակ 77: Ամբողջությամբ ձեռքբերվող գյուղատնտեսական հողերի գրանցման ծախսերը<br>(ներառյալ գյուղի վերաբնակեցման տարածքը).....                      | 145 |
| Աղյուսակ 78: Մասնավոր ձեռքբերվող գյուղատնտեսական հողերի գրանցման ծախսերը   | 145 |
| Աղյուսակ 79: Բնակավայրերի (առանց տների հողեր) և էներգետիկ նշանակության հողերի<br>գրանցման ծախսերը .....  | 146 |
| Աղյուսակ 80: Փոխարինվող բնակավայրերի (տներով հողեր) հողերի գրանցման ծախսերը<br>.....   | 146 |
| Աղյուսակ 81: Փոխհատուցում շարժական գույքի տեղափոխման ծախսերը հոգալու համար<br>(տարբերակ երկու).....  | 147 |
| Աղյուսակ 82: Խիստ ազդեցության դիմաց օժանդակություն (երկրորդ տարբերակ).....   | 147 |



|   |     |
|---|-----|
| Աղյուսակ 83: Կոոպերատիվի սարքավորումների (ներառյալ կաթի հավաքման կետի)<br>ձեռքբերման և տեղադրման բյուջե ..... | 147 |
| Աղյուսակ 84: Խորհրդատվական ծառայությունների բյուջեն .....   | 148 |
| Աղյուսակ 85: Բյուջեի ամփոփում (տարբերակ երկու) .....  | 148 |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

|          |  |
|----------|--|
| ԱԱ       | Ազդակիր անձ  |
| ԱՏՏ/ՏՏ   | Ազդակիր տնային տնտեսություն                                      |
| ՀՏԶՀ     | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ                         |
| ԿԿ       | Կադաստրի կոմիտե  |
| ՔՇԿ      | Քաղաքաշինության կոմիտե   |
| ՇԿ       | Շինարարության կապալառու  |
| ՀՄԱ      | Համայնքի մրցակցային առավելություն                                |
| CES/ՑԵՍ  | «Consulting Engineer Salzgitter GmbH» խորհրդատվական ընկերություն |
| ՄՉՈՒ     | Մանրամասն չափագրման ուսումնասիրություն                           |
| ԲՍԱԳ     | Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատական                |
| ԲՍԿՊ     | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան                       |
| ԲՍԿՄՊ    | Բնապահպանական և սոցիալական կառավարման և մոնիթորինգի պլանի        |
| «KFW»    | «KFW» Վերակառուցման և զարգացման գերմանական բանկ                  |
| ՀՆԱ      | Համախառն ներքին արդյունք   |
| ԲԿՄ      | Բողոքների կարգավորման մեխանիզմ                                   |
| ԶՌՀԿ     | Զրային ռեսուրսների համատեղված կառավարում                         |
| ՄՖԿ      | Միջազգային ֆինանսական Կառույց                                    |
| ՄՖԿ ԻՍ   | Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի Իրականացման Ստանդարտ          |
| ՀԶՎԳՊ    | Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլան (=ՎԳՊ)  |
| ՀԶՎԳՊ ԻԽ | ՀԶՎԳՊ Իրականացման խորհրդատու                                     |
| ԱՄԽ      | Արտաքին մշտադիտարկման խորհրդատու                                 |
| ԿՎՄ      | Կենսաապահովման միջոցների վերականգնման միջոցառումներ              |
| ԿՎՊ      | Կենսաապահովման միջոցների վերականգնման պլան                       |
| ՏԻՄ      | Տեղական ինքնակառավարման մարմին                                   |
| ՏՏ       | Տնային տնտեսություն  |
| ՀՈԶ      | Հիմնական ոռոգման ջրանցք  |
| ՏԿԵՆ     | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն     |
| ԱՍՀՆ     | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն                 |
| ՇՄՆ      | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն                               |
| ՃՇՀԱՀ    | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան    |
| ՀԿ       | Հասարակական կազմակերպություն                                     |
| ԳՔ       | Գործառնական քաղաքականություն (Համաշխարհային բանկ)                |
| ՓՀ       | Փորձագետների հանձնախումբ   |
| ԾԳՄ      | Ծրագրի գործադիր մարմին   |
| ՀՀ       | Հայաստանի Հանրապետություն  |
| ՎՔՇ      | Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ                            |

|        |   |
|--------|---|
| ՇՆՊ    | Շահառուների ներգրավման պլան (=ՇԿՆՊ)                               |
| ԶԿ     | Զրային կոմիտե   |
| ՊՈԱԿ   | Պետական ոչ-առևտրային կազմակերպություն                             |
| ՏԱ     | Տեխնիկական առաջադրանք   |
| ՏՕԿԿՈՒ | Տիրապետման և օգտագործման հարցերի կարգավորման կամավոր ուղեցույցներ |
| ՊՀՀ    | Պատվարների համաշխարհային հանձնաժողով                              |
| ԶՏԾԻԳ  | Զրային տնտեսության ծրագրի իրականացման գրասենյակ                   |
| ԶՏԾԻՄ  | ՀՏԶՀ Զրային տնտեսության ծրագրի իրականացման մասնաճյուղ             |
| ԶՕԸ    | Զրօգտագործողների ընկերություն                                     |
| ՀԲ     | Համաշխարհային բանկ  |

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը սահմանում է Հողերի ձեռքբերումն ու վերաբնակեցման գործողությունների պլանը (ՀՁՎԳՊ), որը մշակվել է «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում/Ախտորյան գետ» ծրագրի շրջանակներում: Այն նկարագրում է Ֆիխստեռ գերմանական ընկերության, իր խորհրդատուների և Ծրագրի շահառուների կողմից իրականացված վերաբնակեցման ինտենսիվ պլանավորման արդյունքները: Փաստաթղթում ներառվել են այն պարտավարությունները, ընթացակարգերը և գործողությունները, որոնք իրականացվելու են Ծրագրի ազդակիր անձանց, տնային տնտեսություններին վերաբնակեցնելու և փոխհատուցումներ տրամադրելու ուղղությամբ՝ համաձայն Համաշխարհային բանկի խմբի կողմից կիրառելի հարկադիր վերաբնակեցման վերաբերյալ քաղաքականության (ԳՔ 4.12 և ՄՖԿ ԻՍ 5) և ՀՀ օրենսդրության:

Սույն ՀՁՎԳՊ-ն մշակվել է Ֆիխստեռ ընկերության կողմից լիազորված «Ի Էյ Էներջի Ըդվայզըրի» ՍՊԸ-ի կողմից, Ջրային կոմիտեի ԶՏԾԻԳ-ի, այնուհետև ՀՏՀՀ-ի հետ սերտ համագործակցությամբ: Սույն ՀՁՎԳՊ-ն արտացոլում է 2019թ. մարտ ամսվա դրությամբ տվյալները և Ծրագրի փաստացի ազդակիր անձանց, Ծրագրի ծախսերն ու Ծրագրի իրականացման տարածքը:

ԾԳՄ-ը հաստատում է սույն փաստաթղթով ներկայացված ՀՁՎԳՊ-ն, և հանձն է առնում դրա ամբողջական, ժամանակին և արդյունավետ իրականացումը: ԾԳՄ-ը պատասխանատու է ոչ միայն կորուստների դիմաց փոխհատուցում վճարելու համար, այլ նաև ծրագրի ազդակիր տնային տնտեսություններին (մասնավորապես խոցելի տնային տնտեսություններին) աջակցելու համար՝ իրենց ապրուստի միջոցները վերականգնելու և կենսամակարդակը բարելավելու նպատակով: Վերաբնակեցման գործողությունների պլանը ներկայացվելու է ԾԳՄ, ՀՀ Կառավորության և «KfW» բանկի հաստատմանը և բաց է լինելու հանրության առաջ: ՀՀ կառավարությունը կապահովի ՀՁՎԳՊ լիարժեք, ժամանակին և արդյունավետ իրականացումը՝ համապատասխան պետական մարմինների միջոցով:

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Կիրառելի չափանիշներ՝** Ծրագրի իրավական և քաղաքականության շրջանակի համար հիմք են հանդիսանում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, «KfW» բանկի կայուն զարգացման ուղեցույցն ու համապատասխան ՀԲ (ԳՔ 4.12 և ՄՖԿ ԻՍ 5) և ՄԱԿ-ի չափանիշները, ինչպես նաև Հողային, ձկնային և անտառային պաշարների տիրապետման և օգտագործման հարցերի պատասխանատու կարգավորման կամավոր ուղեցույցները (ՏՕԿԿՈՒ) (Բանկի չափանիշներ (ԲՉ)): «KfW» բանկի և ՋՏԾԻԳ-ի միջև համաձայնություն է ձեռք բերվել Ծրագրի շրջանակներում կիրառել ՀԲ ԳՔ-երը և ՄՖԿ ԻՍ-երը, ինչպես նաև տարբերության դեպքում առաջնահերթությունը տալ ՄՖԿ ԻՍ-ին: ՀԲ նոր բնապահպանական և սոցիալական չափանիշները սույն Ծրագրի շրջանակներում կիրառելի չեն: Հիմք ընդունելով գործող օրենքների և ԲՉ վերլուծությունը, մշակվել են ՀՁՎԳՊ-ի վերաբերյալ չափանիշներ: Որոշ դեպքերում այս չափանիշներն ավելի խիստ են, քան պետական օրենսդրությունը, սակայն այնուամենայնիվ, դրանք պետք է իրականացվեն՝ Բանկի չափանիշներին համապատասխանելու համար և հակառակը:

**Վերաբնակեցումը՝** ԲՉ տերմինաբանությամբ, նշանակում է հողի օտարումից կամ հողօգտագործման սահմանափակումից առաջացող բոլոր տնտեսական և սոցիալական վնասները, ինչպես նաև դրանցից բխող փոխհատուցման և մեղմացնող միջոցառումները: Վերաբնակեցումը սահմանափակված չէ միայն իր տարածված նշանակությամբ, այն է ֆիզիկապես վերաբնակեցում:

Կախված դեպքից, վերաբնակեցումը ներառում է ա) հողի կամ հողի վրա գտնվող կառույցների օտարում, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված կառույցները, բ) ֆիզիկապես վերաբնակեցում և գ) տեղահանված անձանց տնտեսության վերականգնում, եկամուտների և կենսամակարդակի բարելավման (կամ առնվազն վերականգնման) նպատակով:

**Ծրագրի ազդակիր անձինք/ազդակիր տնային տնտեսություններ (ԱԱ/ԱՏՏ)** նշանակում է անձինք/տնային տնտեսություններ, որոնք կրում են ծրագրի բացասական տնտեսական կամ սոցիալական ազդեցությունը, հետևյալ կերպ՝

- Գույքի կորուստ կամ վնասում:
- հողի օտարում:
- հարկադրված տեղահանում:
- տիրապետվող կամ ձեռք բերված (ժամանակավոր կամ մշտապես) ցանկացած բնակարանի, հողամասի (ներառյալ տարածքների, վարելահողերի և արոտավայրերի) կամ որևէ այլ շարժական կամ անշարժ գույքի իրավունքի կամ շահերի վրա բացասական ազդեցություն:

- բացասական ազդեցություն արտադրական նշանակության ակտիվների հասանելիության վրա (ժամանակավոր կամ մշտական):
- բացասական ազդեցություն ձեռնարկատիրական գործունեության, զբաղվածության, աշխատանքի կամ բնակության վայրի վրա:

**Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը (ՎՔՇ)** վերաբնակեցման փաստաթուղթ է, որը մշակվում է այն դեպքերի համար, երբ վերաբնակեցման ծավալը և վայրը նախապես հայտնի չեն և երբ ծրագրի մի շարք բաղադրիչներ վերջնականացվում են նախագծի ավելի ուշ փուլում: Քաղաքականության շրջանակը սահմանում է վերաբնակեցման նպատակներն ու սզբունքները, կազմակերպչական միջոցառումները և ֆինանսավորման մեխանիզմները՝ ծրագրի իրականացման ընթացքում անհրաժեշտ ցանկացած վերաբնակեցման գործողության համար: Շրջանակը նաև գնահատում է ազդակիր անձանց և վերաբնակեցման հնարավոր քանակը, և հատկապես ֆինանսական միջանկյալ ծրագրերի համար գնահատում է վերաբնակեցման գործողությունները մշակելու, իրականացնելու և կանխատեսելու ինստիտուցիոնալ կարողությունները: Երբ ծրագրի իրականացման ընթացքում ցանկացած ենթածրագրում վերաբնակեցման ծավալները հայտնի են դառնում, մշակվում է Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլան՝ ՀՁՎԳՊ, մինչ ֆինանսավորման հատատումը:

**Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլան (ՀՁՎԳՊ)**՝ Վերաբնակեցման փաստաթուղթ է, որը մշակվում է, երբ Ծրագրի հստակ տեղանքը հատկորոշված են: ՀՁՎԳՊ-ն մշակում է անձանց և նրանց կենսամակարդակը ազդեցության ենթարկող կողմը: ՀՁՎԳՊ-երը ընդգրկում են հատուկ և օրենսդրորեն պարտադիր պահանջներ, որոնց համաձայն պետք է իրականացվի ազդեցության ենթարկված կողմի վերաբնակեցումը և փոխհատուցումը՝ մինչև բացասական ազդեցություններ առաջացնող ծրագրի գործողությունների իրականացումը: ՀՁՎԳՊ-ն ներառում է ԱԱ/ԱՏՏ-ներ մարդահամարի, ներառյալ կադաստրային տեղեկատվությունը և կորուստների մանրամասն գույքագրման տվյալները:

**Փոխհատուցում**՝ նշանակում է հողի կամ այլ ակտիվների, ներառյալ հիմնական միջոցների ամբողջական կամ մասնակի օտարման դիմաց վճարում (դրամական, ոչ-դրամական, կամ այլ ակտիվների տեսքով):

**Հողերի ձեռքբերում**՝ նշանակում է ծրագրի իրականացման նպատակով հողի կամ հողի վրա գտնվող շինությունների օտարում:

**Գյուղատնտեսական նշանակության հողերի տեղափոխման ծախսը**՝ ազդակիր հողակտորի հարևանությամբ գտնվող և հավասար արտադրողական պոտենցիալ ունեցող կամ օգտագործման մեջ գտնվող հողի արժեքն է մինչև ծրագրի մեկնարկը կամ վերաբնակեցումը (որը ավելի բարձր կլինի)՝ գումարած այդ հողակտորը ազդակիր

հողատարածքի մակարդակին հասցնելու, ինչպես նաև ցանկացած գրանցման հետ կապված ծախսերը, գործարքային հարկերը և այլ համապատասխան տուրքերը:

**Տների և այլ կառույցների փոխարինման արժեքը՝**

Դա փոխարինող շինության, որի մակերեսը և որակը նման է կամ ավելի լավն է քան ազդակիր շինությունը, կառուցելու կամ մասնակի վնասված շինության վերականգնելու նյութերի շուկայական արժեքն է, գումարած շինարարական նյութերը շինարարական հրապարակ տեղափոխելու ծախսերը, ցանկացած աշխատանքի դիմաց և կապալառուների վարձատրությունը, ցանկացած գրանցման և փոխանցման հարկերը: Փոխարինման արժեքը որոշելիս ակտիվի մաշվածությունը և ապամոնտաժված նյութերի արժեքը հաշվի չեն առնվում, ինչպես նաև ազդակիր ակտիվի արժեքը չի նվազեցվում ծրագրից բխող օգուտների արժեքով: Որտեղ տեղական օրենսդրությունը չի համապատասխանում լրիվ փոխարինման արժեքի փոխհատուցման չափանիշին, տեղական օրենսդրությամբ սահմանված փոխհատուցումը լրացվում է լրացուցիչ միջոցառումներով, որպեսզի պահպանվի փոխարինման արժեքի չափանիշը:

**Կասեցման ժամկետ/Վերջնաժամկետը** որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան և ազդակիր գույքի/ակտիվի նկարագրության արձանագրության՝ որտեղ արտացոլվում են իրականացված գույքագրման և մարդահամարի տվյալները, կազմման օրն է (ԱԱ-ի և ձեռքբերողի կողմից արձանագրության ստորագրման օրը): Դա այն ամսաթիվն է, որից հետո ծրագրի համար անհրաժեշտ հողամասի կամ շինության ցանկացած բարելավում, ցանկացած նոր իրավունք (ցանկացած հողի հանդեպ վարձակալական, օգտագործման կամ այլ գույքային իրավունքի (բացառությամբ սեփականության իրավունքի) կամ համայնքային հողի հանդեպ սեփականության իրավունքի ձեռք բերում) ենթակա չէ փոխհատուցման:

**Խոցելի խմբերին** պատկանում են այն անձինք, ովքեր ի վիճակի չեն դիմակայել ճգնաժամային կամ շոկային իրավիճակներին իրենց կենսամակարդակը պահպանելու համար: Սահմանումը տրված է սույն հաշվետվության 7-րդ բաժնում:

**Տնային տնտեսություն (SS)** դիտարկվում է որպես անձանց խումբ (կամ անձ), ովքեր համատեղ ապրում են միևնույն հարկի տակ (ունեն մեկ մուտք), հանդիսանում են կոմունալ ծառայությունների մեկ բաժանորդ, վարում են միասնական տնտեսություն և ունեն ընդհանուր բյուջե՝ անկախ առանձին գույքի առկայությունից կամ դրա բացակայությունից:



## ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Շիրակի մարզում Ախուրյան գետի սահմանափակ ջրային ռեսուրսների կայուն օգտագործմանը՝ հաշվի առնելով մրցակցային պայմաններում տարբեր ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել սննդի անվտանգությանը, խթանել գյուղական շրջանների զարգացումը և բարելավել բնակչության կենսապայմանները, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, պահպանելով այդ շրջանի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնելով բնակչության անվտանգության ռիսկերը անավարտ Կապսի պատվարի և ջրամբարի հոսքի ուղղությամբ իրականացվող շինարարության ուղղությամբ:

Նախատեսված ծրագրով անհրաժեշտություն է առաջանում հողերի ձեռքբերման և ԱԱ/ԱՏՏ-ների վերաբնակեցման, մասնավորապես ջրամբարի տարածքից, ինչպես նաև այնպիսի օժանդակ կառույցների տեղափոխման, ինչպիսիք են ճանապարհները, որոգման ջրանցքները և էլեկտրամատակարարման օդային գծերը: Ամենամեծ խնդիրը Ջրածոր գյուղի վերաբնակեցումն է: Լրացուցիչ փոխհատուցման միջոցառումների անհրաժեշտություն կառաջանա շինաշխատանքների և ջրամբարի լցման ընթացքում մասնավոր և համայնքային սեփականություններին (մասնավոր կամ հանրային օգտագործման) հասցված բոլոր վնասների դիմաց:

Սույն ՀՁՎԳՊ-ի նպատակն է հատկորոշել Ծրագրի բոլոր ազդակիր ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ազդեցության չափը գնահատելու համար, ինչպես նաև միջազգային չափանիշների և ՀՀ օրենսդրության համաձայն պարզաբանել իրավունքի շրջանակը և ուրվագծել համապատասխան փոխհատուցումները, եկամտի վերականգնման ու վերաբնակեցման գործողությունները: ՀՁՎԳՊ-ն նաև նկարագրում է փոխհատուցման և վերաբնակեցման գործողությունների իրականացման ժամանակացույցն ու կազմակերպչական միջոցառումները: Սույն ՀՁՎԳՊ-ով ներկայացված փոխհատուցումների տրամաբանությամբ, Ծրագրի ազդեցություններից ԱԱ-ների կենսապայմաններն ու կյանքի որակը չպետք է վատթարանան, այլ ընդհակառակը, առնվազն վերականգնվեն մինչև Ծրագրի մեկնարկն ունեցած մակարդակին:

Ծրագրի այս փուլում նախագծային որոշ տվյալներ դեռ վերջնական չեն և Ծրագրի հետագա փուլերում դեռ կարող են փոխվել: Սա մասնավորապես վերաբերում է Հողօգտագործման/հանքի տարածքին և Վերաբնակեցման տարածքին: Հողօգտագործման/հանքի տարածքի սահմանները կհստակեցվեն, երբ որ պատրաստ կլինի այդտեղ նախատեսվող գործունեության և կառույցների վերջնական նախագիծը: Վերաբնակեցման տարածքի սահմանները կհստակեցվեն, երբ որ սույն ՀՁՎԳՊ-ով սահմանված կարգով կորոշվի վերաբնակեցման ենթակա անձանց թիվը և դրան

համապատասխան կնախագծվի նոր գյուղը: Հաշվի առնելով վերագրյալ հանգամանքները սույն ՀՁՎԳՊ-ն մշակվել է նկատի ունենալով հնարավոր առավելագույն ազդեցությունը Հողօգտագործման/հանքի և Վերաբնակցման տարածքների վրա:

ՀՁՎԳՊ-ի մշակման համար հիմք են հանդիսացել Ծրագրի բոլոր ԱԱ-ների մանրամասն մարդահամարը, յուրաքանչյուր ազդագիր գույքի մանրամասն չափագրումը, ուսումնասիրությունը, կորուստների գույքագրումը, ինչպես նաև քննարկումները ԱԱ/ԱՏՏ-ների և այլ շահառուների, ինչպիսիք են ՏԻՄ-երը, ՀԿ-ները և այլն: ՀՁՎԳՊ-ի իրականացումը (փոխհատուցման վճարումները և ԱԱ-ների արդյունավետ վերաբնակեցումը) մշտադիտարկվելու է Արտաքին մշտադիտարկող խորհրդատուի կողմից և արդյունքները ներկայացվելու են հաշվետվությունների տեսքով:

ԲՍԱԳ Խորհրդատուն/ՀՁՎԳՊ մշակման խորհրդատուն (Ֆիխտնեռ ընկերություն) Ծրագրի ԲՍԱԳ-ի և ՀՁՎԳՊ-ի իրականացման փուլում ԾԳՄ-ի հետ համագործակցելով կազմակերպել և իրականացրել է հանրային լսումների և հրապարակումների քարոզարշավ: Արդեն իսկ իրականացված ակտիվ լսումներում ներգրավվել են տեղական բնակչությունը, համապատասխան մարզային և համայնքային մարմիններ, ՀԿ-ներ: Մշակվել է նաև Շահառուների ներգրավման պլան (ՇՆՊ), որով Ծրագիրը առաջնորդվելու է շահառուների ներգրավման գործընթացում մինչև ԲՍԱԳ-ի և ՀՁՎԳՊ-ի ավարտը:

Ծրագրի իրավական և քաղաքականության շրջանակի համար հիմք են հանդիսանում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը և Բանկի չափանիշները: Հարկադիր վերաբնակեցման մասով ՀՀ օրենքների և Բանկի չափանիշների միջև իրականացվել է համեմատական վերլուծություն՝ հատկորոշելու ՀՀ օրենսդրությունում և ԲԶ-ում առկա բացերը: Ցանկացած բացերի դեպքում կիրառվելու է ԱԱ-ների համար առավել շահավետ դրույթը (տեղական օրենսդրություն և ԲԶ):

Ծրագրից ազդեցության են ենթարկվելու 128 տնային տնտեսություններ, որոնցից 122 ԱՏՏ-ի հետ հարցում է անցկացվել: Այդ 122 ԱՏՏ ներառում են 594 անդամներ/անհատներ: ԱՏՏ-ների ղեկավարների մեծամասնությունը կամ 58%-ը աշխատանքային միգրանտներ են կամ ինքնազբաղված են գյուղատնտեսության ոլորտում: ԱՏՏ-ների եկամտի մեծ մասը ստացվում է աշխատանքային միգրացիայից: Գյուղատնտեսությամբ ինքնազբաղվածության եկամուտը զբաղեցնում է երկրորդ տեղը, որին հաջորդում է անասնաբուծությունից ստացվող եկամուտը: ԱՏՏ-ների մոտ 60% նշում են, որ իրենց ամսական եկամուտը չի գերազանցում 300,000 ՀՀ դրամը:

ՀՁՎԳՊ-ով հատկորոշվել են 13 խոցելի ԱՏՏ-ներ, իսկ 57 ԱՏՏ-ներ խիստ ազդեցության են ենթարկվում, քանի որ նրանք կորցնելու են իրենց գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20%-ը կամ ավելին, իսկ Ջրածորում փաստացի բնակվող 43 ԱՏՏ կենթարկվի վերաբնակցման:

**Ազդակիր տնային տնտեսություններ (USS)**

| <b>Ազդեցության տեսակը</b>   | <b>Քանակ</b> |
|---|--------------|
| Ընդհանուր ազդակիր տնային տնտեսությունների թիվը                    | <b>128*</b>  |
| Խոցելի USS-եր   | <b>13</b>    |
| Գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին կորցնող USS     | <b>57**</b>  |
| Տեղահանվող USS  | <b>43</b>    |
| <b>* Որից 122 USS մարդահամար անցած տնային տնտեսություններն են</b> |              |
| <b>**55 փոխհատուցման Տարբերակ 1-ի դեպքում</b>                     |              |

Սույն ՀՁՎԳՊ-ն Ջրածոր գյուղի բնակելի հողերի համար դիտարկում է իրականացման երկու սցենար.

**Տարբերակ 1՝** բոլոր ազդակիր ՏՏ-երին տրվում է դրամային փոխհատուցում (տան գնման վկայագրի տեսքով բնակելի տան դիմաց և դրամային փոխհատուցում ազդակիր հողի ու այլ շինությունների և բարելավումների դիմաց): Բացառիկ դեպքերում դրամական փոխհատուցումը բնակելի տան դիմաց կարող է տեղին լինել, եթե USS-ն ԾԳՄ/ՀՁՎԳՊ ԻԽ-ին ներկայացրել է բավարար հիմքեր, որ նա ունի այլ կացարան կամ USS-ն մշտապես բնակվում է արտերկրում:

**Տարբերակ 2՝** բոլոր ազդակիր ՏՏ-երին տրվում է նոր տուն տնամերձ հողամասով Վերաբնակեցման վայրում (նոր տուն և տնամերձ հողամաս ազդակիր տան և տնամերձ հողամասի դիմաց, ինչպես նաև դրամական փոխհատուցում տանից և տնամերձ հողամասից բացի այլ գույքի կամ բարելավումների համար): Եթե առաջարկվող՝ ըստ գյուղի նախագծի, տնամերձ հողամասը ազդակիր հողամասից ավելի փոքր է, ապա վերջիններիս տարբերությունը փոխհատուցվում է դրամով:

Հաշվի առնելով այն, որ.

ա) անասնաբուծությունը և գյուղատնտեսությունը հանդիսանում են Ջրածոր գյուղի կենսաապահովման հիմնական միջոցները (տես՝ 4. 3. 2 կետը),

բ) USS-երի նախասիրությունները փոխհատուցման տարբերակների վերաբերյալ (տես՝ աղյուսակ 40-ը), ինչպես նաև

գ) Բանկի չափանիշների այն սկզբունքը, որի համաձայն՝ որտեղ հնարավոր է և ցանկալի է ազդակիր անձանց համար հողի վրա հիմնված վերաբնակեցման տարբերակներ պետք է առաջարկվեն տեղահանված անձանց, ում ապրուստի միջոցները կապված է հողօգտագործման հետ (օրինակ՝ Ֆերմերներին, հովիվներ և այլն),

սույն ծրագրի շրջանակներում նախապատվությունը տրվում է Տարբերակ 2-ին:

Նկատի ունենալով այս հանգամանքը, նպատակահարմար ենք համարում ՀՀ կառավարության կողմից կիրառելի տարբերակի վերաբերյալ որոշման կայացումը: Կիրառելի տարբերակը կնշվի սույն ՀՁՎԳՊ-ն հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ, որը հիմք կծառայի համապատասխան տարբերակը կիրառելու համար:

Ծրագրի ազդեցության ծավալը կախված է փոխհատուցման իրականացման տարբերակի ընտրությունից: Եթե Ջրածոր գյուղը տեղափոխվի Վերաբնակեցման վայր (Տարբերակ 2), ընդհանուր առմամբ ծրագրի ազդեցությունը կաճի, քանի որ այս տարբերակով Ծրագիրը ձեռք է բերելու լրացուցիչ տարածք (Վերաբնակեցման տեղանքի հողատարածքներ):

ՀՁՎԳՊ-ի մշակման փուլում վերաբնակեցման հնարավոր վայրի մասին ԱԱ-ների և այլ շահառուների հետ քննարկումներ են իրականացվել, և առաջարկվող վերաբնակեցման տեղանքի շուրջ ստացվել է Ամասիա համայնքի ավագանու նախնական համաձայնությունը, ինչպես նաև Քաղաքաշինության կոմիտեի «Կարող է դիտարկվել որպես վերաբնակեցման տարածք» նախնական եզրակացությունը: Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ հարցված ԱՏՏ-ների 83%-ը նախընտրում են վերաբնակեցումը, իսկ 12,8%-ը՝ դրամական փոխհատուցումը:

Տարբերակ 1-ի (դրամական փոխհատուցում) դեպքում Ծրագրից ազդեցության կենթարկվեն 292 (61 սեփական/գրանցված, 4 համայնքային, 226 չգրանցված և 1 պետական հողատարածքներ), որոնք ընդհանուր առմամբ զբաղեցնում են Ջրածոր, Արեգնադեն, Գտաշեն, Կապս և Բյուրակն բնակավայրերի 1,101,556.57 մ<sup>2</sup> մակերեսով տարածք: Ծրագրից ամենաշատը տուժելու է Ջրածոր համայնքը (270 հողատարածքներ՝ 544,763.76 մ<sup>2</sup>): Տարբերակ 2-ի դեպքում ազդեցության ենթարկված հողակտորների ընդհանուր թիվը կաճի 45-ով (41 սեփական և 4 համայնքային):

#### Ազդեցության ենթարկված հողերը, ըստ բնակավայրերի

| N | Գյուղ/համայնք   | Տարբերակ 1 |                     | Տարբերակ 2 |                    |
|---|-----------------|------------|---------------------|------------|--------------------|
|   |                 | հատ        | մ <sup>2</sup>      | հատ        | մ <sup>2</sup>     |
| 1 | Ջրածոր          | 270        | 544,763.76          | 315        | 865,280.1          |
| 2 | Արեգնադեն       | 13         | 226,984.00          | 13         | 226,984.0          |
| 3 | Գտաշեն          | 4          | 91,260.00           | 4          | 91,260.0           |
| 4 | Կապս            | 1          | 2,600.00            | 1          | 2,600.0            |
| 5 | Բյուրակն        | 4          | 235,948.81          | 4          | 235,948.8          |
|   | <b>Ընդամենը</b> | <b>292</b> | <b>1,101,556.57</b> | <b>337</b> | <b>1,422,072.9</b> |

Հարկ է նշել, որ Հողմիկ բնակավայրի (Սարապատ համայնք) որոշ տարածք, որը փաստացի ձորի լանջ է, ընկնում է Ջրամբարի բուֆերային գոտի/առափնյա ջրապահպան շերտի մեջ: Այդ տարածքը չի օգտագործվում որևէ ԱԱ-ի կողմից և այդտեղ չկան առանձնացված հողատարածքներ:

Ծրագրով ազդեցության են ենթարկվելու նաև թվով 251 շենք/շինություններ:

**Ազդակիր շենք/շինություններ ցանկացած տարբերակի դեպքում**

| N | Շինության տեսակը      | Ընդամենը     |                  |
|---|-----------------------|--------------|------------------|
|   |                       | Քանակը (հատ) | Մակերեսը (մ²)    |
| 1 | Բնակելի տուն          | 74           | 5,663.11         |
| 2 | Տնակ                  | 7*           | 190.83           |
| 3 | այլ (Ավտոտնակ և այլն) | 170          | 9682.09          |
|   | <b>Ընդամենը</b>       | <b>251</b>   | <b>15,544.02</b> |

*\*Որից 2-ը առանձին տնակներ են, իսկ 5 տներին կից տնակներ*

Տարբերակ 1-ի դեպքում (միայն դրամական փոխհատուցում), առկա են մշակաբույսերի համար օգտագործվող թվով 36 հողակտորներ, որոնցից 29-ում աճեցվում է սխտոր, իսկ 7-ում՝ իշառվույտ: Ընդհանուր առմամբ այդ հողակտորները տարեկան կտրվածքով կրելու են 6,687 կգ բերքի վնաս: Տարբերակ 2-ի դեպքում, ազդեցության են ենթարկվելու 2 լրացուցիչ հողակտորներ, որոնք օգտագործվում են իշառվույտ աճեցնելու համար: Տարեկան կտրվածքով վնասվելու է լրացուցիչ 3,900 կգ իշառվույտի բերք: Ավելին, ծրագրից ազդեցության են ենթարկվելու 1090 մրգատու ծառ:

**Ազդակիր ծառեր/մշակաբույսեր ցանկացած տարբերակի դեպքում**

| N | Ազդեցության տեսակը                   | Քանակ/ծավալ |
|---|--------------------------------------|-------------|
|   |                                      | Հատ/կգ      |
| 1 | Մրգատու ծառերի և թփատեսակների քանակը | 1090        |
| 2 | Փայտանյութ տվող ծառերի քանակը        | 58          |
| 3 | Դեկորատիվ ծառերի քանակը              | 51          |
| 4 | Ազդակիր մշակաբույսերի ծավալը         | 10587*      |

*\*6,687կգ փոխհատուցման Տարբերակ 1-ի դեպքում*

Փոխհատուցման իրավունք է վերապահված այն բոլոր ԱԱ-ներին, որոնք կկորցնեն իրենց հողատարածքը կամ սեփականությունը կամ դրա հասանելիությունը (օրինական կարգավիճակ ունեցող հողատարածքներ, օրինականացման ենթակա հողատարածքներ, կամ առանց օրինական կարգավիճակի հողերը), վարձակալներին կամ հողօգտագործողներին՝ անկախ իրավունքի գրացված լինելուց կամ չլինելուց, ինչպես նաև մշակաբույսերի կամ հողին կից այլ օբյեկտների/կառույցների սեփականատերերին: Փոխհատուցման իրավասությունը սահմանափակվելու է վերջնաժամկետով՝ մանրամասն մարդահամարի և կորուստների գույքագրման ամսաթվով: ԱԱ-ների համար փոխհատուցման իրավունքի դրույթներում ներառվում են հողի, մշակաբույսերի, ծառերի և հողին կից այլ օբյեկտների վրա ժամանակավոր կամ մշտական ազդեցությունները:

Ծրագրի ազդեցության հետևանքով տրամադրվող փոխհատուցումներից զատ ՀՁՎԳՊ-ն նաև առաջարկում է ծրագրի հետևանքով կրած կենսաապահովման միջոցների վրա ազդեցությունների մեղմման լիարժեք միջոցառումներ: Ծրագիրը հետևաբար նաև աջակցելու է ԱՏՏ-ներին (հատկապես խոցելի տնային տնտեսություններին) կենսաապահովման միջոցների և կենսաապայմանների վերականգնման ուղղությամբ: Կենսաապահովման միջոցների վերականգնման պլանը հարմարեցված է հայանքում առկա ռեսուրսներին, գիտելիքին, փորձին և ընդգրկում է 1) անցումային աջակցության անհապաղ տրամադրում, բ) տեխնիկական կարողությունների զարգացում, գ) աշխատանքի վերաբերյալ դրույքներ, հմտությունների զարգացում և համայնքի կենսաապահովման պայմանների վերականգնմանն ուղղված միջոցառումներ: Վերջինս ուղղված է համայնքի կենսաապահովման բարձրացմանն ու տնտեսական բարեկեցությանը, որը կնպաստի ընդհանուր առմամբ համայնքի զարգացմանը:

ՀՁՎԳՊ իրականացման ընդհանուր բյուջեն կազմում է՝

**ՀՁՎԳՊ իրականացման ընդհանուր բյուջե**

| Տարբերակ 1       | Տարբերակ 2       |
|------------------|------------------|
| ՀՀ դրամ          | ՀՀ դրամ          |
| 3,206,513,551.04 | 4,950,011,494.52 |

Ծրագրի Բողոքների կարգավորման մեխանիզմը հաստատվել է ԾԳՄ-ի և «KfW» բանկի կողմից, և ներկայացված է առանձին փաստաթղթով (տես Բողոքների կարգավորման մեխանիզմներ ձեռնարկը): ԲԿՄ-ն տրամադրում է շահառու և ազդակիր համայնքների, այլ հիմնական շահառուների և լայն հասարակության հարցումներին, և բողոքներին արձագանքելու համակարգված ընթացակարգ: ԲԿՄ-ի ընթացակարգը թույլ է տալիս շահառուներին և հանրությանը Ծրագրի վերաբերյալ իրենց մտահոգությունները հայտնել և հետադարձ կապ ապահովել: Այն նաև պարզաբանում է, թե ինչպես է ցանկացած բողոք/մտահոգություն կարգավորվում Ծրագրի շրջանակներում: ՀՁՎԳՊ-ի իրականացումը կմեկնարկի «KfW» բանկի և ՀՀ Կառավարության կողմից վերջնական հաստատումից անմիջապես հետո:

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն ՀԶՎԳՊ-ի նպատակն է հատկորոշել Ծրագրի բոլոր ազդակիր ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ազդեցության չափը գնահատելու համար, ինչպես նաև միջազգային չափանիշների և ՀՀ օրենսդրության համաձայն պարզաբանել իրավունքի շրջանակը և ուրվագծել համապատասխան փոխհատուցումները, եկամտի վերականգնման ու վերաբնակեցման գործողությունները: ՀԶՎԳՊ-ն նաև նկարագրում է փոխհատուցման և վերաբնակեցման գործողությունների իրականացման ժամանակացույցն ու կազմակերպչական միջոցառումները:
2. Սույն ՀԶՎԳՊ-ով ներկայացված փոխհատուցումների տրամաբանությամբ, Ծրագրի ազդեցություններից ԱԱ-ների կենսապայմաններն ու կյանքի որակը չպետք է վատթարանան, այլ ընդհակառակը, առնվազն վերականգնվեն մինչև Ծրագրի մեկնարկն ունեցած մակարդակին: Հետևաբար, ՀԶՎԳՊ-ն պարունակում է ազդեցության վերաբերյալ տվյալները ու մանրամասնում է՝
  - i. Կորուստների չափը և ծրագրի ազդեցությունները (տեսակի և արժեքի տեսանկյունից),
  - ii. Տեղեկատվության հրապարակմանը, խորհրդատվությանն ու մասնակցությանն ուղղված գործողությունները
  - iii. Փոխհատուցման և վերականգնման քաղաքականության շրջանակը
  - iv. Խիստ ազդեցության ենթարկված և խոցելի տնային տնտեսությունների վերականգնման միջոցառումները;
  - v. Բողոքների կարգավորման մեխանիզմները (ԲԿՄ);
  - vi. Վերաբնակեցման բյուջեն և ֆինանսավորման պլանը;
  - vii. Ինստիտուցիոնալ շրջանակը և վերաբնակեցման պլանի իրականացման ժամանակացույցը, և
  - viii. ՀԶՎԳՊ-ի մշտադիտարկում.
3. Պլանը մշակվել է՝ հիմք ընդունելով Ծրագրի բոլոր ԱԱ-ների մանրամասն մարդահամարը, բոլոր ազդակիր սեփականություններին հասցված վնասի չափման մանրամասն ուսումնասիրությունը, կորուստների գույքագրումը, ազդակիր անձանց/տնային տնտեսությունների և այլ շահառուների (ՏԻՄ ներկայացուցիչներ, ՀԿ-ներ և այլն) հետ մասնակցային խորհրդատվությունը:
4. ՀԶՎԳՊ-ի մշակումը, վերջնականացումը՝ «KfW» բանկի, ՀՀ կառավարության և ԾԳՄ-ի համար ընդունելի և իրականացման համար պատրաստ փաստաթղթի տեսքով, և դրա հրապարակումը նախապայման է հանդիսանում Ծրագրի իրականացման թույլտվության համար: Իսկ Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի (ԱՄԽ) կողմից արձանագրված ՀԶՎԳՊ-ի պատշաճ ավարտն (փոխհատուցումների տրամադրում և ԱԱ-ների պատշաճ վերաբնակեցում) էլ իր հերթին նախապայման է հանդիսանում ջրամբարը լցնելու համար:<sup>1</sup>

<sup>1</sup>ՀԶՎԳՊ իրականացման ավարտի հաշվետվությունը մշակվելու է ԾԳՄ-ի կողմից վարձվող անկախ արտաքին մշտադիտարկող կազմակերպության կողմից:



5. Սույն բաժինը ներկայացնում է ՀԶՎԳՊ-ի նպատակն ու ձևաչափը, Ծրագրի նախապատմությունն ու նկարագրությունը, ինչպես նաև Ծրագրով նախատեսված աշխատանքները: Այն նաև ամփոփում է տեղափոխման ազդեցությունների շրջանակը:

### **1.1 Ծրագրի նախապատմությունը**

6. Հայաստանի բնակչության ավելի քան մեկ երրորդը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 20-ից 30%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը կախված է ոռոգումից, որն էլ կարևոր նշանակություն ունի բերքատվության համար: Գետերի սեզոնային փոփոխական արտահոսքերը կարգավորելու համար, մինչ 1980-ական թվականները պատվարներ և ջրամբարներ են նախագծվել և կառուցվել: Դրանց թվին է պատկանում Ախուրյան գետի վրա Կապսի պատվարի և ջրամբարի կառուցումը:
7. Կապսի ջրամբարը նախատեսված էր 33,096 հա հողատարածք ոռոգելու համար: Կապսի պատվարի կառուցման աշխատանքները դադարեցվել էին 1994թ, երբ պատվարի հիմքը հասել էր մոտ 20-30մ-ի: Անավարտ պատվարը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ, քանի որ գետի շեղումները շինարարության թունելի միջոցով կարող են հանգեցնել խիստ ջրհեղեղների, կամ կարող են վնասվել և արգելափակվել՝ ամբողջությամբ ծածկելով պատվարը: Սա կարող է լուրջ հետևանքներ ունենալ գետի ստորին հոսքի շրջանների, ներառյալ ՀՀ երկրորդ խոշորագույն քաղաքի, Շիրակի մարզկենտրոն Գյումրիի արվարձանների վրա:
8. Այս կոնտեքստում Ծրագիրը ավարտին հասցնելու նախագծման և շինարարական աշխատանքները վերսկսվեցին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի (ՋԿ) կողմից: Ծրագրով ընդլայնվելու և վերազինվելու է Ախուրյան գետի առկա ոռոգման համակարգը:
9. Ինչ վերաբերում է վերաբնակեցման անհրաժեշտությանը, ապա 2017թ. Իրականացման Խորհրդատուն կատարել է այն տարածքի թեքության կայունության ուսումնասիրություն, որտեղ տեղակայված է Ջրածոր համայնքը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ պատվարի կառուցման երկու փուլերում էլ բնակատեղու անվտանգությունը կխախտվի, ինչպես նաև կհեղեղվի դրա մոտեցման ճանապարհը: Ավելի կոնկրետ, ուսումնասիրությունից ակնհայտ է դարձել, որ նույնիսկ առանց պատվարի և ջրամբարի կառուցման, Ջրածորի որոշ հատվածներ երկրաշարժի ընթացքում կարող են սահել դեպի ձորը՝ աշխարհագրական անբարենպաստ պայմաններից ելնելով: Այս եզրահանգմանն են եկել նաև 1980-ականներին իրականացված ուսումնասիրությունները: Հետևաբար, հիմք ընդունելով գնահատման արդյունքները, առաջարկվել է տեղափոխել Ջրածոր գյուղը: Վերաբնակեցումից խուսափելու միակ հնարավոր տարբերակը պատվարի մակարդակի զգալի իջեցումն է: 2013թ. իրականացված Տեխնիկատնտեսական ուսումնասիրությունից ի վեր, տեղական ինքնակառավարման մարմիններին և Ջրածորի բնակիչներին տեղեկացվել է և նրանք քաջատեղյակ են Կառավարության՝ Կապսի պատվարի ծրագրի վերջնականացման մտադրության մասին, և նրանք միշտ պահանջել են Ջրածորի վերաբնակեցում և ոչ թե պատվարի մակարդակի իջեցում:

10. Մասնավոր հողերի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով Հողօգտագործման/հանքի և Վերբնակեցման տարածքների սահմանները վերանայվել են՝ համապատասխանեցնելով դրանք հողատեսքերին:
11. Արեգնադեմ համայնքում հանրային քննարկման ժամանակ համայնքի ղեկավարը և բնակիչները հայտնեցին, որ Հողօգտագործման տարածքի «BA 3i» հատվածը զբաղեցնում է համայնքի գյուղատնտեսական հողերի մեծ մասը և դա անըդունելի է համայնքի անդամների համար: Հողօգտագործման տարածքի «BA 3i» հատվածը վերաբերում է միայն Փուլ 2-ին և սույն ՀՁՎԳՊ-ում վերջինիս ազդեցությունը հաշվի չի առնվել, քանի որ սույն ՀՁՎԳՊ-ն ներառում է միայն Փուլ -1 ազդեցության գնահատումը: Ուստի՝ այս հանգամանքը պետք է հաշվի առնվի Ծրագրի Փուլ 2-ը իրականացնելու ժամանակ:

## **1.2 Ծրագրի նկարագրությունը**

12. Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Շիրակի մարզում Ախուրյան գետի սահմանափակ ջրային ռեսուրսների կայուն օգտագործմանը՝ հաշվի առնելով մրցակցային պայմաններում տարբեր ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել սննդի անվտանգությանը, խթանել գյուղական շրջանների զարգացումը և բարելավել բնակչության կենսապայմանները, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, պահպանելով այդ շրջանի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնելով բնակչության անվտանգության ռիսկերը անավարտ Կապսի պատվարի և ջրամբարի հոսքի ուղղությամբ իրականացվող շինարարության ուղղությամբ:
13. Ծրագիրն ընդգրկում է Կապսի պատվարի և ջրամբարի կայունացում, վերականգնում և հետագայում շինարարություն: Այն ներառվելու է ջրային ռեսուրսների համատեղված կառավարման շրջանակում, Ախուրյանի գետավազանի ջրային ռեսուրսների առավել կայուն կառավորման ապահովման նպատակով և, տարբեր ջրօգտագործող խմբերի համար:

### Գծապատկեր 1: Կապսի պատվարի տեղադիրքը




Աղբյուրը՝ CES / AHT / YUSUAC 2014

14. Նախատեսված ծրագրով անհրաժեշտություն է առաջանում հողերի ձեռքբերման և ԱԱ/ԱՏՏ-ների վերաբնակեցման, մասնավորապես ջրամբարի տարածքից, ինչպես նաև այնպիսի օժանդակ կառույցների տեղափոխման, ինչպիսիք են ճանապարհները, որոգման ջրանցքները և էլեկտրամատակարարման օդային գծերը: Ամենամեծ խնդիրը Ջրածոր գյուղի վերաբնակեցումն է: Լրացուցիչ փոխհատուցման միջոցառումների անհրաժեշտություն կառաջանա շինաշխատանքների և ջրամբարի լցման ընթացքում մասնավոր և համայնքային սեփականություններին (մասնավոր կամ հանրային օգտագործման) հասցված բոլոր վնասների դիմաց:

### 1.3 Աշխատանքների նկարագրությունը

15. Ընդհանուր առմամբ Ծրագրի նպատակն է վերականգնել և ավարտին հասցնել Ախուրյան գետի մոտ 25 միլիոն մ<sup>3</sup> հզորությամբ Կապսի ջրամբարի կառուցման աշխատանքները՝ գետի վերին հոսքում ոռոգման և ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարման համար: Ծրագիրն իրականացվելու է 2 փուլերով և 2 ենթափուլերով:

## Գծապատկեր 2: Կապսի պատվարի և ջրամբարի առավելագույն ընդլայնման քարտեզը (փուլ 1)



Աղբյուրը՝ CES / NUACA 2018 (Մեծամաշտաք քարտեզը ներկայացված է Հավելված 1)

### ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ

16. Ծրագրի առաջին փուլը բաղկացած է երկու ենթափուլերից: Առաջին փուլում Ախուրյան գետի աջափնյա իռիգացիոն ջրանցքի և Շիրակի գլխավոր իռիգացիոն թունելի միջոցով ապահովվելու է մոտ 19,400 հա գյուղատնտեսական և մոտ 4,600 հա ոչ-ոռոգելի հողերի ոռոգումը: Առաջին փուլի արդյունքում Ջրամբարի հզորությունը նախատեսվում է հասցնել 25միլիոն մ<sup>3</sup>-ի, թեև պատվարի նախագծման աշխատանքներում հաշվի է առնվելու, ավելի ուշ փուլում պատվարի հզորությունը մինչև 60 միլիոն մ<sup>3</sup> բարձրացնելու հնարավորությունը: Առաջին փուլի առաջին ենթափուլով նախատեսվում են հետևյալ գործողությունները.

- Կապսի պատվարի և 25 միլիոն մ<sup>3</sup> պահեստավորման հնարավորությամբ ջրամբարի վերականգնում ու կառուցում՝ առաջին հերթին ապահովելով գետի վերին հոսքում ոռոգումն ու ջրային ռեսուրսների առավել արդյունավետ կառավարումը:
- Հարակից այնպիսի կառույցների վերականգնում և կառուցում, ինչպիսին են ելքի հատակային և ոռոգման կառուցվածքները, թունելները, արտահոսքի անցուղիները և այլն: Հարակից կառույցները նախագծվելու են այնպես, որպեսզի հնարավոր լինի ջրամբարի պահեստավորման հզորությունը հասցնել մինչև 60միլիոն մ<sup>3</sup>-ի:
- Կումայրիի թունելի վերականգնման/ավարտի վերջնական նախագծում և մրցութային փաստաթղթերի մշակում

- Արփի լճի վերին հոսքի աշխատանքներ (օր. բատիմետրիկ ուսումնասիրություն, նոր պատվարի հնարավոր վերականգնում կամ կառուցում, ինչպես նաև հարակից կառույցների վերականգնում), որպեսզի հնարավոր լինի ջրամբարը կառավարել ջրային ռեսուրսների կառավարման ռեժիմների և կառավարման պլանի համաձայն (այնուամենայնիվ վերականգնման աշխատանքները Ծրագրի մաս չեն կազմում):
- Պարբերաբար մշտադիտարկման ընթացակարգ SCADA համակարգի միջոցով, Ախուրյանի գետավազանի վերին հոսքում, ներառյալ բոլոր փոքր ՀԷԿ-երն ու ջրամբարները: Ախուրյան գետի երկայնքով առկա են մի քանի փոքր ՀԷԿ-եր, իսկ Արփի լճի ու Կապսի ջրամբարի մշտադիտարկումը կիրականացվի SCADA համակարգի միջոցով: SCADA համակարգի տվյալները հանրության հասանելի կլինեն համացանցի միջոցով:
- Միջազգային ճանաչում ունեցող փորձագետների աջակցությամբ որակի ապահովման համակարգի ստեղծում, շինարարության, լցման և շահագործման ընթացքում:
- Գետավազանային կառավարման պլանի վրա հիմնված ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքներ:

17. **Ծրագրի 1-ին փուլի 2-րդ ենթափուլում** արդյունավետ ոռոգման նպատակով Ախուրիկի և Երազգաորսի համայնքներում՝ աջափնյա ոռոգման ջրանցքի վերջում 704 հա ընդգրկող պիլոտային տարածքում (+39 հա մերձակա այգիների համար) տեղադրվելու է ինքնահոս ոռոգման ենթակառուցվածք:

#### ՓՈՒԼ ԵՐԿՐՈՐԴ

18. Երկրորդ փուլով (աշխատանքների համար կնքվելու է առանձին վարկային համաձայնագիր) նախատեսվում է բարձրացնել Կապսի պատվարի մակարդակը և ջրամբարի պահեստավորման հնարավորությունը հասցնել մինչև 60 միլիոն մ<sup>3</sup>-ի: Կառուցվելու են նաև լրացուցիչ խողովակաշարեր և փոխադրման համակարգեր դեպի Թալին/Արմավիրի տարածաշրջան, որը թույլ կտա ոռոգել ևս 7,000 հա տարածք:

### 1.4 Ծրագրի ազդեցության տարածքներ

19. Իրականացման խորհրդատուի կողմից մշակված ծրագրի տեխնիկական նախագծի համաձայն՝ հողատարածքների վրա ծրագրի ազդեցությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

- **Ջրածածկման գոտի, փուլ 1** (ծովի մակարդակից 1729,70 մետր)՝ պատվարի կառուցման հետևանքով ջրի տակ հայտնվող տարածք:
- **Վերաբնակեցման տեղանքը** սույն ՀՁՎԳՊ-ով բնակչության հնարավոր ֆիզիկական տեղափոխման տարածք: Գյուղի վերաբնակեցման տարբերակի համար փոխհատուցումները և ծախսերը հաշվարկվել են նկատի ունենալով այս տարածքը:
- **Ջրամբարի բուֆերային գոտի/առափնյա ջրապահպան շերտ** (պատվար և ջրամբար) նվազ. 50մ (50-100 մետր) 1-ին փուլի հեղեղման տարածքից (ծովի մակարդակից 1729.70մ բարձրության վրա) և/կամ 25մ կիրճի ծայրամասից (որն ավելի հեռու է). Պատվարի շուրջ բուֆերային գոտին ընդգրկում է ջրթափի շուրջ

ցանկապատվող տարածքը, մոտեցման ճանապարհների և նոր հանրային ճանապարհի տարածքները:

- **Հողօգտագործման/հանքի տարածքներ** օգտագործվելու են նյութերի արդյունահանման, շինարարական ճանապարհների կառուցման, տեխնիկայի կայանման և այլնի համար, կախված ծրագրի վերջնական նախագծից (այսինքն բետոնի գործարանի, թունելի կառուցման սարքավորումների և այլն):
- **Վարչական շենքի և կոմունալ ցանցին միացման ենթակառուցվածքի տարածք**

20. Վերոնշյալ տարածքներում գտնվող բոլոր մասնավոր հողերը ձեռք են բերվելու կամ փոխարինվելու են համաձայն սույն ՀՀՎԳՊ-ի դրույթների, քանի որ այս տարածքներում Ծրագրի ազդեցությունը մշտական է լինելու, այսինքն հողերը/անշարժ գույքը ազդեցության արդյունքում դուրս են գալու տնտեսական շրջանառությունից: Ամենաշատը ազդեցության են ենթարկվում Հողօգտագործման/հանքի և Վերաբնակեցման տարածքները: Հողօգտագործման/հանքի տարածքների վերականգնումը հանդիսանալու է Տեղանքի վերականգնման ծրագրի մաս, որը պետք է մշակվի ՇԿ-ի կողմից, ինչպես նկարագրվում է ԲԱԱԳ-ում:

21. Երկրորդ փուլի ազդեցություններն ընդգրկված չեն սույն ՀՀՎԳՊ-ում: Ծրագրի ազդեցության տարածքների քարտեզը ներկայացված է Հավելված 2-ում:

22. Ծրագիրն ազդեցության է ենթարկելու 128 տնային տնտեսություններ, որոնցից 122-ը հարցվել են մարդահամարի ընթացքում: 122 ԱՏՏ-ների կազմում ընդհանուր առմամբ ընդգրկված են 594 անդամներ/անհատներ: Հողատարածքների վրա ազդեցությունն ընդգրկելու է մինչև 337 (102 սեփական(գրանցված), 4 համայնքային հողեր, 230 չգրանցված, և 1 պետական) հողակտորներ, որոնք ընդհանուր առմամբ զբաղեցնում են Ջրածոր, Արեգնադեմ, Գտաշե, Կապս և Բյուրակն բնակավայրերի 1,422,072.9 մ<sup>2</sup> մակերեսով տարածք<sup>2</sup>: Ծրագրից ամենաշատը տուժելու է Ջրածոր համայնքը (315 հողակտոր՝ 865,280.1 մ<sup>2</sup> մակերես տարածքով): Ծրագրով ազդեցության են ենթարկվելու նաև թվով 251 շենք/շինություններ: Թվով 38 հողակտոր օգտագործվում է մշակաբույսերի աճեցման համար, որոնցից 29-ում աճեցվում է սխտոր, իսկ 9-ում՝ իշառվույտ: Ընդհանուր առմամբ Մշակաբույսերի ընդհանուր տարեկան կորուստը կազմում է 10,587 կգ: Ավելին, ծրագրից ազդեցության են ենթարկվելու 1090 մրգատու ծառեր և թփեր:

---


<sup>2</sup> Ծրագրի ազդեցության ծավալը կախված է փոխհատուցման իրականացման տարբերակի ընտրությունից: Եթե Ջրածոր գյուղը տեղափոխվի վերաբնակեցման վայր (Տարբերակ 2), ընդհանուր առմամբ ծրագրի ազդեցությունը կաճի, քանի որ այս տարբերակով Ծրագիրը ձեռք է բերելու լրացուցիչ տարածք (Վերաբնակեցման տեղանքի հողատարածքներ): Նշված հողամասերի վրա ընդհանուր ազդեցությունը վերաբերում է Տարբերակ 2-ին:

**Աղյուսակ 1: Ազդեցությունների համառոտ նկարագիր**

| Ազդեցության տեսակը  | Ծավալ/քանակություն |
|---|--------------------|
| Ազդակիր տնային տնտեսությունների թիվը  | 128*               |
| Վերաբնակեցման տարբերակը նախընտրող տնային տնտեսությունների թիվը                              | 65                 |
| Գյուղատնտեսական եկամուտ բերող հողատարածքի 20% և ավելին կորցրած տնային տնտեսությունների թիվը | 57**               |
| Ազդակիր շինությունների թիվը   | 251                |
| Ազդակիր ծառերի և թփերի թիվը   | 1090               |
| Ազդակիր մշակաբույսերի ծավալը  | 10587 կգ           |
| * Որից 122 ԱՏՏ մարդահամար անցած տնային տնտեսություններն են                                  |                    |
| **55 ՏՏ փոխհատուցման Տարբերակ 1-ի դեպքում   |                    |



### Գծապատկեր 3: Ծրագրի ազդեցության տարածքներ



## 2. ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Ծրագրի իրավական և քաղաքականության շրջանակի համար հիմք են հանդիսանում Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը, «KfW» բանկի կայուն զարգացման ուղեցույցն ու համապատասխան ՀԲ (ԳՔ 4.12 և ՄՖԿ ԻՍ-5) և ՄԱԿ-ի չափանիշները, ինչպես նաև Հողային, ձկնային և անտառային պաշարների տիրապետման և օգտագործման հարցերի պատասխանատու կարգավորման կամավոր ուղեցույցները (Բանկի չափանիշներ կամ Կիրառելի չափանիշներ՝ ՀՀ օրենսդրության հետ միասին): Հիմք ընդունելով գործող օրենքների և քաղաքականության վերլուծությունը, մշակվել են ՀԶՎԳՊ-ի վերաբերյալ չափանիշներ: Որոշ դեպքերում այս չափանիշներն ավելի խիստ են, քան պետական օրենսդրությունը, սակայն այնուամենայնիվ, դրանք պետք է իրականացվեն Բանկի չափանիշներին համապատասխանելու համար և հակառակը:

### 2.1 Վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման հետ կապված սկզբունքները / նպատակները

23. KfW-ի ՎԲՇ/ՀԶՎԳՊ-ի պատրաստման ուղեցույցը (Ուղեցույց) սահմանում է, որ վերաբնակեցման նախապատրաստման և իրականացման սկզբունքներն ու խնդիրները, համաձայն ազգային օրենսդրության և ՀԲ ԳՔ 4.12-ի, պետք է առնվազն պարունակեն, սակայն չսահմանափակվեն, ստորև ներկայացված սկզբունքներով և դրանցից հետևող դրույթներով: Սկզբունքները, որոնք ներառվել են ՎԲՇ<sup>3</sup>-ում ու հաստատվել են ԾԳՄ-ի կողմից, ներառում են հետևյալը՝
- Խուսափել կամ առնվազն նվազագույնի հասցնել հարկադիր վերաբնակեցումը
  - Տեղեկացնել ազդակիր անձանց՝ վերաբնակեցմանը վերաբերող իրենց տարբերակների և իրավունքների մասին
  - Մեղմացնել հողերի ձեռք բերման անբարենպաստ սոցիալական և տնտեսական ազդեցությունները՝ (i) ակտիվների կորստի համար փոխարինման արժեքի չափով փոխհատուցում տրամադրելով, և (ii) ապահովելով, որ վերաբնակեցման աշխատանքները իրականացվեն տեղեկատվության բավարար բացահայտմամբ, խորհրդատվությամբ և ազդակիրների իրազեկ մասնակցությամբ, և
  - Բարելավել կամ առնվազն վերականգնել ազդակիր անձանց ապրուստի միջոցները և կենսամակարդակը (տես ստորև)
  - Ապահովել լրացուցիչ նպատակային օգնություն (օրինակ՝ վարկային միջոցներ, վերապատրաստում կամ աշխատատեղեր) և հնարավորություն տնտեսապես

<sup>3</sup> Ամբողջական ՎԲՇ հաշվետվությունը հասանալի է Ծրագրի վեբկայքում, ինչպես նաև ազդակիր համայնքների համայնքապետարաններում:

տեղահանված անձանց, որոնց կենսամակարդակը կամ եկամտի մակարդակը ենթարկվել է բացասական ազդեցության բարելավելու կամ առնվազն վերականգնելու իրենց եկամուտները, արտադրական մակարդակը և կենսամակարդակը

- Անհրաժեշտության դեպքում ազդակիր անձանց տրամադրել անցումային աջակցություն՝ հիմնվելով դրանց եկամտային հզորության, արտադրության մակարդակի և կենսամակարդակի վերականգնման համար պահանջվող ժամանակի ողջամիտ գնահատման վրա:
- Աջակցել ԱԱ-ին վերականգնելու իրենց տուժած կենսաապահովման միջոցները և անցումային օգնություն տրամադրել՝ ապրուստի միջոցները առնվազն նախկին մակարդակի վերականգնելու համար:
- ԱԱ-ին վերաձել Ծրագրի շահառու՝ իրականացնել նպատակային կենսաապահովման միջոցների վերականգնման ծրագրեր
- Վերաբնակեցման պլանի իրականացումը և արդյունքները կմշտադիտարվեն և կգնահատվեն, որպես թափանցիկ գործընթացի մի մաս:

24. Ուղեցույցի այս հիմնարար սկզբունքներն արտահայտում են այն գիտակցումը, որ վերաբնակեցումը կարող է չափազանց վնասակար լինել մարդկանց և համայնքների համար:

25. Այն դեպքերում, երբ հնարավոր չէ խուսափել հարկադիր վերաբնակեցումից ՎԳԾ/ՀՁՎԳՊ՝ կպատրաստվի հասցեագրելու հողերի ձեռքբերման, փոխհատուցման (օրինակ՝ բերքի, ծառերի և այլն) և վերաբնակեցման (առկայության դեպքում) խնդիրները՝ օժանդակելով ծրագրի ազդեցության կրողներին պահպանել կամ ավելացնել իրենց ապրուստի միջոցները և կենսամակարդակը մինչև ծրագրի սկիզբն ունեցած մակարդակի: Ուստի՝ ուղղակի և անուղղակի ռիսկերը պետք է հաշվի առնվեն (հասանելիության կորուստ), ինչպես նաև պետք է նեխատեսվի հատուկ աջակցություն խոցելի խմբերի համար:

## **2.2 Ազգային օրենսդրության շրջանակը**

26. ՀՀ-ում հասարակության և պետական կարիքների համար սեփականության օտարումը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով (2006թ. ) և այլ իրավական ակտերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման հիմքում ընկած է բացառիկ հանրային գերակա շահը:

27. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման սահմանադրական պահանջներն են.

a) Հողի օտարումը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով:

b) Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

28. 2006 թ. -ին ընդունված «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը (ՀԳՇՆՍՕ) սահմանում է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահի հասկացության և դրա որոշման կարգը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին (այսուհետ՝ սեփականատերեր) սեփականության իրավունքով պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կամ հաշվառված սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների (անշարժ կամ շարժական գույք, գույքային իրավունքներ, արժեթղթեր և այլն) վրա (այսուհետ՝ օտարվող սեփականություն):

29. Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետևյալ նպատակները՝ պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը; էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի ուսումնասիրման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հեռահաղորդակցման ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը; շրջակա միջավայրի պահպանության ապահովումը:

30. Օրենքը թույլ է տալիս ձեռքբերողին դիմել ՀՀ Կառավարություն նախնական ուսումնասիրություն իրականացնելու օտարման ենթակա սեփականությունը մինչև Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման պահանջի ներկայացնելը: Այս տարբերակի կիրառման դեպքում, ձեռքբերողը պետք է գրավոր դիմում ներկայացնի կառավարություն սեփականության նախնական ուսումնասիրություն կատարելու վերաբերյալ: Եթե կառավարությունը բավարարի դիմումով ներկայացված պահանջը, (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենքի հոդված 7-ի 2-րդ մաս), այն ընդունում է օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության մասին որոշում:


31. Որոշումը պետք է սահմանի՝

- Բացառիկ գերակա հանրային շահը
  - Օտարման ենթակա սեփականության տեղանքը
  - Լիազորված անձը
  - Օտարման ենթակա սեփականության ձեռքբերողը
  - Ուսումնասիրման ժամանակահատվածը, որը չպետք է գերազանցի Կառավարության որոշման ուժի մեջ մտնելուց հետո 2 շաբաթը,
32. Ձեռքբերողի և պետական մարմնի միջև կնքված պայմանագիրը ներառվում է որոշման մեջ, որպես հավելված: Այս պայմանագիրը նույնպես պետք է ուժի մեջ մտնի որոշման հետ միասին: Լիազորված անձը մյուսների հետ մեկտեղ կարող է մասնակցել ուսումնասիրությանը:
33. Նախնական ուսումնասիրությունից հետո (կախված արդյունքներից) ձեռքբերողը կարող է գրավոր դիմում ներկայացնել Կառավարություն հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման համար, իսկ ձեռքբերողի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք, հոդված 6, մաս 4), կառավարությունը կարող է որոշում ընդունել տվյալ սեփականության նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահի ճանաչման վերաբերյալ:
34. Կառավարության որոշումը ներառում է հետևյալ տեղեկատվությունը
- Բացառիկ գերակա հանրային շահի առարկան
  - Օտարման ենթակա հողակտորի ձեռքբերողին
  - Օտարման ենթակա սեփականության վայրը
  - Օտարման գործընթացը մեկնարկելու վերջնաժամկետը, որը չպետք է տևի ավելի քան 1 տարի, շարժական գույքի դեպքում, և ոչ ովել քան 5 տարի անշարժ գույք հանդիսացող սեփականության օտարման դեպքում
  - Լիազորված անձը
  - Օտարվող սեփականության նկարագրության վերաբերյալ արձանագրության կազմման ընթացակարգ
35. Ձեռքբերողի և պետական մարմնի միջև կնքված պայմանագիրը ներառվում է որոշման մեջ, որպես հավելված: Այս պայմանագիրը նույնպես պետք է ուժի մեջ մտնի որոշման հետ միասին:
36. Անհրաժեշտ է նշել, որ լիազորված անձի պարտավորությունները տարբեր են՝ կախված նրանից, թե ով է ձեռքբերողը: Այսպիսով, եթե ձեռքբերողը առևտրային կազմակերպություն է, ապա լիազորված անձը պարտավոր է համակարգել սեփականության օտարման հետ

կապված աշխատանքները: Մյուս կողմից, եթե ձեռքբերողը պետությունն է, ապա լիազորված անձը իրենց համակարգման հետ միասին, հանձն է առնում սեփականության օտարման հետ կապված աշխատանքների իրականացումը:

37. Որոշման հաստատումից հետո և սեփականության օտարումից առաջ, ձեռքբերողը պարտավոր է պատրաստել ազդակիր սեփականության նկարագրության արձանակգրությունները ՀՀ օրենքով սահմանված կարգով և օրինակելի ձևաթղթին համապատասխան՝ ներկայացնելով այն ԱԱ/ՍՏՏ-ներին: Նկարագրության արձանակգրության օրինակելի ձևը ներկայացված է Հավելված 14-ում:
38. Սեփականության օտարումը բաղկացած է երեք հաջորդական փուլերից: Փուլ 1՝ ձեռքբերողը փորձում է բանակցել սեփականատիրոջ հետ՝ նրան ուղարկելով սեփականության օտարման մասին պայմանագրի նախագիծը, և եթե բանակցությունները հաջողությամբ են ավարտվում, ապա փոխհատուցման ենթակա գումարը վճարվում է համաձայն ձեռքբերողի և սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի:
39. Փուլ 2՝ այն դեպքում, երբ այդ բանակցությունները տապալվում են, ապա ձեռքբերողը պետք է իրականացնի սեփականության գնահատում (անշարժ գույքի դեպքում), որի համար նա պետք է ծառայությունների մատուցման պայմանագիր կնքի որակավորված գնահատողի հետ և փոխանցի գնահատողի կողմից սահմանված շուկայական արժեքը դատարանի կամ նոտարի դեպոզիտային հաշվեհամարին: Նշված գումարը պետք է սեփականատերը կանխիկացնի, և եթե վերջինս այն հաշվից չի կանխիկացնում յոթ օրվա ընթացքում, ապա ձեռքբերողը պետք է դիմի դատարան՝ փուլ 3: Նմապատիպ դատական գործերում դատարանի քննարկման առարկա կարող է լինել միայն փոխհատուցման չափի հարցը: Դատարանի որոշմամբ գործընթացը ավարտվում է և ձեռք բերողը ճանաչվում է օտարման ենթակա գույքի սեփականատեր (տե՛ս ստորև օտարման ընթացակարգի գործողությունների հաջորդականության աղյուսակը):

**Գծապատկեր 4: Ազգային օտարման գործընթացի ընթացքի աղյուսակը**



## **ՀՀ Հողային օրենսգիրքը**

40. Պետական և համայնքային հողերի նվիրաբերություն՝ Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ, նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով: Կառավարության համապատասխան որոշման մեջ և նվիրաբերության պայմանագրում պետք է սահմանվեն հողամասի օգտագործման նպատակներն ու պայմանները:»
41. Պետական և համայնքային հողերի ուղղակի վաճառք՝ Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Սոցիալական կամ բարեգործական կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով պետության սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ: Կառավարության համապատասխան որոշմամբ և հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրում պետք է սահմանվեն իրականացվելիք ծրագրերը կամ ներդրման չափն ու պայմանները, ինչպես նաև հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրի պայմանների խախտման համար պատասխանատվությունը»

## **ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը**

42. Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հարկադիր գույքային սերվիտուտ կարող է սահմանվել հարևան կամ այլ հողամասով անցնելու, երթևեկելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի կամ խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման, հողաբարելավման, վերանորոգման, շինարարական աշխատանքներ կատարելու կամ գերակա գույքի սեփականատիրոջ այլ կարիքները բավարարելու համար, որոնք չեն կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու, կամ որոնց ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ»:

### **«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք**

43. Օրենքը սահմանում է անշարժ գույքի գնահատման գործունեությունը, և կարգավորում է անշարժ գույքի գնահատման հետ կապված հարաբերությունները: Հոդված 6-ը սահմանում է անշարժ գույքի գնահատման օբյեկտները. Համաձայն օրենքի (հոդված 8)՝ անշարժ գույքի գնահատումը պարտադիր է հետևյալ դեպքերում.



- a) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման դեպքերում, բացառությամբ պետական գույքի մասնավորեցման և պետական կամ համայնքային հողերի օտարման դեպքերի.
- b) անշարժ գույքը պետության կամ համայնքների կարիքների համար ձեռք բերելու (վերցնելու) դեպքերում.
- c) անշարժ գույքն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում կամ հիմնադրամներում ներդնելու դեպքերում.
- d) անշարժ գույքի բռնագանձման հետևանքով իրացման դեպքերում.
- e) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

44. Անշարժ գույքի գնահատման գործունեության համար անհրաժեշտ է որակավորում: Որակավորման վկայագիրը տրամադրվում է լիազորված մարմնի կողմից:

**Աղետի գոտու բնակավայրերի USS-երին բնակարանների/տների հատկացումը կարգավորող իրավական ակտեր**

- ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» թիվ 1337-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրածոր համայնքի երկրաշարժի հետևանքով քանդված կամ քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչներին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերում ընդգրկելու մասին» թիվ 828-Ա որոշում:
- ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1402-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ

կատարելու, Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզպետարաններին գումար հատկացնելու մասին» N1610-Ն որոշում:

- ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության միջոցառումները հաստատելու մասին» N712-Ն որոշում:

## 2.3 ՀՀ օրենսդրության և հարկադիր վերաբնակեցման վերաբերյալ Բանկի չափանիշների համեմատական աղյուսակ

| Վերաբնակեցման թեմա                            | ՀՀ օրենսդրական պահանջներ   | Բանկի չափանիշներ (ԲՉ)   | Բացեր/տարբերություն ներ   | Բացեր կարգավորման մոտեցումը  |
|---|--|---|---|--|
| <b>Շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվություն</b> | <p>Ազդեցությունների քանակական գնահատականի/ծախսերի, իրավունքի և փոխհատուցման չափի մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի ԱԱ-ԱՏՏ-ներին մինչև հանրային գերակա շահ ճանաչելու կամ նախնական ուսումնասիրություն կատարելու մասին կառավարության որոշմամբ սահմանված օրը:</p> <p>ՀՀ օրենսդրությամբ նախատեսում է Ծրագրի տեղեկատվության (ազդեցությունը, տևողությունը, ռիսկերը և այլն) հրապարակում հանրային խորհրդատվությունների և փաստաթղթերի բացահայտման միջոցով:</p> | <p>Հողերի, կառույցների և այլ գույքի արժեքի, իրավունքների և փոխհատուցման չափի և քանակական գնահատականի և ֆինանսական աջակցության վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ամբողջովին տրամադրվեն ԱԱ-ներին:</p> <p>Ազդեցության ենթակա համայնքներին պետք է տրամադրվի համապատասխան տեղեկատվություն՝ i) Ծրագրի նպատակը, բնույթը և մասշտաբը. (ii) առաջարկվող ծրագրի գործողությունների տևողությանը. (iii) ցանկացած ռիսկերը և այդ համայնքաների վրա հնարավոր ազդեցությունները և համապատասխան մեղմացման միջոցառումները. iv) շահագրգիռ կողմերի ներգրավման նախատեսվող գործընթացը. և (v) բողոքարկման մեխանիզմը:</p> | <p>ՀՀ օրենսդրության և ԲՉ պահանջները հիմնականում նույնն են</p>               | <p>Կիրառելի են և՛ ԲՉ, և՛ ՀՀ օրենսդրությունը (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք):</p> |
| <b>Վերաբնակեցման նվազեցում</b>                | <p>Վերաբնակեցման նվազեցման վերաբերյալ դրույթներ չկան</p>   | <p>Անհրաժեշտ է դիտարկել այլընտրանքներ վերաբնակեցումը նվազեցնելու համար</p>  | <p>ՀՀ օրենսդրությամբ վերաբնակեցման նվազեցման պահանջ գոյություն չունի</p>    | <p>Կիրառելի է ԲՉ:</p>  |
| <b>Ելակետային հետազոտություն</b>              | <p>ՀՀ օրենսդրությունը (ՀԳՇՆՍՕ ՀՀ օրենք) սահմանում է նկարագրության արձանագրությունը, որում նշվում է , (i) ազդակիր տարածքի առկա</p>  | <p>Մարդահամարում պետք է ներառված լինեն (i) ազդակիր տարածքի առկա բնակիչները (ii) տեղահանված տնային տնտեսությունների ստանդարտ բնութագրերը, ինչպես նաև տեղահանված բնակչության ապրուստի</p>   | <p>Հետազոտության վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջը սահմանափակ է, և չի</p> | <p>Այս բացը լրացնելու համար կիրառվում է և՛ ԲՉ, և՛ ՀՀ օրենսդրությունը (Հանրության գերակա շահերի ապահովման</p>   |

|  |  |   |   |   |
|--|--|---|---|---|
|  | <p>բնակիչը; (ii) տեղահանված տնային տնտեսությունների ստանդարտ բնութագրերը; (iii) ակտիվների ակնկալվող կորուստի ծավալը –ամբողջական կամ մասնակի</p>          | <p>միջոցների մասին հիմնական տեղեկատվությունը; (iii) ակտիվների ակնկալվող կորուստների (ամբողջական կամ մասնակի) ծավալը, ինչպես նաև տեղահանման չափը՝ ֆիզիկական կամ տնտեսական, խոցելի անձանց կամ խմբերի վերաբերյալ տեղեկատվություն, (iv) խոցելի խմբերի կամ անձանց մասին տեղեկատվություն; (v) Կանոնավոր կերպով տեղահանված անձանց ապրուստի միջոցների և կենսապայմանների վերաբերյալ տեղեկատվության թարմացման դրոյթներ, (vi) հողօգտագործման իրավունքի և փոխանցման համակարգեր, ինչպես նաև ծրագրի տեղանքում տարբեր հողօգտագործման իրավունքների համակարգերից բարձրացված հարցերը; (vii) ազդակիր համայնքներում սոցիալական փոխազդեցության օրինակներ, և թե ինչպիսի ազդեցության են դրանք ենթարկվելու Ծրագրի կողմից; (viii) հանրային ենթակառուցվածքային և սոցիալական ծառայություններ, որոնք ազդեցության են ենթարկվելու և (ix) տեղահանված համայնքների սոցիալական և մշակութային բնութագրեր</p> | <p>անդրադառնում ԲԶ -ի կողմից պահանջված որոշ առանձնահատկություններին</p> | <p>Նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք): Մարդահամարի ձևաթղթի օրինակը մշակվել են և կցվում են սույն ՀԶԿԳՊ-ին: Գույքագրումն իրականացվելու է ՀՀ կառավարության 16. 09. 2010-ի N 1275-Ն որոշմամբ հաստատված նկարագրության արձանագրության օրինակելի ձևով:</p> |
| <p><b>Իրավունքի ուժը կորցրած ամսաթիվ</b></p> | <p>Անձինք, ովքեր ներխուժում են տարածք ուժը կորցրած ամսաթվից/վերջնաժամկետից հետո իրավասու չեն փոխհատուցման կամ ցանկացած այլ վերաբնակեցման աջակցության</p> | <p>Անձինք, ովքեր ներխուժում են տարածք ուժը կորցրած ամսաթվից/վերջնաժամկետից հետո իրավասու չեն փոխհատուցման կամ ցանկացած այլ վերաբնակեցման աջակցության</p>  | <p>ՀՀ օրենսդրության և ԲԶ պահանջները նույնն են</p>                       | <p>Կիրառելի են և՛ ԲԶ, և՛ ՀՀ օրենսդրությունը (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին ՀՀ օրենք):</p>   |

|   |   |  |  |   |
|---|---|--|--|---|
| <p><b>Գույքի գնահատում (հող)</b></p>                                    | <p>Հողի գնահատում՝ հիմնված առկա շուկայական արժեքի + գնահատված արժեքի 15% (ի լրումն ցանկացած գրանցման հետ կապված ծախսերի և փոխանցման հարկերի) Գրանցման և փոխանցման հարկերի հետ կապված ծախսերը հոգում է ձեռքբերողը Ծրագրի բյուջեի հաշվին:</p> | <p>ՄՖԿ ԻՍ5՝ Փոխարինման արժեքը սահմանվում է որպես ակտիվների շուկայական արժեք՝ գումարած գործարքի ծախսեր: Գնահատման այս եղանակը կիրառելիս շինությունների և ակտիվների մաշվածությունը չպետք է հաշվի առնվի: Շուկայական արժեքը սահմանվում է որպես այն արժեքը, որն անհրաժեշտ է՝ ազդակիր համայնքներին և անձանց կորցրած ակտիվները նմանատիպ արժեքի ակտիվներով փոխարինելու համար: Փոխարինման արժեքի որոշման գնահատման եղանակը պետք է փաստագրված լինի և ներառվի վերաբնակեցման և (կամ) ապրուստի միջոցների վերականգնման գործող ծրագրերում:</p>  | <p>ՀՀ օրենսդրության դրույթները ավելի շահավետ են ԱԱ/ԱԵՏ-ների համար:</p> | <p>Կիրառելի է ՀՀ օրենսդրությունը</p>  |
| <p><b>Գույքի գնահատում (բնակելի շինություններ և այլ կառույցներ)</b></p> | <p>Անշարժ գույքի գնահատում՝ հիմնված առկա շուկայական արժեքի վրա գումարած գնահատված արժեքի 15%-ը: (գրանցման հետ կապված ցանկացած ծախսերի և փոխանցման հարկերի հետ միասին )</p>  | <p>ՀԲ ԳՔ 4. 12՝ Գյուղատնտեսական նշանակության հողերի համար ազդակիր հողակտորի հարևանությամբ գտնվող հավասար արտադրողական պոտենցիալ ունեցող կամ օգտագործման մեջ գտնվող հողի շուկայական արժեքն է մինչև ծրագրի մեկնարկը կամ վերաբնակեցումը (երկուսից ավելի բարձր գինը)՝ գումարած այդ հողակտորի՝ ազդակիր հողատարածքի մակարդակին հասցնելու, ինչպես նաև ցանկացած գրանցման հետ կապված ծախսերը, փոխանցման հարկերը: Քաղաքային տարածքում գտնվող հողերի համար հավասար չափի և օգտագործման ենթակա, նմանատիպ հանրային ենթակառուցվածքներով և ծառայություններով ազդակիր հողակտորի հարևանությամբ</p> | <p>ԲԶ պահանջն ավելի շահավետ է ԱԱ-ի համար</p>                           | <p>Կիրառելի է ԲԶ պահանջը: դրամական փոխհատուցման փոխարեն առաջնահերթությունը կտրվի ոչ-դրամական փոխհատուցմանը: ԱԱ-ները կարող են ընտրել հողի տեսքով փոխհատուցումը և տեղափոխվել վերաբնակեցման տարածք, ներառյալ պատշաճ բնակելի շինության և փոխարինող հողի տրամադրումը: Գույքային փոխհատուցումը պետք է հաշվի առնի հողի դիրքը, հասանելիությունը և ենթակառուցվածքների որակը:</p> <p>Եթե ԱՏՏ-ները ընտրում են դրամական փոխհատուցումը (տան գնման վկայագրի տեսքով բնակելի տան դեպքում և դրամական փոխհատուցում այլ շինությունների դեպքում), ապա շինությունների դիմաց փոխհատուցվում են</p> |

|   |  |  |  |   |
|---|--|--|--|---|
|   |  | <p>գտնվող հողի մինչև վերաբնակեցումը շուկայական արժեքն է գումարած գրանցման հետ կապված ծախսերը, փոխանցման հարկերը</p> <p>ՀԲ ԳՔ 4. 12՝ Բնակելի շինությունների և այլ կառույցների համար, դա փոխարինվող շինության կառուցման շուկայական արժեքն է ազդակիր շինության նմանատիպ կամ ավելի լավ որակի տարածքում, կամ մասնակի ազդեցության ենթարկված կառույցի նորոգման դիմաց ծախսերն է գումարած շինանյութի տեղափոխման ծախսերը, և աշխատանքի հետ կապված ծախսերը գումարած գրանցման և փոխանցման համար վճարները:</p> |  | <p>փոխարինման արժեքի չափով բոլոր ԱԱ/ԱՏՏ-երը՝ անկախ շինության գրանցման կարգավիճակից:</p> <p>Փոխհատուցումից չեն նվազեցվի մաշվածության/գործարքից ստացված ծախսերն ու պահպանված նյութերի արժեքը:</p> <p>Փոխարինման արժեքի որոշման գնահատման մեթոդաբանությունը ներկայացված է ՀՁՎԳՊ-ում (տես՝ Հավելված 5):</p>   |
| <p><b>Հողի դիմաց փոխհատուցման իրավասություն</b></p> | <p>Միայն սեփականության գրանցման իրավունքի կրողներն են իրավասու հողի փոխհատուցման</p> | <p>Օրինական սեփականատերերին կամ պոտենցիալ իրավասու ԱԱ/ԱՏՏ-ներին տրամադրվում է փոխհատուցում իրենց կորցրած հողի դիմաց: Ոչ-իրավասու ԱԱ/ԱՏՏ-ներին տրամադրվում է վերաբնակեցման աջակցություն իրենց զբաղեցրած հողի համար:</p>   | <p>Համաձայն ՀՀ օրենսդրության՝ միայն սեփականության իրավունքի գրանցում ունեցողները կարող են փոխհատուցում ստանալ: ԲՁ ավելի շահավետ է ԱԱ/ԱՏՏ-ների համար:</p> | <p>Կիրառելի է ԲՁ:</p> <p>Հողի օրինական սեփականատերերը փոխհատուցում կստանան (i) առաջնահերթության կարգով կորցրած հողատարածքին համարժեք ԱԱ-ի համար ընդունելի մերձակա տարածքում փոխարինող հողակտորի տեսքով: Փոխհատուցումից չի նվազեցվի գործարքներից և գրանցումից առաջացած ծախսերը: (ii) Որպես այլընտրանք, եթե ԱԱ-ն ընտրում է դրամական փոխհատուցումը, ապա շուկայական կամ կադաստրային արժեքով (երկուսից ավելի</p> |

|  |  |   |   |  |
|--|--|---|---|--|
|  |  |   |   | բարձրը՝ գումարած 15% օժանդակություն:<br><br>Օրինականացման ենթակա ԱՏՏ-երը կօրինականացվեն, որից հետո նրանք կփոխհատուցվեն որպես սեփականատերեր:<br>Օրինականացման ենթակա հողերի օրինականացման ծախսերը/վճարները կկատարվեն Ծրագրի բյուջեի հաշվին (Պետական բյուջե): Այն ԱՏՏ-ները, որոնք իրավասու չեն օրինականացնել հողը կամ ովքեր օգտագործում են հողը առանց ֆորմալ իրավունքի (չգրանցված օգտագործող/ոչ-ֆերմալ վարձակալ), կփոխհատուցվեն միայն հողի բարելավումների համար: |
| <b>Գույքի հասանելիության կորուստի դիմաց փոխհատուցում</b>           | Այս խնդիրը ուղղակիորեն չի կարգավորվում իրավական ակտով, սակայն կախված գույքի տեսակից, խնդիրը կարող է լուծվել քաղաքացիական իրավունքի շրջանակում: | ԱԱ/ԱՏՏ-ները կստանան փոխհատուցում Գույքի հասանելիության կորուստի դիմաց կամ այդ գույքը կփոխարինվի ԱԱ-ի համար ընդունելի համարժեք կամ հավասար արտադրողականության մեկ այլ գույքով: | Այս խնդիրը ուղղակիորեն չի կարգավորվում << օրենսդրությամբ  | Կիրառելի է ԲԶ:   |
| <b>Գույքի կորստի (հողից բացի) դիմաց փոխհատուցման իրավասություն</b> | Միայն գույքի (հողից բացի) նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք են իրավասու փոխհատուցում ստանալու                                     | Օրինական սեփականատերերին, օրինականացման ենթակա ԱԱ/ԱՏՏ-ներին տրամադրվում է գույքի (հողից բացի) կորուստի դիմաց փոխհատուցում (ներառյալ ծառերը)                                   | Համաձայն << օրենսդրության՝ միայն սեփականության իրավունքի գրանցում ունեցողները կարող են փոխհատուցում ստանալ: ԲԶ ավելի շահավետ է ԱԱ/ԱՏՏ-ների համար: | Կիրառելի է ԲԶ: Տները և այլ շինությունները փոխհատուցվելու են ինչպես ներկայացված է Իրավասության շրջանակում: ԱԱ/ԱՏՏ-ներին (սեփականատերերին, վարձակալներին, փաստացի օգտագործողներին) ծառերի և բերքի կորուստի դիմաց   |

|  |  |   |   |   |
|--|--|---|---|---|
|  |  |   |   | շուկայական արժեքով դրամական փոխհատուցումը տրվում է՝ հիմք ընդունելով ծառերի տեսակը, տարիքը և բերքատվությունը:  |
| <b>Մշակաբույսերի կորուստի դիմաց փոխհատուցման իրավասություն</b>           | Չի սահմանում որևէ փոխհատուցում մշակաբույսերի կորուստի դիմաց  | Օրինական սեփականատերեր, օրինականացման ենթակա ԱԱ/ՍՏՏ-ներ և օրինականացման ոչ ենթակա ԱԱ/ՍՏՏ-ները փոխհատուցվում են գույքի (հողից բացի) կորուստի դիմաց   | «Օրենսդրությունը որևէ փոխհատուցում չի նախատեսում մշակաբույսերի կորուստի դիմաց: ԲԶ ավելի շահավետ է ԱԱ-ի համար:   | Կիրառելի է ԲԶ: Մշակաբույսեր՝ դրամական փոխհատուցում ազդակիր հողի վրա 1 տարվա միջին բերքի շուկայական միջին արժեքով: Օրինականացման ոչ ենթակա ԱԱ/ՍՏՏ-ներին նույնպես տրամադրվում է մշակաբույսի կորուստի դիմաց փոխհատուցում: Բազմամյա մշակաբույսերի կորուստի դիմաց փոխհատուցումը կներառի նաև մշակաբույսերը ցանելու հետ կապված ծախսերը, ի լրումն ազդակիր հողի վրա 1 տարվա միջին բերքի շուկայական միջին արժեքի: |
| <b>Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման կորուստների փոխհատուցում</b> | Ձեռնարկատիրական գործունեության ընդհատման կորուստների փոխհատուցում կամ եկամտի վերականգնում չի նախատեսվում | Այն դեպքերում, երբ հողերի օտարումը կամ հողօգտագործման սահմանափակումներն ազդում են առևտրային կառույցների վրա, տուժած ձեռնարկությունների սեփականատերերը կփոխհատուցվեն այլ վայրերում առևտրային գործունեության վերականգնման ծախսերի, անցումային ժամանակահատվածում կորցրած շահույթի համար, ինչպես նաև տեղակայանքի, հաստոցի կամ այլ սարքավորման փոխադրման և վերազինման ծախսերի համար: | «Օրենսդրությունը ձեռնարկատիրական գործունեության ընդհատման կորուստների փոխհատուցում կամ եկամտի վերականգնում չի նախատեսում: Փոխհատուցվում է միայն իրական վնասը: | Կիրառելի է ԲԶ: Իրավասության շրջանակում ներկայացված փոխհատուցումը կտրամադրվի ԱԱ-երին ձեռնարկատիրական գործունեության կորուստի կամ ընդհատման դիմաց, ինչպես նաև աշխատանքի կորուստի համար:   |



|  |   |   |  |   |
|--|---|---|--|---|
| <p><b>Փոխհատուցման տարբերակների միջև ընտրություն</b></p> | <p>ՀՀ օրենսդրությունը նախատեսում է միայն հողի փոխհատուցման մեկ տարբերակ, որն է դրամական փոխհատուցումը շուկայական արժեքով գումարած ազդակիր սեփականության/գույքի 15%</p>  | <p>Նախընտրությունը պետք է տրվի հողի վրա հիմնված վերաբնակեցման ռազմավարություններին տեղահանված անձանց համար, ում ապրուստի միջոցները/եկամուտի աղբյուրները գոյանում են հողագործությունից (սա ներառում է նաև փոխարինող բնակարանի շինարարություն): Եթե ԱԱ-ի համար նախընտրելի չէ հողի/տան տեսքով փոխհագուցումը, եթե հողի տրամադրումը բացասական ազդեցություն կունենա հողամասի կայուն զարգացման կամ պահպանվող տարածքի վրա, կամ եթե հողի դիմաց պատշաճ գին չի առաջարկվում, ապա պետք է տրամադրվեն աշխատանքի կամ ինքնազբաղվածության հնարավորություն ընձեռող ոչ հողի վրա հիմնված փոխհատուցման տարբերակներ, հողի և այլ գույքի դիմաց դրամական փոխհատուցման հետ մեկտեղ:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում փոխհատուցման ընտրության հնարավորություններ: ԲԶ պահանջն ավելի շահավետ է ԱԱ-ի համար:</p>   | <p>Կիրառելի է ԲԶ: ԱԱ-ն հնարավորություն կունենա շրջանակում նշված փոխհատուցման տարբերակներից:</p> |
| <p><b>Փոխհատուցման և տեղափոխման վճար</b></p>             | <p>Եթե սեփականությունը օտարվում է երկկողմանի համաձայնությամբ, ապա կողմերը որոշում են վճարման ամսաթիվը: Դատարանի միջոցով օտարման դեպքում փոխհատուցումը փոխանցվում է դեպոզիտային հաշվին մեկ ամսվա ընթացքում պայմանագրի նախագծի ներկայացումից երեք ամսվա ժամկետի լրանալուց հետո: ԱԱ/ԱՏՏ-ները կարող են օգտագործել սեփականությունը մինչև ձեռքբերողի կողմից</p> | <p>Ձեռքբերված հողի վրա որևէ շինարարություն չի կարող իրականացվել մինչև սահմանված փոխհատուցումների տրամադրումը ԱԱ/ԱՏՏ-ներին:</p>  | <p>Միակ բացն այն է, որ ԲԶ պահանջում է սահմանված փոխհատուցման ամբողջական վճարում մինչև շինաշխատանքների մեկնարկը: Մինչդեռ ՀՀ օրենսդրությունը նախատեսում է վճարման ժամանակացույցի համաձայնեցում կողմերի միջև երկկողմանի</p> | <p>Կիրառելի է ԲԶ:</p>   |

|                                      |  |  |   |   |
|--------------------------------------|--|--|---|---|
|                                      | <p>սեփականության իրավունքի պետական գրանցումը:<br/>Դատարանի միջոցով օտարման դեպքում սեփականությունը կարող է օգտագործվել ԱԱ/ԱՏՏ-ի կողմից երկու ամսվա ժամանակահատվածում</p> |  | <p>համաձայնությամբ ձեռքբերման դեպքում</p>                       |   |
| <p><b>Լրացուցիչ աջակցություն</b></p> | <p>ՀՀ օրենսդրությունը լրացուցիչ օժանդակություն չի նախատեսում</p>   | <p>ԲԶ-ն պահանջում է խիստ վերաբնակեցման ընթացքում ԱԱ/ԱՏՏ-ների կողմից իրականացված ծախսերի փոխհատուցում</p> | <p>ՀՀ օրենսդրությամբ լրացուցիչ օժանդակություն նախատեսված չէ</p> | <p>Կիրառելի է ԲԶ:<br/>ԱՏՏ-ները կստանան նաև հետևյալ ֆինանսական աջակցություն<br/>հոգալու ձեռքբերման և փոխհատուցման ծախսերի հետ կապված վճարներ, որոնք ներառում են</p> <ul style="list-style-type: none"> <li>• Իրավաբանի (տեղական կամ արտասահմանից) համար նախատեսված վճար;</li> <li>• Պետական անձնագրի տվյալների թարմացման հետ կապված ծախսեր (եթե ժամկետը լրացել է);</li> <li>• Ժառանգության ընդունման հետ կապված ծախսեր:</li> <li>• Օրինականացման ենթակա հողերի օրինականացման ծախսերը:</li> <li>• Հողերի ձեռքբերման հետ կապված գործարքներից ստացված հարկեր և վճարներ,</li> </ul> <p>Վերոնշյալ ծախսերն ու վճարները հատկացվում են ծրագրի բյուջեից</p> |

|   |   |  |   |  |
|---|---|--|---|--|
| <p><b>Կենսաապահովման միջոցների վերականգնում</b></p> | <p>ՀՀ օրենսդրությունը որևէ դրույթ չի նախատեսում եկամտի/ապրուստի միջոցի վերականգնման համար</p> | <p>Բացի կորցրած ակտիվների փոխհատուցումից (առկայության դեպքում) տնտեսապես տեղահանված անձինք, որոնց կենսաապահովման եկամուտները կամ եկամտի մակարդակն ենթարկվել է բացասական ազդեցության, նաև հնարավորություն կստանան բարելավելու կամ գոնե վերականգնելու իրենց եկամուտ ստեղծող կարողությունները, արտադրության մակարդակը և կենսամակարդակը:</p> | <p>ՀՀ օրենսդրությունը որևէ դրույթ չի նախատեսում եկամտի/ապրուստի միջոցի վերականգնման համար</p> | <p>Կիրառելի է ԲԶ: ԱԱ/ԱՏՏ-ն կօգտվի հետևյալ կենսաապահովման միջոցների վերականգնման միջոցառումներից, անկախ ԱԱ-ի կողմից փոխհատուցման տեսակի ընտրությունից, որը նպատակ ունի ապահովելու, որպեսզի ԱԱ-ն ունենա նվազագույնը միևնույն կամ առավել բարձր կենսամակարդակ՝ խիստ ազդեցությունների դիմաց, տրանսպորտի համար, ինչպես նաև խոցելի ԱԱ/ԱՏՏ-ներին համար նախատեսված օժանդակություն (ներկայացված է 8 ութերորդ բաժնում):</p> <p>ԱՏՏ-ները իրավասու են հետևյալ կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների՝ Վերապատրաստումներ Ի լրումն վերոնշյալ կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների, ԱԱ/ԱՏՏ-ներին հնարավորություն կընձեռնվի մասնակցելու վերապատրաստման ծրագրերին, ֆինանսների կառավարման և գյուղատնտեսական հմտություններ զարգացնելու նպատակով, որը կօգնի</p> |
|---|---|--|---|--|

|                                    |   |   |   |   |
|------------------------------------|---|---|---|---|
|                                    |   |   |   | <p>ավելացնել գյուղատնտեսական եկամուտը:</p> <p>Աշխատանքով ապահովում շինաշխատանքների ընթացքում. ԱԱ/ԱՏՏ-ներին առաջնահերթություն կտրվի ծրագրի հետ կապված աշխատանքներում ներգրավվելու հարցում:</p> <p>Կենսաապահովման միջոցառումները ավելի մանրամասն ներկայացված են հաշվետվության 7-րդ բաժնում:</p> |
| <b>Խոցելի խմբերին աջակցություն</b> | <p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն որևէ հատուկ աջակցություն խոցելի խմբերին</p>  | <p>ԲԶ-ով սահմանված նպատակներին հասնելու համար, հոտուկ ուշադրություն է դարձվում խոցելի խմբերի կարիքներին, որոնց ունի են, հատկապես աղքատության շեմից ցածր տեղահանված անձինք, հողագուրկները, տարեցները, կանայք և երեխաներ, տեղացիները, էթնիկ փոքրամասնությունները կամ այլ տեղահանված անձինք, ովքեր պաշտպանված չեն հողի փոխհատուցման մասին ՀՀ օրենսդրությամբ:</p> | <p>Խոցելի խմբերի մասին որևէ դրույթ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ</p>  | <p>Այս բացը լրացնելու համար սույն ՀԶՎԳՊ-ով նախատեսված է հատուկ օժանդակություն խոցելի ՏՏ-երի համար:</p>  |
| <b>Բողոքների կառավարում</b>        | <p>«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք մասին ՀՀ օրենքը սահմանում է այն դեպքերը, երբ ԱԱ/ԱՏՏ-ն կարող է բողոքը ներկայացնել լիազորված պետական մարմին կամ դատարան</p> | <p>Երրորդ անձանց կողմից առաջարկվող մատչելի ընթացակարգեր վերաբնակեցումից ծագող վեճերի կարգավորման համար. Բողոքների կարգավորման այսպիսի մեխանիզմները կիրառելիս պետք է հաշվի առնել դատական ընթացակարգի առկայությունը, ինչպես նաև համայնքային և վեճերի կարգավորման ավանդական մեխանիզմները</p>   | <p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգը բավականաչափ մատչելի չէ, քանի որ դատական ընթացակարգը բավականին խճճված է, և ԱԱ/ԱՏՏ-ն կարող է դիմել դատարան միայն</p> | <p>Այս բացը լրացնելու համար մշակվել է Բողոքների կարգավորման մեխանիզմի մասին ձեռնարկ, որը հակիրճ ներկայացվում է սույն ՀԶՎԳՊ-ում:</p>   |

|   |   |  |   |   |
|---|---|--|---|---|
|   |   |  | <p>օրենքով սահմանված հատուկ դեպքերում: ՏԻՄ-երը և ՀԿ-ները չեն ներգրավվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված բողոքների կարգավորման մեխանիզմում:</p> |   |
| <p><b>Մշտադիտարկում և գնահատում</b></p> | <p>ՀՀ օրենսդրությունը չի սահմանում վերաբնակեցման իրականացման ընթացքում մշտադիտարկման և գնահատման ընթացակարգ</p> | <p>Բանկի կողմից ընդունելի, ԾԳՄ-ի կողմից վերաբնակեցման աշխատանքների մշտադիտարկում, որը լրացվում է անկախ մոնիտորինգի մասնագետներով, ապահովելու համար լիարժեք և օբյեկտիվ տեղեկատվությունը, կատարողականը մշտադիտարկող ցուցանիշներ, վերաբնակեցման աշխատանքների արդյունքներ, տեղեկանված անձանց ներգրավումը մշտադիտարկման գործընթացում, բոլոր վերակառուցման աշխատանքների և համապատասխան մշակման աշխատանքների ավարտից հետո ողջամիտ ժամանակահատվածում վերաբնակեցման ազդեցության գնահատում, վերաբնակեցման մշտադիտարկման արդյունքների օգտագործում ուղղորդելու հաջորդող իրականացումը</p> | <p>ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն վերաբնակեցման իրականացման ընթացքում մշտադիտարկման և գնահատման դրույթներ</p>                              | <p>Այս բացը լրացնելու համար սույն ՀԶՎԳՊ-ով մշակվել են մշտադիտարկման միջոցառումներ</p> |

## 2.4 Բացերի/տարբերությունների վերլուծություն

45. Ընդհանուր առմամբ ՀՀ օրենսդրությունը պատշաճ կերպով արտացոլում է «KfW»- բանկի կիրառելի չափանիշները, սակայն անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի տարբերությունների/բացերի: Այս տարբերություններից ամենաէականը այն է, որ ՀՀ օրենսդրությամբ/կանոնակարգերով շեշտը դրվում է սեփականության ֆորմալ իրավունքի վրա և գրանցված ազդակիր գույքի փոխհատուցման վրա, մինչդեռ «KfW»-ի քաղաքականությունը նախատեսում է գույքի փոխհատուցում, անկախ գրանցման կարգավիճակից, ինչպես նաև կենսամակարդակի վերաանգնամն միջոցառումներ: Բացի այդ, «KfW»-ի քաղաքականությունը նախատեսում է նաև հատուկ օժանդակության տեսակներ վերաբնակեցման ընթացքում ԱԱ/ԱՏՏ-ներին օժանդակելու համար, խոցելի ՏՏ-երի համար, ինչպես նաև ՏՏ-երի ներգրավմամբ ակտիվ հանրային լուումներ: ՀՀ օրենսդրությունը չի պահանջում ՀԶՎԳՊ-ի մշակում:
46. Բացերի/տարբերությունների խնդիրը կարգավորվում է հետևյալ սկզբունքի հիման վրա՝ ցանկացած տարբերության դեպքում կիրառվում է ԱԱ-ի համար առավել շահավետ կարգավորումը (ազգային օրենսդրության կամ ՀԲ պահանջների):

### 3. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

47. Համաձայն Բանկի չափանիշների և Ծրագրի ՎԲՇ-ի՝ անհրաժեշտ է իրականացնել բոլոր հնարավոր միջոցառումները Ծրագրի մասին դեռևս վաղ փուլում ԱԱ-ներին տեղեկացնելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նաև պատշաճ խորհրդատվություն տրամադրել ԱԱ-ներին և մյուս շահույններին (տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև հասարակության լայն շերտերը, ներառյալ ՀԿ-ները)՝ նրանց հնարավորություն ընձեռելով արդյունավետ մասնակցություն ունենալ վերաբնակեցման գործողությունների պլանավորմանն ու իրականացմանը: ԾԳՄ-ը՝ համագործակցելով ՀՁՎԳՊ ԻԽ-ի հետ, պետք է ժամանակին համապատասխան տեղեկատվությունը տրամադրի ԱԱ-ներին և ազդակիր համայնքներին՝ առաջարկելով նրանց ակտիվ մասնակցություն ունենալ վերաբնակեցման գործողությունների պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացում:
48. Սույն բաժինը նկարագրում է վերաբնակեցման պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացում ԱԱ-ների և այլ շահառուների ներգրավման ընթացակարգը: Այն նկարագրում է նաև ՀՁՎԳՊ-ի վերաբերյալ տեղեկատվության, (ներառյալ կորցրած գույքի դիմաց փոխհատուցումները, փոխհատուցման իրավունքները, վերաբնակեցմանն ուղղված աջակցությունն ու բողոքների կարգավորման մեխանիզմը) տարածումը ԱԱ-ների և այլ շահառուների շրջանում: Առանձին ենթաբաժնով մանրամասնվում է նաև ազդակիր համայնքներում իրականացված խորհրդատվական հանդիպումները, ներառյալ ներկայացված տեսակետների համառոտ նկարագրերը, և թե ինչպես են այդ տեսակետները հաշվի առնվել վերաբնակեցման պլանի մշակման ընթացքում:

#### 3.1 Շահառուների ներգրավման պլան

49. Ֆիխտնեռ ընկերությունը իրականացրել է շահառուների վերլուծություն և մշակել է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը (ՇԿՆՊ<sup>4</sup>), որը հաստատվել է ԾԳՄ-ի և «KfW» բանկի կողմից: Նախնական ՇԿՆՊ-ն պարունակում է շահառուների ներգրավման հիմունքները մինչև ԲՍԱԳ և ՀՁՎԳՊ փաստաթղթերի ավարտելը: Վերջնական ՇԿՆՊ-ն կմշակվի ԲՍԱԳ խորհրդատվության վերջին փուլում:
50. Ֆիխտնեռ ընկերությունը ԲՍԱԳ-ի ՀՁՎԳՊ-ի ուսումնասիրության փուլում՝ համագործակցելով է ԾԳՄ-ի հետ, Ծրագրի շրջանակներում մշակել, կազմակերպել և իրականացնել է հանրային քննարկումների և հրապարակումների կամպանիա: Շահագրգիռ կողմերի հետ ակտիվ քննարկումներ են անցկացվել ԲՍԱԳ և ՀՁՎԳՊ մշակման փուլում, ներառյալ տեղի բնակչության, համապատասխան մարզային և պետական գերատեսչությունների, ՀԿ-ների հետ և այլն:
51. Ֆիխտնեռ ընկերությունը նաև աջակցելու է ԾԳՄ-ին Ծրագրի վերաբերյալ հայտարարությունները մամուլում և հանրային հարթակներում որքան հնարավոր է շուտ հրապարակելու հարցում: Ավելին հատուկ Ծրագրի համար կստաղծվի վեբ կայք հանրության հետ կապը ապահովելու և հանրությանը տեղեկատվություն տրամադրելու համար:

<sup>4</sup> Ամբողջական ՇԿՆՊ հասանալի է Ծրագրի վեբկայքում, ինչպես նաև ազդակիր համայնքների համայնքապետարաններում:

### 3.2 Տեղեկատվության հրապարակում

52. ՀՀՎԳՊ-ի մշակման, իրականացման և մշտադիտարկման ընթացքում տեղեկատվության հրապարակման ուղղությամբ իրականացվել են կամ իրականացվելու են հետևյալ աշխատանքները:

- **Հանրային տեղեկատվական թերթիկների տարածում.** Հանրային լուսման ընթացքում ԲՍԱԳ Խորհրդատուն բաժանել է տեղեկատվության թերթիկները հայերեն լեզվով (պատճենը ներկայացված է Հավելված 15-ում): Թերթիկը ներառում է ծրագրի նկարագիրը, բողոքների հասցեագրման մեխանիզմը, ինչպես նաև ԾԳՄ-ի ու ԲՍԱԳ Խորհրդատուի սոցիալական երաշխիքների հարցերով մասնագետի կոնտակտային տվյալները:
- **ՎԲՇ-ի հրապարակում.** ՎԲՇ-ի մեկ օրինակ, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվական թերթիկների օրինակներ տրամադրվել են ՏԻՄ-երին և հասանելի են ԱԱ-երի համար:
- **ՀՀՎԳՊ-ի հրապարակում.** ՀՀ Կառավարության և «KfW» բանկի կողմից հաստատումից անմիջապես հետո ՀՀՎԳՊ-ն հրապարակվելու է 20 օրացուցային օրյա ժամկետով, ինչպես պահանջվում է ՎԲՇ-ով, որը թույլ կտա բոլոր շահագրգիռ և ազդակիր կողմերին ներկայացնել ՀՀՎԳՊ-ի վերաբերյալ իրենց դիտողություններն ու մտահոգությունները: ՀՀՎԳՊ-ի մեկական հայերեն օրինակ ուղարկվելու է ազդակիր համայնքների ՏԻՄ-երին: ԱԱ-ները հնարավորություն են ունենալու իրենց դիտողությունները և հարցերը ԾԳՄ-ին ներկայացնել հեռախոսով, ՏԻՄ-երի միջոցով կամ անհատապես հանրային լուսման ընթացքում, որոնք կազմակերպվելու են ազդակիր համայնքներում: Բոլոր ԱԱ-երը հեռախոսով կտեղեկացվեն այդ հնարավորության մասին ԲՍԱԳ Խորհրդատուի սոցիալական մասնագետի կողմից: Հանրային լուսմանը կազմակերպվելու է ԲՍԱԳ Խորհրդատուի կողմից ՀՀՎԳՊ-ի հրամապարումից հետո:
- **Պայմանագրերի նախագծերի և փոխհատուցման գումարի չափի տրամադրում** Գնահատման արդյունքներն ու փոխհատուցման գումարի չափն ընդգրկող պայմանագրերի նախագծերը պաշտոնապես ուղարկվելու են ԱԱ-ներին ՀՀՎԳՊ-ի վերջնականացումից և հաստատումից անմիջապես հետո: Պայմանագրի նախագծերի պաշտոնական ծանուցման հետ մեկտեղ ԲՍԱԳ Խորհրդատուն տրամադրելու է ինչպես կոնտակտային տվյալներ, այնպես էլ ՀՀՎԳՊ-ի հետ կապված տեղեկատվություն, հատկապես ՀՀ-ում չբնակվող սեփականատերերի/համասեփականատերերի համար մանրամասնությունները (մանրամասն ընթացակարգը տրված է Հավելված 11-ում):

### 3.3 Հանրային լուսման/խորհրդատվություններ

53. ՀՀՎԳՊ-ն մշակվել է բոլոր ազդակիր համայնքների հետ հանրային լուսման և հանդիպումների միջոցով: ԱԱ/ԱՏՏ-ների և այլ շահառուների ներգրավման գործընթացը սկսել է մինչև հողերի վերջնական ուսումնասիրությունները, և այս ընթացքում շահառուներին տեղեկացվել է Ծրագրի մասին և մեղմացնող միջոցառումների վերաբերյալ նրանց տեսակետները, մտավախությունները և առաջարկները հաշվի են առնվել:

54. ՀՀՎԳՊ-ի մշակման ընթացքում ԲՍԱԳ Խորհրդատուն իրականացրել է ակտիվ հանրային լուսման (տես ստորև աղյուսակը) ԱԱ-ների, ՏԻՄ ներկայացուցիչների, Շիրակի մարզպետարանի և քաղաքաշինության պետական կոմիտեի հետ հանդիպումների միջոցով, և տարածել է գրավոր ծանուցումներ հողերի ձեռքբերման և վերաբնակեցման



գործողությունների իրականացման վերաբերյալ: Համաձայն ՇՆՊ-ի՝ ԱԱ-ներին տեղեկացվել է խորհրդատվությունների մասին հանդիպումներից առնվազն երկու շաբաթ առաջ:

55. ԱԱ/ԱՏՏ-ների և ընդունող համայնքի ներկայացուցիչների հետ հանրային քննարկումների և հանդիպումների ընթացքում քննարկվել են նաև Կենսապահովման միջոցների վերականգնման միջոցառումները: Հիմք ընդունելով քննարկումների արդյունքները՝ ազդակիր համայնքի համար մշակվել են կենսապահովման միջոցների վերականգնման միջոցառումներ և բյուջետավորվել սույն ՀՁՎԳՊ-ում: Վերջիններս ներկայացված են կենսապահովման միջոցների վերականգնման գործողությունների վերաբերյալ ՀՁՎԳՊ-ի համապատասխան բաժնում:
56. Մինչ ուսումնասիրությունների մեկնարկը ԱԱ/ԱՏՏ-ներին տեղեկացվել է Ծրագրի վերջնաժամկետի մասին: Վերջնաժամկետի մասին հայտարարվել է հանրային լուսնների/քննարկումների ընթացքում, ինչպես նաև գյուղապետարանի տեղեկատվական հարթակներում հայտարարությունը փակցնելու միջոցով: Այսպիսով ԱԱ-ներին տեղեկացվում է, որ ազդակիր տարածքում նոր կառուցվող նոր շինությունները փոխհատուցման ենթակա չեն լինելու:
57. Հիմնական հարցերն ու մտավախությունները՝ համապատասխան պատասխանների և նախաձեռնված գործողությունների, ամսաթվի և վայրի հետ միասին ներկայացված են Հավելված 3-ում՝ Հանդիպումների համառոտ նկարագիրը:

### 3.3.1 Հանրային լուսններ ՀՁՎԳՊ մշակման փուլում

58. Մինչ ուսումնասիրությունների մեկնարկը ՀՁՎԳՊ-ի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ (չափագրում, գույքագրում, մարդահամար և սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն) ԲՍԱԳ Խորհրդատուն 2018թ. դեկտեմբերի 6-ին Ջրածոր գյուղում և 14-ին Արեգնադեմ գյուղում ԱԱ-ների հետ կազմակերպել էր հանրային լուսն/խորհրդատվություն: Հանրային լսման ամսաթվի և ժամի մասին բոլոր ԱԱ-ներին տեղեկացվել էր համայնքի ղեկավարի միջոցով հանդիպումից երկու շաբաթ առաջ: Համապատասխան հայտարարությունը ուղարկվել էր ՏԻՄ-ին էլեկտրոնային գրությամբ, ինչպես նաև փակցվել էր ՏԻՄ-ի հայտարարությունների տախտակին հանրային լուսնից երկու շաբաթ առաջ: Զեկուցողները շահառուներին ներկայացրել են Ծրագրի նպատակները, իրականացման ընթացակարգը, ՀՁՎԳՊ-ի մշակման և ԲԿՄ-ի գործընթացը, ինչպես նաև պատասխանել են ԱԱ-ների կողմից բարձրացված այլ հարցերին: Ինչպես նշվեց, այս խորհրդատվության հիմնական նպատակը ԱԱ-ներին ուսումնասիրությունների վերաբերյալ (չափագրում, գույքագրում, մարդահամար և սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն) տեղեկացնելն էր: Ամեն ջանք գործադրվել է, համոզվելու համար, որ բոլոր ԱԱ-երը կարող են մասնակցել հանրային քննարկումներին: Հանրային լուսնները անց են կազմվել չեզոք հանրային վայրերում՝ Ջրածորի միջնակարգ դպրոցում և Արեգնադեմի գյուղապետարանում, որոնք հասանելի են ԱԱ-ների համար:
59. Մեկ այլ հանրային քննարկում է անցկացվել ԱԱ-երի հետ 2019 թվականի մարտի 20-ին: Այդ քննարկման հիմնական նպատակը եղել է իմանալ ԱԱ-երի կարծիքը ՎԲՇ-ի վերաբերյալ, որը ԾԳՄ-ի կողմից ուղարկվել է համայնքին հանրային քննարկումից մեկ ամիս առաջ: Մինչև հանրային քննարկումը մեկ այլ ներքին քննարկում է անցկացվել համայնքի ղեկավարի

կողմից և այդ քննարկման աղյուսակների հիման վրա համայնքը պատասխանել է, որ ՎՔՇ-ի վերաբերյալ առարկություններ չունի:

60. Ընդհանուր առմամբ հանրային լսմանը մասնակցել է 90 մարդ, որոնցից 15-ը կանայք էին: Հանրային քննարկման վայրը, ժամը և մասնակիցների թիվը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

**Աղյուսակ 2: Հանրային լսումներին մասնակցած ԱԱ-ների թիվը՝ ըստ համայնքների**

| N | Բնակավայր | Ամսաթիվը   | Վայրը                   | Մասնակիցների թիվը |           |           | Ազդակիր հոդերի սեփականատերերի թիվը<br>N of | Մասնակիցներին պատկանող հողակտորների քանակը |
|---|-----------|------------|-------------------------|-------------------|-----------|-----------|--|--|
|   |           |            |                         | Կին               | Տղամարդ   | Ընդամենը  |  |  |
| 1 | Ջրածոր    | 6.12.2018  | Ջրածորի միջնակարգ դպրոց | 13                | 37        | 50        | 40   | 160  |
| 2 | Արեգնադեմ | 14.12.2018 | Համայնքապետարան         | 1                 | 13        | 14        | 5  | 5  |
| 3 | Ջրածոր    | 20.03.2019 | Ջրածորի միջնակարգ դպրոց | 1                 | 25        | 26        | 17   | 68   |
|   |           |            | <b>Ընդամենը</b>         | <b>15</b>         | <b>75</b> | <b>90</b> | <b>62</b>                                  | <b>233</b>                                 |

61. Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում ներկայացվել են վերաբնակեցման գործընթացի բոլոր հիմնական փուլերը, ներառյալ տրամադրվել է ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն՝ փոխհատուցման իրավունքները, գնահատման մեթոդաբանությունը և ձեռքբերման ընթացակարգը: Բացի այդ, հանրային քննարկման ժամանակ ԱԱ-երին տրամադրվել է ԾԳՄ-ի և ԲՍԱԳ Խորհրդատուի համապատասխան ներկայացուցիչների և ԲԿՄ համակարգողների կոնտակտային տվյալները և բաժանվել են տեղեկատվական թերթիկները: Հանդիպումների ժամանակ հնչած կարծիքներից ելնելով՝ մասնակցած ԱԱ-ները հիմնականում գոհ էին լսումների ընթացքից: Քննարկված հիմնական հարցերը ու մտավախությունները՝ համապատասխան պատասխաններով և պլանավորված/ նախաձեռնված գործողություններով, ներկայացված են հանդիպումների համառոտ նկարագրում՝ Հավելված 3-ում, ինչպես նաև ստորև աղյուսակում:

**Աղյուսակ 3: ԱԱ-ների կողմից բարձրաձայնված հիմնական հարցերն ու մտահոգությունները**

| N | ԱԱ-ների կողմից բարձրացված հարցերի ու մտահոգությունների առարկան  | Մոտեցումը   |
|---|---|---|
| 1 | Վերաբնակեցման տեղանք  | Առաջարկված տեղանքը քննարկվել է հանրային քննարկման ընթացքում, և այդ հարցը նաև ներառված է եղել մարդահամարի և տեղանքի վերաբերյալ սոցիալ-տնտեսական հարցումներում: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ Ջրածորի թվով 78 ԱՏՏ-ներից 83.3%-ը (65 ԱՏՏ-ներ) նախընտրում են վերաբնակեցումը, իսկ 12.8%-ը (10 ԱՏՏ-ներ)՝ դրամական փոխհատուցումը: 65 ԱՏՏ-ներից 64 ԱՏՏ-ները նշել են, որ նախընտրում են ռեստորանին մոտ գտնվող վերաբնակեցման տեղանքը (ներկայացված է քարտեզում՝ Հավելված 2):   |
| 2 | Պահպանված նյութերի օգտագործումը   | ԱԱ-երը կկարողանան օգտագործել ապամոնտաժված նյութերը: Փոխհատուցումից չեն նվազեցվի մաշվածության, պահպանված նյութերի արժեքը, ինչպես նաև պետական գրանցման հետ կապված գործարքի ծախսերը:   |
| 3 | Ժառանգության ճանաչման և սեփականության իրավունքի գրանցման հետ կապված այլ ծախսեր  | Համաձայն ՀՁՎԳՊ-ի՝ ԱԱ-ները կստանան հետևյալ աջակցությունները.<br>(i) Լիազորագրի հետ կապված ծախսեր/վճարներ (տեղական կամ արտասահմանյան):<br>(ii) Անձնագրի (նույնականացման քարտի) ժամկետի երկարացման հետ կապված ( ) ծախսեր/վճարներ (եթե այն ժամկետանց է):<br>(iii) Ժառանգության ընդունման հետ կապված ծախսեր/վճարներ:<br>(iv) Օրինականացման ենթակա հողի, տան և շենքերի/շինությունների գրանցման հետ կապված ծախսեր/վճարներ:<br>(v) Հողի ձեռք բերման հետ կապված գործարքի հարկերի և տուրքերի գծով ծախսեր:<br>Վերոնշյալ ծախսերը կփոխհատուցվեն Ծրագրի բյուջեից: |
| 4 | Արեգնադեմ համայնքում հանրային քննարկման ընթացքում, համայնքի ղեկավարն ու բնակիչները նշեցին, որ Հողօգտագործման/հանքի տարածքի «BA 3i» հատվածը զբաղեցնում է համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը, ինչն անընդունելի է համայնքի անդամների համար: | Հողատարածքի «BA 3i» հատվածը վերաբերում է միայն 2-րդ փուլին, և դրա ազդեցությունը սույն ՀՁՎԳՊ-ով չի դիտարկվել, քանի որ ՀՁՎԳՊ-ն ներառում է միայն 1-ին փուլի ազդեցության գնահատակը: Ուստի այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել Ծրագրի 2-րդ փուլն իրականացնելիս:   |
| 5 | Կամուրջն ու գյուղի այլ ենթակառուցվածքները   | ՀՁՎԳՊ-ով նշվում է, որ փոխհատուցման տարբերակ 2-ի համար պետք է դիտարկվի կամուրջի, ինչպես նաև վերաբնակեցման տեղանքից դեպի կամուրջը տանող ճանապարհի կառուցում   |

| N | ԱԱ-ների կողմից բարձրացված հարցերի ու մտահոգությունների առարկան | Մոտեցումը  |
|---|--|--|
| 6 | Արևային էներգիայի օգտագործում                                  | Այս հարցը հաշվի է առնվում Շիրակի մարզպետարանի կողմից տրամադրված տների նախագծում, որի համառոտ նկարագիրը կցվախ է ՀՁՎԳՊ-ին:   |
| 7 | Համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներ                      | Համայնքում առկա են մի շարք խնդիրներ, որոնք չեն կարող լուծում ստանալ մեկ ծրագրի շրջանակներում: Այս պատճառով սույն հաշվետվությունը ընդգրկում է միայն առաջնային խնդիրները, որոնց լուծումը կարող է բնակիչների համար նոր եկամտի և հնարավորությունների ստեղծման աղբյուր հանդիսանալ: ՀՁՎԳՊ-ում ներկայացված միջոցառումները քննարկվել են ԱԱ-երի և համայնքի պաշտոնատար անձանց հետ: |

62. ՀՁՎԳՊ-ն, «KfW» բանկի, ԾԳՄ և ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ԲՍԱԳ խորհրդատուն կկազմակերպի հանրային քննարկում, որի ընթացքում կիրազեկի ԱՏՏ-երին փոխհատուցման առաջարկվող տարբերակների մասին:

### 3.3.2 Այլ խորհրդատվական հանդիպումներ

63. Մինչև չափագրումը, գույքագրումն ու մարդահամարի ուսումնասիրությունը և հետագայում դրանց ընթացքում ԱԱ-ների և ՏԻՄ ներկայացուցիչների (Ամասիա համայնք իր բնակավայրերով) և Շիրակի մարզպետարանի հետ իրականացվել են խորհրդատվություններ գույքագրման և գնահատման ընկերության, ԾԳՄ-ի և խորհրդատուների կողմից, որոնց ընթացքում տրամադրվել է Ծրագրի և վերաբնակեցման մասին հիմնական տեղեկատվությունը: ՀՁՎԳՊ-ի մշակման ընթացքում ԱԱ-ներին տեղեկատվություն է տրամադրվել մասնավորապես վերաբնակեցման հետ կապված ուսումնասիրությունների, ժամանակացույցի, վերջնաժամկետի և այլնի վերաբերյալ:

## 3.4 Հանրային լսումներ/խորհրդատվություններ ՀՁՎԳՊ-ի իրականացման և շինարարության ընթացքում

64. ՀՁՎԳՊ-ն «KfW» բանկի և ՀՀ կառավարության հաստատումից հետո կիրապարակվի ազդակիր գյուղերում, Ծրագրի վեբ կայքում և կկազմակերպվի հանրային քննարկում: ՀՁՎԳՊ-ն կիրապարակվի հանրային քննարկումներից առնվազն 10 օր առաջ: Այդ հանդիպման նպատակն է ստանալ ԱԱ-երի և այլ շահագրգիռների կարծիքը ՀՁՎԳՊ-ի վերաբերյալ:

65. Մեկ այլ հանրային քննարկում է կազմակերպվելու ՀՁՎԳՊ ԻԽ-ի կողմից ՀՁՎԳՊ իրականացման փուլում, հատկապես պայմանագրերի կնքման ժամանակ: ՀՁՎԳՊ ԻԽ-ն հանրային քննարկումներ կկազմակերպի բոլոր գյուղերում բնակիչներին ՀՁՎԳՊ իրականացման փուլերի, շինարարության ժամանակացույցի, մոտեցումների, անվտանգության մեխանիզմների և ԲԿՄ մասին տեղեկացնելու համար:

## 4. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### 4.1 Ներածություն

66. Սույն ՀԶՎԳՊ-ն մշակվել է ԱԱ-ների վրա Ծրագրի ազդեցության մանրամասն վերլուծության հիման վրա, և փոխհատուցման և վերկանգնմանն ուղղված միջոցառումները հատկորոշվել են՝ հաշվի առնելով այդ ազդեցությունները: Ազդեցության գնահատականը մանրամասնում է Ծրագրի ազդակիր տարածքում առկա հողի, կառույցների, և այլ գույքի, ներառյալ բիզնես գործունեության կորուստները: Ծրագրով նախատեսված վերաբնակեցման հետևանքով հնարավոր ազդեցությունների գույքագրումն իրականացնելու նպատակով իրականացվել են հետևյալ ուսումնասիրությունները:

- **Մանրամասն չափագրման հետազոտություն (ՄԶՀ)**՝ հողամասի ազդակիր մակերեսի չափագրման, ինչպես նաև ազդեցության ենթարկված գույքերի քանակն ու տեսակները որոշելու համար:
- **Մարդահամարի ուսումնասիրություն**՝ ԱՏՏ-ների և նրանց անդամների ճշգրիտ քանակը որոշելու համար, ներառյալ այնպիսի սոցիալ-տնտեսական բնութագրերը, ինչպիսիք են գենդերը, ազգությունը, կրթությունը, կենսաապահովման աղբյուրները և այլն:
- **Կորուստների գույքագրում**՝ հողերի և այլ ձեռքբերվող գույքի առանձնահատկությունները հատկորոշելու և գնահատելու համար:
- **Ազդակիր գույքի փոխարինման արժեքի գնահատում**՝ գույքի, եկամտի և կենսաապահովման այլ միջոցի կորստի դիմաց փոխհատուցման ու օժանդակության և ՀԶՎԳՊ-ի բյուջեի չափը որոշելու համար:
- **Համայնքի կարողությունների մասնակցային գնահատում**՝ համայնքի կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները հատկորոշելու համար իրականացվել է մասնակցային գնահատում համայնքի անդամների և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ ֆոկլու-խմբային քննարկումների և հարցազրույցների միջոցով միջոցով:

67. Թվայնացված կադաստրային քարտեզները հավաքագրվել են ակադաստրի կոմիտեից և ճշգրտվել են տեղանքի փաստացի ուսումնասիրության հիման վրա: Հողի ուսումնասիրությունն իրականացվել է տեղում՝ ազդակիր հողակտորները հատկորոշելու նպատակով: Հողի ուսումնասիրությունից ստացված և կադաստրային տվյալների հիման վրա 2018թ. դեկտեմբերին իրականացվել են վնասի չափման մանրամասն հետազոտություն և ԱԱ-ների մարդահամար: Բացի այդ, ազդակիր բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները պարզելու նպատակով Ծրագրի ազդակիր տարածքներում իրականացվել է տնային տնտեսությունների սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն:

68. Վերջնաժամկետը որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան և ազդակիր գույքի/ակտիվի նկարագրության արձանագրության<sup>5</sup> որտեղ արտացոլվում են իրականացված գույքագրման և մարդահամարի տվյալները, կազմման օրն է (ԱԱ-ի և ձեռքբերողի կողմից արձանագրության ստորագրման օրը): Դա այն ամսաթիվն է, որից հետո ծրագրի համար անհրաժեշտ հողամասի կամ շինության ցանկացած բարելավում, ցանկացած նոր իրավունք (ցանկացած հողի հանդեպ վարձակալական, օգտագործման կամ այլ գույքային իրավունքի (բացառությամբ սեփականության իրավունքի) կամ համայնքային հողի հանդեպ սեփականության իրավունքի ձեռք բերում) ենթակա չէ փոխհատուցման:

## 4.2 Ուսումնասիրության մեթոդոլոգիան

69. ՄՉՀ-ն և գույքագրումը ներառում է հողի (գյուղատնտեսական, բնակելի, արդյունաբերական, և առևտրային նշանակության) հատկորոշում, դասակարգում, չափագրում և գնահատում, ներառյալ այդ հողակտորների վրա բարելավումները, կառույցները/շինությունները (բնակելի կամ հասարակական նշանակության շինությունները, ներառյալ շինության կատեգորիայի և տեսակի դասակարգումը), ԱԱ-ների՝ հողի նկատմամբ իրավունքի կարգավիճակը, մշակաբույսերի տեսակն ու զբաղեցրած տարածքը, ծառերի քանակն ու տեսակները, ազդակիր համայնքի/հանրային գույքի տեսակն ու զբաղեցրած տարածքը:

70. Չափագրումը իրականացվել է ՀՀ Կադաստրի կոմիտեի Նախագահի 2011թ. հոկտեմբերի 20-ի No 283-N որոշման (անշարժ գույքի չափագրման/հաշվառման հրահանգ) Հավելված 1-ի պահանջների համաձայն: ԱԱ-ներին հեռախոսով տեղեկացվել էր ուսումնասիրության ամսաթվի և ժամի մասին տեղանք այցելությունից մեկ օր առաջ: Սույն ընթացակարգով ապահովվել է ԱԱ-ների մասնակցությունն ու նրանց կողմից գույքագրման գործընթացի մշտադիտարկումը: Գույքագրման ուսումնասիրության արդյունքում մշակվել է և ԱԱ-ների կողմից ստորագրվել է 310 նկարագրության արձանագրություններ: Սեփականության գույքագրումն իրականացվել է ՀՀ կառավարության 16.09.2010-ի N 1275-Ն որոշմամբ հաստատված նկարագրության արձանագրության օրինակելի ձևով:

71. Արձանագրության կազմման ընթացակարգը սահմանված է ՀՀ օրենսդրությամբ, որով ապահովվում է արձանագրությունում ԱԱ-ների պաշտոնական ընդգրկվածությունը, որից հետո ԱԱ-ների կողմից այդ արձանագրությունները ստուգվում են և ստորագրվում:

72. Մարդահամարը իրականացվել է բոլոր ԱԱ-ների հետ 15-20 րոպե տևողությամբ համակարգված հարցազրույցների միջոցով (տես մարդահամարի հարցաթերթը Հավելված 4-ում): Մարդահամարն անց է կացվել 122 ԱՏՏ-ների հետ, որոնք կազմում են ընդհանուր 128 ազդակիր ԱՏՏ-ների 95%-ը: Մնացած 6 ԱՏՏ-ների հետ չի հաջողվել կապ հաստատել, քանի որ նրանք մշտական բնակություն են հաստատել արտասահմանում:

---

<sup>5</sup> ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերջնաժամկետն ավելի շահավետ է ԱԵԱ-ի համար, քանի որ այն արտացոլում է փաստացի իրավիճակն այն պահին, երբ ուսումնասիրություն և գույքագրում իրականացնող թիմը հասնում է կոնկրետ սեփականությանը/հողին:

**Աղյուսակ 4: Մարդահամարում և USՈՒ-ում ընդգրկված ԱԱ/ԱՏՏ-ները**

| Համայնքը        | ԱՏՏ-ների ընդհանուր թիվը | Մարդահամար և USՈՒ անցած ԱՏՏ-ների ընդհանուր թիվը* | Մարդահամար և USՈՒ անցած ԱԱ-ների ընդհանուր թիվը |
|-----------------|-------------------------|--|--|
| Ջրածոր          | 123                     | 117  | 571  |
| Գտաշեն          | 4                       | 4  | 19   |
| Կապս            | 1                       | 1  | 4  |
| <b>Ընդամենը</b> | <b>128</b>              | <b>122</b>                                       | <b>594</b>                                     |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

73. Ջրածորը հիմնական ազդակիր համայնքն է, քանի որ այնտեղ Ծրագրից ազդեցության են ենթարկվել 123 ԱՏՏ-ներ: Բացի Ջրածորից, Ծրագրով ազդեցության են ենթարկվել հարևան Գտաշեն և Կապս համայնքների 5 ԱՏՏ-ներ: Մարդահամարով կապ է հաստատվել 594 անձանց հետ, որը մատնանշում է, որ Ծրագրի ազդակիր ԱՏՏ-ների անդամների միջին թիվը 4,6 է:
74. Ներկայումս Ջրածորում բնակվում են 27 հաշմանդամ, որոնցից 10-ն ունեն երկրորդ կարգի հաշմանդամություն, իսկ մնացած 17-ը՝ 3-րդ կարգի: Ուստի նոր համայնքի հիմնական նախագծով առաջնահերթությունը տրվելու է հաշմանդամների կարիքներին, և ստեղծվելու է ներառական տարածք, որտեղ կհամատեղվեն կենցաղը, կրթությունը և ապրելակերպը, ապահովվելու նրանց կապը հասարակության այլ ներկայացուցիչների հետ:
75. Ջրածոր և Ամասիա համայնքների կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված առավել արդյունավետ միջոցառումները հատկորոշելու նպատակով իրականացվել է մասնակցային գնահատում համայնքի անդամների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ ֆոկլորախմբային քննարկումների և հարցազրույցների միջոցով: Այն ներառել է քննարկում, համայնքի կարողությունների և ռեսուրսների (ներառյալ մարդկային, ֆիզիկական, բնական և ֆինանսական ռեսուրսները), ինչպես նաև հիմնական (նախկին և ներկայիս) արտադրության, զբաղվածության իրավիճակի ու ենթակառուցվածքների գույքագրում և վերլուծություն:


### 4.3 Բնակավայրի նկարագիրը

#### 4.3.1 Բնակավայրի տարածքը

76. Ջրածոր բնակավայրի տարածքը 10,7 կմ<sup>2</sup> է, որն ընդգրկում է տարբեր դասակարգման հողեր: Բնակավայրի հողերի պաշտոնական դասակարգումը (համայնքի ռեգիստրի տվյալներ) ներկայացված է հետևյալ պատկերում.

\*Մարդահամար-USՈՒ-61, միայն մարդահամար-122.

**Գծապատկեր 5: Բնակավայրի հողերի դասակարգումը**



Աղբյուրը՝ համայնքային հողային ռեգիստր


77. Ջրածորի գյուղատնտեսական նշանակության հողերը մեծամասամբ օգտագործվում են որպես արոտավայրեր (527հա) և վարելահողեր (348հա):

**4.3.2 Տնտեսական նկարագիր**

78. Անասնաբուծությունը և գյուղատնտեսությունը հանդիսանում են Ջրածորի և հարակից գյուղերի կենսաապահովման հիմնական միջոցները: Եթե հաշվի չառնենք բնակավայրի ոչ-աշխատանքային տարիքի բնակչությունը, որը մեծ մաս է կազմում, ապա գյուղի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ:




**Գծապատկեր 6: Համայնքի բնակչության հիմնական զբաղվածության ոլորտները**



Աղբյուրը՝ համայնքի մարդահամարի տվյալներ

79. Ինչ վերաբերում է հիմնական կենսաապահովման աղբյուրին, ապա գյուղի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր կենդանիների բուծումը և այգեգործությունը Ջրածորի հիմնական տնտեսական ուղղություններից են: Հետևյալ պատկերը ցույց է տալիս այս ուղղությունների բաշխումը՝ ըստ բնակավայրի կողմից ստացվող եկամուտների չափի: Բնակավայրի բնակիչը կարող է անկանոն եկամուտ/ունենալ այլ աղբյուրներից ևս:

**Գծապատկեր 7: Տնտեսության հիմնական ճյուղերը**



Աղբյուրը՝ CA աշխատաժողով

80. Աղյուսակ 40-ում ներկայացված է Ջրածոր գյուղի խոշոր եղջերավոր կենդանիների բուծումից ստացված ընդհանուր միջին արտադրանքը: Կաթի տարեկան արտադրությունը գյուղում հասնում է 310,500 լիտրի, որի 75%ը տրվում է մթերման, հիմնականում «Բանդիվան կաթ» տեղական կաթնամթերք արտադրող ընկերությանը: Կաթի որակը շատ բարձր է գնահատվում տարածաշրջանում առկա անասնակերի որակի շնորհիվ:
81. Մնացած կաթը հիմնականում օգտագործվում է որպես հորթի մսի արտադրման համար կերի բազա, քանի որ Ջրածորի գյուղատնտեսները նաև կենտրոնանում են մսի արտադրության վրա: Գյուղում տարեկան արտադրվում է 60 տոննա միս, որից 38%-ը կազմում է տավարի, իսկ 20 տոննան՝ գառան միսը:

**Աղյուսակ 5: Ջրածորի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը**

| Տնտեսության ճյուղը                  | Տարեկան գյուղատնտեսական արտադրանքը | Վաճարված %   |
|-------------------------------------|------------------------------------|--------------|
| Խոշոր եղջերավոր կենդանիների բուծում | Կաթ 310.5 տոննա –<br>միս 60 տոննա  | 75% -<br>70% |
| Այգեգործություն                     | 110 տոննա (խնձոր 105, տանձ 5)      | 10%          |

Աղբյուրը՝ ՀՄԱ աշխատաժողովի տվյալներ

82. Մրգի արտադրությունը համեմատաբար ավելի քիչ է, այն հասնում է տարեկան մինչև 110 տոննայի: Բնակավայրում հիմնականում աճեցվում է խնձոր ու տանձ, որոնցից ստացվում է՝ համապատասխանաբար 105 և 5 տոննա բերք: Այնուամենայնիվ, արտադրանքը հիմնականում չի վաճառվում, այլ սպառվում է համայնքի բնակչության կողմից, ինչպես նաև օգտագործվում որպես անասնակեր: Քյուղը նաև արտադրում է տարեկան 1 տոննա մեղր:

### 4.3.3 Ոլորտային ենթակառուցվածք

83. Անասնաբուծության հետ կապված ենթակառուցվածքների առումով, համայնքում ներկայումս չկա կաթի հավաքման/հովաքման կետեր: Այնուամենայնիվ, կաթը հավաքվում է հիմնականում «Բանդիվան կաթ» կաթնամթերք արտադրող ընկերության հավաքողների կողմից: Ընկերությունը հավաքված կաթն օգտագործում է հիմնականում պանրի արտադրության համար:
84. Համայնքի անդամները սահմանափակ են օգտագործում հեռավոր արոտավայրերը, քանի որ այդ տարածքներում կենդանիների համար խմելու ջուր չկա: Հետևաբար, հարակից արոտավայրերը ենթարկվում են գերօգտագործմանը:
85. Ներկայումս Ջրածորում չկա կաթ արտադրող կոոպերատիվ: Նման կոոպերատիվը, որն ունի նաև կաթի հավաքման կետ, կարող է լինել շատ արդյունավետ գործիք փոքր ֆերմերային տնտեսությունների բանակցային դիրքը կաթ հավաքողների նկատմամբ ուժեղացնելու համար, ինչպես նաև համայնքում կաթի որակը և գները բարձրացնելու համար: Ավելին՝ Ամասիա համայնքում ընդհանուր առմամբ պակասում են անասնակերի հավաքման սարքավորումներ և բերքահավաքներ, որոնք կարող են խթանել անասնակերի և մշակաբույսերի արդյունավետ հավաքումը:

## 4.4 Ազդակիր տնային տնտեսություններն ու նրանց կենսամակարդակը

### 4.4.1 Ընդհանուր բնութագիր

86. Հարցմանը մասնակցած անձանց մեծ մասը՝ 52,4 % -ը տղամարդիկ էին, իսկ 283-ը կամ 47,6%-ը՝ կանայք:

Աղյուսակ 6: Ազդակիր անձանց գենդերային բաշխումը

| Սեռը/գենդերը    | No         | Ընդհանուրի % |
|-----------------|------------|--------------|
| Տղամարդ         | 311        | 52.4         |
| Կին             | 283        | 47.6         |
| <b>Ընդամենը</b> | <b>594</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

87. Հարցված ԱՏՏ-ները մեծամասամբ ղեկավարվում են տղամարդկանց կողմից՝ 109 ԱՏՏ կամ 89,3%, իսկ կանանց կողմից ղեկավարվող ԱՏՏ-ները 13-ն են, որը կազմում է միայն 10,7%-ը:

Աղյուսակ 7: ԱՏՏ-ների ղեկավարների և անդամների գենդերային բաշխումը

| ԱՏՏ ղեկավարներ |      |     |      |          |     | ԱՏՏ ընդամեններ |      |     |      |          |     |
|----------------|------|-----|------|----------|-----|----------------|------|-----|------|----------|-----|
| Տղամարդ        | %    | Կին | %    | Ընդամենը | %   | Տղամարդ        | %    | Կին | %    | Ընդամենը | %   |
| 109            | 89.3 | 13  | 10.7 | 122      | 100 | 202            | 42.8 | 270 | 57.2 | 472      | 100 |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

88. Ծրագրից ազդեցություն կրած ազգային փոքրամասնություններ համարյա չեն հատկորոշվել: ԱԱ-ները բոլորը հայ են, բացառությամբ մեկ ազգությամբ ռուս ԱՏՏ-ի:

**Աղյուսակ 8: ԱՏՏ-ների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելիության**

| Ազգությունը     | ԱԱ         | %            |
|-----------------|------------|--------------|
| Հայ             | 593        | 99.8         |
| Ռուս            | 1          | 0.2          |
| <b>Ընդամենը</b> | <b>594</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

89. ԱԱ-ների մեծ մասը երիտասարդներ են, Ծրագրի ազդակիր անձանց 60%-ը 35 տարեկանից ցածր են, 32%-ը՝ 36-ից 62 տարեկանի միջակայքում են, իսկ մնացած 7,2%-ը՝ 63 տարեկանից բարձր են:

**Աղյուսակ 9: Ազգակիր ԱՏՏ-ների ղեկավարների և ԱՏՏ-ների անդամների տարիքը**

| Տարիքային խումբը | ԱՏՏ ղեկավարները |              | ԱՏՏ անդամները |              | Ընդամենը   |              |
|------------------|-----------------|--------------|---------------|--------------|------------|--------------|
|                  | No              | %            | No            | %            | No         | %            |
| 0-17             | -               | -            | 148           | 31.4         | 148        | 24.9         |
| 18-35            | 10              | 8.2          | 199           | 42.2         | 209        | 35.2         |
| 36-50            | 27              | 22.1         | 59            | 12.5         | 86         | 14.5         |
| 51-62            | 63              | 51.6         | 45            | 9.5          | 108        | 18.2         |
| 63+              | 22              | 18.0         | 21            | 4.4          | 43         | 7.2          |
| <b>Ընդամենը</b>  | <b>122</b>      | <b>100.0</b> | <b>472</b>    | <b>100.0</b> | <b>594</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

90. Կանանց և տղամարդկանց տարիքային բաշխումը բավականին հավասարաչափ է: Այնուամենայնիվ, տարեցների շրջանում (63+) կանայք տղամարդկանցից ավելի շատ են: Սա այնուամենայնիվ, պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ում կանանց կյանքի տևողությունն ավելի երկար է:

**Աղյուսակ 10: ԱՏՏ-ների տարիքային բաշխումը՝ ըստ սեռի**

| Տարիքային խումբ | Տղամարդ    |             | Կին        |             | Ընդամենը   |              |
|-----------------|------------|-------------|------------|-------------|------------|--------------|
|                 | No         | %           | No         | %           | No         | %            |
| 0-17            | 82         | 13.8        | 66         | 11.1        | 148        | 24.9         |
| 18-35           | 110        | 18.5        | 99         | 16.7        | 209        | 35.2         |
| 36-50           | 42         | 7.1         | 44         | 7.4         | 86         | 14.5         |
| 51-62           | 60         | 10.1        | 48         | 8.1         | 108        | 18.2         |
| 63+             | 17         | 2.9         | 26         | 4.4         | 43         | 7.2          |
| <b>Ընդամենը</b> | <b>311</b> | <b>52.4</b> | <b>283</b> | <b>47.6</b> | <b>594</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

91. Ազգակիր ԱՏՏ-ների ղեկավարների մեծ մասը ամուսնացած են, սա մասնավորապես վերաբերում է տղամարդկանց կողմից գլխավորած ԱՏՏ-ներին, որոնք կազմում են բոլոր

ազդակիր USS-ների 90%-ը: Կանանց կողմից գլխավորած USS-ները մեծամասամբ ղեկավարվում են այրի կանանց կողմից:

**Աղյուսակ 11: USS-ների ղեկավարների ամուսնական կարգավիճակը**

| Ամուսնական կարգավիճակը | USS տղամարդ ղեկավար |             | USS կին ղեկավար |             | Ընդամենը   |              |
|------------------------|---------------------|-------------|-----------------|-------------|------------|--------------|
|                        | No                  | %           | No              | %           | No         | %            |
| Չամուսնացած            | 2                   | 1.6         | 2               | 1.6         | 4          | 3.3          |
| Ամուսնացած             | 105                 | 86.1        | 0               | 0.0         | 105        | 86.1         |
| Բաժանված               | 1                   | 0.8         | 1               | 0.8         | 2          | 1.6          |
| Այրի                   | 1                   | 0.8         | 10              | 8.2         | 11         | 9.0          |
| <b>Ընդամենը</b>        | <b>109</b>          | <b>89.3</b> | <b>13</b>       | <b>10.7</b> | <b>122</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

92. ԱՍ-ների ավելի քան 90%-ը ստացել է միջնակարգ կրթություն: USS-ների ղեկավարների ավելի քան 50%-ը ստացել են մասնագիտական (տեխնիկական) կամ բարձրագույն կրթություն: USS-ների անդամների կրթական մակարդակը քիչ թե շատ համապատասխանում է USS-ների ղեկավարների կրթական մակարդակին, չնայած բարձրագույն կրթություն ունեցող USS-ների անդամների տոկոսը մի փոքր ավելի բարձր է:

**Աղյուսակ 12: USS-ների ղեկավարների և անդամների կրթական մակարդակը (16 տարեկան և բարձր)**

| Կրթություն                        | USS ղեկավարներ |              | USS անդամներ |              | Ընդամենը   |              |
|-----------------------------------|----------------|--------------|--------------|--------------|------------|--------------|
|                                   | No             | %            | No           | %            | No         | %            |
| Տարրական կրթության բացակայություն | 0              | 0.0          | 0            | 0.0          | 0          | 0.0          |
| Տարրական կրթություն               | 0              | 0.0          | 5            | 1.5          | 5          | 1.1          |
| Թերի միջնակարգ                    | 7              | 5.7          | 25           | 7.6          | 32         | 7.1          |
| Միջնակարգ                         | 47             | 38.5         | 128          | 38.7         | 175        | 38.6         |
| Տեխնիկական/մասնագիտական           | 49             | 40.2         | 75           | 22.7         | 124        | 27.4         |
| Թերի բարձրագույն                  | 0              | 0.0          | 17           | 5.1          | 17         | 3.8          |
| Բարձրագույն                       | 19             | 15.6         | 81           | 24.5         | 100        | 22.1         |
| <b>Ընդամենը</b>                   | <b>122</b>     | <b>100.0</b> | <b>331</b>   | <b>100.0</b> | <b>453</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

93. Կրթական մակարդակի տեսանկյունից տղամարդկանց և կանանց միջև մեծ տարբերություն չի արձանագրվել: USS-ների ղեկավար տղամարդիկ այնուամենայնիվ փոքր-ինչ առավելություն ունեն USS-ների կին ղեկավարներից, իսկ USS-ի անդամների մասով,, այնուամենայնիվ, տարբերություններն աննշան են:

**Աղյուսակ 13: USS ղեկավարների և անդամների կրթական մակարդակը՝ ըստ սեռի (16 տարեկան և բարձր)**

| Կրթություն | USS ղեկավարներ |     | USS անդամներ |     |
|------------|----------------|-----|--------------|-----|
|            | Տղամարդ        | Կին | Տղամարդ      | Կին |

|                                   |              |              |              |              |
|-----------------------------------|--------------|--------------|--------------|--------------|
| Տարրական կրթության բացակայություն | 0.0          | 0.0          | 0.0          | 0.0          |
| Տարրական կրթություն               | 0.0          | 0.0          | 0.0          | 2.4          |
| Թերի միջնակարգ                    | 3.7          | 23.1         | 12.9         | 4.3          |
| Միջնակարգ                         | 37.6         | 46.2         | 41.1         | 37.2         |
| Տեխնիկական/մասնագիտական           | 41.3         | 30.8         | 14.5         | 27.5         |
| Թերի բարձրագույն                  | 0.0          | 0.0          | 7.3          | 3.9          |
| Բարձրագույն                       | 17.4         | 0.0          | 24.2         | 24.6         |
| <b>Ընդամենը</b>                   | <b>100.0</b> | <b>100.0</b> | <b>100.0</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

#### 4.4.2 Զբաղվածություն

94. USS-ների ղեկավարների մեծ մասը կամ 58% -ը կամ աշխատանքային միգրանտներ են կամ զբաղվում են գյուղատնտեսությամբ: Գյուղատնտեսությամբ զբաղվածությունը առաջնային եկամտի աղբյուր ունեցող բոլոր USS-ների ղեկավարների համար երկրորդ ամենախոշոր կենսաապահովման միջոցն է: Ի տարբերություն USS-ների ղեկավարների, աշխատանքային միգրանտները USS-ների անդամների ավելի քիչ մասնաբաժինն են կազմում՝ 13,6%-ը: Միևնույն ժամանակ USS-ների անդամների ավելի քան 20 տոկոսը զբաղվում է գյուղատնտեսությամբ, իսկ մյուս 20%-ը նշել է, որ գործազուրկ է և աշխատանք չի փնտրում:

Աղյուսակ 14: USS ղեկավարների և անդամների աշխատանքային/զբաղվածության կարգավիճակը (16+)

| Աշխատանք/<br>Զբաղվածություն             | USS ղեկավար |      |             |      | USS անդամ |      |             |      |
|---|-------------|------|-------------|------|-----------|------|-------------|------|
|   | Առաջնային   |      | Երկրորդական |      | Առաջնային |      | Երկրորդական |      |
|   | N           | %    | N           | %    | N         | %    | N           | %    |
| Պետական համակարգում ներգրավվածություն   | 13          | 10.7 | 1           | 2.9  | 38        | 11.5 | 0           | 0.0  |
| Մասնավոր ոլորտ                          | 14          | 11.5 | 0           | 0.0  | 28        | 8.5  | 1           | 2.3  |
| Գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված | 32          | 26.2 | 28          | 82.4 | 67        | 20.2 | 34          | 79.1 |
| Ինքնազբաղված այլ ոլորտում*              | 1           | 0.8  | 1           | 2.9  | 1         | 0.3  | 1           | 2.3  |
| ձեռներեց*                               | 1           | 0.8  | 0           | 0.0  | 0         | 0.0  | 0           | 0.0  |
| Աշխատանքային միգրանտ                    | 39          | 32.0 | 2           | 5.9  | 45        | 13.6 | 4           | 9.3  |
| Թոշակառու                               | 16          | 13.1 | 2           | 5.9  | 17        | 5.1  | 2           | 4.7  |
| ուսանող (ներառյալ դպրոցականներ)         | 0           | 0.0  | 0           | 0.0  | 31        | 9.4  | 1           | 2.3  |
| Գործազուրկ և աշխատանք փնտրող            | 1           | 0.8  | 0           | 0.0  | 22        | 6.6  | 0           | 0.0  |
| Գործազուրկ և աշխատանք չփնտրող           | 3           | 2.5  | 0           | 0.0  | 75        | 22.7 | 0           | 0.0  |

\*Առևտուր կամ տաքսի ծառայություն

\*անասնապահական ֆերմա

|              |            |              |           |              |            |              |           |              |
|--------------|------------|--------------|-----------|--------------|------------|--------------|-----------|--------------|
| Զինվորական   | 0          | 0.0          | 0         | 0.0          | 5          | 1.5          | 0         | 0.0          |
| Հաշմանդամ    | 2          | 1.6          | 0         | 0.0          | 2          | 0.6          | 0         | 0.0          |
| <b>Total</b> | <b>122</b> | <b>100.0</b> | <b>34</b> | <b>100.0</b> | <b>331</b> | <b>100.0</b> | <b>43</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

95. ԱԱ-ների գենդերային նկարագրի մասով մեծ տարբերություն է նկատվում: Կին ԱԱ-ների շրջանում աշխատանքային միգրանտները զգալիորեն քիչ են (4,1%) տղամարդկանցից՝ (32.2%): Ընդ որում, ավելի հաճախ աշխատանքով ապահովված են կանայք և այլ աշխատանք չեն փնտրում: Կին ԱԱ-ների շրջանում նաև ավելի բարձր է թոշակառուների տոկոսը (10%)՝ ի տարբերություն տղամարդկանց (4,7%):

**Աղյուսակ 15: ԱԱ-ների առաջնային զբաղվածության կարգավիճակը՝ ըստ սեռի (16+)**

| Աշխատանք/զբաղվածություն                 | Տղամարդ    |              | Կին        |              | Ընդամենը   |              |
|---|------------|--------------|------------|--------------|------------|--------------|
|   | N          | %            | N          | %            | N          | %            |
| Պետական համակարգում ներգրավվածություն   | 22         | 9.4          | 29         | 13.2         | 51         | 11.3         |
| Մասնավոր ոլորտ                          | 31         | 13.3         | 11         | 5.0          | 42         | 9.3          |
| Գյուղատնտեսության ոլորտում ինքնազբաղված | 58         | 24.9         | 41         | 18.6         | 99         | 21.9         |
| Ինքնազբաղված այլ ոլորտում*              | 1          | 0.4          | 1          | 0.5          | 2          | 0.4          |
| ձեռներեց*                               | 1          | 0.4          | 0          | 0.0          | 1          | 0.2          |
| Աշխատանքային միգրանտ                    | 75         | 32.2         | 9          | 4.1          | 84         | 18.5         |
| Թոշակառու                               | 11         | 4.7          | 22         | 10.0         | 33         | 7.3          |
| ուսանող (ներառյալ դպրոցականներ)         | 15         | 6.4          | 16         | 7.3          | 31         | 6.8          |
| Գործազուրկ և աշխատանք փնտրող            | 8          | 3.4          | 15         | 6.8          | 23         | 5.1          |
| Գործազուրկ և աշխատանք չփնտրող           | 4          | 1.7          | 74         | 33.6         | 78         | 17.2         |
| Զինվորական                              | 5          | 2.1          | 0          | 0.0          | 5          | 1.1          |
| Հաշմանդամ                               | 2          | 0.9          | 2          | 0.9          | 4          | 0.9          |
| <b>Ընդամենը</b>                         | <b>233</b> | <b>100.0</b> | <b>220</b> | <b>100.0</b> | <b>453</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

96. Աշխատանքով ապահովվածների 78,9 նշում են, որ իրենց առաջնային աշխատանքը շարունակական բնույթ է կրում, իսկ 19,4-ը, որը ունեն առաջնային սեզոնային զբաղվածություն: Այնուամենայնիվ, ի տարբերություն առաջնային զբաղվածության՝ երկրորդային զբաղվածությունը կամ եկամտի աղբյուրը հաճախ սեզոնային բնույթ է կրում 26,4%-ի դեպքում:

\*Առևտուր կամ տաքսի ծառայություն

\* անասնապահական ֆերմա

**Աղյուսակ 16: Զբաղվածության տեսակը**

| Զբաղվածության տեսակը | Առաջնային  |              | Երկրորդական |              | Ընդամենը   |              |
|----------------------|------------|--------------|-------------|--------------|------------|--------------|
|                      | No         | %            | No          | %            | No         | %            |
| Շարունակական         | 220        | 78.9         | 46          | 63.9         | 266        | 75.8         |
| Սեզոնային            | 54         | 19.4         | 19          | 26.4         | 73         | 20.8         |
| Ժամանակավոր          | 3          | 1.1          | 0           | 0.0          | 3          | 0.9          |
| Հազվադեպ             | 2          | 0.7          | 7           | 9.7          | 9          | 2.6          |
| <b>Ընդամենը</b>      | <b>279</b> | <b>100.0</b> | <b>72</b>   | <b>100.0</b> | <b>351</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

97. ԱՏՏ-ների 60%-ը նշել է, որ ստանում է համախառն 300,000 ՀՀ դրամից քիչ ամսական աշխատավարձ: Հետևյալ աղյուսակները ցույց են տալիս ազդակիր տնային տնտեսությունների կողմից նշված տարեկան եկամուտն ու համապատասխան եկամտի աղբյուրը:

**Աղյուսակ 17: Ազդակիր ԱՏՏ-ների կողմից նշված ամսական եկամուտը**

| Ազդակիր ԱՏՏ-ների ամսական եկամուտը (ՀՀ դրամ) |                     | No         | %            |
|---|---------------------|------------|--------------|
| 1.  | 20,000 - 100,000    | 16         | 13.1         |
| 2.  | 100,001 - 200,000   | 25         | 20.5         |
| 3.  | 200,001 - 300,000   | 33         | 27.0         |
| 4.  | 300,001 - 500,000   | 28         | 23.0         |
| 5.  | 500,001 - 1,000,000 | 16         | 13.1         |
| 6.  | 1,000,001 և ավելին  | 4          | 3.3          |
| <b>Ընդամենը</b>                             |                     | <b>122</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

98. Աշխատանքային միգրացիայից ստացված եկամուտը տնային տնտեսության մակարդակով եկամտի ամենախոշոր աղբյուրն է, որին հաջորդում է կանոնավոր աշխատավարձերից, թոշակներից և նպաստներից ստացված եկամուտները: Բացառությամբ ընտանիքի անդամների աշխատանքային միգրացիայի արդյունքում ստացված եկամտից, ազդակիր անձինք ստանում են արտասահմանից սահմանափակ դրամական փոխանցումներ:

99. Եկամտի աղբյուրների մասով, անասնապահությունից ստացված եկամուտը ազդակիր ԱՏՏ-ների ամենախոշոր եկամտի աղբյուրն է (5,1 մլն), որին հաջորդում է գյուղատնտեսության այլ տեսակից, օրինակ այգեգործությունից ստացված եկամուտը:

**Աղյուսակ 18: ԱՏՏ-երի կողմից նշված ԱՏՏ-ի և անհատների եկամուտը՝ ըստ եկամտի աղբյուրի (ՀՀ դրամ)**

| Հայտարարված եկամտի աղբյուրը | ԱՏՏ-ների քանակը | % ընդհանուր | Ընդհանուր եկամուտը | Ընդհանուր % |
|-----------------------------|-----------------|-------------|--------------------|-------------|
| Աշխատավարձ                  | 95              | 37.4        | 7 856 000          | 26.0        |
| Ինքնազբաղված                | 4               | 1.6         | 320 000            | 1.1         |
| Ձեռներեցություն             | 1               | 0.4         | 400 000            | 1.3         |
| Թոշակ                       | 37              | 14.6        | 1 464 200          | 4.9         |
| Այլ նպաստներ                | 27              | 10.6        | 1 181 600          | 3.9         |



|   |             |              |                   |              |
|---|-------------|--------------|-------------------|--------------|
| Աշխատանքային միգրացիա, աշխատանք արտասահմանում       | 90          | 35.4         | 18 940 000        | 62.8         |
| <b>Ընդամենը-անձ</b>                                 | <b>254</b>  | <b>100.0</b> | <b>30 161 800</b> | <b>100.0</b> |
| Գյուղատնտեսություն (բացառությամբ անասնապահությունը) | 64          | 43.8         | 2 623 600         | 32.1         |
| Անասնապահություն                                    | 64          | 43.8         | 5 131 600         | 62.7         |
| Աղքատության նպաստ                                   | 9           | 6.2          | 253 900           | 3.1          |
| Ծննդաբերության նպաստ                                | 5           | 3.4          | 81 600            | 1.0          |
| Այլ մեկանգամյա աջակցություն, եկամուտ                | 2           | 1.4          | 23 000            | 0.3          |
| Դրամական աջակցություն Հայաստանից                    | 0           | 0.0          | 0                 | 0.0          |
| Դրամական աջակցություն արտասահմանից                  | 2           | 1.4          | 66 700            | 0.8          |
| <b>Ընդամենը-SS</b>                                  | <b>146*</b> | <b>100.0</b> | <b>8 180 400</b>  | <b>100.0</b> |

\*եկամուտի տարբեր աղբյուրներ ունեցող SS-երը կրկնվում են

Աղնյուրը՝ մարդահամարի տվյալներ

100. Հայտարարված եկամտի աղբյուրների հետ մեկտեղ ազդակիր անձանց 78,7%-ը նշել է, որ զբաղվում է տավարի բուծմամբ, իսկ 73,8 տոկոսը՝ հորթի կամ ոչխարի: Այծերի բուծումը զբաղեցնում է 4-րդ տեղը, որով զբաղվում է ԱԱ-ների 72,1%-ը: Տնային կենդանիների բուծման մասին մանրամասները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

Աղյուսակ 19: Տնային կենդանիների բուծում

| Ընտանի կենդանիների ցանկ | Այո |      | Ոչ |       |
|-------------------------|-----|------|----|-------|
|                         | N   | %    | N  | %     |
| Կով                     | 48  | 78.7 | 13 | 21.3  |
| Հորթ                    | 45  | 73.8 | 16 | 26.2  |
| Ոչխար                   | 45  | 73.8 | 16 | 26.2  |
| Այծ                     | 1   | 1.6  | 60 | 98.4  |
| Թռչուններ               | 44  | 72.1 | 17 | 27.9  |
| Խոզ                     | 15  | 24.6 | 46 | 75.4  |
| Ավանակ                  | 1   | 1.6  | 60 | 98.4  |
| Ձի                      | 0   | 0.0  | 61 | 100.0 |
| Մեղու                   | 12  | 19.7 | 49 | 80.3  |
| Ճագար                   | 4   | 6.6  | 57 | 93.4  |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

#### 4.4.3 Աղքատ և խոցելի տնային տնտեսությունների վրա ազդեցությունը

101. ՀԶՎԳՊ-ն նախատեսում է լրացուցիչ աջակցություն խոցելի ԱԱ-ներին: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս ՎՔԾ-ով և ՀԶՎԳՊ-ի 7.4.4 կետով (Օժանդակություն խոցելի ԱՏՏ-ներին) սահմանված հատկանիշներով խոցելի կարգավիճակ ունեցող ԱԱ-ների քանակը:

Աղյուսակ 20: Խոցելի ԱՏՏ-ները՝ ըստ խոցելիության տեսակի

| Խոցելիության կարգավիճակը | Տնային տնտեսություն |
|--------------------------|---------------------|
| A. Աղքատ ԱՏՏ             | 7                   |

|  |           |
|--|-----------|
| <b>B. Կանանց կողմից գլխավորած USS</b>            | <b>4*</b> |
| <b>C. Տարեցների կողմից գլխավորած USS-ներ</b>     | <b>6</b>  |
| <b>D. Հաշմանդամների կողմից գլխավորած USS-ներ</b> | <b>1*</b> |
| <b>Ընդամենը</b>                                  | <b>13</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

102. Ընդհանուր առմամբ, 19 USS-ներ ունեն աղքատության շեմից ցածր եկամուտ: Բացի Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում ըդնգրկված խոցելի խմբերի ՀՁՎԳՊ-ով հատկորոշվել են նաև 12 տնային տնտեսություններ, ովքեր նշել են պետականորեն սահմանված աղքատության մակարդակից ցածր եկամուտ: Այս USS-ների եկամուտի մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 21-ում:

103. ՀՁՎԳՊ-ով նախատեսվում է, որ ՀՁՎԳՊ ԻԽ-ն լրացուցիչ միջոցառումներ պետք է իրականացնի այս USS-ներին Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում ընդգրկելու նպատակով: Դա ենթադրում է USS-ների առկայության վերաբերյալ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ՀՀ ԱՍՀՆ)-ին տեղեկացում՝ որպես ՀՀ-ում սոցիալական ծառայություն և ապահովություն տրամադրող պետական լիազոր մարմին, որից հետո նախարարությունը կուսումնասիրի այս դեպքերը և կդիտարկի դրանց վերոնշյալ համակարգում գրանցելու հնարավորությունը: Այս USS-ները իրավասու կլինեն ՀՁՎԳՊ-ով նախատեսված խոցելիության նպաստ ստանալ միայն ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում նրանց գրանցելուց հետո:

**Աղյուսակ 21: Ազդակիր USS-ները՝ ըստ աղքատության կարգավիճակի՝ հիմք ընդունելով ԱԱ-ների հայտարարված եկամուտի չափը**

| <b>Աղքատության կարգավիճակը</b>  | <b>USS (N)</b> | <b>%</b>     |
|---|----------------|--------------|
| <b>Աղքատության սանդղակից բարձր</b>  |                |              |
| <b>1. Ոչ աղքատ USS-ներ (մեկ չափահաս մարդու հաշվով ամսական &gt; 37,044 ՀՀ դրամ)</b>      | 103            | 84.4         |
| <b>Աղքատության սանդղակից ցածր</b>   |                |              |
| <b>2. Աղքատ USS (մեկ չափահաս մարդու հաշվով ամսական 30,547 - 37,044 ՀՀ դրամ)</b>         | 9              | 7.4          |
| <b>3. Շատ աղքատ USS-ներ (մեկ չափահաս մարդու հաշվով ամսական 21,732 - 30,547 ՀՀ դրամ)</b> | 4              | 3.3          |
| <b>4. Չափազանց աղքատ USS-ներ (մեկ չափահաս մարդու հաշվով ամսական ≤ 21,732 ՀՀ դրամ)</b>   | 6              | 4.9          |
| <b>Ընդհանուր (աղքատության սանդղակից ցածր)</b>   | <b>19</b>      | <b>15.6</b>  |
| <b>Ընդամենը</b>   | <b>122</b>     | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

\*ներառված է A և D կետերում.

\* ներառված է A և B կետերում.

#### 4.4.4 Խիստ ազդեցություն

104. Ինչպես ներկայացված է Իրավունքի և փոխհատուցման մատրիցայում Ծրագրի ՎՔՇ-ով և ՀՁՎԳՊ-ով նախատեսվում է օժանդակություն խիստ ազդեցության համար հետևյալ դեպքերում՝

- ԱՏՏ-եր (ներառյալ վարձակալ և փաստացի հողօգտագործող ԱՏՏ-եր) որոնց գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին ազդեցության է ենթարկվում:
- Տեղահանվող ԱՏՏ-եր (ներառյալ տեղահանվող վարձակալներ):

105. Համաձայն վերոգրյալ սահմանմանը՝ 57<sup>6</sup> ԱՏՏ կորցնում է գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին և 43 ԱՏՏ (ԱՏՏ որոնք փաստացի բնակվում է Ջրածորում) տեղահանվում են:

Աղյուսակ 22: Խիստ ազդեցություն

| Խիստ ազդեցության տեսակը                                       | ԱՏՏ |
|---|-----|
| Գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին կորցնող ԱՏՏ | 57* |
| Տեղահանվող ԱՏՏ  | 43  |

\*55 փոխհատուցման Տարբերակ 1-ի դեպքում

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

#### 4.4.5 Կենսապայմանները

106. Ազդակիր համայնքի անբավարար կենսապայմանները մեծ խնդիր են հանդիսանում հատկապես Ջրածոր համայնքում, որը մեծապես տուժել է 1988 թ. երկրաշարժից: Երկրաշարժը մշտական և ժամանակավոր վնաս է պատճառել շատ բնակելի տներին, որի հետևանքով բազմաթիվ տնային տնտեսություններ ժամանակավոր կացարաններում են բնակվում: Այնուամենայնիվ, ըստ մարդահամարի արդյունքների՝ կենսապայմանների տեսանկյունից ամենախոցելի են համայնքային ճանապարհների որակն է և աղբահանության խնդիրը, որոնք ԱԱ-ների 83,6%-ի կարծիքով՝ վատ կամ շատ վատ վիճակում են: ԱԱ-ների 70,5 և 60,5 տոկոսը դժգոհ են տներում առկա խոնավության մակարդակից, ինչպես նաև պատերի և հատակի վիճակից:

Աղյուսակ 23: Կենսապայմաններն ու շինությունների կարգավիճակը

| Նկարագիր                   | Շատ վատ | Վատ  | Միջին | Լավ  | Շարժավ | Ընդամենը |
|----------------------------|---------|------|-------|------|--------|----------|
| Բնակելի տարածքը            | 34.4    | 16.4 | 32.8  | 13.1 | 3.3    | 100.0    |
| Էլեկտրամատակարարում        | 9.8     | 11.5 | 45.9  | 29.5 | 3.3    | 100.0    |
| Ջեռուցումը                 | 14.8    | 14.8 | 45.9  | 23.0 | 1.6    | 100.0    |
| Տանիքի վիճակը              | 36.1    | 26.2 | 24.6  | 11.5 | 1.6    | 100.0    |
| Պատերի և հատակի վիճակը     | 31.1    | 34.4 | 19.7  | 13.1 | 1.6    | 100.0    |
| Խոնավության մակարդակը      | 49.2    | 21.3 | 14.8  | 13.1 | 1.6    | 100.0    |
| Պատուհանների վիճակը        | 24.6    | 24.6 | 29.5  | 18.0 | 3.3    | 100.0    |
| Շինության ընդհանուր վիճակը | 32.8    | 18.0 | 31.1  | 18.0 | 0.0    | 100.0    |

<sup>6</sup> Տարբերակ 1-ի դեպքում 55 ԱՏՏ է կորցնում գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին:

|                        |      |      |      |      |      |       |
|------------------------|------|------|------|------|------|-------|
| Գյուղի փողոցների որակը | 70.5 | 13.1 | 11.5 | 4.9  | 0.0  | 100.0 |
| Աղբահանման խնդիր       | 63.9 | 19.7 | 9.8  | 6.6  | 0.0  | 100.0 |
| Տարածքի անվտանգություն | 6.6  | 9.8  | 26.2 | 45.9 | 11.5 | 100.0 |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

107. Կոմունալ ծառայությունների առկայության տեսնկայունից, ԱԱ-ների 72,1 տոկոսը դժգոհել են տաք ջրի բացակայությունից: Իսկ 68,9 տոկոսը նշել են, որ տան ներսում լոգարան/զուգարան չունեն:

Աղյուսակ 24: Կոմունալ ծառայությունների առկայություն

| Արդյո՞ք տան ներսում առկա են հետևյալ կոմունալ ծառայությունները: | Այո |      | Ոչ |      | Ընդամենը |       |
|--|-----|------|----|------|----------|-------|
|  | N   | %    | N  | %    | N        | %     |
| 1. Խմելու ջուր   | 49  | 80.3 | 12 | 19.7 | 61       | 100.0 |
| 2. Տաք ջուր  | 17  | 27.9 | 44 | 72.1 | 61       | 100.0 |
| 3. Լոգարան   | 25  | 41.0 | 36 | 59.0 | 61       | 100.0 |
| 4. Զուգարան  | 19  | 31.1 | 42 | 68.9 | 61       | 100.0 |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

108. Ջեռուցման պայմանները հիմնականում գնահատվում են միջին: Գոմաղբն ամենահաճախ օգտագործվող վեռելիքն է ազդակիր տարածքի տների տաքացման համար: Փայտը երկրորդ ամենահաճախ կիրառվող վառելիքն է: Աղյուսակ 25-ով ներկայացված են տները տաքացնելու համար օգտագործվող վառելիքի հիմնական տեսակները

Աղյուսակ 25: Տները տաքացնելու էներգիայի աղբյուրը

| Վառելիքի տեսակը     | 1-ին տարբերակ | 2-րդ տարբերակ | 3-րդ տարբերակ |
|---------------------|---------------|---------------|---------------|
| Էլեկտրաէներգիա      | Կիրառելի չէ   | Կիրառելի չէ   | Կիրառելի չէ   |
| Գազ                 | 2             | Կիրառելի չէ   | Կիրառելի չէ   |
| Փայտ                | 3             | 9             | Կիրառելի չէ   |
| Գոմաղբ              | 56            | 2             | Կիրառելի չէ   |
| <b>Ընդամենը ԱՏՏ</b> | <b>61</b>     | <b>11</b>     | <b>0</b>      |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

#### 4.4.6 Կենցաղային ծախսեր

109. Սննդի սպառումը հանդիսանում է ազդակիր ԱՏՏ-ների բյուջեի խոշորագույն ծախսը: Դրան հաջորդում են վարկերի դիմաց վճարումները: Հաջորդ ամենախոշոր ծախսերից է գյուղատնտեսական ծախսը, որը կազմում է ծախսերի ընդհանուր ծավալի մոտ 10 տոկոսը: Էլեկտրաէներգիայի օգտագործման վճարները և ջեռուցման ծախսերը համեմատաբար ցածր են՝ տները գոմաղբով տաքացնելու շնորհիվ:


Աղյուսակ 26: ԱՏՏ-ների միջին ամսական ծախսերը

| Ծախս                              | Ընդամենը % |
|-----------------------------------|------------|
| 1. Սնունդ                         | 26.6       |
| 2. Անձնական/տրանսպորտ/գազ/բենզին/ | 7.2        |
| 3. Հանրային տրանսպորտ             | 2.7        |
| 4. Հագուստ                        | 8.1        |

|  |              |
|--|--------------|
| 5. Առողջապահական (ղեղորայք, ծառայություններ)   | 9.6          |
| 6. Կրթություն (ուսման վարձ, գրենական պիտույքներ)   | 5.4          |
| 7. Բջջային կապի ծառայություններ  | 2.0          |
| 8. Ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ  | 0.0          |
| 9. Էլեկտրականություն   | 3.2          |
| 10. Գազ  | 0.2          |
| 11. Խմելու ջուր  | 0.5          |
| 12. Միջոցառումներ (ծնունդ հարսանիք, թաղում և այլն.)  | 6.2          |
| 13. Սեփականության հարկ / տուն, հող, ավտոմեքենա /   | 2.1          |
| 14. Սարքավորումների ձեռքբերում/ հեռախոս, համակարգիչ և այլն   | 1.3          |
| 15. Վարկի մարում   | 11.9         |
| 16. Գյուղատնտեսական ծախսեր. Ոռոգման ջուր, գյուղատնտեսական սարքավորումներ, պարարտանյութեր, սերմեր և այլն/ | 9.8          |
| 17. Այլ ծախսեր   | 3.3          |
| <b>Ընդամենը</b>  | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

**Գծապատկեր 8: ԱՏՏ-ների միջին ամսական ծախսերը (%)**



110. Չնայած սննդի վրա ծախսվող գումարը բյուջեի ամենախոշոր ծախսն է, և անասնապահությունը համայնքի ամենախոշոր եկամտի աղբյուրն է, այնուամենայնիվ, ԱՏՏ-ների 67,2 %-ը նշել են, որ նրանք ի վիճակի չեն լինում միս (հավ, հորթ, ձուկ) գնել յուրաքանչյուր երկու օրը մեկ անգամ: Ազդակիր ԱՏՏ-ների 63.9 տոկոսը նշել են, որ իրենք վարկեր ունեն: Մեկ ԱՏՏ-ի հաշվով պարտքի/վարկի ընդհանուր չափը՝ 2,1 միլիոն ՀՀ դրամ է:

#### 4.5 Ծրագրի Ազդեցությունը հողի վրա

111. Ծրագրի ազդեցության ծավալը կախված է փոխհատուցման տարբերակից, որը պետք է իրականացվի, թե արգյո՞ք կվերաբնակեցվի Ջրածոր գյուղը, թե ոչ: Եթե Ջրածոր գյուղը վերաբնակեցվի նոր վայրում (տարբերակ 2), ապա Ծրագրի ընդհանուր ազդեցությունը կմեծանա, քանի որ անհրաժեշտ կլինի ձեռք բերել լրացուցիչ հող գյուղը այդտեղ վերաբնակեցնելու համար: Ազդեցության գնահատումը յուրաքանչյուր տարբերակի համար ներկայացվում է առանձին: Տարբերակները հետևյալն են Տարբերակ 1՝ դրամական փոխհատուցում տան գնման վկայագրի միջոցով տան համար և դրամով այլ գույքի համար, և Տարբերակ 2՝ գյուղի վերաբնակեցում նոր վայրում:

##### 4.5.1 Ազդեցություն հողի վրա՝ տարբերակ մեկ

112. Տերերակ 1 (դրամական փոխհատուցում)-ի դեպքում, ազդեցության է ենթարկվում 292 (61 մասնավոր(գրանցված), 4 համայնքային (գրանցված), 226 չգրանցված և 1 պետական) հողակտոր 1,101,556.57 մ2 ընդհանուր մակերեսով Ջրածոր, Արեգնադեմ, Գտաշեն Կապս և Բյուրակն գյուղերում: 61 հողամաս մասնավոր է և գրանցված, 226-ը գրանցում չունեցող, որից 208-ը պատկանում են մասնավորին, իսկ 18-ը համայնքին (ըստ համայնքի կողմից տրված տեղեկանքի), 4-ը գրանցված է համայնքի անունով և 1 հողամաս պետական սեփականություն է: Հարկ է նշել, որ Հողմիկ բնակավայրի (Սարապատ համայնք) որոշ տարածք ընկնում է Ջրամբարի բուֆերային գոտի/առափնյա ջրապահպան շերտի մեջ, բայց քանի որ այս տարածքը ձորի լանջն է, չի օգտագործվում որևէ ԱԱ-ի կողմից և այդտեղ չկան առանձնացված հողատարածքներ, այս տարածքը ներկայացված չէ ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 27: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ բնակավայրերի (Տարբերակ 1)

| N | Գյուղ/համայնք   | Մասնավոր  |                | Զգրանցված  |                  |             |                  | Համայնքային |                | Պետական  |                 | Ընդամենը   |                     | USS        |
|---|-----------------|-----------|----------------|------------|------------------|-------------|------------------|-------------|----------------|----------|-----------------|------------|---------------------|------------|
|   |                 |           |                | Մասնավոր   |                  | Համայնքային |                  |             |                |          |                 |            |                     |            |
|   |                 | հատ       | մ <sup>2</sup> | հատ        | մ <sup>2</sup>   | հատ         | մ <sup>2</sup>   | հատ         | մ <sup>2</sup> | հատ      | մ <sup>2</sup>  | հատ        | մ <sup>2</sup>      |            |
| 1 | Ջրածոր          | 55        | 317,242        | 208        | 158,442.1        | 4           | 36,223           | 2           | 27,000         | 1        | 5,856.69        | 270        | 544,763.76          | 112        |
| 2 | Արեգնադեմ       | 1         | 12,526         | 0          | -                | 10          | 167,158          | 2           | 47,300         | 0        | -               | 13         | 226,984.00          | -          |
| 3 | Գտաշեն          | 4         | 91,260         | 0          | -                | 0           | -                | 0           | -              | 0        | -               | 4          | 91,260.00           | 4          |
| 4 | Կապս            | 1         | 2,600          | 0          | -                | 0           | -                | 0           | -              | 0        | -               | 1          | 2,600.00            | 1          |
| 5 | Բյուրակն        | 0         | -              | 0          | -                | 4           | 235,948.81       | 0           | -              | 0        | -               | 4          | 235,948.81          | -          |
|   | <b>Ընդամենը</b> | <b>61</b> | <b>423,628</b> | <b>208</b> | <b>158,442.1</b> | <b>18</b>   | <b>439,329.8</b> | <b>4</b>    | <b>74,300</b>  | <b>1</b> | <b>5,856.69</b> | <b>292</b> | <b>1,101,556.57</b> | <b>117</b> |

113. Ջրածոր գյուղը ամենա շատն է ենթարկվում ազդեցության, քանի որ 270 հողամաս 544,763.76 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով ազդակիր է: Ազդեցության տեսակետից Ջրածորին հաջորդում է Արեգնադեմը, որից հետո Գտաշենը, որոնց ազդակիր մեկերեսը կազմում է համապատասխանաբար 226,984 և 91,260 մ<sup>2</sup>: Կապս համայնքում ազդեցության է ենթարկվում ընդամենը մեկ մասնավոր հողամաս: Ազդակիր համայնքային (գրանցված և առանց գրանցման) հողերի քանակությունը 22-ն է:

Աղյուսակ 28: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի (Տարբերակ 1)

| N | Հողամասի նշանակությունը | Մասնավոր |                | Զգրանցված |                |             |                | Համայնքային |                | Պետական |                | Ընդամենը |                |
|---|-------------------------|----------|----------------|-----------|----------------|-------------|----------------|-------------|----------------|---------|----------------|----------|----------------|
|   |                         |          |                | Մասնավոր  |                | Համայնքային |                |             |                |         |                |          |                |
|   |                         | հատ      | մ <sup>2</sup> | հատ       | մ <sup>2</sup> | հատ         | մ <sup>2</sup> | հատ         | մ <sup>2</sup> | հատ     | մ <sup>2</sup> | հատ      | մ <sup>2</sup> |

|   |                 |           |                |            |                  |           |                   |          |               |          |                 |            |                     |
|---|-----------------|-----------|----------------|------------|------------------|-----------|-------------------|----------|---------------|----------|-----------------|------------|---------------------|
| 1 | Գյուղ           | 58        | 420,628        | 46         | 43,739.4         | 18        | 439,329.81        | 4        | 74,300        | 0        | -               | 126        | 977,997.21          |
| 2 | բնակ            | 0         |                | 162        | 114,702.7        | 0         |                   | 0        | -             | 1        | 5,856.69        | 163        | 120,559.36          |
| 3 | Էներգետիկ       | 3         | 3,000          | 0          | 0                | 0         |                   | 0        | -             | 0        |                 | 3          | 3,000.00            |
|   | <b>Ընդամենը</b> | <b>61</b> | <b>423,628</b> | <b>208</b> | <b>158,442.1</b> | <b>18</b> | <b>439,329.81</b> | <b>4</b> | <b>74,300</b> | <b>1</b> | <b>5,856.69</b> | <b>292</b> | <b>1,101,556.57</b> |

114. **Մասնավոր գրանցված հողեր՝** 61 մասնավոր գրանցված ազդակիր հողամասերից 58-ի նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ 3-ինը էներգետիկ: Այս հողերը պատկանում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք հողերի նկատմամբ ունեն գրանցված իրավունքներ:

115. **Համայնքային գրանցված հողեր՝** ուսումնասիրությունը հայտնաբերել է 4 գրանցված համայնքային հողամաս, որոնք տրված են վարձով:

116. **Առանց գրանցման հողամասեր՝** 226 գրանցում չունեցող հողամասից 64-ը գյուղատնտեսական նշանակության են, իսկ 162-ը բնակավայրերի: Չգրանցված բնակավայրային հողերը ներառում են Ջրածոր գյուղի բնակեցված տարածքները, որոնք չեն ենթարվել առաջին պետական գրանցման: Համայնքի կողմից տրամադրված տեղեկանքների հիման վրա որոշվել են չգրանցված հողամասերի պոտենցիալ սեփականատերերը և վերջիններիս իրավունքները կգարնցեն ՀՀՎԳՊ իրականացման փուլում: Այս առաջադրանքը ներառվել է ՀՀՎԳՊ ԻԽ-ի աշխատանքների մեջ: ԱԱ-երը կփոխհատուցվեն որպես օրինական սեփականատերեր իրավունքների պետական գրանցումից հետո:

#### 4.5.2 Ազդեցություն հողի վրա՝ տարբերակ երկու

117. Տարբերակ 2-ի (գյուղի վերաբնակեցում նոր վայրում) դեպքում ազդակիր հողերի ընդհանուր քանակությունը կավելանա 45-ով: Լրացուցիչ ազդեցությունը ներառում է 204,848 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 41 մասնավոր հողամաս և 115,668 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 4 հատ համայնքային հողամաս, որոնք գտնվում են Ջրածորում:

Աղյուսակ 29: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ բնակավայրերի (Տարբերակ 2)

| N | Գյուղ/<br>համայնք | Մասնավոր  |                | Չգրանցված |                |             |                | Համայնքային |                  | Պետական  |                | Ընդամենը  |                  | USS       |
|---|-------------------|-----------|----------------|-----------|----------------|-------------|----------------|-------------|------------------|----------|----------------|-----------|------------------|-----------|
|   |                   | հատ       | մ <sup>2</sup> | Մասնավոր  |                | Համայնքային |                | հատ         | մ <sup>2</sup>   | հատ      | մ <sup>2</sup> | հատ       | մ <sup>2</sup>   |           |
|   |                   |           |                | հատ       | մ <sup>2</sup> | հատ         | մ <sup>2</sup> |             |                  |          |                |           |                  |           |
| 1 | Ջրածոր            | 41        | 204,848        | 0         | -              | 0           | -              | 4           | 115,668.3        | 0        | -              | 45        | 320,516.3        | 11        |
| 2 | Արեգնաղեմ         | 0         | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -                | 0        | -              | 0         | -                | -         |
| 3 | Գտաշեն            | 0         | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -                | 0        | -              | 0         | -                | -         |
| 4 | Կապս              | 0         | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -                | 0        | -              | 0         | -                | -         |
| 5 | Բյուրակն          | 0         | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -                | 0        | -              | 0         | -                | -         |
|   | <b>Ընդամենը</b>   | <b>41</b> | <b>204,848</b> | <b>0</b>  | <b>-</b>       | <b>0</b>    | <b>-</b>       | <b>4</b>    | <b>115,668.3</b> | <b>0</b> | <b>-</b>       | <b>45</b> | <b>320,516.3</b> | <b>11</b> |

118. Բոլոր լրացուցիչ ազդակիր հողերը գյուղատնտեսական նշանակության են:

Աղյուսակ 30: Ազդեցության ենթարկված հողերը, ըստ հողի կատեգորիայի (Տարբերակ 2)

| N | Հողամասի<br>նշանակությունը | Մասնավոր |                | Չգրանցված |                |             |                | Համայնքային |                | Պետական |                | Ընդամենը |                |
|---|----------------------------|----------|----------------|-----------|----------------|-------------|----------------|-------------|----------------|---------|----------------|----------|----------------|
|   |                            | հատ      | մ <sup>2</sup> | Մասնավոր  |                | Համայնքային |                | հատ         | մ <sup>2</sup> | հատ     | մ <sup>2</sup> | հատ      | մ <sup>2</sup> |
|   |                            |          |                | հատ       | մ <sup>2</sup> | հատ         | մ <sup>2</sup> |             |                |         |                |          |                |
| 1 | Գյուղ                      | 41       | 204,848        | 0         | -              | 0           | -              | 4           | 115,668.3      | 0       | -              | 45       | 320,516.3      |
| 2 | Բնակ                       | 0        | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -              | 0       | -              | 0        | -              |
| 3 | Էներգետիկ                  | 0        | -              | 0         | -              | 0           | -              | 0           | -              | 0       | -              | 0        | -              |

|          |    |         |   |   |   |   |   |           |   |   |    |           |
|----------|----|---------|---|---|---|---|---|-----------|---|---|----|-----------|
| Ընդամենը | 41 | 204,848 | 0 | - | 0 | - | 4 | 115,668.3 | 0 | - | 45 | 320,516.3 |
|----------|----|---------|---|---|---|---|---|-----------|---|---|----|-----------|

Աղյուսակ 31: Ընդամենը ազդեցություն հողերի վրա, ըստ բնակավայրերի (Տարբերակ 2)

| N | Գյուղ/համայնք   | Մասնավոր   |                | Զգրանցված  |                  |             |                | Համայնքային |               | Պետական  |                | Ընդամենը   |                    | USS        |
|---|-----------------|------------|----------------|------------|------------------|-------------|----------------|-------------|---------------|----------|----------------|------------|--------------------|------------|
|   |                 |            |                | Մասնավոր   |                  | Համայնքային |                |             |               |          |                |            |                    |            |
|   |                 | հատ        | մ2             | հատ        | մ2               | հատ         | մ2             | հատ         | մ2            | հատ      | մ2             | հատ        | մ2                 |            |
| 1 | Ջրածոր          | 96         | 522,090        | 208        | 158,442.1        | 8           | 151,891.3      | 2           | 27,000        | 1        | 5,856.7        | 315        | 865,280.1          | 123        |
| 2 | Արեգնադեմ       | 1          | 12,526.0       | 0          | 0                | 10          | 167,158.0      | 2           | 47,300.0      | 0        | 0.0            | 13         | 226,984.0          | 0          |
| 3 | Գտաշեն          | 4          | 91,260.0       | 0          | 0                | 0           | 0.0            | 0           | 0.0           | 0        | 0.0            | 4          | 91,260.0           | 4          |
| 4 | Կապս            | 1          | 2,600.0        | 0          | 0                | 0           | 0.0            | 0           | 0.0           | 0        | 0.0            | 1          | 2,600.0            | 1          |
| 5 | Բյուրակն        | 0          | 0              | 0          | 0                | 4           | 235,948.8      | 0           | 0.0           | 0        | 0.0            | 4          | 235,948.8          | 0          |
|   | <b>Ընդամենը</b> | <b>102</b> | <b>628,476</b> | <b>208</b> | <b>158,442.1</b> | <b>22</b>   | <b>554,998</b> | <b>4</b>    | <b>74,300</b> | <b>1</b> | <b>5,856.7</b> | <b>337</b> | <b>1,422,072.9</b> | <b>128</b> |

## 4.6 Ազդեցություն մշակաբույսերի վրա

### 4.6.1 Ազդեցություն մշակաբույսերի վրա՝ տարբերակ մեկ

119. Տերբերակ 1-ի (դրամական փոխհատուցում) դեպքում ազդեցության է ենթարկվում մշակվող 36 հողամաս: 29 հողամասի վրա աճեցվում է սխտոր, իսկ 7-ի վրա իշառվույթ: Ընդհանուր առմամբ միջին տարեկան կորցրած բերքը կազմում է 6,687. 12 կգ: Սխտորը աճեցվում է տնամերձ հողամասերում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 390 մ<sup>2</sup>: Իշառվույթը աճեցվում է գյուղատնտեսական հողամասերում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 15,157 մ<sup>2</sup>:

120. Նշում՝ հարկ է նշել, որ ուսումնասիրությունն իրականացվել է զմռանը ու վաղ գարնանը և հնարավոր չի եղել ստուգել մշակաբույսերի փաստացի առկայությունը հողամասերում: Այդ պատճառով մշակաբույսերի վրա ազդեցության գնահատումն իրականացվել է սեփականատերերի կողմից տրամադրված տղեկատվության հիման վրա: Ուստի՝ մշակաբույսերի վրա ազդեցության տղեկատվությունը ունի կողմնորոշիչ բնույթ և պետք է վերահաստատվի ՀԶՎԳՊ ԻԽ-ի կողմից ՀԶՎԳՊ իրականացման ժամանակ:



Աղյուսակ 32: Ազդակիր մշակաբույսեր

| N   | Մշակաբույսի տեսակը | Հողակտորների քանակը | Տարեկան բերքատվությունը | Ազդեցության ենթարկված մակերեսը | Ընդհանուր կորուստը |
|---|--------------------|---------------------|-------------------------|--------------------------------|--------------------|
|   |                    | հատ                 | կգ/մ <sup>2</sup>       | մ <sup>2</sup>                 | կգ                 |
| 1   | Սխտոր              | 29                  | 1.6                     | 390.2                          | 624.32             |
| 2   | Իշառվույտ          | 7                   | 0.4                     | 15,157                         | 6,062.80           |
|   | <b>Ընդամենը</b>    | <b>36</b>           |                         | <b>15,547.2</b>                | <b>6,687.12</b>    |
| Նշումներ՝ a) Ազդակիր SS-երի քանակը՝ 40 SS, b) Բոլոր մշակաբույսերը Ջրածոր համայնքում են: |                    |                     |                         |                                |                    |

#### 4.6.2 Ազդեցություն մշակաբույսերի վրա՝ տարբերակ երկու

121. Տարբերակ 2-ի դեպքում 2 լրացուցիչ մշակաբույսով հողամաս է ենթարկվում ազդեցության, որոնց վրա իշառվույթ է աճեցվում: Տարեկան բերքի կորուստը կազմում է 3,900 կգ: Լրացուցիչ մշակվող հողամասի մակերեսը կազմում է 9,750 մ<sup>2</sup>:

Աղյուսակ 33: Ազդակիր մշակաբույսեր

| N  | Մշակաբույսի տեսակը | Հողակտորների քանակը | Տարեկան բերքատվությունը | Ազդեցության ենթարկված մակերեսը | Ընդհանուր կորուստը |
|--|--------------------|---------------------|-------------------------|--------------------------------|--------------------|
|  |                    | հատ                 | կգ/մ <sup>2</sup>       | մ <sup>2</sup>                 | կգ                 |
| 1  | Սխտոր              | 0                   | 0                       | 0                              | 0                  |
| 2  | Իշառվույտ          | 2                   | 0.4                     | 9,750                          | 3,900              |
|  | <b>Ընդամենը</b>    | <b>2</b>            |                         | <b>9,750</b>                   | <b>3,900</b>       |
| Նշումներ՝ a) Ազդակիր SS-երի քանակը՝ 3 SS, b) Բոլոր մշակաբույսերը Ջրածոր համայնքում են: |                    |                     |                         |                                |                    |

#### 4.7 Ազդեցություն ծառերի և թփերի վրա

122. Ծրագրով ազդեցության է ենթարկվում 21 տեսակի 1090 հատ բերքատու ծառ և թուփ: Սա ներառում է նորատունկ, դեռ ոչ բերքատու և բերքատու ծառեր և թփեր: Այնուամենայնիվ մեծ մասը՝ 1004 հատ, կազմում են բերքատու ծառերը և թփերը: Ծառերի և թփերի վրա ազդեցությունը չի փոխվում կախված փոխհատուցման տարբերակից՝ 1 կամ 2:

Աղյուսակ 34: Բերքատու ծառեր և թփատեսակներ

| N  | Ծառի տեսակը | նորատունկ | դեռ ոչ բերքատու | բերքատու | Ընդամենը |
|----|-------------|-----------|-----------------|----------|----------|
|    |             | Հատ       | Հատ             | Հատ      | Հատ      |
| 1  | Բալ         | 0         | 33              | 225      | 258      |
| 2  | Դամբուլ     | 0         | 4               | 12       | 16       |
| 3  | Դեղձ        | 0         | 0               | 11       | 11       |
| 4  | Ընկույզ     | 2         | 2               | 32       | 36       |
| 5  | Թուփ        | 0         | 1               | 4        | 5        |
| 6  | Խաղող       | 0         | 0               | 17       | 17       |
| 7  | Խնձոր       | 3         | 14              | 230      | 247      |
| 8  | Ծիրան       | 0         | 0               | 20       | 20       |
| 9  | Ծորեն       | 0         | 0               | 16       | 16       |
| 10 | Կաղին       | 0         | 0               | 3        | 3        |
| 11 | Կեռաս       | 1         | 4               | 37       | 42       |
| 12 | Նուշ        | 0         | 0               | 1        | 1        |
| 13 | Պնդուկ      | 0         | 0               | 7        | 7        |
| 14 | Սալոր       | 0         | 7               | 95       | 102      |

|   |                 |          |           |              |              |
|---|-----------------|----------|-----------|--------------|--------------|
| 15  | Տանձ            | 0        | 1         | 52           | 53           |
| 16  | Մոշ             | 0        | 0         | 5            | 5            |
| 17  | Մասուր          | 0        | 4         | 41           | 45           |
| 18  | Հաղարջ          | 0        | 3         | 35           | 38           |
| 19  | Կոկոռշ          | 0        | 3         | 21           | 24           |
| 20  | Ազնվամորի       | 0        | 2         | 110          | 112          |
| 21  | Ելակ            | 0        | 2         | 30           | 32           |
|   | <b>Ընդամենը</b> | <b>6</b> | <b>80</b> | <b>1,004</b> | <b>1,090</b> |
| <b>Նշումներ՝ a) Ազդակիր SS-երի քանակը՝ 68 SS, b) Բոլոր ծառերը Ջրածոր համայնքում են:</b> |                 |          |           |              |              |

123. Ի լրումն վերոգրյալ բերքատու ծառերին և թփերին, ազդեցության են ենթարկվում նաև 58 փայտանյութ տվող ծառեր, որից 15-ը միջին իսկ 43-ը հասուն ծառեր են: Սա ներառում է 50 հատ բարդի և 8 հատ ուռենու ծառեր:

**Աղյուսակ 35: Փայտանյութ տվող ծառերի տեսակը և քանակը**

| N   | Ծառի տեսակը     | Փայտանյութ տվող ծառերը |           | Ընդամենը  |
|---|-----------------|------------------------|-----------|-----------|
|   |                 | միջին                  | հասուն    |           |
| 1   | Բարդի           | 7                      | 43        | 50        |
| 2   | Ուռենի          | 8                      | 0         | 8         |
|   | <b>Ընդամենը</b> | <b>15</b>              | <b>43</b> | <b>58</b> |
| <b>Նշումներ՝ a) Ազդակիր SS-երի քանակը՝ 13 SS, b) Բոլոր ծառերը Ջրածոր համայնքում են:</b> |                 |                        |           |           |

124. Ազդեցության են ենթարկվում նաև 51 հատ դեկորատիվ ծառ և թուփ: Սա ներառում է 28 վարդի և 23 յասամանի թուփ:

**Աղյուսակ 36: Դեկորատիվ Ծառերի Տեսակը և Քանակը**

| N   | Ծառի տեսակը     | Քանակը (հատ) |
|---|-----------------|--------------|
| 1   | Վարդի թուփ      | 28           |
| 2   | Յասաման         | 23           |
|   | <b>Ընդամենը</b> | <b>51</b>    |
| <b>Նշումներ՝ a) Ազդակիր SS-երի քանակը՝ 18 SS, b) Բոլոր ծառերը Ջրածոր համայնքում են:</b> |                 |              |

#### 4.8 Ազդեցություն շինությունների վրա

125. Ծրագրով ազդեցության է ենթարկվում 15,544,02 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով 251 շինություն: Շինությունները փոխհատուցվելու են, որից հետո ապամոնտաժվեն: Սա ներառում է 74 տուն, 72 անասնագոմ, 20 ավտոտնակ և այլն: Ազդեցության է ենթարկվում նաև գյուղի դպրոցը և գյուղապետարանը: Ազդակիր շինությունների մեծ մասը՝ ներառյալ տները, չունեն պետական գրանցում: Այդ շինությունները պետք է գրանցվեն փոխհատուցումից առաջ:

**Աղյուսակ 37: Ազդակիր շինություններ**

| N | Շինության տեսակը | Պետական գրանցում ունեցող |                            | Առանց պետական գրանցման |                            | Ընդամենը     |                            | USS |
|---|------------------|--------------------------|----------------------------|------------------------|----------------------------|--------------|----------------------------|-----|
|   |                  | Քանակը (հատ)             | Մակերեսը (մ <sup>2</sup> ) | Քանակը (հատ)           | Մակերեսը (մ <sup>2</sup> ) | Քանակը (հատ) | Մակերեսը (մ <sup>2</sup> ) |     |
| 1 | Բնակելի տուն     | 0                        |                            | 74                     | 5,663.11                   | 74           | 5,663.11                   | 76  |
| 2 | Տնակ             | 0                        |                            | 7*                     | 190.83                     | 7*           | 190.83                     | 7   |

|    |                 |          |                 |            |                  |            |                  |    |
|----|-----------------|----------|-----------------|------------|------------------|------------|------------------|----|
| 3  | Անասնագործ      | 2        | 958.19          | 70         | 4,367.53         | 72         | 5,325.72         | 83 |
| 4  | Ավտոտնակ        | 0        |                 | 20         | 520.88           | 20         | 520.88           | 31 |
| 5  | Բաց պատշգամբ    | 0        |                 | 3          | 38.64            | 3          | 38.64            | 5  |
| 6  | Թռչնանոց        | 0        |                 | 1          | 10.43            | 1          | 10.43            | 2  |
| 7  | Ծածկ            | 0        |                 | 1          | 11.74            | 1          | 11.74            | 1  |
| 8  | Կիսանկող        | 0        |                 | 1          | 23.02            | 1          | 23.02            | 1  |
| 9  | Պահեստ          | 0        |                 | 65         | 2,933.52         | 65         | 2,933.52         | 75 |
| 10 | Տնտ. սենյակ     | 0        |                 | 1          | 7.27             | 1          | 7.27             | 1  |
| 11 | Վարչական շենք   | 0        |                 | 1          | 41.54            | 1          | 41.54            | 0  |
| 12 | Դպրոց           | 1        | 677.84          | 0          | -                | 1          | 677.84           | 0  |
| 13 | Կիսաքանդ շին.   | 0        |                 | 2          | 91.49            | 2          | 91.49            | 3  |
| 14 | Հարթակ          | 0        |                 | 2          | 8                | 2          | 8                | 1  |
|    | <b>Ընդամենը</b> | <b>3</b> | <b>1,636.03</b> | <b>248</b> | <b>13,907.99</b> | <b>251</b> | <b>15,544.02</b> |    |

Նշում՝ բոլոր շինությունները գտնվում է Ջրածորում, բացի մեկ գոմից և մեկ պահեստից, որոնք գտնվում է Կապտում

*\*Որից 2-ը առանձին տնակներ են. իսկ 5-ը տներին կից տնակներ*

126. Առկա են նաև ազդակիր տարբեր բարելավումներ: Բարելավումները նկարագրված են ստորև աղյուսակում՝

**Աղյուսակ 38: Ազդակիր այլ բարելավումներ**

| N | Տեսակը               | N         | Ընդամենը երկարությունը | Ընդամենը մակերեսը |
|---|----------------------|-----------|------------------------|-------------------|
|   |                      |           | մ                      | մ <sup>2</sup>    |
| 1 | Պարիսպ               | 35        | 0                      | 213.80            |
| 2 | Ցանկապատ             | 7         | 0                      | 4,023.60          |
| 3 | Դարպաս               | 4         | 0                      | 22.79             |
| 4 | Սպորտային կառույցներ | 1         | 37                     | -                 |
|   | <b>Ընդամենը</b>      | <b>47</b> | <b>37</b>              | <b>4,260.19</b>   |

127. Ծրագրով ազդեցության է ենթարկվում նաև 25 շարժական գույք: Սա ներառում է 1 հատ ավտոտնակ, 22 կոնտեյներ և 2 ջրի բաք: ԱԱ-երին կտարամդրվի տրանսպորտային ծախսերը հոգալու օժանդակություն, որը բավարար կլինի այդ շարժական գույքը տեղափոխելու համար:

**Աղյուսակ 39: Հողի վրա առկա տեղափոխման ենթակա (շարժական) գույք**

| N | Գույքի տեսակը   | Քանակը (հատ) |
|---|-----------------|--------------|
| 1 | Ավտոտնակ        | 1            |
| 2 | Կոնտեյներ       | 22           |
| 3 | Ջրի բաք         | 2            |
|   | <b>Ընդամենը</b> | <b>25</b>    |

#### 4.9 Աշխատանքի մշտական կորուստ

128. Տարբերակ 1-ի դպեքում Ջրոձոր գյուղի դպրոցի և գյուղապետարանի աշխատակիցները կկորցնեն իրենց աշխատանքը: Համաձայն Ամասիա համայնքից ստացված տեղեկանքի դպրոցի աշխատողների թիվը կազմում է 22, իսկ գյուղապետարանինը՝ 3: Դպրոցի աշխատողներից 15 և գյուղապետարանի աշխատողներից 2 միջին ամսական աշխատավարձն

ավելի ցածր է, քան ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձը:

129. Տարբերակ 2-ի դեպքում նշված աշխատողները կպահպանեն իրենց աշխատանքը և կշարունակեն իրենց գործունեությունը նշված հաստատությունների նոր շենքերում:

#### **4.10 Ազդեցությունը էկոհամակարգի ծառայությունների վրա**

130. Ազդակիր համայնքն օգտվում է, Ծրագրի տարածքում անվճար հասանելի հարուստ բնական պաշարներից: Այս բնական պաշարները սննդամթերքի և եկամտի աղբյուր են հանդիսանում ԱԱ-ների համար: Ծրագրի տարածքում առկա բնական ռեսուրսների հաճախակի օգտագործման տեսակները հետևյալն են.

- Ֆերմերային տնտեսություն և բանջարաբուծություն;
- Խոշոր եղջրավոր կենդանիների բուծում;
- Վառելիփայտի հավաքում՝ սնունդ պատրաստելու նպատակով
- Խոտաբույսերի և բույսերի հավաքում
- Մեղվաբուծություն; և
- Սիրողական ձկնորսություն

131. Ծրագիրը չի հասցնի որևէ բացասական վնաս էկոհամակարգին, քանի որ ԱՏՏ-ները շարունակելու են օգտվել բնական ռեսուրսներից և նույնիսկ առավել արդյունավետ օգտագործել որոշ այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են անասնակերի հումքը, որի հավաքումն ավելի արդյունավետ կիրականացվի՝ օգտագործելով Ծրագրի կողմից տրամադրվող համայնքի զարգացման սարքավորումը: Ջրամբարի կառուցումը էական ազդեցություն կունենա տեղական ձկնորսության վրա՝ սպասվում է, որ որոշ ազդեցություններ կլինեն դրական:

#### **4.11 Ազդեցություն մշակութային ժառանգության վրա**

132. Ազդակիր տարածքում կա 11 պատմամշակութային տարածք (2-ը՝ Կապսում, 5-ը՝ Ջրածորում, 3-ը՝ Արեգնադեմում և 1-ը՝ Հողմիկում): Այդ հուշարձանների համար կպահանջվի մանրամասն հնագիտական հետազոտություն: ԲՍԱԳ հաշվետվության նախապատրաստման փուլում կատարվել է ազդեցության գնահատում, որի վեաբերյալ կպահանջվի պետական լիազոր մարմնի եզրակացությունը:

133. Ազդակիր համայնքի ԱԱ-ները հատկորոշել են համայնքի գերեզմանատունը, որպես Ծրագրի կողմից ազդեցության ենթարկվող հիմնական մշակութային վայր: Ջրամբարի կառուցումը որոշ չափով կսահմանափակի ԱԱ-ների մուտքը գերեզմանատուն, քանի որ գերեզմանատուն տանող ճանապարհը երկարելու է: Ուստի, որպես ԿՎ միջոցառում, ծրագրով նախատեսվում է կառուցել կամուրջ, որը կկապի Կապս և Ջրածոր համայնքները Հողմիկ համայնքին, ինչպես նաև կկրճատի նոր բնակատեղիից գերեզմանատուն տանող ճանապարհը:

134. Ծրագրի տարածքում ևս մեկ մշակութային արժեք ներկայացնող կառույց է Ջրածորում գտնվող կիսաքանդ եկեղեցին, որը Ծրագրից ազդեցության չի ենթարկվի, և հասանելի կմնա:

135. Եթե շինաշխատանքների ընթացքում հայտնաբերվի որևէ պատմամշակութային օբյեկտ, աշխատանքները պետք է կանգնեցվեն, և պետական լիազոր մարմինը տեղեկացվի դրա մասին՝ համաձայն կապալի պայմանագրի և «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի: Ծրագրի տարածքում պատմամշակութային օբյեկտների վերաբերյալ մանրամասնությունները ներկայացված են ԲՍԱԳ հաշվետվությունում:

## 5. ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿ

### 5.1 Իրավասություն

136. Ծրագրի շրջանակներում փոխհատուցման կամ վերաբնակեցման փոխհատուցման իրավունք ունեն հետևյալ ազդակիր անձինք (ԱԱ).
- a) Այն ԱԱ-ները, ովքեր կորցնում են հողի նկատմամբ օրինական/ավանդական իրավունքը, օրինականացման ենթակա հողը, կամ առանց իրավական կարգավիճակի հողամասը
  - b) Այն ԱԱ-ները, որոնց գույքը/հողամասը դառնում է անհասանելի
  - c) Գրացված կամ չգրանցված հողի վարձակալները կամ հողօգտագործողները:
  - d) Հողին կից մշակաբույսերի, բույսերի կամ այլ գույքերի/շինությունների սեփականատերերը
137. Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է վերջնաժամկետով՝ մանրամասն մարդահամարի և կորուստների գույքագրման օրը: Վերջնաժամկետից հետո ազդակիր տարածքում նոր բնակեցումները, բարեկարգման կամ շինարարական աշխատանքները փոխհատուցման ենթակա չեն:

### 5.2 Փոխհատուցման իրավունքի շրջանակը

138. Բոլոր հնարավոր տեսակի ազդեցությունների փոխհատուցումների վերաբերյալ մանրամասները ներկայացված են Ծրագրի համաի մշակված Վերաբնակեցման քաղաքականության շրջանակում (ՎՔՇ): ՀՁՎԳԴ-ի այս մասում ներկայացվում են Ծրագրի շրջանակներում հատուկ ազդեցությունների դիմաց փոխհատուցումները:
139. Փոխհատուցման իրավունքի դրույթները վերաբերում են ԱԱ-ների հողի, հացահատիկային դաշտերի, ծառերի և հողին կից այլ շինությունների մշտական կամ ժամանակավոր կորուստներին: Փոխհատուցումները հիմնված են Հայաստանում տարբեր ոլորտների պրակտիկ փորձի վրա, օրինակ՝ էլեկտրահաղորման գծերի կառուցման և ճանապարհային շինարարության ոլորտներում իրականացված ծրագրերի հիման վրա: Փոխհատուցումները համապատասխանեցվել են Ծրագրին հատուկ պահանջներին և բովանդակությամբ:
140. ԱԱ-երը կարող են դասակարգվել ստորև նշված խմբերից մեկին.
- a) **Օրինական սեփականատերեր՝** անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն ֆորմալ սեփականության իրավունք (որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ)
  - b) **Վարձակալներ/գույքային իրավունքներ ունեցողներ՝** անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն ֆորմալ վարձակալական/այլ գույքային իրավունքներ (որոնք ճանաչվում են երկրի օրենսդրությամբ)
  - c) **Օրինականացման ենթակա ԱԱ-երը՝** անձինք, ովքեր մարդահամարի մեկնարկի պահին հողի նկատմամբ ֆորմալ իրավունք չունեն, սակայն ունեն հողի կամ գույքի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ ճանաչելի պահանջներ կամ այնպիսի պահանջներ, որոնք դառնում են ճանաչելի ծրագրի շրջանակներում վերաբնակեցման գործողությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ իրավական միջոցառումների իրականացման

դեպքում (ներառյալ՝ անհրաժեշտության դեպքում, հողի նկատմամբ օրինական պահանջի ճանաչման գործընթացը), ինչպես նաև պահանջներ, որոնք բխում են օրենսդրությունից և ավանդական օգտագործումից

d) **Օրինականացման ոչ ենթակա ԱԱ-երը՝** անձինք, ովքեր իրենց կողմից զավթած հողի նկատմամբ չունեն ճանաչելի իրավունք կամ պահանջ:

### 5.2.1 Հողի կորուստ

141. ՀՀ Հողային օրենսգիրքը դասակարգում է հողը հետևյալ ինը կատեգորիաների՝ (1) գյուղատնտեսական նշանակության, (2) բնակավայրերի, (3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության (4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների (5) հատուկ պահպանվող տարածքների, (6) հատուկ նշանակության, (7) անտառային, (8) ջրային և (9) պահուստային հողերի. Յուրաքանչյուր նպատակային նշանակության հող, ըստ օգտագործման բնույթի, դասակարգվում է հողատեսքերի կամ գործառնական նշանակության հողերի:

142. Հիմք ընդունելով նրանց իրավական կարգավիճակը՝ հողերը դասակարգվում են հետևյալ երեք տիպերի՝

- **Մասնավոր հողատարածքներ**, որոնք պատկանում են մասնավոր անձի կամ ընկերությանը, և որի նկատմամբ իրավունքը գրանցված է պետական կադաստրում: Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի՝ ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է: Այդ գույքը ամուսիններից մեկի կողմից կարող է վաճառվել միայն մյուսի գրավոր համաձայնությամբ:
- **Համայնքային սեփականություն հանդիսացող հողեր**, որոնք պատկանում են համայնքին և կառավարվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Համայնքային հողերը կարող են չօգտագործվել կամ օգտագործվել ընդհանուր կարիքների համար, (օրինակ որպես արտաավայ համայնքի անասունների համար) կամ վարձակալությամբ տրվել որևէ անձի/ընկերությանը, օրինական կամ ոչ ֆորմալ օգտագործվել տնային տնտեսության կամ ընկերության կողմից:
- **Պետության սեփականություն հանդիսացող հողեր**, որոնք պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Պետական հողերը կարող են չօգտագործվել, օգտագործվել միջմարզային, հանրապետական ճանապարհների համար, պետական քաղաքացիական և ռազմական օբյեկտների համար և այլն: Որոշ պետական հողեր կարող են վարձակալությամբ տրվել կամ ոչ ֆորմալ օգտագործվել որևէ տնային տնտեսության/ ընկերության կողմից:

143. Փոխհատուցման իրավունքները ներկայացված են ստորև

a) Հողի վրա ազդեցությունը փոխհատուցվելու է (ըստ ԱԱ-ի հայացողության). (i) ԱՏՏ-ի համար ընդունելի կորցրած հողատարածքին համարժեք/հավասար արտադրողականության փոխարինող հողատարածքով՝ համարժեք հողատարածքի առկայության և ԾԳՄ-ի համաձայնության դեպքում (փոխարինող հողամաս ընտրելիս պետք է նաև հաշվի առնել հողամասի դիրքը, ենթակառուցվածքների հասանելիությունը

(կամուրջ, ճանապարհներ և այլն))<sup>7</sup>, կամ (ii) դրամով՝ փոխարինման արժեքով, որը հավասար է շուկայական կամ կադաստրային (երկուսից առավել բարձրը) արժեքին գումարած 15% օժանդակություն: Անուղղակի ազդեցության ենթարկված հողի հատվածքները, որոնք ազդեցությունից հետո դառնում են մշակման համար ոչ պիտանի, կամ եթե ազդեցությունից հետո դրա ցանկացած օգտագործում անհնարին է դառնում, ապա հողի այդ հատվածը նույնպես կհամարվի ազդեցության ենթարկված հող՝ եթե USS-ի հողի օտարման պահանջն ընդունվել է ձեռքբերողի կողմից օրենքով սահմանված կարգով: Այն դեպքում, երբ USS-ի գյուղատնտեսական նշանակության հողակտորի 20% և ավելին է ազդեցության ենթարկվել, USS-ն լրացուցիչ օժանդակություն կստանա խիստ ազդեցության դիմաց, որը համարժեք է կորցրած հողատարածքի մեկ տարվա միջին եկամտի/բերքի շուկայական միջին արժեքին:

- b) Օրինականացման ենթակա USS-երը կօրինականացվեն, որից հետո նրանք կփոխհատուցվեն որպես սեփականատերեր: Օրինականացման ենթակա հողերի օրինականացման ծախսերը/վճարները կկատարվեն Ծրագրի բյուջեի հաշվին: Այն USS-ները, որոնք իրավասու չեն օրինականացնել հողը կամ ովքեր օգտագործում են հողը առանց ֆորմալ իրավունքի (չգրանցված օգտագործող/ոչ-ֆերմալ վարձակալ), կփոխհատուցվեն միայն հողի բարելավումների համար:
- c) Համայնքային կամ պետական հողերի վարձակալության պայմանագիր ունեցողներին կտրամադրվի (i) նոր վարձու տարածք՝ հողի առկայության և վարձակալի համաձայնության դեպքում, կամ (ii) նրանց կտրվի դրամական փոխհատուցում ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքով (երկուսից առավել բարձրը) գումարած 15% օժանդակություն վարձակալության մնացած տարիների համար, հետևյալ համամասնությամբ. a) < 1 տարի՝ հողի փոխհատուցման արժեքի 5%-ը, 2) < 15 տարի՝ հողի փոխհատուցման արժեքի 14%; 3) < 25 տարի՝ հողի փոխհատուցման արժեքի 20%, 4) 25 տարի և ավելի՝ հողի փոխհատուցման արժեքի 25%. Համայնքային կամ պետական հողերի ենթավարձակալները կփոխհատուցվեն նույն կերպ, ինչպես վարձակալները:
- d) Ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող հողատարածքների վարձակալներին կտրվի ամբողջական դրամական փոխհատուցում վարձակալության արդեն իսկ վճարված սակայն չօգտագործված ժամանակահատվածի դիմաց: Վարձակալները նույնպես իրավունք ունեն ստանալու սույն ՀՁՎԳՊ-ով նախատեսված աջակցությունները:

---

<sup>7</sup> Փոխարինվող հողամասերը կարող են տրամադրվել գյուղի նախկին վերաբնակեցման տարածքում (որտեղ ամբարտակի կառուցման հետևանքով նախատեսվում էր վերաբնակեցնել գյուղը երկրաշարժից առաջ): Ըստ Ջրաձորի վարչական ղեկավարի՝ այդտեղ կան համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքներ, որոնք կարող են տրամադրվել հողատերերին, եթե նրանք նախընտրում են հողի դիմաց հողով փոխհատուցում:



## 5.2.2 Մասնավոր շինություններ

### Բնակելի շինությունների կորուստ

- a) Բնակելի շենքերի և շինությունների (տուն) դիմաց ԱԱ/ԱՏՏ-ներին կտրվի փոխհատուցում անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (ֆորմալ) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից հետևյալ կերպ՝ (i) պատշաճ փոխարինող տնով (բոլոր հարմարություններով և կոմունալ ծառայություններով) Վերաբնակեցման տարածքում, կամ (ii) կամ փոխարինման արժեքով՝ համաձայն Բանկի չափանիշների, Տան գնման վկայագրով (ՏԳՎ): Փոխհատուցումից (ՏԳՎ-ում նշված) չեն նվազեցվի մաշվածության, պահպանված նյութերի արժեքը, ինչպես նաև պետական գրանցման հետ կապված գործարքի ծախսերը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախապատվությունը տրվում է գյուղի վերակառուցմանը (փոխարինող տուն Վերաբնակեցման տարածքում), ՀՀ կառավարության կողմից որոշում կկայացվի կիրառելի տարբերակի վերաբերյալ: Կիրառելի տարբերակը կնշվի սույն ՀՁՎԳՊ-ն հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման մեջ, որը հիմք կծառայի համապատասխան տարբերակը կիրառելու համար: Եթե փոխարինող տուն է ընտրվել որպես փոխհատուցում, ապա բոլոր գրանցման և կոմունալ ծառայություններին միացման վճարները կկատարվեն Ծրագրի բյուջեից: Մասնակի ազդեցության կամ սեփականատիրոջ կողմից ողջ շինության օտարման վերաբերյալ անհամաձայնություն հայտնելու դեպքում, փոխհատուցումը կծածկի միայն շինության ազդեցության ենթարկված մասը և վերջինիս ամբողջական գործառնական վերականգնումը՝ եթե դա տեխնիկապես հնարավոր լինի: ՏԳՎ-ն տրամադրվելու է ԱԱ-երին համաձայն սույն ՀՁՎԳՊ-ի Հավելված 11-ում ներկայացված ընթացակարգի: Բացառիկ դեպքերում դրամական փոխհատուցումը կարող է տեղին լինել, եթե ԱՏՏ-ն ԾԳՄ/ՀՁՎԳՊ հիւ-ին ներկայացրել է բավարար հիմքեր, որ նա ունի այլ կացարան կամ ԱՏՏ-ն մշտապես բնակվում է արտերկրում: Չսահմանափակելով բնակելի շենքի կամ շինության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը, ամեն դեպքում օրինականացման/գրանցման ներկայ բնակելի շենքերը և շինությունները պետք է գրանցվեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և փոխհատուցվեն միայն գրանցումից/օրինականացումից հետո: Օրինականացման/գրանցման պահանջը չի տարածվում այն բնակելի շենքերի և շինությունների վրա, որոնք ենթակա չեն օրինականացման/գրանցման համաձայն ՀՀ օրենսդրության: Ձեռք բերված/օտարված/փոխանակված անշարժ գույքի (տուն և տնամերձ հողամասի դեպքում) սեփականատերերը, ինչպես նաև գույքային իրավունք ունեցող այլ անձինք իրավունք ունեն անհատույց օգտագործել ձեռք բերված/օտարված/փոխանակված գույքը գործարքից հետո 6 ամսվա ընթացքում, իսկ տան և տնամերձ հողամասից բացի այլ անշարժ գույքի դեպքում՝ մեկ ամիս:
- b) Տեղահանված վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն իսկ վճարված, սակայն չօգտագործված վարձակալության ժամկետի դիմաց: Վարձակալներն իրավունք ունեն ստանալու սույն ՀՁՎԳՊ-ով սահմանված տրանսպորտային ծախսերը հոգալու և խիստ ազդեցության օժանդակությունները (տես ստորև):

## Ոչ-բնակելի շենքերի կորուստ

- a) Ոչ-բնակելի շենքերի և շինությունների դիմաց ԱԱ/ԱՏՏ-ները կստանան դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով (համաձայն Բանկի չափանիշների)՝ անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (\$որմա) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից: Փոխհատուցումից չեն նվազեցվի մաշվածության, պահպանված նյութերի արժեքը, ինչպես նաև պետական գրանցման հետ կապված գործարքի ծախսերը: Մասնակի ազդեցության կամ սեփականատիրոջ կողմից ողջ շինության օտարման վերաբերյալ անհամաձայնություն հայտնելու դեպքում, փոխհատուցումը կծածկի միայն շինության ազդեցության ենթարկված մասը և վերջինիս ամբողջական գործառնական վերականգնումը՝ եթե դա տեխնիկապես հնարավոր լինի:
- b) Տեղահանված վարձակալներին կտրվի դրամական փոխհատուցում արդեն իսկ վճարված, սակայն չօգտագործված վարձակալության ժամկետի դիմաց:

### 5.2.3 Հանրային սեփականության կորուստ

144. Կոմունալ ենթակառուցվածքները և համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները պետք է a) փոխարինվեն, b) վերականգնվեն այնպիսի տեսքի, ինչպիսին դրանք եղել են/գործել են մինչև Ծրագրի իրականացումը կամ c) փոխարինման արժեքին համարժեք գումարային փոխհատուցում կվճարվի համայնքին կամ կոմունալ ենթակառուցվածքի սեփականատիրոջը (որից չի նվազեցվի մաշվածության/գործարքի ծախսերը և պահպանված նյութերի արժեքները):

### 5.2.4 Մշակաբույսերի/բերքի կորուստ

145. Բերքի կորստի համար կտրվի մեկ տարվա միջին եկամտի/բերքի շուկայական միջին արժեքի չափով դրամական փոխհատուցում այն ԱԱ-ներին (սեփականատերերին, վարձակալներին, փաստացի հողօգտագործողներին), ում գործողությունների հետևանքով (հողի օգտագործման կամ մշակման արդյունքում) գոյացել են փոխհատուցման ենթակա եկամուտները/բերքը: Վերոնշյալ փոխհատուցման դրույթները չեն վերաբերում ծառերի կամ դրանցից ստացված բերքի կորուստի դիմաց փոխհատուցմանը: Հնարավորության դեպքում ԱՏՏ-ներին թույլ կտրվի իրականացնել բերքահավաք մինչև Ձեռք բերողի կողմից օտարված հողի փաստացի տիրապետումը:

### 5.2.5 Ծառերի և բերքի կորուստ

146. ԱԱ/ԱՏՏ-ներին (սեփականատերերին, վարձակալներին, փաստացի օգտագործողներին) ծառերի և բերքի կորուստի դիմաց շուկայական արժեքով դրամական փոխհատուցումը տրվում է՝ հիմք ընդունելով ծառերի տեսակը, տարիքը և բերքատվությունը, ինչպես նշված է ստորև՝
- a) Համայնքային (սեփականատերերին, վարձակալներին) ստանա ծառերի դիմաց ողջ փոխհատուցումը. 1) եթե առկա վարձակալը իրավունք չունեն փոխհատուցում ստանալ համաձայն սույն պարբերության b) ենթակետի, կամ 2) եթե առկա փաստացի հողօգտագործողն իրավունք չունեն փոխհատուցում ստանալ համաձայն սույն պարբերության c) ենթակետի:

- b) Եթե հողերը ծանրաբեռնված են վարձակալությամբ, ապա ծառերի դիմաց փոխհատուցումը կտրվի վարձակալին, եթե ծառերը տնկվել և խնամվել են վարձակալի կողմից սեփականատիրոջ համաձայնությամբ:
- c) Եթե հողերը ծանրաբեռնված են վարձակալությամբ, ապա ծառերի դիմաց փոխհատուցումը կտրվի վարձ օրինական իրավունքի և ծառերը տնկվել և խնամվել են հողօգտագործողի կողմից, ապա ծառերի դիմաց ողջ փոխհատուցումը կտրամադրվի այդ հողօգտագործողներին՝ սեփականատիրոջ համաձայնությամբ:
- d) Ֆիզիկականը ծանրաբեռնված են վարձակալությամբ, ապա ծառերի դիմաց փոխհատուցումը կտրվի վոխհատուցում միայն մեկ տարվա միջին եկամտի/բերքի միջին շուկայական արժեքի չափով:

### 5.2.6 Ձեռնարկատիրական գործունեության ընդհատում

- a) Գրանցված/հաշվառված և հարկային հաշվարկ ներկայացրած ձեռնարկատիրական գործունեության կորստի դիմաց փոխհատուցումը կտամադրվի ձեռնարկատիրական գործունեության մշտական կամ ժամանակավոր դադարեցման դեպքում՝ հետևյալ սկզբունքներով՝
  - Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման դիմաց փոխհատուցում 1 տարվա զուտ շահույթի/զուտ եկամտի չափով՝ հիմնված պաշտոնական հարկային հաշվարկի վրա:
  - Ձեռնարկատիրական գործունեության ժամանակավոր դադարեցման դիմաց դրամական փոխհատուցում կտրամադրվի դադարեցված ամիսների համար՝ ամսական զուտ շահույթի/զուտ եկամտի չափով՝ հիմք ընդունելով հարկային հաշվարկը: Գործունեության ժամանակավոր դադարեցման տևողությունը հաշվարկվելու է համաձայն ազդեցության ենթակա գույքի գտնվելու վայրում շինարարական աշխատանքների իրականացման տևողության՝ ըստ ծրագրի նախագծում ներառված ժամանակացույցում նշված շինարարական աշխատանքների ժամկետների:
  - Պետական գրանցման/հաշվառման և լիցենզավորման վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք լինեն:
- b) Գրանցված/հաշվառված սակայն հարկային հաշվարկ չներկայացրած ձեռնարկատիրական գործունեության դադարեցման փոխհատուցումը կիրականացվի վերոնշյալ ձևով՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձը:
- c) Չգրանցված/չհաշվառված ձեռնարկատիրական գործունեությունը կփոխհատուցվի միայն կորցրած գույքի դիմաց:

### 5.2.7 Ժամանակավոր ազդեցություն

147. Ժամանակավոր ազդեցության ենթարկված ԱԱ/ԱՏՏ-ներին կտրամադրվի վնասի դիմաց փոխհատուցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և նրանք կներառվեն ծրագրի փոխհատուցման իրավունքի մատրիցայում: Ժամանակավոր ազդեցության ենթարկված ԱԱ/ԱՏՏ-ներին տրամադրվող փոխհատուցումը չի ներառելու կենսամակարդակի վերականգնման օժանդակությունները: Միևնույն ժամանակ շինարարության հետևանքով

ՀԶՎԳՊ-ի ԱԱ-ներ չհամարվող անձանց կողմից կրած վնասների հարցը կարգավորվում է Ծրագրի Շրջակա միջավարի կառավարման պլանի դրույթներով:

### 5.2.8 Չնախատեսված ՀԶՎ ազդեցություններ, եթե այդպիսիք կան

148. ՀԶՎԳՊ իրականացնող մարմինը ծրագրի իրականացման ընթացքում կդիտարկի չնախատեսված ՀԶՎ (հողերի ձեռք բերում և վերաբնակեցում) ազդեցությունները և կփոխհատուցի կամ կտրամադրի վերականգնման օժանդակություն հիմք ընդունելով փոխհատուցման իրավունքի մատրիցայի դրույթները՝ Ուղղիչ գործողությունների պլան (ՈւԳՊ) մշակելուց և «KfW» բանկից «Առարկություններ չկան» եզրակացություն ստանալուց հետո:

### 5.2.9 Բարելավումների համար փոխհատուցում

149. Փոխարինման արժեքով կփոխհատուցվեն այն բարելավումները, որոնք ներառված չեն իրավունքի մատրիցայում, սակայն առկա են ազեցության ենթարկված հողի վրա (բացառությամբ շարժական գույքի):

### 5.2.10 Գույքի հասանելիության կորուստ

150. ԱԱ/ԱՏՏ-ները կստանան գումարային փոխհատուցում Գույքի հասանելիության կորուստի դիմաց, որը հավասար կլինի գույքի կորուստի դիմաց տրվող փոխհատուցմանը՝ սույն ՀԶՎԳՊ-ին համապատասխան, կամ այդ գույքը կփոխարինվի ԱԱ-ի համար ընդունելի համարժեք կամ հավասար արտադրողականության մեկ այլ գույքով:

### 5.2.11 Լրացուցիչ օժանդակություն

151. ԱՏՏ-ները կստանան հետևյալ ֆինանսական աջակցությունը հոգալու ձեռքբերման և փոխհատուցման ստացման հետ կապված ծախսերը/վճարները, որը ներառում է.

- Լիազորագրի հետ կապված ծախսեր/վճարներ (տեղական կամ արտասահմանյան):
- Անձնագրի (նույնականացման քարտի) ժամկետի երկարացման հետ կապված ծախսեր/վճարներ (եթե այն ժամկետանց է):
- Ժառանգության ընդունման հետ կապված ծախսեր/վճարներ:
- Օրինականացման ենթակա հողի, տան և շենքերի/շինությունների գրանցման հետ կապված ծախսեր/վճարներ:
- Հողի ձեռք բերման հետ կապված գործարքի հարկերի և տուրքերի գծով ծախսեր:

152. Վերոնշյալ ծախսերը և վճարները կկատարվեն Ծրագրի բյուջեից:

### 5.2.12 Վերաբնակեցման և կենսամակարդակի վերականգնման միջոցառումներ

153. Անկախ ԱԱ-ի կողմից փոխհատուցման տեսակի ընտրությունից, ԱԱ-ն իրավասու է ընդգրկվելու կենսամակարդակի վերականգնման միջոցառումներում, որը նպատակ ունի Ծրագրից հետո ապահովելու ԱԱ-ի առնվազն նույն կամ առավել բարձր կենսամակարդակ (մանրամասների համար տես 7-րդ բաժինը):

154. Տարբերակ 2-ի դեպքում նոր գյուղի տները կառուցվելու են հիմք ընդունելով անհատական բնակելի էներգաարդյունավետ տներին բնորոշ հաստատված նմուշները, որոնք նախագծվել

են կիրառելով շենքերի ինտեգրված նախագծման մոտեցումը, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության նորմերն ու կանոնակարգերը: Նախագծման կատարողը (նախագծի համառոտ նկարագիրը տրված է ՀԱՎԵԼՎԱԾ 12-ում) նախատեսված է ազատ օգտագործման համար, առկա է թե տպագիր տարբերակով, և թե քաղաքաշինության կոմիտեի կայքում:

155. Ավելին, ՀՁՎԳՊ-ն նախատեսում է վերաբնակեցման նպաստներ՝ ԱԱ-ներին շարժական գույքի տեղափոխման ծախսերի դիմաց փոխհատուցելու համար: Փոխհատուցումը թույլ կտա ԱԱ-ներին տեղափոխել իրենց պատկանող գույքը 20 կմ շառավղով Տարբերակ 1-ի դեպքում, և 5 կմ՝ Տարբերակ 2-ի դեպքում:

### **5.3 Բնակարանային շինարարության պետական ծրագրերում գրանցված ԱԱ/ԱՏՏ-երին փոխհատուցում**

156. Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. -ի հուլիսի 8-ի թիվ 828-Ա որոշման, Ջրածոր գյուղի 31 ԱՏՏ ներառվել են բնակարանային շինարարության պետական ծրագրում, որի նպատակն է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը (Պետական ծրագիր): Այս ԱՏՏ-երը չպետք է տուժեն ՋՌՀԿ/Ախուրյան գետի ծրագրից (Կապսի ջրամբարի ծրագիր), հետևաբար՝ եթե Պետական ծրագրին համապատասխանող փոխհատուցումն ավելի շահեկան կլինի ԱՏՏ-ի համար, համեմատած Կապսի ջրամբարի ծրագրի փոխհատուցման տարբերակին, ապա նրանք կստանան Պետական ծրագրի մեթոդաբանությամբ հաշվարկված փոխհատուցում և հակառակը: Սա նշանակում է, որ այդ 31 ԱՏՏ-ի համար անկախ և սերտիֆիկացված գնահատողը կհաշվարկի փոխհատուցումը, որը ԱՏՏ-ն կստանար Պետական ծրագրի շրջանակներում և կհամեմատի ՎԲԾ/ ՀՁՎԳՊ -ին համապատասխանող փոխհատուցման հետ:

157. Եթե սույն ՀՁՎԳՊ-ի իրականացման մեկնարկի պահին Պետական ծրագրով շահառու համարվող ԱՏՏ-երը ստացել են բնակարանի/տան գնման վկայագիր (այսուհետ՝ Վկայագիր) կամ վերջիններիս մասով արդեն ստորագրվել է ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 712-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), ապա այդ ԱՏՏ-երն ենթակա են փոխհատուցման ՀՁՎԳՊ-ով հետևյալ կերպ՝

- Վկայագիր ստացած ԱՏՏ-երը տան և տնամերձ հողամասի դիմաց կստանան սույն ՀՁՎԳՊ-ով տան և տնամերձ հողամասի դիմաց հաշվարկված փոխհատուցումից հանած Վկայագրում նշված գումարի տարբերությունը՝ եթե ՀՁՎԳՊ-ով տան և տնամերձ հողամասի դիմաց հաշվարկված փոխհատուցումն ավելի մեծ է, քան Վկայագրում նշված գումարը: Եթե ՀՁՎԳՊ-ով տան և տնամերձ հողամասի դիմաց հաշվարկված փոխհատուցումն ավելի փոքր կամ հավասար է Վկայագրում նշված գումարին, ապա ԱՏՏ-ն ՀՁՎԳՊ-ով ենթակա չէ փոխհատուցման տան և տնամերձ հողամասի համար: Մնացած փոխհատուցումների և աջակցությունների մասով այդ ԱՏՏ-ն ենթակա է փոխհատուցման՝ համաձայն ՀՁՎԳՊ Տարբերակ 1-ի դրույթների: Եթե Վկայագրում ամրագրված ժամկետում բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման տարբերակ չընտրելու հետևանքով վկայագիրը մարվել է, ապա ԱՏՏ-ն ենթակա է փոխհատուցման ըստ ՀՁՎԳՊ-ի ամբողջ ծավալով (ներառյալ տան և տնամերձ հողամասի դիմաց հաշվարկված փոխհատուցումը): Ընթացակարգային առումով

հնարավոր լինելու դեպքում ԱՏՏ-ն կարող է նաև ընտրել Տարբերակ 2-ը և համապատասխանաբար փոխհատուցվել՝ համաձայն ՀՁՎԳՊ-ի:

- Այն ԱՏՏ-երը, որոնց մասով արդեն ստորագրվել է Պայմանագիրը, ենթակա չեն փոխհատուցման տան և տնամերձ հողամասի համար՝ եթե Պայմանագրով կառուցվող տան տիպային նախագիծն ու ՀՁՎԳՊ-ով նախատեսված տան տիպային նախագիծը նույնն են: Պայմանագրով և ՀՁՎԳՊ-ով տիպային տարբեր նախագծերի կիրառման դեպքում ԱՏՏ-ները ենթակա են փոխհատուցման Պայմանագրով և ՀՁՎԳՊ-ով նախատեսված տվյալ ԱՏՏ-ին հասանելիք տների փոխարինման արժեքների տարբերության չափով՝ եթե ՀՁՎԳՊ-ով նախատեսված տան փոխարինման արժեքն ավելի է, քան Պայմանագրով նախատեսված տան փոխարինման արժեքը: Մնացած փոխհատուցումների և աջակցությունների մասով այդ ԱՏՏ-երը ենթակա են փոխհատուցման համաձայն ՀՁՎԳՊ Տարբերակ 2-ի դրույթների, ներառյալ՝ իրենց ունեցած և ստանալիք տնամերձ հողամասերի մակերեսների տարբերության փոխհատուցման մասով:

## 5.4 Գույքի գնահատման մեթոդները

158. Անշարժ գույքի գնահատման գործունեության համար պահանջվում է որակավորում (համաձայն «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասի» ՀՀ օրենքի (2005թ)): Փոխհատուցման միավոր արժեքները որոշվել են պարզ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա որակավորված գնահատողի կողմից, որին վարձվել է ԲՍԱԳ Խորհրդատուն: Գնահատման մեթոդաբանության մանրամասները ներկայացված են Հավելված 5-ում:
159. Անշարժ գույքի գնահատումից հետո, գնահատողը պատրաստում է գույքի գնահատման հաշվետվություն: Հաշվետվության պարտադիր բովանդակությունը սահմանվում է օրենսդրությամբ: Օրինակ, ի լրումն այլ տվյալների և տեղեկատվության, հաշվետվությունը նաև պետք է ներառի անշարժ գույքի գնահատման դասական երեք մեթոդների կիրառման հղումները գնահատման ստանդարտին, իսկ տվյալ անշարժ գույքի օբյեկտի գնահատման համար մեկ կամ երկու դասական մեթոդների կիրառման անհնարինության դեպքում՝ դրանց հիմնավոր պատճառաբանությունը:
160. Հաշվետվության տվյալների, ինչպես նաև անշարժ գույքի գնահատմամբ հաշվարկված արժեքի արժանահավատության խնդիրները կարող են պարզաբանվել լիազոր մարմնին ուղղված անշարժ գույքի գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, իսկ դրանց վերաբերյալ վեճերի առկայության դեպքում՝ դատական կարգով:

## 5.5 Իրավունքի և փոխհատուցման մատրիցա

| Կորուստի տեսակը | Կիրառում                             | Ազդեցություն կրողը | Փոխհատուցում   |
|-----------------|--------------------------------------|--------------------|--|
| 1. Հողի կորուստ | Իրենց սեփական գույքը կամ դրա մի մասը | Սեփականատեր        | (ըստ ԱԱ-ի հայացողության) ԱՏՏ-ի համար ընդունելի կորցրած հողատարածքին համարժեք/հավասար արտադրողականության փոխարինող հողատարածք կամ դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով, որը հավասար է շուկայական կամ |

| Կորուստի տեսակը                        | Կիրառում   | Ազդեցություն կրողը  | Փոխհատուցում   |
|--|--|---|--|
|  | կորցնող ԱՏՏ-ներ  |   | կադաստրային (երկուսից առավել բարձրը) արժեքին գումարած 15% օժանդակություն:  |
|  | Օրինականացման ենթակա ԱՏՏ-ներ   |   | Կօրինականացվեն և դրանից հետո դրանց կորուստները պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերինը: Օրինականացման ենթակա հողերի գրանցման հետ կապված ծախսերը/վճարները պետք է վճարվեն Ծրագրի բյուջեի հաշվին:   |
|  | Օրինականացման ոչ ենթակա ԱՏՏ-ներ  |   | Այս ԱՏՏ-ները համաձայն ՀՀՎԳՊ-ի կստանան փոխհատուցում միայն հողի վրա կատարված բարելավումների/բարեկարգումների համար:   |
|  | Վարձակալներ (համայնքային կամ պետական սեփականության վարձակալություն)  |   | Կտրամադրվի (i) նոր վարձու տարածք՝ հողի առկայության և վարձակալի համաձայնության դեպքում, կամ (ii) նրանց կտրվի դրամական փոխհատուցում ազդակիր հողի շուկայական կամ կադաստրային արժեքով (երկուսից առավել բարձրը) գումարած 15% օժանդակություն վարձակալության մնացած տարիների համար, հետևյալ համամասնությամբ. a) < 1 տարի՝ հողի փոխարինման արժեքի 5%-ը, 2) < 15 տարի՝ հողի փոխարինման արժեքի 14%; 3) < 25 տարի՝ հողի փոխարինման արժեքի 20%, 4) 25 տարի և ավելի՝ հողի փոխարինման արժեքի 25%: Համայնքային կամ պետական հողերի ենթավարձակալները կփոխհատուցվեն նույն կերպ, ինչպես վարձակալները: |
|  | Վարձակալը (ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականության վարձակալություն )                                   |   | Դրամական փոխհատուցում վարձակալության արդեն իսկ վճարված սակայն չօգտագործված ժամանակահատվածի դիմաց:  |
|  | Սեփականության այլ իրավունքներ ունեցող անձինք (սերվիտուտ, կառուցապատման իրավունք, վարկ, հիփոթեք, օգտագործում) |   | Գույքային իրավունք ունեցող անձանց փոխհատուցումը տրվում է ազդակիր սեփականության դիմաց փոխհատուցումից ՀՀ օրենսդրության համաձայն:   |
| <b>2. Բնակելի շենքեր/շինություններ</b> |  | Բոլոր ԱԱ-ները (օրինականացման ենթակա և ոչ ենթակա)՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքներից | a) Բնակելի շենքերի և շինությունների (տուն) դիմաց ԱԱ/ԱՏՏ-ներին կտրվի փոխհատուցում անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (ֆորմալ) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից հետևյալ կերպ՝ (i) պատշաճ փոխարինող տնով (բոլոր հարմարություններով և կոմունալ ծառայություններով) Վերաբնակեցման   |

| Կորուստի տեսակը                                 | Կիրառում  | Ազդեցություն կրողը  | Փոխհատուցում   |
|---|---|---|--|
|   |   |   | տարածքում, կամ (ii) կամ փոխարինման արժեքով՝ համաձայն Բանկի չափանիշների, Տան գնման վկայագրով (ՏԳՎ): Փոխհատուցումից (ՏԳՎ-ում նշված) չեն նվազեցվի մաշվածության, պահպանված նյութերի արժեքը, ինչպես նաև պետական գրանցման հետ կապված գործարքի ծախսերը  |
|   |   | Վերաբնակեցված վարձակալներ   | Վերաբնակեցված վարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում վարձակալության արդեն իսկ վճարված սակայն չօգտագործված ժամանակահատվածի դիմաց: Վերաբնակեցվող վարձակալներին կտրամադրվի նաև ՀՁՎԳՊ-ով սահմանված տրանսպորտային ծախսերը հոգալու և խիստ ազդեցության օժանդակություն (տես ստորև):  |
| <b>3. Ոչ-բնակելի շինություններ և կառույցներ</b> |   | Բոլոր ԱԱ-ները (օրինականացման ենթակա և ոչ ենթակա)՝ անկախ կառույցի նկատմամբ իրավունքներից                                 | Ոչ-բնակելի շենքերի և շինությունների դիմաց ԱԱ/ԱՏՏ-ները կստանան դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով՝ անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (ֆորմալ) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից:   |
|   |   | Վերաբնակեցված/տեղափոխված վարձակալները   | Վերաբնակեցված վարձակալներին կտրամադրվի դրամական փոխհատուցում վարձակալության արդեն իսկ վճարված սակայն չօգտագործված ժամանակահատվածի դիմաց:   |
| <b>4. Հանրային սեփականության կորուստ</b>        | Կոմունալ ենթակառուցվածքներ և համայնքային շենքեր | Համայնքը/կոմունալ ենթակառուցվածքի սեփականատեր   | Կոմունալ ենթակառուցվածքները և համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները պետք է a) փոխարինվեն, b) վերականգնվեն այնպիսի տեսքի, ինչպիսին դրանք եղել են/գործել են մինչև Ծրագրի իրականացումը կամ c) փոխարինման արժեքին համարժեք գումարային փոխհատուցում կվճարվի համայնքին կամ կոմունալ ենթակառուցվածքի սեփականատիրոջը (որից չի նվազեցվի մաշվածության/գործարքի ծախսերը և պահպանված նյութերի արժեքները): |
| <b>5. Բերքի կորուստ</b>                         | Ազդեցության ենթարկված կանգուն բերք              | Բոլոր ԱՏՏ-ները, ովքեր բարեկարգումներ են իրականացնել անկախ հողի և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունից | Մշակաբույսերի դիմաց դրամական փոխհատուցում մեկ տարվա միջին բերքի շուկայական միջին արժեքի չափով: Մինչև Ձեռք բերողի կողմից օտարված հողի փաստացի տիրապետումը բերքահավաք իրականացնելու հնարավորության տրամադրում:   |



| Կորուստի տեսակը                                    | Կիրառում  | Ազդեցություն կրողը  | Փոխհատուցում   |
|--|---|---|--|
| <b>6. Ծառերի և բերքի կորուստ</b>                   | Ազդեցության ենթարկված ծառերն ու սպասվող բերքը         | Բոլոր ԱՏՏ-ները, ովքեր բարեկարգումներ են իրականացնել անկախ հողի և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունից | Դրամական փոխհատուցում շուկայական միջին արժեքի չափով՝ հիմք ընդունելով ծառերի տեսակը, տարիքը և բերքատվությունը:  |
| <b>7. Ձեռնարկատիրական գործունեության ընդհատում</b> | Ազդակիր հողատարածքում ձեռնարկատիրական գործունեություն | Բոլոր ԱՏՏ-ները անկախ պաշտոնական հարկային հաշվարկից/ հաշվետվությունից, հարկային հայտարարագրից                            | <p>1) Գրանցված/հաշվառված և հարկային հաշվարկ ներկայացրած ձեռնարկատիրական գործունեություն՝</p> <p>a) Ձեռնարկատիրական գործունեության մշտական դադարեցման դիմաց փոխհատուցում 1 տարվա զուտ շահույթի/զուտ եկամտի չափով:</p> <p>b) Ժամանակավոր ազդեցության համար՝ մինչև 1 տարի, փոխհատուցումը կտրամադրվի դադարեցված ամիսների համար ամսական զուտ շահույթի/զուտ եկամտի չափով: Պետական գրանցման և լիցենզավորման վճարները նույնպես կփոխհատուցվեն, եթե այդպիսիք լինեն:</p> <p>2) Գրանցված/հաշվառված սակայն հարկային հաշվարկ չներկայացրած ձեռնարկատիրական գործունեության դադարեցման դեպքում՝</p> <p>a) մշտական ազդեցության՝ փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձը մեկ տարվա համար:</p> <p>բ) ժամանակավոր ազդեցության՝ փոխհատուցումը կիրականացվի հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձը դադարեցման ժամանակահատվածի համար՝ մինչև մեկ տարի:</p> <p>3) Չգրանցված/չհաշվառված ձեռնարկատիրական գործունեությունը կփոխհատուցվի միայն կորցրած գույքի դիմաց:</p> |
| <b>8. Ժամանակավոր ազդեցություն</b>                 |   | Ժամանակավոր ազդեցության ենթարկված ԱԱ/ԱՏՏ-ները   | Ժամանակավոր ազդեցության ենթարկված ԱԱ/ԱՏՏ-ներին կտրամադրվի վնասի դիմաց փոխհատուցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և նրանք կներառվեն ծրագրի փոխհատուցման իրավունքի մատրիցայում: Ժամանակավոր ազդեցության ենթարկված ԱԱ/ԱՏՏ-ներին տրամադրվող  |

| Կորուստի տեսակը  | Կիրառում  | Ազդեցություն կրողը  | Փոխհատուցում   |
|--|---|---|--|
|  |   |   | փոխհատուցումը չի ներառելու կենսամակարդակի վերականգնման օժանդակությունները:   |
| 9.Չնախատեսված ՀՁՎ ազդեցություններ, եեթե այդպիսիք կան   |   | ԻրավասուԱԱ/ԱՏՏ-ները   | ՀՁՎԳՊ իրականացնող մարմինը ծրագրի ընթացքում կդիտարկի վերաբնակեցման հետևանքով չնախատեսված ազդեցությունները և կփոխհատուցի, ինչպես նաև կտրամադրի վերականգնման օժանդակություն՝ հիմք ընդունելով համապատասխան ԱՏՏ-երին վերաբերող ՀՁՎԳՊ դրույթները:  |
| 10.Բարելավումների համար փոխհատուցում                   | Այլ բարելավումներ, որոնք ներառված չեն իրավունքի այս մատրիցայում, սակայն առկա են ազդակիր հողատարածքում (բացի շարժական գույքից) | ԱՏՏ-ները, որվքեր բարելավումներ են իրականացրել                       | Դրամական կամ ոչ-դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով:  |
| 11.Գույքի նկատմամբ հասանելության կորուստի փոխհատուցում |   | Այն ԱԱ/ԱՏՏ-ները, որոնք կորցնում են գույքի նկատմամբ հասանելիությունը | ԱԱ/ԱՏՏ-ները կստանան գումարային փոխհատուցում Գույքի հասանելիության կորուստի դիմաց, որը հավասար կլինի գույքի կորուստի դիմաց տրվող փոխհատուցմանը՝ սույն ՀՁՎԳՊ-ին համապատասխան, կամ այդ գույքը կփոխարինվի ԱԱ-ի համար ընդունելի համարժեք կամ հավասար արտադրողականության մեկ այլ գույքով:  |
| 12.Լրացուցիչ օժանդակություն                            | Ֆինանսական օժանդակություն հոգալու ձեռքբերման և փոխհատուցման վճարների հետ կապված ծախսերը:                                      | Ազդակիր տնային տնտեսությունները                                     | <ul style="list-style-type: none"> <li>(i) Լիազորագրի հետ կապված ծախսեր/վճարներ (տեղական կամ արտասահմանյան):</li> <li>(ii) Անձնագրի (նույնականացման քարտի) ժամկետի երկարացման հետ կապված ( ) ծախսեր/վճարներ (եթե այն ժամկետանց է):</li> <li>(iii) Ժառանգության ընդունման հետ կապված ծախսեր/վճարներ:</li> <li>(iv) Օրինականացման ենթակա հողի, տան և շենքերի/շինությունների գրանցման հետ կապված ծախսեր/վճարներ:</li> <li>(v) Հողի ձեռք բերման հետ կապված գործարքի հարկերի և տուրքերի գծով ծախսեր:</li> </ul> <p>Վերոնշյալ ծախսերը կփոխհատուցվեն Ծրագրի բյուջեից:</p> |

| Կորուստի տեսակը                                      | Կիրառում   | Ազդեցություն կրողը  | Փոխհատուցում   |
|--|--|---|--|
| Կենսաապահովման միջոցների վերականգնման միջոցառումներ  |  |   |  |
| <b>13.Աշխատանքի կորուստ</b>                          | Աշխատանքի մշտական կորուստ կամ հարկադիր պարապուրդ ոչ աշխատակցի մեղքով                           | Աշխատանքային պայմանագրով ազդակիր բիզնեսում (ընկերություն կամ անհատ ձեռնարկատեր) աշխատող անձինք  | Դրամական փոխհատուցում<br>ա) Աշխատանքի մշտական կորուստ՝ աշխատակիցը կստանա դրամական օժանդակություն իր միջին ամսական աշխատավարձի կամ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձի (որն ավելի բարձր է) 6-պատիկի չափով:<br>բ) Ժամանակավոր կորուստ՝ աշխատակիցը կստանա դրամական օժանդակություն աշխատանքային դադարի բոլոր ամիսների համար (ոչ ավելի քան 6 ամսվա համար) միջին ամսական աշխատավարձի կամ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձի չափով (որը ավելի բարձր է):: |
| <b>14.Օժանդակություն խիստ ազդեցության դեպքում</b>    | ա) գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին կորցրած ԱՍՏ-ները կամ բ) վերաբնակեցվող ԱՍՏ | Խիստ ազդեցության ենթարկված բոլոր ԱԱ/ԱՍՏ-ները, ներառյալ ոչ ֆորմալ բնակիչները   | ա) Իրենց գյուղատնտեսական եկամուտ բերող հողի 20% կամ ավելին կորցրած ԱՍՏ-երին կտրամադրվի ազդակիր հողի 1 տարվա միջին բերքի շուկայական միջին արժեքի չափով փոխհատուցում:<br>բ) Տեղափոխվող ԱՍՏ-ներին ամսական նվազագույն աշխատավարձի (սահմանված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով) 6-պատիկի չափով վերականգնման օժանդակություն: ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխման դեպքում օժանդակությունը կվերահաշվարկվի վճարման օրվա դրությամբ գործող նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա:                |
| <b>15.Տրանսպորտային ծախսերի համար օժանդակություն</b> | Տրանսպորտային ծախսերի համար օժանդակություն   | Ազդակիր հողատարածքում շարժական գույք կամ շինություն ունեցող ԱԱ/ԱՍՏ-ները անկախ նրանց հողի կամ շինության նկատմամբ ունեցած իրավունքից, կստանան դրամական օժանդակություն/նպաստ հոգալու տեղափոխման ենթակա գույքի տրանսպորտային ծախսերը: | Դրամական օժանդակություն հոգալու տրանսպորտային ծախսերը  |


| Կորուստի տեսակը   | Կիրառում  | Ազդեցություն կրողը   | Փոխհատուցում   |
|---|---|--|--|
| <b>16.Խոցելի անձանց/ԱՏ Տ-երին օժանդակություն</b>                        | Ցանկացած գույք  | Կանանց, տարեցների, կրթություն չունեցողների, հաշմանդամների կողմից գլխավորած և աղքատության շեմից ներքև գտնվող տնային տնտեսություններ (Խոցելի ՏՏ-երի ամբողջական ցուցակը ներկայացված է 7.4.4 բաժնում): | Կտրամադրվի միանվագ վերականգնման օժանդակություն նվազագույն աշխատավարձի («Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված) 6-պատիկի չափով և ծրագրի շրջանակներում աշխատանքի անցնելու նախապատվություն: ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխման դեպքում օժանդակությունը կվերահաշվարկվի վճարման օրվա դրությամբ գործող նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա:  |
| <b>17.Կենսաապահովման միջոցների վերականգնման լրացուցիչ միջոցառումներ</b> | Կորցրած գույքի դիմաց փոխհատուցումից և կենսաապահովման միջոցների վերականգնման միջոցառումներից դուրս լրացուցիչ միջոցառումներ | Ազդակիր տնային տնտեսություններ   | Վերապատրաստումներ. Ի լրումն վերոնշյալ կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների, ԱԱ/ԱՏՏ-ներին հնարավորություն կընձեռնվի մասնակցելու վերապատրաստման ծրագրերին, որոնց նպատակն է բարելավել ԱԱ/ԱՏՏ-ների հմտությունները ֆինանսների կառավարման, ինչպես նաև գյուղատնտեսական ոլորտներում:<br>Աշխատանքով ապահովում շինաշխատանքների ընթացքում. ԱԱ/ԱՏՏ-ներին առաջնահերթություն կտրվի ծրագրի հետ կապված աշխատանքներում ներգրավվելու հարցում: |
| <b>18.Համայնքի բարելավման միջոցառումներ</b>                             | Ազդակիր համայնքների ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ  | Ազդակիր համայնքներ/նաև անուղղակի ազդեցություններ ներառյալ վերաբնակեցվողներ ի համար ընդունող համայնքները  | Համայնքի ենթակառուցվածքների պատշաճ բարելավում հաշվի առնելով համայնքի առաջնահերթությունները: Մանրամասների համար տես սույն հաշվետվության 8-րդ բաժինը:  |

## 6. ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

### 6.1 Վերաբնակեցման տեղանքը

161. Ջրածոր գյուղի վարչական տարածքում գտնվող վերաբնակեցման տեղանքը (ռեստորանին հարակից տարածքը) սույն ՀՁՎԳՊ-ով համարվում է ֆիզիկական վերաբնակեցման համար հնարավոր տարածք և վերաբնակեցման տարբերակի հաշվարկները կատարված են այդ ենթադրությունով: Այս տեղանքը առաջարկվել է Ջրածորի վարչական ղեկավարի կողմից հանրային լսումների ընթացքում:

**Գծապատկեր 9: Ջրածոր գյուղի վարչական տարածքում գտնվող վերաբնակեցման տարածքը**



162. Տեղանքը, աշխարհագրական տեսակետից, լավ դիրքում է գտնվում, քանի որ մոտ է ճանապարհին և ջրագծին: ՀՁՎԳՊ մշակման փուլում Ամասիա համայնքի ավագանին տվել է նախնական համաձայնությունը նշված վայրում հողհատկացման վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (ԲՇԿ) հայտնել է, որ տեղանքը կարող է դիտարկվել, որպես վերաբնակեցման տեղանք (տես կից հատված 8 և 9):

163. Առաջարկված տեղանքը քննարկվել է հանրային լսումների ընթացքում և այս հարցը ընդգրկվել է տեղանքի վերաբերյալ մարդահամարի և սոցիալ-տնտեսական ուսումնասիրության հարցաթերթում: Ուսումնասիրության արդյունքներից պարզ է դարձել, որ Ջրածոր գյուղի թվով 78 ԱՏՏ-ների 83.3%-ը (թվով 65 ԱՏՏ) նախընտրում են վերաբնակեցման տարբերակը, իսկ 12.8%-ը (թվով 10 ԱՏՏ-ներ)՝ դրամական փոխհատուցումը:

**Աղյուսակ 40: ԱՏՏ նախասիրությունները փոխհատուցման տարբերակի վերաբերյալ**

| Հողի և շինության դեպքում              | N                     | %          | Հողի դեպքում                           | N                     | %            |
|---------------------------------------|-----------------------|------------|--|-----------------------|--------------|
| Գյուղի կառուցում                      | 65                    | 83.3       | Գյուղի կառուցում                       | 39                    | 50.6         |
| Նախընտրում է դրամական փոխհատուցում    | 10                    | 12.8       | Նախընտրում է դրամական փոխհատուցում     | 28                    | 36.4         |
| Ես չեմ ցանկանում, որ գյուղը տեղահանվի | 2                     | 2.6        | Ես չեմ զանկանում տրամադրել իմ հողամասը | 2                     | 2.6          |
| Դժվարանում է պատասխանել               | 1                     | 1.3        | Դժվարանում է պատասխանել                | 8                     | 10.4         |
| <b>Ընդամենը</b>                       | <b>78<sup>8</sup></b> | <b>100</b> |  | <b>77<sup>9</sup></b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

164. Թվով երկու ԱՏՏ-ներ հրաժարվել են որևէ փոխհատուցման տարբերակից, և չեն ուզում տեղափոխվել, 1 ԱՏՏ էլ փոխհատուցման տարբերակի հետ կապված որևէ նախասիրություն չուներ: 65 տնային տնտեսություններից 64-ը նախընտրել են ռեստորանի մոտ գտնվող վերաբնակեցման տեղանքը (ներկայացված է վերևի քարտեզում):

**Աղյուսակ 41: ԱՏՏ նախասիրությունները վերաբնակեցման տեղանքի վերաբերյալ**

| Նախասիրություն            | N         | %            |
|---------------------------|-----------|--------------|
| Ռեստորանին հարակից տարածք | 64        | 98.5         |
| Դժվարանում է պատասխանել   | 1         | 1.5          |
| <b>Ընդամենը</b>           | <b>65</b> | <b>100.0</b> |

Աղբյուրը՝ մարդահամարի տվյալներ

165. Վերաբնակեցման տեղանքում առկա մասնավոր հողերը համարվելու են ազդակիր, քանի որ վերաբնակեցման տարբերակը կիրառելու դեպքում այդ տարածքը ձեռք է բերվելու գյուղի կառուցման նպատակով: Հարկ է նշել, որ քանի որ Ծրագրի այս փուլում չկա գյուղի նախագիծը, հնարավոր չէ հստակ որոշել ազդեցությունը վերաբնակեցման տեղանքի վրա: Այդ պատճառով, ՀԶՎԳՊ-ն մշակվել է ելնելով առավելագույն ազդեցության կանխավարկածից, սակայն ակնհայտ է որ այդ հողերի ընդամենը մի մասն է ենթարկվելու ազդեցության վերաբնակեցման տարբերակի դեպքում:

## 6.2 ԲՍԱԳ պահանջները

166. Գյուղը վերաբնակեցնելու դեպքում բացի բնակավայրից բացի անհրաժեշտ կլինի նաև կառուցել նոր բնակավայրից դեպի Հողմիկ նոր ճանապարհ, կամուրջ և կոմունալ ցանցին

<sup>8</sup> Ջրածոր գյուղում տների և տնակների օրինականացման ենթակա համասեփականատեր են հանդիսանում ընդամենը 113 ՏՏ, սակայն հարցումն անց է կացվել գլխավոր 78 ՏՏ-երի հետ, որոնք արտահայտում են նաև ընդհանուր կարծիքը:

<sup>9</sup> Գլխավոր ՏՏ-եր՝ կիրառվել է նույն սկզբունքը, որը կիրառվել է տների և տնակների համասեփականատեր ՏՏ-երի վերաբերյալ:

միացման ենթակառուցվածքներ: Այս ամենի համար անհրաժեշտ կլինի մշակել ԲՍԱԳ և անհրաժեշտության դեպքում նաև Ուղղիչ գործողությունների պլան (ՈւԳՊ):

167. Հայաստանում բնապահպանական հնարավոր ազդեցությունների հանգեցնող ցանկացած գործունեության համար իրականացնելուց առաջ անհրաժեշտ է ձեռք բերել Բնապահպանական ազդեցության գնահատման փորձաքննության դրական եզրակացությունը: Նախատեսված շինաշխատանքների բնապահպանական ազդեցությունները պետք է գնահատվեն նախապատրաստական աշխատանքների ընթացքում: 2014թ ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այն պայմանները, որոնց դեպքում այդպիսի ազդեցությունը թույլատրելի է: Գյուղը վերաբնակեցնելու վերջնական որոշման կայացումից անմիջապես հետո մշակվելու են համայնքի նախագծային փաստաթղթերը, որոնք պաշտոնապես ներկայացվելու են քաղաքաշինության համար և ԲՍԱԳ փորձաքննության համար պատասխանատու լիազոր մարմիններին: ԲՍԱԳ և Ուղղիչ գործողությունների պլանի (ՈւԳՊ) մշակման (անհրաժեշտության դեպքում) ծառայությունը ներառվել է ՀԶՎԳՊ ԻԽ-ի առաջադրանքի մեջ:

## 7. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

168. Սույն բաժինը ներկայացնում է Ծրագրի մի շարք ազդեցությունները մեղմացնող ԱԱՏ-ների կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումները: Անկախ փոխհատուցման տեսակի ընտրությունից՝ ԱԱ/ԱՏՏ-ն իրավասու է օգտվել կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների առավելություններից, որոնց նպատակն է Ծրագրի ավարտից հետո ապահովել ԱՏՏ-ներին առնվազն մինչև Ծրագրի մեկնարկն ունեցած միևնույն կամ ավելի լավ կենսաապայմաններով: Դա, այնուամենայնիվ, չի վերաբերում համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներին, որոնք կիրառելի են միայն համայնքի՝ նոր վերաբնակեցման տարածք տեղափոխելու դեպքում:

### 7.1 Ներածություն

169. Միջազգային լավագույն փորձի համաձայն՝ կենսաապահովման միջոցները պետք է ընդգրկեն ապրուստն ապահովելու նպատակով անհատների, ընտանիքների, և համայնքների կողմից օգտագործվող մի շարք այնպիսի միջոցներ, ինչպիսիք են աշխատավարձից ստացված եկամուտը, ձկնորսությունը, անասնապահությունը և բնական ռեսուրսներից ստացվող կենսաապահովման այլ միջոցները, ինչպես նաև առևտուրը կամ բարտերային գործարքներից ստացվող եկամուտը: Կենսաապահովման միջոցները կայուն են համարվում այն դեպքում, երբ դրանք թույլ են տալիս մարդկանց հաղթահարել և վերականգնվել ցնցումներից ու սթրեսից (օրինակ, բնական աղետներ կամ սոցիալ-տնտեսական ցնցումներ) և բարելավել իրենց և հետագա սերունդների բարեկեցությունը՝ առանց վնասելու շրջակա միջավայրն ու հիմնական ռեսուրսները:

170. Այս կոնտեքստում Ծրագիրը պատասխանատվություն է ստանձնել ոչ միայն կորուստների դիմաց փոխհատուցման, այլև ԱՏՏ-ներին (և մասնավորապես խոցելի տնտեսությունների) իրենց կենսաապահովման միջոցների վերականգնման և կենսամակարդակի բարելավմանն աջակցություն ցուցաբերելու համար: Ստորև ներկայացված կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումները մշակվել են վերոնշյալ պարտականությունները կատարելու համար միջազգային և ՀՀ լավագույն փորձի համապատասխան:

171. Ծրագիրը մեծ ջանքեր է գործադրելու իրենց ընձեռնված հնարավորությունների մասին բոլոր ԱԱ-ներին իրազեկելու համար և նրանց տրվելու է համապատասխան հնարավորություն մասնակցությունն ապահովելու համար:



## **7.2 Կենսաապահովման միջոցների վերականգնման պլանի մշակման հիմնական սկզբունքները**

172. Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված կայուն մոտեցումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Վերաբնակեցման տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ ողջամիտ ժամկետներում կենսաապահովման միջոցների/կենսաապայմանների վերականգնումը նախնական մակարդակին դժվար է և հազվադեպ է իրականանում: Ուստի անհրաժեշտ է ավելի բարձր նպատակ սահմանել, այն է՝ ԱԱ-ների պայմանների բարելավում:
- Ցանկացած պարագայում Ծրագրի նպատակը պետք է լինի բարելավումը: Ինչու՞ կիրառել միայն «Մի վնասի՛ր» սկզբունքը, եթե մի փոքր ավելի ջանքեր գործադրելով, բոլորը կարող են Ծրագրից շահել:
- Կենսաապահովման միջոցների վերականգնումը բազմակողմանի ռազմավարություն է, և եկամտի և համայնքային աջակցության ցանցի վերականգնումն ապահովելու համար անհրաժեշտ է համադրել մի քանի մոտեցումներ:
- Ծրագիրը նախատեսում է շահառուների ակտիվ մասնակցություն պլանավորման և որոշումների կայացման գործընթացում՝ համոզվելու համար, որ առաջարկվող աջակցությունը արտացոլում է համայնքի իրողությունները/առաջնահերթությունները և ապահովում է ԱՏՏ-ների ակտիվ ներգրավվածությունը:
- Խոցելի ԱՏՏ-ները ավելի պակաս ընդունակ են հարմարվել փոփոխություններին, և հետևաբար կենսաապահովման միջոցների վերականգնման պլանավորման և իրականացման միջոցով նրանց անհրաժեշտ է նպատակաուղղված աջակցություն ցուցաբերել:
- Անհրաժեշտ է հատկացնել անցումային օժանդակություն/նպաստ, որոնց համար, սակայն, անհրաժեշտ է սահմանել հստակ իրավասություն և սահմանաչափեր:
- Կարողությունների զարգացումը պետք է ներառել կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներում՝ բարելավելու ԱՏՏ-ների հմտությունները, ներառյալ ֆինանսների կառավարման ուղղությամբ:

## **7.3 Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների հատկորոշման ընթացակարգը**

173. Սույն բաժնում ներկայացվող կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների համար հիմք են հանդիսացել սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

ելակետային տեղեկատվությունը, ինչպես նաև համապատասխան շահառուների հետ (ներառյալ՝ տեղական ֆերմերների, գործարարների և ՏԻՄ-երի՝ բնակավայրի և համայնքի մակարդակով, հետ) խորհրդատվությունները և հանդիպումները: Այս գործողությունների արդյունքների հիման վրա արվել են հետևյալ երեք հետևությունները:

- Անասնաբուծությունը կենսաապահովման հիմնական աղբյուրն է, որին հաջորդում է հացահատիկի արտադրությունը և արոտավայրերի և ժամանակակից գյուղատնտեսական սարքավորումների մատչելիությունը կարևորագույն տարր է Ամասիայի<sup>10</sup> համայնքի բոլոր բնակավայրի (ներառյալ Ջրածորը) համար մասնավորապես կենսաապահովման միջոցների վերականգնման առումով:
- Անասնակերի/կաթի արտադրության և հավաքման գործընթացի բարելավումը կբարելավի համայնքի անդամների բանակցային դիրքը և թույլ կտա բարձրացնել կաթի գինը և անասնաբուծությունից ստացվող եկամուտը: Սա իր մեջ ներառում է ավելի լավ բանակցային դիրք վերամշակող ֆերմերային տնտեսությունների նկատմամբ, որոնք ներկայումս կաթ են հավաքում Ջրածորից և հարակից բնակավայրերից կաթնամթերք արտադրելու համար:
- Նպատակային դասընթացները թույլ կտան ԱԱ-ներին ծանոթանալ անասնաբուծության և գյուղատնտեսության ոլորտում առկա լավագույն փորձին (ներառյալ գյուղատնտեսության զարգացման համար կոոպերատիվ մոտեցումներին) և զարգացնել ֆինանսների կառավարման և գյուղատնտեսության մեջ կիրառվող հմտությունները, որն էլ էապես կավելացնի գյուղատնտեսությունից ստացված եկամուտը:

#### **7.4 Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված ծրագրեր**

174. Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված ծրագիրը համադրվելու է առկա ռեսուրսների, գիտելիքի, հմտությունների, ինչպես նաև տնային տնտեսությունների փորձի հետ: ԿՎՊ-ն բաղկացած է լինելու 4 հիմնական տարրերից.

- Անցումային աջակցության անհապաղ ներդրում
- Տեխնիկական կարողությունների զարգացում
- Աշխատանքի ապահովում և հմտությունների զարգացում
- Համայնքի կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներ (տես Բաժին 8):

<sup>10</sup> Ամասիան խոշորացված համայնք է, որը ներառում է Արեգնաղեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Կամխուտ, Հովտուն, Մեդրաշատ, Ողջի և Ջրածոր բնակավայրերը:

175. Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված ծրագրերը իրականացվելու ՀԶՎԳՊ իրականացնող խորհրդատուի կողմից:

#### 7.4.1. Անցումային աջակցություն

176. Անցումային աջակցության շնորհիվ տնային տնտեսությունները կկարողանան հոգալ իրենց հիմնական կարիքները մինչև իրենց կորուստներից վերականգնումը ու ապրուստի միջոցների մակարդակի վերականգնումը նախա Ծրագրային մակարդակի: Անցումային աջակցությունը բաղկացած է լինելու հիմնկանում

- Աշխատանքի կորստի համար օժանդակություն
- Խիստ ազդեցությունների դիմաց օժանդակություն
- Տրանսպորտային ծախսերը հոգալու օժանդակություն

#### 177. Աշխատանքի կորստի համար օժանդակություն

a) Տվյալ աշխատողի միջին ամսական աշխատավարձի կամ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած հանրապետության միջին ամսական աշխատավարձի (որը ավելի բարձր է) 6-պատիկի չափով դրամական օժանդակություն կտրամադրվի այն աշխատողներին, ովքեր մշտապես կորցնում են աշխատանքը և աշխատել են մինչև վերջնաժամկետը առնվազն 2 ամիս և ձեռնարկատիրական գործունեության դադարեցման պահին դեռ աշխատում էին ազդակիր ձեռնարկությունում (ընկերություն/անհատ ձեռներեց (ԱՁ))՝ եթե աշխատանքային հարաբերությունները դադարեցվում են ազդակիր հողատարածքում ձեռնարկատիրական գործունեության դադարեցման հետևանքով:

b) Աշխատանքի ժամանակավոր կորուստի դեպքում (պարտադրված դադար) դրամական օժանդակություն կտրվի միևնույն սկզբունքով հիմք ընդունելով աշխատանքային ամիսների հարկադրված դադարը: Աշխատանքը կորցրած անձանց թեկնածությունը կդիտարկվի շինարարական և շահագործման փուլերում աշխատանքի ընդունման համար:

#### 178. Խիստ ազդեցությունների դիմաց օժանդակություն

a) Այն դեպքում, երբ ԱՏՏ-ի գյուղատնտեսական եկամուտ բերող հողակտորի 20% կամ ավելին ազդեցության է ենթարկվել, ԱՏՏ-ն լրացուցիչ օժանդակություն կստանա խիստ ազդեցության դիմաց, որը համարժեք է կորցրած հողատարածքի մեկ տարվա միջին եկամտի/բերքի շուկայական միջին արժեքին: Ծրագրի խիստ ազդեցությունների հետևանքով դրամական փոխհատուցում է տրամադրվում տնտեսապես տեղահանված այն ԱԱ/ԱՏՏ-ներին (ներառյալ վարձակալ և հողօգտագործող ԱՏՏ-եր), որոնց գյուղատնտեսական նշանակության հողի (սեփական կամ մշակվող) 20% կամ ավելին ազդեցության է ենթարկվել, և հողօգտագործման հետևանքով ստանում են եկամուտ բերքի տեսքով: Վերոնշյալ օժանդակության չափը հաշվարկելիս հաշվի է առնվում հողի

փաստացի գործառնական նշանակությունը՝ անկախ կադաստրային փաստաթղթերում, պետական գրանցման վկայականում և հողի նկատմամբ իրավունքը հավաստող այլ փաստաթղթերում նշված նշանակությունից: Եթե ոչ-գյուղատնտեսական նշանակության հողն ազդեցության է ենթարկվել 20% կամ ավելի չափով, օգտագործվում է որպես գյուղատնտեսական հող և հողում առկա են բերքատու բույսեր կամ ծառեր, ապա վերջինս ենթակա է փոխհատուցման համաձայն վերոնշյալ սկզբունքների՝ առանց օրինականացման դրույթների պահանջի:

b) Տեղահանված ԱՏՏ-ները (ներառյալ տեղահանված վարձակալները) կստանան օժանդակություն խիստ ազդեցությունների համար, որը հավասար է ամսական նվազագույն աշխատավարձի (սահմանված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով) 6-պատիկին: «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխման դեպքում օժանդակությունը կվերահաշվարկվի վճարման օրվա դրությամբ գործող նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա:

179. **Տրանսպորտային ծախսերը հոգալու օժանդակություն՝** Ազդակիր հողատարածքում շարժական գույք կամ շինություն ունեցող ԱԱ/ԱՏՏ-ները անկախ նրանց հողի կամ շինության նկատմամբ ունեցած իրավունքից, կստանան դրամական օժանդակություն հոգալու տեղափոխման ենթակա գույքի տրանսպորտային ծախսերը:

#### 7.4.2. Տեխնիկական կարողությունների զարգացում

180. Բոլորը ԱՏՏ-ները իրավունք են ունենալու զարգացնել իրենց տեխնիկական կարողությունները արդյունավետ գյուղատնտեսական մոտեցումների և ֆինանսական կառավարման վերաբերյալ դասընթացների/վերապատրաստումների միջոցով: Դասընթացներն իրականացվելու են հետևյալ թեմաներով.

181. **Ֆինանսների կառավարում**

- Տարրական ֆինանսական գրագիտություն և թվաբանական հմտություններ
- Գումարի կառավարում և տնային տնտեսության տարրական բյուջետավորում
- Խնայողություններ և դրամական միջոցների կառավարում
- Առկա ֆինանսական գործիքներ և կառավարության կողմից սուբսիդավորված վարկի տեսակներ

182. **Գյուղատնտեսական մոտեցումներ և հմտություններ**

- Անասնաբուծության համար բիզնես պլանավորում
- Կենդանաբուծություն և ցեղատեսակների բարելավում

- Բազմացում և հղիության կառավարում
- Խոշոր եղջերավոր կենդանիների կառավարման համակարգեր և կերակրում
- Հիվանդությունների կառավարում, կանխարգելում և բուժում

### 183. Կոոպերատիվ գյուղատնտեսության առավելությունները

184. Նոր հիմնված կաթնամթերքի արտադրության կոոպերատիվի անդամների ու հնարավոր աշխատակիցների համար կկազմակերպվեն արտադրության և վերամշակման վերաբերյալ մի շարք դասընթացներ՝ աշխատունակությունը խթանելու և գիտելիքներն ու կարողությունները բարձրացնելու նպատակով: Դասընթացները լինելու են հետևյալ թեմաներով.

- Մոբիլիզացիա և կազմակերպչական զարգացում
- Կոոպերատիվի կառավարում
- Շուկայական հարաբերություններ, կոոպերատիվների հաշվապահություն
- Կաթի արտադրություն
- Լաբորատորիաների և այլ (փորձարկման) սարքավորումների կիրառություն
- Հիգիենայի պահպանում և արտադրանքի մշակում

185. ՀՁՎԳՊ իրականացնող խորհրդատուն պատասխանատու կլինի վերոնշյալ թեմաներով դասընթացների պլանի մշակման և դասընթացների կազմակերպման և անցկացման համար: Դասընթացները կմեկնարկեն անմիջապես ՀՀ Կառավարության կողմից ՀՁՎԳՊ-ի հաստատումից հետո: Լրացուցիչ դասընթացներ կկազմակերպվեն Ծրագրի իրականացման առաջին տարվանից հետո, տնային տնտեսություններին իրենց եկամուտը կառավարելու համար համապատասխան հմտություններ փոխանցելու նպատակով:

186. Ազդակիր տնային տնտեսությունները կտեղեկացվեն առկա վարկային ծրագրերի մասին, և անհրաժեշտության դեպքում կուղղորդվեն դեպի վարկային կազմակերպություններ: Ծրագիրը վարկեր չի տրամադրելու, սակայն խորհրդատվություն է տրամադրելու առկա ֆինանսական և վարկային կազմակերպությունների վերաբերյալ:

### 7.4.3. Զբաղվածություն և հմտությունների զարգացում

187. ԱԱ-ի աշխատուժի շրջանակներում աշխատանքային զբաղվածությամբ աջակցությունը կենսաապահովման միջոցների վերականգնման ևս մեկ միջոց է հատկապես շինարարական աշխատանքներում ներգրավելով՝ գործնական և ողջամիտ սահմաններում: Տեղական մակարդակում աշխատանքային հնարավորությունները խթանելու նպատակով ՀՁՎԳՊ-ով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

**Աղյուսակ 42: Ջբաղվածության աջակցության տեսակները**

|  |
|--|
| <b>Աշխատանքային զբաղվածության հնարավորություններ</b>   |
| <b>Շինարարության փուլ</b>  |
| Շինաշխատանքները տևելու են 3 տարի, որի ընթացքում ստեղծվելու են աշխատանքային հնարավորություններ տեղական բնակչության, ներառյալ ծրագրի ազդակիր անձանց շրջանում: Կապալառուն խրախուսվում է շինարարության ընթացքում աշխատանքի վարձել որակավորում ունեցող ծրագրի ազդակիր անձանց և տեղական բնակչությանը գործնական և ողջամիտ սահմաններում: |
| <b>Շահագործման փուլ</b>  |
| Շահագործման փուլում Ծրագրի ԱԱ-ների և տեղական բնակչության շրջանում ստեղծվելու են զբաղվածության հնարավորություններ: Սպասվում է, որ շահագործման փուլում առնվազն 5 աշխատակից կպահանջվի, որոնց ներգրավման հարցում նախապատվություն կտրվի տեղացի (ազդակիր համայնքներից) բնակչությանը:   |
| <b>Այլ հնարավորություններ</b>  |
| Գյուղը նոր տեղանք վերաբնակեցնելու դեպքում համայնքի «Կենսամակարդակի վերականգնման միջոցառումներով» նախատեսվում է հիմնել փոքր կաթնամթերք արտադրող կոոպերատիվ Ջրածոր համայնքում, որը համայնքի անդամների համար կստեղծի նոր ժամանակավոր և մշտական աշխատատեղեր:   |
| Բացի այդ, գյուղում կազմակերպվելու են դասընթացներ, որոնք կխրախուսեն կոոպերատիվների կազմավորումն ու ձեռներեցությունը, որի շնորհիվ նոր աշխատատեղեր կստեղծվեն համայնքի բնակչության համար:  |

188. ՀԶՎԳՊ իրականացնող խորհրդատուն մշակելու է Տեղական զբաղվածության պլան, որում նկարագրվելու են այն սկզբունքներն ու առաջնահերթությունները, որոնցով ԱԱ-ներն ու ազդակիր համայնքների այլ բնակիչները մինչև շինաշխատանքների մեկնարկը ընդունվելու են աշխատանքի կամ ընտրվելու են դասընթացներին մասնակցելու համար: Սա պետք է ներառի տեղական աշխատուժի հմտությունների և պահանջվող մասնագիտական փորձառության և քանակի հարաբերակցության վերլուծություն, մասնագիտական ուսուցում տրամադրելու նպատակով (ծրագրի աջակցությամբ) մարզային ուսումնական կենտրոնների հետ խորհրդակցություն, ինչպես նաև կանանց համար հատուկ բնագավառներում աշխատանքային հնարավորությունների ապահովում: Կապալառուն պատասխանատվություն է կրելու Տեղական զբաղվածության պլանի իրականացման համար, ինչպես նաև ապահովելու է իր ենթակապալառուների կողմից (եթե կլինեն այդպիսիք) դրա իրականացումը: Ուստի՝ այս առաջադրանքը պետք է ներառվի կապալառուի մրցութային փաթեթի մեջ:

189. Աշխատանքի ընդունելիս հաշվի են առնվելու հետևյալ առաջնահերթությունները

- Առաջին հերթին նախապատվությունը տրվում է Ծրագրի կողմից ուղղակի խոցելի ԱՏՏ/ԱԱ-ներին: Դա այն ԱԱ-ներն են, որոնք դեռ բնակվում են Ծրագրի իրականացման տարածքում (Ջրածոր գյուղ):
- Երկրորդ հերթին նախապատվությունը տրվում է Ամասիա համայնքի բնակչությանը:

#### 7.4.4. Խոցելի տնային տնտեսություններին տրամադրվող աջակցություն

190. Խոցելի անձանց (աղքատության շեմից ցածր ԱՏՏ-ները և կանանց, տարեցների և հաշմանդամների կողմից գլխավորաձեռն տնային տնտեսությունները) կտրամադրվի միանվագ օժանդակություն նվազագույն աշխատավարձի (սահմանավճառ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով) 6-պատիկի չափով, ինչպես նաև վերջիններիս Ծրագրային աշխատանքներում ներգրավվելու առաջնահերթություն կտրվի: ՀՀ օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի փոփոխման դեպքում օժանդակությունը կհաշվարկվի վճարման օրվա դրությամբ գործող նվազագույն ամսական աշխատավարձի հիման վրա: Նպաստը նպատակահարմար օգտագործելու համար խոցելիության նպաստ ստացողներին կառաջարկվի ֆինանսական խորհրդատվություն ՀՁՎԳՊ ԻԽ-ի կողմից:

191. Սոցիալապես խոցելի տնային տնտեսություններն են.

- a) Տնային տնտեսությունները, որոնք ներառում են Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում գրանցված ընտանիքներ և ստանում են համապատասխան նպաստներ;
- b) Կանանց կողմից գլխավորաձեռն տնային տնտեսություններ, որտեղ չկան աշխատունակ տարիքի չափահաս անձինք, բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացինոր հիմունքներով;
- c) Տարեց (տարիքային կենսաթոշակառուներ) անձանց կողմից գլխավորաձեռն տնային տնտեսություններում, որտեղ աշխատանքային տարիքի այլ անձինք չկան, բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացինոր հիմունքներով;
- d) Առաջին և երկրորդ հաշմանդամության կարգ ունեցող անձանց կողմից գլխավորաձեռն տնային տնտեսությունները, որտեղ աշխատանքային տարիքի այլ անձինք չկան,

բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացիոնոր հիմունքներով:

192. Մարդահամարի արդյունքներով հայտնաբերվել են 13 խոցելի ԱՏՏ-ներ: Ավելին, ՀԶՎԳՊ-ի մշակման ընթացքում, ի լրումն աղքատ ԱՏՏ-ների, որոնք խոցելի են համարվում Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում գրանցված լինելու հետևանքով, հայտնաբերվել են նաև աղքատության շեմից ցածր մակարդակում գտնվող 12 ԱՏՏ-ներ՝ համաձայն ԱՏՏ-երի կողմից նշված ԱՏՏ-երի և անհատների եկամտի վերաբերյալ տեղեկատվության: ՀԶՎԳՊ-ի դրույթների համաձայն՝ այս ԱՏՏ-ների մասին տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ իրականացնելու ընտանիքի խոցելիության գնահատում և հնարավորության դեպքում նրանց ընդգրկելու Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում: Այս տնային տնտեսությունները (ընտանիքները) փոխհատուցում ստանալու իրավունք կունենան ընտանիքի անապահովության գնահատման համակարգում գրանցվելուց անմիջապես հետո:



## 8. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

193. ՀՀՎԳՊ-ն նախատեսում է Ծրագրի հետ կապված համայնքի կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված համապարփակ և հիմնարար մշակված միջոցառումներ: Այս միջոցառումների նպատակն է բարձրացնել ինչպես կենսաապահովման, այնպես էլ տնտեսական բարեկեցության մակարդակը՝ շեշտը դնելով հատկապես հողերի ձեռքբերման և վերաբնակեցման արդյունքում ազդակիր անձանց կարիքների վրա, միևնույն ժամանակ խթանելով համայնքի ընդհանուր զարգացումը: ՀՀՎԳՊ-ն նպատակաուղղված է որչ և՛ Ամասիա համայնքի զարգացմանը՝ տարբերություն չդնելով Ջրածորի և հարևան բնակավայրերի ուղղակի և անուղղակի ազդակիր տնային տնտեսությունների միջև:
194. ՀՀՎԳՊ-ի մշակման շրջանակներում իրականացվել է Ջրածոր բնակավայրի գնահատում վերջինիս կարիքները և մրցակցային առավելությունները բացահայտելու նպատակով: Հանդիպումներ են անցկացվել տեղացի ֆերմերների, գործարարների և Ամասիա համայնքի ՏԻՄ մարմինների հետ: Մասնակցային գնահատման արդյունքում ուսումնասիրվել են համայնքի տնտեսական ռեսուրսները, բացահայտել թե՛ համայնքի կողմից ինչ արդյունավետությամբ են կապիտալիզացվում ռեսուրսները, ինչպես նաև բացահայտել համայնքի ռեսուրսների բազմապատկման հնարավորությունները: Գնահատման արդյունքում որոշել համայնքի զարգացմանն ուղղված այն հնարավոր միջամտությունները, որոնք կարող են դրական անդրադառնալ առկա սոցիալ-տնտեսական բացերի վրա՝ խթանելով համայնքի զարգացումը:
195. Ջրածորի գյուղի նոր վայրում վերաբնակեցնելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության պետական կողմիտեի կողմից տրամադրված գյուղի հատակագծի օրինակները, մշակվելու է գյուղի վերակառուցման վերջնական հատակագիծը: Վերակառուցման հատակագիծը կընդգրկի վերաբնակեցման տարածքում կառուցվող բնակավայրի նախագիծը և կներառի փոխարինվող բնակելի տների և հանրային ենթակառուցվածքների, այդ թվում, ճանապարհների, համայնքային կենտրոնի, դպրոցի եւ այլ կառույցների շինարարությունը: Պլանով նաև կընդգրկի համայնքի բարելավման միջոցառումներ, որոնք կապահովեն որչ համայնքի, ներառյալ խոցելի խմբերի կողմից Ծրագրով առաջարկվող միջոցառումներից առավելագույնս օգտվելու հնարավորությունները:
196. Սույն բաժնում նկարագրված են համայնքի կենսամակարդակի վերականգնման մոտեցման հիմքում ընկած հետեյալ սկզբունքները:
- i. Համայնքի կենսամակարդակի վերականգնումից ստացված օգուտները պետք է հավասար հնարավորություններ ընձեռեն:

- ii. Համայնքի կենսամակարդակի վերականգնման միջոցառումների հիմնական առաջնահերթությունները որոշվում են մասնակցային գործընթացների, համայնքի կարիքների և պահանջների պարբերաբար վերանայումների և շարունակական խորհրդատվությունների միջոցով:
- iii. Համայնքի կենսամակարդակի վերականգնման պլանը կներառի սերտ համագործակցություն հանրային և մասնավոր գործընկերների միջև, ներառյալ հանրային մասնավոր գործընկերությունը համատեղ նախագծվող և իրականացվող ծրագրերում
- iv. Ապահովել համայնքի կենսամակարդակի վերականգնմանն ուղղված համատեղ մշտադիտարկում և վերահսկում, ու գործընկերների և համայնքների համար տեղում հաշվետու համակարգի ծրագրերի իրականացում:
- v. Հողօգտագործման համար աճող ֆինանսական աղբյուրների պատշաճ կառավարման նպատակով համայնքի, ներառյալ տեղական ինքնակառավարման մարմնի, բիզնեսի, երիտասարդների, համայնքի բնակիչների կարողությունների զարգացում՝ համատեղելով գործնական հմտություններն ու կիրառական գիտելիքները նոր ստացված գիտելիքների հետ:
- vi. Ավարտուն ծրագրերի նկատմամբ ազդակիր համայնքի կողմից պատասխանատվության խրախուսում և այդ ծրագրերի կայունության ապահովում:

### **8.1. Կենսապահովման ծրագրի մոտեցումը**

197. Համայնքի զարգացման ավանդական մեթոդները հաճախ շեշտը դնում են համայնքի թերությունների և ոչ առավելությունների վրա՝ դրանով իսկ նվազեցնելով նման նախաձեռնությունների ազդեցությունն ու արդյունավետությունը, քանի որ դրանք թիրախավորում են միայն համայնքի առանձնահատուկ խնդիրները՝ անտեսելով այն համակարգված լուծումները, որոնք կարող են հանգեցնել արդյունավետ և կայուն արդյունքների: ՀԶՎԳՊ-ն հետևաբար ընդունել է համայնքի կենսամակարդակի վերականգնման այնպիսի մոդել, որտեղ համատեղվել են առկա ռեսուրսների վրա հիմնված զարգացման մոտեցումները և խնդիրների վերհանման առավել ավանդական մեթոդները:
198. Այս նպատակով, համայնքի կենսամակարդակի վերականգնմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումները բացահայտելու համար, որոնք կլինեն առավել արդյունավետ Ջրածոր բնակավայրի համար և Ամասիա համայնքի համար առհասարակ, համայնքի անդամների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ մասնակցային գնահատում է անցկացվել ֆոկլուս-խմբային քննարկումների և հարցազրույցների միջոցով: Այդ քննարկումների ընթացքում իրականացվել է համայնքի այնպիսի կարողությունների և ռեսուրսների գույքագրում և վերլուծություն, ինչպիսիք են մարդկային, ֆիզիկական, բնական և ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև

բացահայտվել են արտադրության հիմնական ճյուղերը (նախկին և այսօրվա), զբաղվածության իրավիճակը և առկա ենթակառուցվածքները:

## **8.2. Տնտեսական զարգացման հնարավորությունը**

199. Համայնքի բնակիչների, տեղական բիզնեսների և ՏԻՄ ներկայացուցիչների հետ խորհրդատվությունները, ինչպես նաև համայնքի տնտեսական նկարագրի գնահատումը ցույց են տվել, որ համայնքում բարձր եկամուտներ ապահովող տնտեսության ճյուղը հիմնականում անասնապահությունն է, որը Ջրածորի և Ամասիա համայնքի տնտեսության հիմնական ճյուղն է:
200. Հաշվի առնելով թե կաթի և թե մսի արտադրության համեմատաբար մեծ ծավալները, այս ճյուղերը Ջրածորում ունեն զարգացման մեծ հնարավորություն: Համայնքը ունի առկա անասունների գլխաքանակի հաշվով ավելի քան բավարար անասնակերի պաշարներ, և հետևաբար արտադրության համար անասնակերի պաշարի մասով խոչընդոտներ չեն առաջանա:
201. Հայաստանում միջինը 1,89 հա արոտավայրեր են անհրաժեշտ 1 կովի հաշվով պատշաճ անասնակեր ապահովելու համար (հաշվի առնելով 1 հա արոտավայրի տարեկան արդարողականությունը)<sup>11</sup>: Հաշվի առնելով, որ Ջրածոր համայնքում կա 207 կաթնատու կով, անասունների և արոտավայրերի հարաբերակցության գործակիցը 2,5 հա է, որը ավելին է, քան մեկ կենդանու համար պահանջված արոտավայրը: Ջրածորը սրանով իսկ հնարավորություն ունի անասնակեր ապահովել 960 կովերի համար, որը չորս անգամ ավելին է համայնքում առկա կովերի թվից: Հետևաբար համայնքը կարող է կարճ ժամկետներում ամենաքիչը կրկնապատկել իր անասնագլխի քանակը:
202. Համայնքը զգալի հնարավորություններ ունի արտադրելու ավելի մեծ ծավալի կաթ, եթե համայնքը ապահովված լիներ այնպիսի ենթակառուցվածքներով, ինչպիսին են հավաքման կայանները, կաթ արտադրող կոոպերատիվները, և տրանսպորտային միջոցները, որոնց բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում համայնքի կաթի վաճառքի համար:
203. Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի ավելացումը կհանգեցնի կաթից ստացված եկամուտի աճի: Բացի կաթի արտադրության ծավալից ստացված եկամուտի աճից, զարգացած ենթակառուցվածքների առկայությունը կարող է բարձրացնել Ջրածորից և հարակից համայնքներից հավաքվող կաթի գինը: Դա ակնհայտ է դառնում նաև այն հանգամանքով, որ համայնքից կաթ գնող հիմնական ընկերությունը (Բանդիվան) ընկերությունը պատրաստ է բարձրացնել կաթի գինը 25%-ով՝ մեկ լիտրի<sup>12</sup> դիմաց վճարելով

<sup>11</sup> Սահակյան Ռազվիկ, Արոտավայրերի արդյունավետ կառավարում ուսուցման նյութ, Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության (ՀԳՌԿՄ) ծրագիր

<sup>12</sup> Կաթը պետք է լինի բարձրորակ և համապատասխանի ընկերության որակի պահանջներին.

200 ՀՀ դրամ՝ ներկայիս 150 դրամի փոխարեն այն դեպքում եթե կաթը կհավաքվի և կսառեցվի է գյուղի կաթի հավաքման կայանում:

204. Ավելացված գլխաքանակը կաթի գնի ավելացման հետ միասին կարող են զգալիորեն նպաստել համայնքի զարգացմանը: Ստորև աղյուսակում ներկայացված եկամտի աճի հնարավորությունների վերաբերյալ պարզ հաշվարկը ցույց է տալիս միայն Ջրածոր համայնքում կաթի արտադրությունից 270% եկամտի աճ: Ջրածոր համայնքը կարող է ծառայել նաև որպես հավաքման կայան, որտեղ կհավաքվի հարակից համայնքների կաթը՝ բարձրացնելով նաև այդ գյուղերից ստացված կաթի գները:

**Աղյուսակ 43: Եկամտի աճի հնարավորությունները\***

|                           | Գլխաքանակ | Տարեկան արտադրանքը (տոննա) | Կաթի գինը ՀՀ դրամ/լիտր | Կաթի վաճառքից ստացված եկամուտը (միլիոն ՀՀ դրամ) |
|---------------------------|-----------|----------------------------|------------------------|---|
| Ներկայիս քանակը/գործակիցը | 207       | 310                        | 150                    | 46.5 (միլիոն)                                   |
| Հնարավոր քանակը/գործակիցը | 414       | 620                        | 200                    | 124 (միլիոն)                                    |

**Աղբյուր՝** ՀՄԱ աշխատաժողովի տվյալներ և «ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ խորհրդակցություն.

\*Այս հաշվարկները պայմանական են, և ենթադրում են, 1) մեկ կովի հաշվարկով կաթի արտադրությունը մնում է անփոփոխ և 2) կաթի միջազգային/տեղական գները մնում են անփոփոխ

### **8.3. Համայնքի կենսապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներ**

#### **8.3.1 Կենսապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումներ**

205. Հաշվի առնելով անասնաբուծության, հատկապես կաթնամթերքի արտադրության բնագավառում համայնքի մեծ պոտենցիալը, ինչպես նաև կաթի արտադրության մասնատվածությունը (կաթի արտադրողները միկրո և մակրո արտադրողներ են), ՀԶՎԳՊ-ով նախատեսվում է խթանել տնտեսական զարգացումը արտադրողների կոոպերատիվ գործունեությունը խրախուսելու և Ամասիա համայնքի տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու միջոցով: Կոոպերատիվ բիզնես մոտեցումների կիրառումը կխթանի եկամտի աճը ու Ջրածոր և Ամասիայի այլ բնակավայրերում կաթնամթերք արտադրող ընկերությունների արդյունավետ գործունեությունը:

206. Ջրածորը նոր տեղանքում վերաբնակեցնելու դեպքում, Ծրագիրը աջակցելու է արտադրողներին բարելավելու իրենց շուկայական կապերը՝ հիմնելով կաթ արտադրողների կոոպերատիվ: Կոոպերատիվն ապահովված է լինելու կաթի հավաքման կայանով (շինություն, որը կկառուցվի Ջրածորում և կծառայի որպես կաթի հավաքման կայան), ինչպես նաև

անասնակերի արտադրության սարքավորումներով, ներառյալ արորով, տրակտորով, կուլտիվատորով, խոտհարով (խոտհունձ մեքենա): Ընդհանուր գյուղատնտեսության զարգացումը և անասնաբուծության աճը խթանելու նպատակով, որպես կենսապահովման վերականգնման միջոցառում Ամասիայի համայնքին կտրամադրվի սիլոսահավաք կոմբայն, անկախ նրանից՝ կկառուցվի նոր բնակավայրը, թե ոչ:

207. ՀՀՎԳՊ-ն նաև նախատեսում է դասընթացների կազմակերպում կոոպերատիվ գործունեության մոտեցումների լավագույն փորձի վերաբերյալ: Ամասիա<sup>13</sup> համայնքի կաթնամթերք արտադրողների կարիքների բավարարման նպատակով Խորհրդատվական ծառայությունների տեսքով շարունակական աջակցություն է տրամադրվելու՝ բարձր արտադրողականություն և արդյունավետություն ապահովող կոոպերատիվ լուծումների մշակման ուղղությամբ:

### 8.3.2 Ներառականության ապահովմանն ուղղված միջոցառումներ

208. Տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումների հետ մեկտեղ, Ծրագիրը կարևորում է Ջրածոր համայնքում ներառականության ապահովումը, քանի որ նոր համայնքում նաև ներգրավվելու են հաշմանդամություն ունեցող անձանց:

209. Նոր համայնքի նախագծում հաշվի է առնվելու և առաջնահերթություն է տրվելու հաշմանդամների կարիքների բավարարմանը, ստեղծելով կենսակերպը և կրթությունը համատեղող ներառական միջավայր, որը կխորացնի հասարակության հետ իրենց կապը:

210. Հաշմանդամներ ունեցող տնային տնտեսությունների համար նոր տների նախագիծն ու կառուցումը կհարմարեցվի նրանց կարիքներին: Ներառականության սկզբունքով կնախագծվեն նաև այնպիսի հանգստի գոտիներ, ինչպիսիք են երեխաների և երիտասարդների համար նախատեսված խաղահրապարակները, որոնք նույնպես կհարմարեցվեն հաշմանդամների կարիքներին:

211. Ինչ վերաբերում է կրթությանը, ապա համայնքն ունենալու է ներառական մանկապարտեզ և դպրոց (մանկապարտեզ, դպրոց և մշակույթի տուն մեկ շենքում), որոնք կընդունեն բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կարողություններից և զարգացման կարիքներից: Այս կառույցը նաև ծառայելու է որպես մշակութային տուն, որտեղ համայնքի բոլոր անդամները, ներառյալ հաշմանդամները, կկարողանան մասնակցել սոցիալական և մշակութային միջոցառումներին:

### 8.3.3 Ճանապարհային ենթակառուցվածքների բարելավում

212. Ինչպես նշվեց, արոտավայրերի մատչելիությունը մեծ նշանակություն ունի համայնքի համար: Համայնքի առկա վարելահողը, որը բերքահավաքից հետո նաև ծառայում է իբրև արոտավայր

<sup>13</sup> Ամասիան խոշորացված համայնք է, որը ներառում է Արեգնաղեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Կամխուտ, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Ջրածոր բնակավայրերը:

տեղակայված է գյուղի ներկայիս տեղակայման հյուսիս-արևելյան մասում: Այս հողերը համայնքի վերաբնակեցման դեպքում դժվարամատչելի կդառնան, քանի որ համայնքի նոր տեղանքը և այս հողերը կհայտնվեն կիրճի հակառակ կողմում: Գյուղի տեղափոխման պարագայում նշված հողերի հասանելիությունը վերականգնելու համար անհրաժեշտ է կառուցել կամուրջ և վերականգնել ու բարելավել առկա ճանապարհը տեղափոխվող տարացքից դեպի նախատեսվող կամուրջը, որը կկապի տեղափոխվող տարածքը գյուղի հյուսիս-արևելյան մասի գյուղատնտեսական հողերին: Առկա ճանապարհը, որը ծառայում է ջրատարի վերանորոգման և շահագործման նպատակով, պետք է այնպես վերականգնվի, որպեսզի այն ծառայի գյուղատնտեսական տեխնիկա տեղափոխելու համար: Վերականգնվող ճանապարհը ունենալու է մոտ 2-3 կմ երկարություն:

213. Կամուրջը նաև կապելու է Կապս համայնքը նոր Ջրածոր և Հողմիկ համայնքների հետ, ինչպես նաև զգալիորեն կրճատելու է համայնքից գերեզմանատուն տանող ճանապարհը:

#### 8.3.4 Համայնքի այլ ենթակառուցվածքներ / հարմարություններ

214. Հանրային քննարկման ընթացքում Ջրածորի ԱԱ-ները հարցեր բարձրացրին այնպիսի ենթակառուցվածքների և հարմարությունների բացակայության վերաբերյալ, ինչպիսիք են մանկապարտեզները, խաղահրապարակները, ինչպես նաև գազաֆիկացումը: Այս բացերը հաշվի են առնվել, և նոր բնակատեղու նախագծում արտացոլվում են որպես համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներ: Նոր համայնքի նախագծի վերջնականացումից անմիջապես հետո, այն կներկայացվի և կքննարկվի ԱԱ-ների հետ: Այս համայնքը նաև կգազաֆիկացվի:

#### 8.3.5 Կադաստրային քարտեզների ուղղում

215. Բնակելի շինությունների ու կառույցների մի մասը Ջրածոր գյուղում չեն անցել Խորհրդային Միության փլուզումից հետո սեփականության գրանցման գործընթացը, և մինչ օրս այս հողերը գրանցում չունեն: ՀԶՎԳՊ-ի իրականացման ընթացքում ԱԱ-ներին աջակցություն կցուցաբերվի իրենց սեփականության (հողեր և տներ) գրանցման հարցում, իսկ հողերի, տների և շինությունների/կառույցների օրինականացման/գրանցման գործընթացից բխող ծախսերը կվճարվեն Ծրագրի բյուջեի հաշվին:
216. Ավելին, ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ գյուղի կադաստրային քարտեզում առկա են թերություններ, որի ուղղման համար ԲՍԱԳ Խորհրդատուն պատվիրել և ձեռք է բերել օդալուսանկարահանման աշխատանքներ, որի արդյունքները համադրվել են դաշտային աշխատանքների արդյունքում ստացված տվյալների հետ և կատարվել է համայնքի կադաստրային քարտեզի թարմացում:

217. Սա կենսաապահովման միջոցների վերականգնման վրա դրական ազդեցություն կունենա, քանի որ համայնքի բնակիչները ձեռք կբերեն ճշգրիտ կադաստրային քարտեզների վրա հիմնված սեփականության իրավունքի վկայականներ:

## 9. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

### 9.1 Բողոքների կարգավորման մեխանիզմների նպատակը

218. ԲԿՄ-ն սահմանում է համակարգված ընթացակարգ շահառու և ազդակիր համայնքների, այլ շահառուների և հանրության կողմից առաջ քաշված հարցումներին, արձագանքներին և բողոքներին պատասխանելու նպատակով: Ծրագրի բողոքների կարգավորման մեխանիզմները հաստատվել են ՋՏԾԻԳ-ի և «KfW» զարգացման բանկի կողմից, որոնց մանրամասներն ամփոփվում են առանձին փաստաթղթում (Բողոքների կարգավորման մեխանիզմների ուղեցույց): Ուղեցույցով նկարագրվում են այն ընթացակարգերը, որոնցով առաջնորդվելու են ԾԳՄ-ը և Կապսի ծրագրի խորհրդատուները/կապալառուները Ծրագրի շահառուների կամ ազդակիր անձանց կողմից ներկայացված բողոքներին և մտահոգություններին պատշաճ արձագանքելու համար:
219. ԲԿՄ-ով սահմանված ընթացակարգը թույլ է տալիս շահառուներին և հանրությանը իրենց մտահոգություններն ու կարծիքը տրամադրել իրականացվող ծրագրի վերաբերյալ: Այն նաև սահմանում է Ծրագրի շրջանակներում ծագած ցանկացած բողոքի կարգավորման եղանակները: ԲԿՄ-ն հնարավորություն է տալիս ցանկացած անձի բողոք ներկայացնել, առ այն, թե ինչպես են Ծրագրի աշխատանքները անդրադառնում իրենց, իրենց համայնքի կամ շրջակա միջավայրի վրա:
220. ՀԶՎԳՊ-ում նկարագրված բողոքների կարգավորման մեխանիզմները ԱԱ-ի կողմից ծախսեր չեն նախատեսում և չեն սահմանափակում նրանց իրավունքը բողոքները դատական ընթացակարգով լուծելու հնարավորությունը: Մեխանիզմները հնարավորություն են ընձեռում անկախ միջնորդությամբ այլընտրանքային եղանակով կարգավորել բողոքները՝ առանց երկար դատական գործընթացների կամ համապատասխանության ուսումնասիրությունների: Օգտվելով այս մեխանիզմներից, առանց անմիջապես դատարան դիմելու, ԲԿՄ-ները թույլ են տալիս դատական գործընթացների հետ երբևիցե չառնչված ԱԱ/ԱՏՏ-ներին արագ կարգավորել իրենց բողոքները: Այս մեխանիզմը տարբերվում է վեճերի լուծման այլ ձևերից (օրինակ, դատարան) նրանով, որ այն թույլ է տալիս օգտվել ծրագրի աշխատանքների շրջանակներում ծագած խնդիրները տեղական մակարդակում պարզեցված և փոխշահավետ միջոցներով բարեկամաբար լուծելու առավելությունից:

### 9.2 Բողոքարկման ընթացակարգը

221. Բողոքարկման մեխանիզմը ազդակիր համայնքներից և շահառուներից ստացված Ծրագրին վերաբերող բողոքների գնահատման և դրանց կարգավորման գործընթացն է: Բողոքների կարգավորման մեխանիզմների հիմնական քայլերը մշակվում են ԻԽ-ի և հաստատվել են



ՋՏԾԻԳ-ի և «KfW»-գարգացման բանկի կողմից: Այդ քայլերն են (մանրամասների համար տե՛ս Բողոքների կարգավորման մեխանիզմների ուղեցույցը).

### 9.2.1 Քայլ առաջին

222. Առաջին քայլով բողոքը կարգավորվում է Բողոքի համակարգման կետի (ԲՀԿ) մակարդակում: Բողոքարկման առաջնային պատասխանատուները նշանակվում են համայնքային և Ծրագրի մակարդակով, ինչպես նաև խորհրդատուների և ծրագրում ներգրավված այլ կազմակերպությունների մակարդակով, և պատասխանատու են բողոքի կարգավորման/լուծման համար: ԲՀԿ-երը կարգավորում են և հնարավորության դեպքում տեղում լուծում տալիս մանր բողոքներին: ԲՀԿ-ի կողմից բողոքների կարգավորման գործընթացը տևում է ոչ ավել, քան 2 շաբաթ:

223. Բողոքի համակարգման կետի պարտականությունները

- հավաքագրում են բոլոր բողոքները;
- տեղական մակարդակում համակարգում են բողոքների կարգավորման մեխանիզմը;
- դիտարկում և տեղում հնարավոր լուծում են տալիս բողոքին;
- հետևում են ընդհանուր գործընթացին, վարում են գրանցամատյաններ և մշակում հաշվետվություններ;
- տրամադրում են պատշաճ տեղեկատվություն ու բողոքի ուղղությամբ համապատասխան գործողություններ ձեռնարկում;
- բողոքի լուծման/ուսումնասիրության նպատակով ներգրավում են համապատասխան կողմերի
- ապահովում են հետադարձ կապը բողոքարկող կողմերի հետ

224. Բողոքարկման համակարգման կետի կոնտակտային տվյալներով (ներառյալ ՏԻՄ-ի և ՀՏՁՀ-ի) այցեքարտը տրամադրվելու է ԱԱ-ներին ուսումնասիրող թիմի կողմից: Այն նաև տրամադրվելու է Ծրագրի պատասխանատու այլ անձանց կողմից (խորհրդատուներ, կապալառուի ճարտարագետներ) ՀՁՎԳՊ-ի իրականացման և շինաշխատանքների փուլերի ընթացքում համայնք, ազդակիր սեփականություն այցելելիս և ԱԱ-ների հետ հաղորդակցվելիս:

225. Ծրագրի աշխատակազմը (բոլոր կողմերը) որպես համայնքի անդամների հետ շփման առօրյա աշխատանքների մաս առաջնային դերակատարում ունեն նաև բողոքների կարգավորման գործընթացում: Բողոքի համակարգողը (ԲՀ) նշանակվելու է ԾԳՄ-ի կողմից, որպես բողոքների բոլոր ընթացակարգերի համար հիմնական կոնտակտային անձ և համակարգող: ԲՀ-ն պատասխանատու է լինելու բողոքների կարգավորման քարտուղարության բոլոր

աշխատանքների համար (ԲՀ-ն կարող է լինել թե ԾԳՄ-ի աշխատակազմից, և թե նոր աշխատակից՝ ԾԳՄ-ի որոշմամբ): ԲՀ-ն ԲՀՄ-ի շրջանակներում հանդիսանում է նաև որպես համայնքի հետ կապի պատասխանատու: ՀԿ-ների և քաղհասարակության ներկայացուցիչները նույնպես կարող են ներգրավվել բողոքների կարգավորման գործընթացում՝ որպես ոչ պաշտոնական միջնորդներ:

### 9.2.2 Քայլ երկրորդ

226. Եթե բողոքը մնում է չլուծված, ԱԱ-ն կարող է բողոքի դիմումը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Բողոքների համակարգողին (Grievance Officer) անձամբ կամ ՏԻՄ-ի<sup>14</sup> միջոցով: Ծրագրի Բողոքարկման համակարգողը նշանակվել է ՋՏԾԻԳ-ի կողմից որպես բողոքարկման բոլոր ընթացակարգերը համակարգող հիմնական կոնտակտային անձ: Բողոքարկման համակարգողին ուղղված բողոքները լուծում կստանան 40 օրվա ընթացքում:
227. ԲԿՄ-ի ամենօրյա աշխատանքները կառավարելու, մեխանիզմի արդյունավետությունը վերահսկելու և անպատասխան մնացած դեպքերը գնահատելու համար մեխանիզմը նախատեսում է Բողոքների հասցեագրման քարտուղարություն (ԲՀԲ):

### 9.2.3 Քայլ երրորդ

228. Ծրագրի շրջանակներում ձևավորվելու է Բողոքները կարգավորման հանձնաժողով (ԲԿՀ) մեխանիզմի արդյունավետությունը վերահսկելու և հանձնաժողովին ներկայացված բողոքները կարգավորելու նպատակով: Քանի որ Կապսի ծրագրի իրականացման հետ կապված բոլոր հիմնախնդիրները կարող են հասցեագրվել տարբեր նախարարությունների և պետական մարմինների, ցանկալի է, որպեսզի արդեն իսկ ձևավորված նախարարական կողմիտեն նշանակվի որպես ԲԿՀ<sup>15</sup>. ԲԿՀ-ն պետք է հանդես գա նաև որպես բողոքարկման ինստիտուտ Բողոքների կարգավորման մեխանիզմի համար: ՀԿ-երի ներկայացուցիչները կներգրավվեն որպես ԲԿՀ ոչ մշտական անդամներ: Բողոքների կարգավորման մեխանիզմների ուղեցույց համաձայն՝ ԲԿՀ բողոքարկելու դեպքում, բողոքը կարգավորվում է 60 օրվա ընթացքում:
229. Չնայած բողոքների կարգավորման մեխանիզմը մշակվել է երկար դատական ընթացակարգերից խուսափելու նպատակով, այնուամենայնիվ, բողոքների կարգավորման մեխանիզմը չի սահմանափակում բողոքող կողմի իրավունքը գործը ներկայացնելու դատարան բողոքարկման գործընթացի հենց առաջին կամ ցանկացած փուլում: Ստացված բողոքների և դրանց կարգավորման վերաբերյալ

<sup>14</sup>Բոլոր ՏԻՄ-երը ունեն համակարգիչներ, էլ. հասցեներ և ինտերնետից օգտվելու հնարավորություն

<sup>15</sup> Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կարող է ծառայել որպես այլընտրանքային ԲԿՀ


հակիրճ տեղեկատվությունն ընդգրկվելու է ԾԳՄ-ին և «KfW» բանկին պարբերաբար ներկայացվող հաշվետվություններում:

**Աղյուսակ 44: ՀԶՎԳՊ մշակման ընթացքում ստացված բողոքների ամփոփում**

| N | ԱԱ                         | Բողոք  | Կարգավիճակ  |
|---|----------------------------|--|---|
| 1 | Արեգնադեմ բնակավայրի ԱԱ-եր | Արեգնադեմ բնակավայրում հանրային քննարկման ընթացքում, բնակավայրի վարչական ղեկավարն ու բնակիչները նշեցին, որ Հողօգտագործման/հանքի տարածքի «BA 3i» հատվածը զբաղեցնում է բնակավայրի գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը, ինչն անընդունելի է բնակավայրի անդամների համար: | Հողատարածքի «BA 3i» հատվածը վերաբերում է միայն 2-րդ փուլին, և դրա ազդեցությունը սույն ՀԶՎԳՊ-ով չի դիտարկվել, քանի որ ՀԶՎԳՊ-ն ներառում է միայն 1-ին փուլի ազդեցության գնահատակը: Ուստի այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել Ծրագրի 2-րդ փուլն իրականացնելիս: |
| 2 | Սահակյան Աիդան             | Սահակյան Սիրանուշի աղջիկը, բողոքում էր, որ ինքը ևս իր ծնողների ժառանգն է և բաժնեմաս ունի նրանց գույքից, հետևաբար՝ ազդակիր անձ է: Մինչ այս բողոքը, որպես ԱԱ դիտարկվում էր միայն եղբայրը՝ Սահակյան Արմենը:   | Խնդիրը քննարկվել է Վարչական ղեկավարի և համայնքի ղեկավարի հետ, արդյունքում Սահակյան Աիդան ներառվել է ազդակիրների ցանկում, որպես օրինականացման ենթակա ազդակիր անձ:  |
| 3 | Հովհաննիսյան Մամիկոն       | Հովհաննիսյան Մամիկոնը, ով հողամաս ունի միայն նոր բնակատեղիի տարածքում, պնդում է, որ ինքը գույք (տուն) ունի նաև Ջրածոր գյուղում:  | Հարցը քննարկվել է Վարչական ղեկավարի հետ և պարզվել է, որ Հովհաննիսյան Մամիկոնը տարիներ առաջ տունը վաճառել է նույն գյուղի բնակիչ Վարդանյան Տիգրանին:  |
| 4 | Հարությունյան Վաղարշակ     | Հարությունյան Վաղարշակը, ով հիմա բնակվում է ՌԴ-ում, հայտնեց որ հողամաս ունի նոր բնակատեղիի տարածքում և ասում է, որ ինքը տնակ ունի գյուղում: ԱԱ-ի հարցը՝ ինչու՞ դա գույք չի համարվում և ինչու՞ իր ընտանիքին տուն չպետք է հատկացնեն:   | Պարզվել է, որ Հարությունյան Վաղարշակը գյուղում չունի ոչ բնակելի հողամաս, ոչ էլ տնակ: Հողամասը և տունը պատկանում է իր մորը, որը մինչ օրս ապրում է գյուղում: Հարությունյան Վաղարշակը մշտապես բնակվում է ՌԴ-ում:   |

| N | ԱԱ   | Բողոք   | Կարգավիճակ                     |
|---|--|---|--------------------------------|
| 5 | Պլանավորված ՓՀԵԿ-եր (Ֆենհալ և Ախուրյան ՀԷԿ ՍՊ ընկերություններ) | 2019թ. -ի հուլիսի 12-ին պլանավորված ՓՀԵԿ-եր՝ ֆենհալ և Ախուրյան ՀԷԿ ՍՊ ընկերությունների, ներկայացուցիչները այցելեցին ՋՏԾԻԳ և հայտնեցին, որ այն հողը, որտեղ իրենք նախատեսում էին կառուցել ՓՀԷԿ ազդակիր է Ծրագրի շրջանակներում:<br>Աշխատանքները կանգնեցվել են, սակայն որոշակի ծախսեր արդեն կատարվել են: Ուստի, նրանք խնդրեցին հաշվի առնել նշված ծախսերը ՀՁՎԳՊ-ում: | Ծախսերը ներառվել են ՀՁՎԳՊ-ում: |

**Գծապատկեր 10: Բողոքների կարգավորման մեխանիզմը**



## 10. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

### 10.1 Ընդհանուր նկարագիր

230. Գնահատումն ու մշտադիտարկումը հողերի ձեռքբերման գործընթացի հիմնական բաղադրիչներն են: Դրանք ուսումնասիրում են, թե արդյոք այդ գործընթացը իր բնականոն հունով է ընթանում, և եթե ոչ ապա, ինչու՞, և ի՞նչ կարգավորումներ, փոփոխություններ և ուղղիչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել գործընթացը բարելավելու ուղղությամբ: Մշտադիտարկումը չափում է որոշակի ժամանակահատվածում Ծրագրի կողմից դեպի իր նպատակի իրագործմանը գրանցած առաջընթացը կամ հետընթացը: Մշտադիտարկումը տրամադրում է հարցերին ի պատասխան չմշակված/ելակետային տվյալներ, իսկ գնահատումը՝ կիրառում է այդ տվյալները՝ արժեք հաղորդելով դրանց: Գործնական տեսանկյունից այս բաղադրիչի նպատակն է հատկորոշել, թե արդյոք անհրաժեշտություն կա փոփոխություններ և ուղղիչ միջոցառումներ իրականացնել վերջնականապատակին հասնելու համար, հատկապես արդար փոխհատուցումների և կենսաապահովման միջոցների վերականգնման ուղղված գործողությունների տեսանկյունից:

231. Մշտադիտարկումն ու գնահատումը սովորաբար բաղկացած է երեք բաղադրիչներից.

- Առաջընթացի մշտադիտարկում
- Կատարողականի մշտադիտարկում
- Արդյունքի (ազդեցության) գնահատում

232. **Առաջընթացի մշտադիտարկումը** (input monitoring) չափում է, թե արդյոք նախատեսված գործողությունները կատարվել են ժամանակացույցի համաձայն և ՀՁՎԳՊ-ով սահմանված կարգով: Գործողությունները ընդգրկում են այն ծառայությունները, ռեսուրսները կամ ապրանքները, որոնք նպաստում են կատարողականին հասնելու, և վերջում ցանկալի արդյունքներն ապահովելու համար: Առաջընթացի մշտադիտարկումն իրականացվում է ներքին կարգով և շարունակական բնույթ է կրում, որպես ծրագրի ընդհանուր կառավարման կամ որակի ապահովման համակարգի մաս: Առաջընթացի մշտադիտարկումը կիրականացվի ՀՁՎԳՊ ԻԽ-ի կողմից (ՀՁՎԳՊ ԻԽ-ի տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է Հավելված 7-ում):

233. **Կատարողականի մշտադիտարկումը** (output monitoring) չափում է գործողությունների ուղղակի չափելի արդյունքները, օրինակ փոխհատուցում ստացած անձանց թիվը: Առաջընթացի և կատարողականի մշտադիտարկումը երկուսը միասին վերահսկում են Ծրագրի իրականացման արդյունավետությունը, և բացահայտում են այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել ծրագրի իրականացման ընթացքն ավելի

արդյունավետ դարձնելու համար: Կատարողականի մշտադիտարկումը իրականացվում է ներքին կարգով: Կատարողականի մշտադիտարկումը կիրականացվի ՀՁՎԳՊ ԻԽ-ի կողմից:

234. **Արդյունքի (ազդեցության) գնահատումը** (Impact evaluation) որոշում է, թե որքանով են առաջընթացի և կատարողականի գործողությունները հասնում կամ մոտ ծրագրի նպատակին: Արդյունքների օրինակներ են կենսաապահովման միջոցների վերջնական վերականգնումը: Արդյունքների գնահատումը կատարողականի մշտադիտարկման արդյունքների հետ միասին, բացահայտում են, թե արդյոք ծրագիրը ընթանում է իր բնականոն հունով, թե՞ անհրաժեշտ է դրանում հիմնավոր փոփոխություններ կատարել: Արդյունքի գնահատումն կիրականացվի Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի (ԱՄԽ) կողմից (Խորհրդատուի տեխնիկական առաջադրանքը ներկայացված է Հավելված 6-ում) կամ ԲՍԱԳ Խորհրդատուի կողմից՝ հնարավոր ծառայություն:

235. **Մշտադիտարկում՝ հիմնականում շինարարության փուլի ընթացքում:** Սա ԲՍԱԳ Խորհրդատուի կողմից հնարավոր ծառայություն է, որի մասին կքննարկվի շինարարության մեկնարկին: Բնապահպանական և սոցիալական կառավարման և մոնիթորինգի պլանի (ԲՍԿՄՊ) և աշխատանքային անվտանգության ու առողջության մշտադիտարկումը ներառված են Իրականացման խորհրդատուի պայմանագրում, որը մշտադիտարկելու է ինժեներա-շինարարական առաջընթացը: Բացի այդ, մշտադիտարկման անհրաժեշտություն է առաջանալու շինարարությունից առաջ և հատկապես դրա ընթացքում, շահագործման փուլում, ինչպես նաև ՀՁՎԳՊ-ի, ԿՎՊ-ի և ՇՆՊ-ի իրականացման վաղ փուլում, և դրանց մի մասը կամ բոլոր բաղադրիչները հնարավոր է ԲՍԱԳ Խորհրդատուի կողմից այլընտրանքային ծառայություններ լինեն: Անհրաժեշտ է մեկ հաշվետվությամբ գնահատել, թե արդյոք վերաբնակեցումը ավարտվել է մինչև շինաշխատանքների մեկնարկը: Ընդհանուր մշտադիտարկման ու հաշվետվողականության համակարգումն իրականացվելու է ԾԳՄ-ի կողմից:

## 10.2 Առաջընթացի և կատարողականի մշտադիտարկում/ներքին մշտադիտարկման ցուցանիշները

236. Առաջընթացի և կատարողականի մշտադիտարկումը իրականացվում է հիմնականում ներքին կարգով: ՀՁՎԳՊ-ն օգտագործելու է ստորև ներկայացված ցուցիչները հողերի ձեռքբերման, փոխհատուցման և կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների առաջընթացի և կատարողականի մշտադիտարկումն իրականացնելու համար: ՀՁՎԳՊ իրականացնող խորհրդատուն պատասխանատու է լինելու ՀՁՎԳՊ կարգավիճակի մասին պարբերաբար մշտադիտարկման հաշվետվություն մշակելու համար, ներառյալ առաջացած ցանկացած բողոքի մանրամասները, և դրա կարգավորման եղանակները: Բոլոր ներքին մշտադիտարկման հաշվետվությունները ներառվելու են Ծրագրի

մշտադիտարկման հաշվետվություններում: Կատարողականի մշտադիտարկման ցուցանիշներն են

- ԱԱ-ների հետ իրականացված տեղեկատվական քարոզարշավների և խորհրդատվությունների քանակը;
- ԱԱ-ներին ուղարկված պայմանագրերի նախագծերի քանակը;
- Վերջնական ստորագրված պայմանագրերի քանակը;
- Կատարված վճարումները
- Կադաստրի պետական կոմիտեի կողմից գրանցված հողակտորների քանակը;
- Ստացված, լուծված և առկա բողոքների քանակը;
- Բողոքի դիտարկման միջին ժամանակահատվածը (չափում է բողոքի գրանցման և վերջնական լուծում տալու ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքի գրանցման և դրա ստացման վերաբերյալ հաստատումը):

### **10.3 Արդյունքների մշտադիտարկում և գնահատում/Արտաքին մշտադիտարկման ցուցանիշներ**

237. Արդյունքի մշտադիտարկումը իրականացվելու է Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի կողմից համապատասխանության և ավարտական մշտադիտարկման և առիդիտի միջոցով: Համապատասխանության աուդիտը իրականացվելու է ՀՁՎԳՊ-ի ավարտից հետո՝ բացահայտելով՝ արդյոք փոխհատուցման ծրագիրը իրականացվել է ՎԲՇ-ի, «KfW» բանկի կիրառելի չափանիշների և սույն ՀՁՎԳՊ-ի դրույթների համաձայն:

KfW-զարգացման բանկի կողմից համապատասխանության հաշվետվության վերաբերյալ «առարկություն չկա» եզրակացությունը հիմք է հանդիսանում ջրամբարը լցնելու համար: Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի գործառույթն է հատկորոշել ՀՁՎԳՊ-ի հետ անհամապատասխանություններն ու խախտումները, ապահովել դրանց պատշաճ կատարումը՝ փաստաթղթավորելով անհամապատասխանության դեպքերը, և առաջարկներ ներկայացնել պատվիրատուին այդ դեպքերին պատշաճ արձագանքելու ուղղությամբ: Քանի որ նոր Ջրածոր գյուղի համար հնարավոր է պահանջվի հողերի ձեռքբերում, ՀՁՎԳՊ-ի համապատասխանության մշտադիտարկումը կարող է իրականացվել երկու առանձին փուլերով: Առաջին փուլում ՀՁՎԳՊ-ի իրականացման համապատասխանության դիտարկումը կներառի այն հողատարածքները, որոնք անհրաժեշտ են նոր գյուղ կառուցելու համար, որից հետո կդիտարկվի ՀՁՎԳՊ-ի իրականացման մնացած մասի համապատասխանությունը: Այս պարագայում անհրաժեշտ է ՀՁՎԳՊ-ի իրականացման համապատասխանության վերաբերյալ «KfW» բանկի «առարկություն չկա» եզրակացությունը՝ որպես նոր բնակատեղում շինարարական աշխատանքների մեկնարկի նախապայման:

238. Հիմնական ցուցանիշներն են



- ՀՁՎԳՊ-ի նպատակներին հասնելու առաջընթացը
- Փոխհատուցումների վճարման միջին ժամանակահատվածը
- Արդյոք փոխհատուցումը վճարվել է փոխարինման ամբողջական արժեքով: Արդյո՞ք փոխհատուցումը վերանայվել է հիմք ընդունելով անշարժ գույքի գների արժեքի աճը:
- Արդյո՞ք ազդակիր արնձանց ամբողջովին տրվել են սեփականության/գույքի նկատմամբ համաձայնեցված իրավունքները: Որքանո՞վ են բողոքարկման մեխանիզմները արդյունավետ իրականացվում:
- Արդյո՞ք բոլոր ԱԱ-ների մարդահամար էիրականացվել
- Որքանո՞վ է սեփականության գնահատումը կատարվել ՎԲԾ-ի և ՀՁՎԳՊ-ի դրույթների համաձայն;
- Արդյո՞ք բողոքների կարգավորումը իրականացվել է ՀՁՎԳՊ-ի համաձայն և բավարարել է ԱԱ-ի պահանջը:

239. Ավարտական/եզրափակիչ աուդիտն իրականացվելու է ՀՁՎԳՊ-ի իրականացումն ավարտելուց կամ ԱԱ-երին նոր բնակավայրում վերաբնակեցնելուց հետո՝ կախված ընտրված տարբերակից, երկու տարի անց: Իրականացումը համարվում է ավարտված «KfW» բանկի կողմից ավարտական հաշվետվության վերաբերյալ «առարկություն չկա» եզրակացության տրամադրման պահից: Ի լրումն վերոնշյալ ցուցանիշների անկախ մշտադիտարկման խորհրդատուն կիրառելու է նաև հետևյալ ցուցանիշները՝

- Փոխհատուցման օգտագործումը;
- Արդյո՞ք ԱԱ-ները բավարարված են փոխհատուցումից և ՀՁՎԳՊ-ի իրականացումից, հիմնական ենթակառուցվածքներին հասանելիությունը, կենսամակարդակի հասանելիության պոտենցիալ փոփոխություններ:

240. Արդյո՞ք եկամուտը վերականգնվել է: ԱԱ-ների զբաղվածության և եկամտի ուսումնասիրություն և ելակետային տվյալների հետ համեմատություն (ավարտական աուդիտի համար միայն):

# 11. ՀԶՎԳՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԿ ՇՐՋԱՆԱԿ

## 11.1 Ինստիտուցիոնալ շրջանակ

241. ՎԲՇ-ի, ՀՀ օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև Բանկի չափանիշների և համապատասխան պայմանագրերի դրույթների համաձայն ՀԶՎԳՊ-ի իրականացման և վերահսկման համար պատասխանատվություն են կրում մի քանի հաստատություններ՝ յուրաքանչյուրն իր հստակ գործառույթներով և պարտականություններով: Ներգրավված հաստատությունների գործառույթները ներկայացված են ստորև՝ մատրիցաներում:

## 11.2 Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ և խորհրդատուներ

242. Ստորև ներկայացված են կազմակերպություններ կամ անհատների խմբեր, որոնք ուղղակիորեն ներգրավված են Ծրագրի իրականացման գործընթացում կամ Ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերով ունեն հստակ գործառույթներ:

243. Ծրագրի ՎԲՇ, ՇԿՆՊ և սույն ՀԶՎԳՊ-ն մշակվել են ԲՍԱԳ Խորհրդատուի կողմից: Ծրագրի ընդհանուր իրականացման, մոնիթորինգի և «KfW» բանկին հաշվետվություններ ներկայացնելու համար պատասխանատու է ԾԳՄ-ը: Սակայն, ներկայումս ԾԳՄ-ը ՀԶՎԳՊ իրականացման շատ փոքր փորձ ունի, իսկ ինչ վերաբերում է ամբողջությամբ տեղահանվող բնակավայրի վերաբնակեցման գործընթացի կառավարմանը՝ փորձն ընդհանրապես բացակայում է: Հայաստանում ենթակառուցվածքների ոլորտում հողերի օտարման ամենաշատ փորձ ունեցողը «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ն է, որը նույնպես ՀԶՎԳՊ իրականացումը պատվիրակում է մասնագիտացված ընկերություններին: Ուստի՝ հաշվի առնելով ԾԳՄ-ի մոտ փորձի բացակայությունը, ինչպես նաև ՀՀ-ում նախկին փորձը, ավելի նպատակահարմար է պատվիրակել այդ գործառույթը որևէ մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությանը: Հետևաբար՝ վերաբնակեցման իրականացումը կիրականացվի ՀԶՎԳՊ Իրականացման խորհրդատուի կողմից (ՀԶՎԳՊ ԻԽ), որը կվարձվի ԾԳՄ-ի կողմից:

244. Երրորդ կողմի հողերի օտարման գործընթացի արտաքին մշտադիտարկումը «KfW» բանկի ուղեցույցի պահանջ է: Հաշվի առնելով այդ պահանջը, ՀԶՎԳՊ-ի ավարտից հետո Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի (ԱՄԽ) կողմից մշակվելու և «KfW» զարգացման բանկին է ներկայացվելու է ՀԶՎԳՊ համապատասխանության աուդիտի հաշվետվությունը, որը կբացահայտի, թե արդյոք փոխհատուցման գործընթացն իրականացվել է ՎԲՇ-ի, Կիրառելի չափանիշների, ՀԶՎԳՊ-ի պահանջներին համապատասխան և թե արդյոք բավարարված են ԱԱ/ԱՏՏ-ների պահանջները: ՀԶՎԳՊ-ի ավարտից մեկ տարի անց ԱՄԽ-ն կիրականացնի Ավարտական աուդիտ: Ծրագրի իրականացնող կազմակերպությունների և

խորհրդատուների գործառույթներն ու պարտականությունները ներկայացված են հետևյալ մատրիցայում.

**Աղյուսակ 45: Ծրագրի իրականացնող կազմակերպություններ**

| No. | Կազմակերպությունը  | Գործառույթ/պարտականություն   |
|-----|--|--|
| 1   | Ծրագրի գործադիր մարմին (ԾԳՄ)՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե, որը Ծրագիրն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) միջոցով | ԾԳՄ-ը պատասխանատու է ՀՀՎԳՊ-ի ընդհանուր իրականացման մշտադիտարկման և դրա արդյունքների՝ «KfW»-ին ներկայացման համար  |
| 2   | Փորձագետների հանձնախումբ (ՓՀ), (կազմավորվել է ԶՏԾԻԳ-ի կողմից 2016թ. հոկտեմբերին)   | ՀՏՀՀ-ի հանձնարարականով, ՓՀ գնահատելու և մշտադիտարկելու է Ծրագիրը, նախապատրաստական ուսումնասիրություններից մինչև Կապսի ջրամբարի առաջին լցման աշխատանքները: ՓՀ պարտականություններն են <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնասիրել պլանավորման փաստաթղթերը, նախագծային և շինարարական աշխատանքները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը</li> <li>• Խորհրդատվություն տրամադրել Պատվիրատուին Ծրագրի իրականացման ընթացքում ծագած ցանկացած խնդրի շուրջ՝ աջակցել միջազգային չափանիշների և ուղեցույցների պատշաճ կիրառման հարցում:</li> </ul> |
| 3   | Ջրամատակարարման գործակալություն (ԶՄԳ) և Ջրօգտագործողների ընկերություն (ԶՕԸ)  | Ծրագրի ենթակառուցվածքի շահագործման համար պատասխանատվություն են կրելու Ջրամատակարարման գործակալությունը և Շիրակ ԶՕԸ-ը   |
| 4   | Իրականացնող խորհրդատու (ՑԵՍ, ՃՇՀԱՀ-ի հետ համատեղ)  | <ul style="list-style-type: none"> <li>• Տեխնիկական նախագծի մանրամասն մշակում և համակարգում ԲՍԱԳ Խորհրդատուի հետ սերտ համագործակցությամբ</li> <li>• Բողոքների կարգավորման մեխանիզմների ուղեցույցի մշակում</li> <li>• Շինաշխատանքների ընթացքում ԲՍԳՊ իրականացման և աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման մշտադիտարկում</li> <li>• Շինարարության վերահսկողություն</li> </ul>   |
| 5   | ԲՍԱԳ Խորհրդատու/ ՀՀՎԳՊ մշակման խորհրդատու (Ֆիխտներ)  | <ul style="list-style-type: none"> <li>• ՎՔՇ-ի և ՀՀՎԳՊ-ի մշակում, ներառյալ ԶՏԾԻԳ-ի այնուհետև ՀՏՀՀ-ի աջակցությամբ բոլոր ուսումնասիրություններն ու հանրային լսումները</li> <li>• Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի մշակում (ՇԿՆՊ)</li> </ul>  |

| No. | Կազմակերպությունը  | Գործառույթ/պարտականություն   |
|-----|--|--|
|     |  | <ul style="list-style-type: none"> <li>Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվության մշակում, ներառյալ բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը (ԲՍԿՊ)</li> </ul>  |
| 6   | ՀՁՎԳՊ իրականացնող խորհրդատու (վարձվելու է ՀՏՀՀ-ի կողմից) <sup>16</sup> | <ul style="list-style-type: none"> <li>ՀՏՀՀ-ի անունից ՀՁՎԳՊ-ի իրականացում</li> <li>Պարբերաբար մշտադիտարկման հաշվետվությունների մշակում ՀՁՎԳՊ-ի կարգավիճակի մասին, ներառյալ առաջացած ցանկացած բողոքի մանրամասներն ու դրա լուծումները;</li> <li>Եթե մարդահամարից հետո խոցելի ԱԱ-ներ են հայտնաբերվում, ապա ՀՁՎԳՊ ԻԽ-ն պետք է վարձի փորձառու և հմուտ իրավաբանների ամբողջ գործընթացում մարդկանց աջակցելու համար, կամ նրանց համար հանդես գալու որպես անկախ իրավաբան բողոքներին լուծում տալու նպատակով</li> <li>Կպատրաստի վերապատրաստման նյութեր(այս ՀՁՎԳՊ-ի կենսամակարդակի վերականգնման ծրագրում նշված թեմաների հիման վրա)</li> <li>Անհրաժեշտության դեպքում, ուղղիչ գործողությունների պլանի մշակում և իրականացում, որը կլինի ՀՁՎԳՊ-ի հավելված:</li> <li>Կմշակի տեղական զբաղվածության պլանի</li> <li>Նոր գյուղի բնապահպանական և սոցիոլոգիական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) հեշվետվության մշակում ներառյալ բնապահպանական և սոցիոլոգիական կառավարման պլան (ԲՍԿՊ) (միայն Տարբերակ 2-ի համար);</li> </ul> |
| 7   | Շինարարության կապալառու (ՇԿ)   | <ul style="list-style-type: none"> <li>Պատասխանատու է լինելու ընդհանուր շինաշխատանքների համար</li> <li>Նշանակելու է բողոքարկման ընթակարգերի համար պատասխանատու աշխատակազմի ներկայացուցիչ, ով տեխնիկական աջակցություն է տրամադրելու ՇԿ-ին շինաշխատանքների ընթացքում առաջացած բողոքների լուծման հարցում</li> <li>Պատասխանատու է լինելու ԲՍԿՊ-ի իրականացման համար</li> </ul>  |
| 8   | Արտաքին մշտադիտարկման խորհրդատու (ԱՄԽ)                                 | <ul style="list-style-type: none"> <li>ՀՁՎԳՊ-ի իրականացման գնահատում</li> <li>Անհատական փոխհատուցումների վճարման և բողոքարկման մեխանիզմների շրջանակում անհատական բողոքների կարգավորման մշտադիտարկում</li> <li>ՎՔՇ-ի և ՀՁՎԳՊ-ի դրույթների խախտումների ու անհամապատասխանությունների հատկորոշում</li> </ul>   |

<sup>16</sup> Ծրագիրը կներառի հողերի նշանակալի ձեռքբերում և ԱԱ / USS-ների տեղափոխում: Հետևաբար, ԾԳՍ- ին անհրաժեշտ կլինի աջակցել ՀՁՎԳՊ- ում սահմանված փոխհատուցումների վճարման, ներառյալ բոլոր ծանուցումների, նախնական և վերջնական պայմանագրերի նախապատրաստման և ծանուցման, ԱԱ-ներին իրավաբանական խորհրդատվության տրամադրման, ԲԿՄ- ի կիրառման, բանակցությունների ձևախղման դեպքում հարկադիր օտարման գործընթացներում, ինչպես նաև ՀՀ օրենքով սահմանված այլ համապատասխան գործողությունների իրականացման համար:

| No. | Կազմակերպությունը  | Գործառույթ/պարտականություն   |
|-----|--|--|
|     |  | <ul style="list-style-type: none"> <li>ՀԶՎԳՊ համապատասխանության և Ավարտական աուդիտորական հաշվետվությունների մշակում</li> </ul>   |
| 9   | KfW- զարգացման բանկ  | <ul style="list-style-type: none"> <li>Պաշտպանիչ միջոցառումների համապատասխանության մշտադիտարկում, ծրագրի վերահսկում, ՀԶՎԳՊ/ՎՔՇ/ԲՍԱԳ-ի նախաձեռնում և դիտարկում, պայմանագրերի շնորհման և ստորագրման վերաբերյալ համաձայնության (առարկությունների բացակայության) տրաադրում/ծրագրի շինաշխատանքների նախաձեռնում</li> </ul>   |
| 10  | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | <ul style="list-style-type: none"> <li>Հայաստանի Հանրապետությունում և համայնքներում ենթակառուցվածքների զարգացման քաղաքականության մշակում ու իրականացում</li> <li>Մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակում</li> <li>Իր խնդիրների և նպատակների կենսագործման նպատակով ՀՀ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակում և դրանց իրագործելիության ապահովում</li> </ul> |

### 11.3 Շահագրգիռ կողմեր

245. Շահագրգիռ կողմերը դրանք անհատներ, անհատների խմբեր կամ կազմակերպություններ են, որոնք կարող են ազդել, կամ ադեցության ենթարկվել, կամ պարզապես որոշակի օրինական շահեր հետապնդել Ծրագրի իրականացման ընթացքում: Ծրագրի շահագրգիռ կողմերի ցանկը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով

Աղյուսակ 46: Շահագրգիռ կողմերի մատրիցա

| No.   | Շահառու  | Գործառույթը/պարտականությունը  |
|---|--|---|
| <b>Ծրագրի ազդակիր անձինք/համայնքներ/բնակավայրեր</b> |  |   |
| 1   | Ծրագրի ազդակիր անձինք (ԱԱ-ներ), Ջրածոր, Գտաշեն, Արեգնադեմ և Կապս բնակավայրերի բնակիչներ, ջրամբարի կամ հողօգտագործման/հանքի տարածքի, վերաբնակեցման տեղանքի, ճանապարհների հարակից տարածքների, օդային գծերի և աշխատանքային տարածքների | <ul style="list-style-type: none"> <li>Վերաբնակեցման իրականացման և կենսաապահովման միջոցների վերականգնման միջոցառումների շահառուներ</li> </ul> |


| No.                       | Շահառու   | Գործառույթը/պարտականությունը  |
|---------------------------|---|---|
|                           | հարակից հողօգտագործողներ/<br>սեփականատերեր,   |   |
| 2                         | Ազդակիր համայնքներ, որոնց անունից հանդես են գալիս համայնքի ղեկավարները՝ Ամասիա (գյուղեր՝ Ջրածոր, Գտաշեն, Արեգնադեմ, Բյուրակն), Սարապատ (գյուղ Հոդմիկ) և Մարմաշեն (Կապս գյուղ) համայնքներ: | <ul style="list-style-type: none"> <li>• Իրազեկվածություն Ծրագրի իրականացման ողջ ընթացքում</li> <li>• Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների որոշման ընթացքում խորհրդատվության տրամադրում</li> <li>• Վերաբնակեցման տեղանքի հատկորոշման վերաբերյալ խորհրդատվության և աջակցության տրամադրում</li> <li>• Ուղեկցել նախագծող թիմին, որպեսզի սեփական հողատարածքները ազդեցության չենթարկվեն (որտեղ հնարավոր է)/տեղեկատվություն տրամադրել սեփական, ինչպես նաև համայնքում բնակավայրային նշանակության հողակտորների վերաբերյալ</li> </ul> |
| <b>Պետական շահառուներ</b> |   |   |
| 3                         | ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն  | <ul style="list-style-type: none"> <li>• Վերահսկում է շինաշխատանքների համապատասխանությունը բնապահպանական պահանջներին</li> </ul>   |
| 4                         | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ  | <ul style="list-style-type: none"> <li>• Տրամադրում է բնակապահպանական փորձաքննության եզրակացություն</li> </ul>  |
| 5                         | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե   | <ul style="list-style-type: none"> <li>• Իրականացնում է ջրային ոլորտում պետական լիազոր մարմնի պարտականությունները</li> </ul>  |
| 6                         | ՀՀ ֆինանսների նախարարություն  | <ul style="list-style-type: none"> <li>• Մշակում և իրականացնում է հարկաբյուջետային՝ պետության եկամուտների ձևավորման և ծախսման, հանրային ֆինանսների կառավարման ոլորտներում կառավարության քաղաքականությունը:</li> </ul>   |
| 7                         | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն / Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն  | <ul style="list-style-type: none"> <li>• Աջակցություն նախագծող թիմին պատմամշակութային հուշարձանների պահպանման հետ կապված խնդիրների համար</li> </ul>   |
| 8                         | Շիրակի մարզպետարան  | <ul style="list-style-type: none"> <li>• Աջակցություն իրականացնող թիմին ազդակիր համայնքներում իրականացվող պետական ծրագրերում ներգրավված շահառուների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար</li> <li>• Ընտրված վերաբնակեցման տարածքի վերաբերյալ դիրքորոշման տրամադրում</li> </ul>  |
| 9                         | ՀՀ քաղաքաշինության կոմիտե   | <ul style="list-style-type: none"> <li>• Ընտրված վերաբնակեցման տարածքի վերաբերյալ դիրքորոշման տրամադրում, քաղաքաշինական հարցերի մասով համաձայնեցում:</li> </ul>   |

| No. | Շահառու   | Գործառույթը/պարտականությունը  |
|-----|---|---|
|     |   | <ul style="list-style-type: none"> <li>Ազդակիր համայնքներում իրականացված/իրականացվող պետական ծրագրերում ընդգրկված շահառուների վերաբերյալ աջակցություն, իրականացնող թիմին տեղեկատվության տրամադրում:</li> </ul>  |
| 10  | ՀՀ կադաստրի կոմիտե  | <ul style="list-style-type: none"> <li>Պատասխանատու է անշարժ գույքի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրման, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման համար</li> </ul>   |
| 11  | ՀՀ արդարադատության նախարարություն   | <ul style="list-style-type: none"> <li>Մշակում և իրականացնում է արդարադատության ոլորտում կառավարության քաղաքականությունը, ապահովում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարաններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանությունը:</li> </ul>  |
| 12  | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին   | <ul style="list-style-type: none"> <li>ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը Կառավարությանը ենթակա՝ վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, որն օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության և ընդերքի բնագավառներում՝ հանդես գալով ՀՀ անունից:</li> </ul> |
| 13  | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  | <ul style="list-style-type: none"> <li>Մշակում ու իրականացնում է աշխատանքի և սոցիալական ապահովության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:</li> </ul>  |
| 14  | Կապսի ջրամբարի և ենթակառուցվածքների վերականգնման ու մակերևութային և ստորերկրյա ջրերի ինտեգրված կառավարման պլանների պատրաստման և մոնիտորինգի համար ստեղծված աշխատանքային խումբ | <ul style="list-style-type: none"> <li>Կապսի ջրամբարի և ենթակառուցվածքների վերականգնման ու մակերևութային և ստորգետնյա ջրերի ինտեգրացված կառավարման պլանների մշակում և մոնիթորինգ</li> </ul>   |
| 15  | Հ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն   | <ul style="list-style-type: none"> <li>Մշակում է տնտեսական քաղաքականությունը, ապահովում դրա իրականացումը և արդյունքների գնահատումը:</li> </ul>  |
| 16  | Հ Հարտակարգիրավիճակների նախարարություն  | <ul style="list-style-type: none"> <li>Մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, որի հիմնական նպատակն է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միասնական պետական քաղաքականության մշակումը, իրականացման համակարգումը, բնակչության տարհանման և</li> </ul>          |

| No.                                    | Շահառու  | Գործառույթը/պարտականությունը   |
|--|--|--|
|  |  | պատասխարման գործընթացների պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացման աշխատանքների համակարգումը, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու համակարգումը, և այլ նպատակներ: |
| 17                                     | Պետական գույքի կառավարման կոմիտե                                     | <ul style="list-style-type: none"> <li>Պետական գույքի կառավարման կոմիտեն մշակում և իրականացնում է պետական գույքի կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:</li> </ul>                             |
| <b>Մասնավոր ընկերություններ</b>        |  |  |
| 18                                     | Գույքի անկախ գնահատողներ   | <ul style="list-style-type: none"> <li>Ազդակիր գույքը գնահատելու նպատակով վարձված որակավորված փորձագետ</li> </ul>  |
| <b>Հասարակական կազմակերպություններ</b> |  |  |
| 19                                     | ՀԿ-ներ (Սոցիալական ասոցիացիաներ, մարզային ՀԿ-ներ, Օրհուա կենտրոններ) | <ul style="list-style-type: none"> <li>ԱԱ/ԱՏՏ-ների շահերի պաշտպանություն և բնապահպանական լավագույն փորձի կիրառում, հանրային քննարկումներին մասնակցություն</li> </ul>   |
| 20                                     | Կանանց կազմակերպություններ /Կանանց մարզային խորհուրդ                 | <ul style="list-style-type: none"> <li>ՀԶՎԳՊ-ի վերաբերյալ հորհրդատվություն, կանանց կողմից գլխավորած տնային տնտեսություններին աջակցություն</li> </ul>   |
| 21                                     | Սոցիալական աշխատողներ / իրավական հարցերով փորձագետներ                | <ul style="list-style-type: none"> <li>Խոցելի տնային տնտեսությունների աջակցություն/հողի նկատմամբ օրինական իրավունք չունեցող ԱՏՏ-ներին աջակցություն օրինակացման գործընթացում</li> </ul>   |
| <b>Միջազգային կազմակերպություններ</b>  |  |  |
| 22                                     | Պատվարների համախարհային հանձնաժողով (ՊՀՀ)                            | <ul style="list-style-type: none"> <li>Պատվարների համաշխարհային հանձնաժողովը (ՊՀՀ) սահմանել է ամբարտակների կառուցման համապարփակ ուղեցույցներ: Այս ծրագրի համար հաշվի են առնվում նաև ՊՀՀ փորձագետի առաջարկությունները:</li> </ul>         |



Գծապատկեր 11: Ներգրավված հաստատությունների կառուցվածքի դիագրամ



#### 11.4 ՀՁՎԳՊ կարողությունների զարգացում

246. Հողերի ձեռք բերման և վերաբնակեցման գործողությունների պլանի (ՀՁՎԳՊ) իրականացման վերահսկումն ու համակարգումն ապահովվելու է ՀՏՀՀ-ի կողմից: Հաշվի առնելով իրականացվելիք վերաբնակեցման մեծ ծավալները, ինչպես նաև հնարավոր նոր ամբողջական գյուղի կառուցման հանգամանքը, անհրաժեշտ է Կապսի թիմի տեխնիկական և մարդկային ռեսուրսների համալրում՝ նոր լրացուցիչ հաստիքներով և կարողությունների զարգացմամբ:

247. ՀՁՎԳՊ ԻԽ-ն պետք է ապահովի ՀՁՎԳՊ-ի գոհացուցիչ և սահուն իրականացումը, ինչպես նաև իրականացնի դասընթացներ և կարողությունների զարգացում՝ ԾԳՄ-ին աջակցելու համար՝ իր վերահսկող գործառույթը կատարելու և ՀՁՎԳՊ իրականացման գործընթացը վերահսկելու համար: Հիմք ընդունելով ԾԳՄ-ի ներկայիս փորձը և ՀՁՎԳՊ արդյունավետ իրականացման համար ակնկալվող պահանջները, կմշակվի վերապատրաստման ծրագիր ԾԳՄ-ի աշխատակիցների կարողությունների հետագա զարգացման համար:

248. ՀՁՎԳՊ գործընթացի մեջ ներգրավված ԾԳՄ-ի բոլոր շահագրգիռ աշխատակիցները կանցնեն մեկ շաբաթ տևողությամբ կողմնորոշման և վերապատրաստման դասընթաց Կիրառելի չափորոշիչների և կառավարման հմտությունների վերաբերյալ: Դասընթացները կներառեն հետևյալ թեմաները՝ (i) հող ձեռք բերելու սկզբունքներն ու ընթացակարգերը: (ii) Հասարակական քննարկումներ և մասնակցություն: (iii) Իրավասության շրջանակ, փոխհատուցման և աջակցության տրամադրման մեխանիզմները: (iv) Բողոքների կարգավորում: և (v) վերաբնակեցման գործողությունների մոնիտորինգ:

## 12. ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՅՈՒՋԵ

### 12.1 Նախապատմություն

249. ՀՀ ՎԳՊ-ի բյուջեն ներառում է փոխհատուցման գնահատված ծախսերը, վերականգնման օժանդակությունները և ՀՀ ՎԳՊ - ի իրականացման հետ կապված օժանդակ ծախսերը: Օժանդակ ծախսերը, որոնք ներառում են վարչական ծախսերը, վերաբնակեցման ընդհանուր բյուջեի մաս են կազմում: Չնախատեսված ծախսերը (ընդհանուր արժեքի 5% -ը) նույնպես նկատի են առնվել՝ այս գնահատումից շեղումները հաշվի առնելու նպատակով:
250. Սույն գլխում ներկայացված ԱԱ տարբեր կատեգորիաների փոխհատուցման իրավունքը սահմանվել է համաձայն ՎՔՇ-ում ընդունված սկզբունքների: Փոխհատուցման չափը որոշվել է որակավորված անկախ գնահատողի կողմից, օգտագործելով Հավելված 5-ում նկարագրված մեթոդաբանությունը: Գնահատման մեթոդաբանությունը հիմնված է ՀՀ անշարժ գույքի գնահատման գործունեության մասին ՀՀ օրենքի, անշարժ գույքի գնահատման ստանդարտի և ՎՔՇ-ի վրա:
251. Ինչպես նկարագրված է սույն ՀՀ ՎԳՊ- ի 4-րդ բաժնում, ծրագրի ազդեցությունը կախված է վերջին հաշվով իրականացվելիք փոխհատուցման տարբերակից: Այն դեպքում, եթե Ջրածոր գյուղը տեղափոխվի նոր վերաբնակեցման վայր (Տարբերակ 2), ծրագրի ընդհանուր ազդեցությունը կմեծանա, քանի որ կարիք կլինի ծրագրի կողմից ձեռք բերել լրացուցիչ տարածք (տեղափոխման վայրի հողեր): Հետևաբար, իրականացվել են բյուջեի հաշվարկ երկու տարբերակի համար՝ առաջին տարբերակ՝ դրամական փոխհատուցում, և երկրորդ տարբերակ՝ գյուղի վերաբնակեցում վերաբնակեցման վայրում: ՀՀ ՎԳՊ-ում դիտարկվել է երկու ծայրահեղ տարբերակ ծայրահեղ բյուջեները ներկայացնելու նպատակով:
252. Ծրագրի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքները, ներառյալ ցանկացած հանրային ենթակառուցվածքի, օրինակ՝ էլեկտրահաղորդման օդային գծի, տեղաշարժը, ֆինանսավորվելու է «KfW» բանկի վարկային միջոցների հաշվին: Սույն ՀՀ ՎԳՊ-ում ներկայացված վերաբնակեցման հետ կապված բոլոր մնացած ծախսերը, ներառյալ նոր Ջրածոր գյուղի հնարավոր կառուցումը ֆինանսավորվելու է ՀՀ պետական բյուջեի հաշվին<sup>17</sup>: Ֆինանսական բեռը թեթևացնելու նպատակով, պետբյուջեից միջոցների հատկացումը կարող է բաշխվել մի քանի տարիների միջև: Ավելին, հնարավոր է, որ «KfW» բանկի կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերից հատկացումները օգտագործվեն Նոր Ջրածոր գյուղում կոմունալ ենթակառուցվածքների զարգացման համար (խմելու ջուր, կոյուղի և այլն): Ֆինանսական միջոցների հոսքի վերաբերյալ այս և այլ հարցերը կքննարկվեն և

<sup>17</sup> Համաձայն ՀՀ Կառավարության 26.12.2019 թ. թիվ 1919-Ն որոշման, Խորհրդատուի կողմից հաշվարկված վերաբնակեցման ծախսերի մի մասը ընդգրկված է 2020թ. -ի ՀՀ պետական բյուջեում: Նախատեսվում է, որ վերաբնակեցման ծախսերի մյուս մասը կհատկացվի 2021-2022թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում:

դրանց շուրջ պայմանավորվածություններ ձեռք կբերվեն ՀՀ Կառավարության և «KfW» բանկի միջև:

## 12.2 Տարբերակ մեկ՝ միայն դրամական փոխհատուցում

### 12.2.1 Հողի դիմաց փոխհատուցում

253. Մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի կորստի փոխհատուցումը հաշվարկվում է շուկայական կամ կադաստրային (որը ավելի բարձր է) արժեքին գումարելով 15%: Վարձակալված հողերի փոխհատուցումը հաշվարկվել է Վ.ԲՇ-ին համապատասխան:

254. Մասնավոր հողերի դիմաց ընդհանուր փոխհատուցումը կազմում է **95,496,044.81 ՀՀ դրամ**: Հողի դիմաց փոխհատուցումը ներկայացված է ստորև աղյուսակում, ըստ հողերի կատեգորիաների:

Աղյուսակ 47: Մասնավոր գրանցված կամ առանց գրանցման հողամասերի փոխհատուցման արժեքը

| Հ/հ              | Հողի նպատակային նշանակությունը | Ազդակիր հող |                   | Միավորի արժեքը          | Ընդհանուր արժեքը     | Ազդակիր հողամասի ընդհանուր արժեքը + 15% |
|------------------|--------------------------------|-------------|-------------------|-------------------------|----------------------|---|
|                  |                                | հատ         | մ <sup>2</sup>    | ՀՀ դրամ/ մ <sup>2</sup> | ՀՀ դրամ              | ՀՀ դրամ                                 |
| <b>Ջրածոր</b>    |                                |             |                   |                         |                      |   |
| 1                | Բնակավայրերի                   | 162         | 114,702.67        | 222                     | 25,463,992.36        | 29,283,591.22                           |
| 2                | Գյուղատնտեսական                | 98          | 357,981.40        | 109                     | 39,019,972.60        | 44,872,968.49                           |
| 3                | Էներգետիկ                      | 3           | 3,000.00          | 2320                    | 6,960,000.00         | 8,004,000.00                            |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>263</b>  | <b>475,684.07</b> | <b>-</b>                | <b>71,443,964.96</b> | <b>82,160,559.71</b>                    |
| <b>Արեգնադեմ</b> |                                |             |                   |                         |                      |   |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                       | -                    | -                                       |
| 2                | Գյուղատնտեսական                | 1           | 12,526.00         | 109                     | 1,365,334.00         | 1,570,134.10                            |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>1</b>    | <b>12,526.00</b>  | <b>109</b>              | <b>1,365,334.00</b>  | <b>1,570,134.10</b>                     |
| <b>Գտաշեն</b>    |                                |             |                   |                         |                      |   |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                       | -                    | -                                       |
| 2                | Գյուղատնտեսական                | 4           | 91,260.00         | 109                     | 9,947,340.00         | 11,439,441.00                           |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>4</b>    | <b>91,260.00</b>  | <b>109</b>              | <b>9,947,340.00</b>  | <b>11,439,441.00</b>                    |
| <b>Կապս</b>      |                                |             |                   |                         |                      |   |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                       | -                    | -                                       |
| 2                | Գյուղատնտեսական                | 1           | 2,600.00          | 109                     | 283,400.00           | 325,910.00                              |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>1</b>    | <b>2,600.00</b>   | <b>109</b>              | <b>283,400.00</b>    | <b>325,910.00</b>                       |
|                  | <b>Ընդամենը</b>                | <b>269</b>  | <b>582,070.07</b> | <b>-</b>                | <b>83,040,038.96</b> | <b>95,496,044.81</b>                    |

255. Ծրագիրն ազդեցություն կունենա 22 գրանցված և առաց պետական գրանցման համայնքային հողամասերի վրա, որոնց փոխհատուցման գումարը, փոխհատուցվելու դեպքում, կկազմի

**55,985,648.89 ՀՀ դրամ:** Համայնքային հողերը, փոխհատուցելու դեպքում, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կօտարվեն հողամասի կադաստրային գնին հավասար գնով: Համայնքային հողերը կարող են նաև համայնքի կողմից նվիրաբերվել Ծրագրին՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի: Համայնքային հողատարածքների միավորի փոխհատուցման արժեքը հողամասի մեկ քառակուսի մետրի կադաստրային արժեքն է՝ հողի յուրաքանչյուր կատեգորիայի համար: Պետական հողամասերի համար փոխհատուցում չի հաշվարկվել:

**Աղյուսակ 48: Համայնքային գրանցված կամ պետական գրանցում չունեցող հողամասերի փոխհատուցման արժեքը**

| Հ/հ              | Հողի նպատակային նշանակությունը | Ազդակիր հող |                   | Միավորի արժեքը         | Ընդհանուր արժեքը     |
|------------------|--------------------------------|-------------|-------------------|------------------------|----------------------|
|                  |                                | հատ         | մ <sup>2</sup>    | ՀՀ դրամ/մ <sup>2</sup> | ՀՀ դրամ              |
| <b>Զբաժող</b>    |                                |             |                   |                        |                      |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                      | -                    |
| 2                | Գյուղատնտեսական                | 6.00        | 63,223.00         | 109                    | 6,891,307.00         |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>6</b>    | <b>63,223.00</b>  | -                      | <b>6,891,307.00</b>  |
| <b>Արեգնադեմ</b> |                                |             |                   |                        |                      |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                      | -                    |
| 2                | Գյուղատնտեսական                | 12.00       | 214,458.00        | 109                    | 23,375,922.00        |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>12</b>   | <b>214,458.00</b> | -                      | <b>23,375,922.00</b> |
| <b>Գտաշեն</b>    |                                |             |                   |                        |                      |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                      | -                    |
| 2                | Գյուղատնտեսական                | -           | -                 | -                      | -                    |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | -           | -                 | -                      | -                    |
| <b>Կապս</b>      |                                |             |                   |                        |                      |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                      | -                    |
| 2                | Գյուղատնտեսական                | -           | -                 | -                      | -                    |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | -           | -                 | -                      | -                    |
| <b>Բյուրակն</b>  |                                |             |                   |                        |                      |
| 1                | Բնակավայրերի                   | -           | -                 | -                      | -                    |
| 2                | Գյուղատնտեսական                | 4           | 235,948.81        | 109                    | 25,718,419.89        |
|                  | <b>Միջանկյալ ընդհանուրը</b>    | <b>4</b>    | <b>235,948.81</b> | -                      | <b>25,718,419.89</b> |
|                  | <b>Ընդամենը</b>                | <b>22</b>   | <b>513,629.81</b> | -                      | <b>55,985,648.89</b> |

256. Ծրագրի կողմից ազդեցության կենթարկվեն չորս վարձակալված համայնքային հողամասեր, որոնցից երկուսը նաև ենթավարձակալված են: Վարձակալված բոլոր հողերը գյուղատնտեսական են: Հողամասերից երկուսն ունեն 15 տարվա մնացած վարձակալության ժամկետ, իսկ մյուս երկուսը՝ 11 տարվա մնացած վարձակալության ժամկետ: Ենթավարձակալության պայմանագրերից մեկի մնացած ժամկետը 11 տարի է, իսկ մյուսինը 15 տարի: Սույն ՀԶՎԳՊ իմաստով ենթավարձակալները հավասարեցվում են վարձակալներին և ենթակա են փոխհատուցման նույն կարգով, այդ պատճառով ստորև հաշվարկված փոխհատուցումը վերաբերում է 6 գույքի, այլ ոչ թե 4: Հետևաբար, ՀԶՎԳՊ-

ի համաձայն, վարձակալության և ենթավարձակալության դիմաց ընդհանուր փոխհատուցումը կկազմի **1,619,772 ՀՀ դրամ**:

**Աղյուսակ 49: Հողի վարձակալության և ենթավարձակալության փոխհատուցման արժեքը**

| Հ/հ | Հողի նպատակային նշանակությունը | Ազդեցության ենթակա հող | Ազդեցության ենթակա մակերես | Միավորի արժեքը          | Ընդհանուր արժեքը  | Ընդհանուր հողի փոխհատուցում + 15% | Վարձակալության մնացած տարիները | Կիրառվող % (5,14, 20 կամ 25%) | Ընդամենը փոխհատուցում |
|-----|--------------------------------|------------------------|----------------------------|-------------------------|-------------------|-----------------------------------|--------------------------------|-------------------------------|-----------------------|
|     |                                | հատ                    | մ <sup>2</sup>             | ՀՀ դրամ/ մ <sup>2</sup> | ՀՀ դրամ           | ՀՀ դրամ                           | Տարիներ                        | %                             | ՀՀ դրամ               |
| 1   | Գյուղատնտեսական                | 4                      | 87,300                     | 109                     | 9,155,700         | 10,943,055                        | 15                             | 14                            | 1,532,027.7           |
| 1   | Գյուղատնտեսական                | 2                      | 14,000                     | 109                     | 1,526,000         | 1754900                           | 11                             | 5                             | 87,754                |
|     | <b>Ընդամենը</b>                | <b>6</b>               | <b>101,300</b>             | <b>-</b>                | <b>11,041,700</b> | <b>12,697,955</b>                 | <b>-</b>                       | <b>-</b>                      | <b>1,619,772.7</b>    |

### 12.2.2 Շինությունների փոխհատուցում

307. ՀԶՎԳՊ ԻԽ պատասխանատու կլինի ՈւԳԾ մշակման համար՝ որպես ՀԶՎԳՊ հավելված, ինչպես նաև ՈւԳԾ իրականացման համար համաձայն Հավելված 7-ում ներկայացված Տեխնիկական առաջադրանքի:

# 15. ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ՝ ԿԱՊՍ ՊԱՏՆԵՇԻ ԵՎ ԶՐԱՄԲԱՐԻ ՔԱՐՏԵՁ՝ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱԿԱՐԴԱԿ (ՓՈՒԼ 1)



## 16. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՈՒ՝ ԾՐԱԳՐԻ ԱՋԴԱԿԻՐ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՔԱՐՏԵՁ







# 17. ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ), Ախուրյան գետ, Փուլ 1

Հանրային լսումն անցկացվել է.

| N | Օր                 | Վայր                                 | Ժամ   | Հանդիպման մասնակիցների թիվը |
|---|--------------------|--------------------------------------|-------|-----------------------------|
| 1 | Դեկտեմբեր 06, 2018 | Ջրաձոր, միջնակարգ դպրոց, Շիրակի մարզ | 12:00 | 50 և ավելի                  |

### 1. Օրակարգ

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգ, փուլեր (չափագրում, գույքագրում, մարդահամար և գնահատում) և ժամկետները;
- Փոխհատուցման ենթակա իրավունքներ;
- Բողոքների համակարգման մեխանիզմ;
- Հարց ու պատասխան:

Բանախոս՝ Արսեն Հայրիյան, Հողօգտագործման պլանավորող / վերաբնակեցման փորձագետ

### 2. Ամփոփ նկարագիր

2018 թ. դեկտեմբերի 6-ին ԲՍԱԳ-ի խորհրդատուի կողմից նախնական ուսումնասիրության համար կազմակերպվել է հանրային լսում ԱԱ-ի հետ: Հանդիպումից մեկ շաբաթ առաջ ազդեցության ենթակա անձիք համայնքի ղեկավարի միջոցով տեղեկացվել են տեղի և ժամի մասին: Համապատասխան հայտարարությունը էլեկտրոնային փոստով ուղարկվել է տեղական իշխանությանը և հանրային հանդիպումից երկու շաբաթ առաջ փակցվել ազդակիր համայնքի հայտարարությունների տախտակին:

Բանախոսները ներկայացրել են ծրագրի նպատակները, շահառուներին, իրականացման ընթացակարգը, Հողօգտագործման և վերաբնակեցման գործողությունների պլանի նախապատրաստման ընթացքը, բողոքների համակարգման մեխանիզմի ընթացակարգը և ԱԱ-ին խնդրել ծրագրի հետ կապված լրացուցիչ հարցեր տալ: Հանդիպման հիմնական նպատակն էր ԱԱ-ին տեղեկացնել ուսումնասիրության մասին (չափագրում, գույքագրում, մարդահամար և սոցիալ-տնտեսական գնահատում) և հայտնել, որ փոխհատուցման տարբերակները քննարկվելու են հետագա հանդիպումներում՝ հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա:

Հանրային հանդիպման ընթացքում բարձրացվել են հետևյալ հարցերը.

### 3. Բարձրացված հարցեր և պատասխաններ՝

| N | Հարց, առաջարկ  | Պատասխան   |
|---|--|--|
| 1 | Մեր տանը կա երեք տնային տնտեսություն (SS), բոլորս ցանկանում ենք առանձնանալ և ապրել առանձին: Ինչպե՞ս ենք մենք փոխհատուցվելու: | Ծրագրի այս փուլում դեռ չկա որոշված փոխհատուցման տարբերակ: Այս փուլում կարող ենք նշել, որ դիտարկվելու է փոխհատուցման 2 տարբերակ՝ գումարային փոխհատուցման և ազդակիր գույքի նմանատիպ գույքով փոխարինման տարբերակները: |



| N | Հարց, առաջարկ  | Պատասխան  |
|---|--|---|
| 2 | Մենք ցանկանում ենք, որ գյուղը տեղափոխվի և նոր տեղը լինի հնից ոչ վատ:   | Ծրագրի սկզբունքներից մեկը սահմանում է, որ ազդակիր անձանց կարգավիճակը չպետք է վատանա և, առնվազն, պետք է վերականգնվի մինչև ծրագրի մեկնարկի կարգավիճակը կամ ավելի բարելավվի: |
| 3 | Լինելու՞ է նաև գումարային փոխհատուցում   | Այդ տարբերակը դիտարկվելու է: Վերջնական տարբերակը/ները կներկայացվեն Հողերի ձեռք բերման և վերաբնակեցման գործողությունների պլանի մեջ (ՀՁՎԳՊ):                                |
| 4 | Մենք՝ համայնքի բնակիչներս, ցանկանում ենք մեկ վայր տեղափոխվել:  | Շնորհակալություն, որ հայտնեցիք այդ մասին: Մեզ համար կարևոր է ձեր կարծիքը:   |
| 5 | Ոչ ոք չի ցանկանա կորցնել գյուղի բնակչությունը՝ որ բոլորը տեղափոխվեն այլ վայր:  | Մենք դա հաշվի կառնենք փոխհատուցման տարբերակներ առաջարկելիս:   |
| 6 | Բնակավայրերի հողերն առնելուց հետո ի՞նչ է արվելու: Առաջարկում ենք, որ այդ հողերը փոխվեն գյուղատնտեսական նշանակության և հանձնվեն բնակիչներին:  | Բնակավայրի տարածքը գյուղի լիկվիդացիայից հետո կարող է օգտագործվել որպես արոտավայր:   |
| 7 | Մեզ թույլ տալու՞ էք օգտագործել շինանյութը, տունը քանդելուց հետո:   | Ազդակիր անձը հնարավորություն կունենա վերցնել իրեն պետքական ապամոնտաժված նյութերը:   |
| 8 | Գյուղն ունի անօթևանի կարգավիճակ՝ 4-րդ կարգի վթարային է: Առկա է համապատասխան տեղեկանք սեյսմիկ կայանից: Այդ տեղեկանքը կարող ենք տրամադրել ձեզ: | Գյուղապետը խոստացավ տրամադրել այդ տեղեկանքը:  |

**Հավելվածներ՝**

**Հավելված 1՝ մասնակիցների ցանկը;**

**Հավելված 2՝ նկարներ հանրային լսումից:**

**Հավելված 1՝ մասնակիցների ցանկը, դեկտեմբերի 06, 2018, ժամը 12:00, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Զրաձոր գյուղի միջնակարգ դպրոց**

| #  | Անուն, ազգանուն/Name Surname | Կարգավիճակ/Status     | Ստորագրություն/Signature |
|----|------------------------------|-----------------------|--------------------------|
| 1  | Արմա Չարսրյան                | ԳՐԱԴԱՐ ԵՐԿՐ           | [Signature]              |
| 2  | Արմ Խաչատրյան                | ԷԺ ԵՐԿՐ ԹԵՎԻՆՆԵՐ ԵՐԿՐ | [Signature]              |
| 3  | Գրգորյան Կարսրյան            | ԷԺ ԵՐԿՐ ԹԵՎԻՆՆԵՐ ԵՐԿՐ | [Signature]              |
| 4  | Չարսրյան Գրգորյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 5  | Չարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 6  | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 7  | Արսրյան Կարսրյան             | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 8  | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 9  | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 10 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 11 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 12 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 13 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 14 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 15 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 16 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 17 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 18 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 19 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |
| 20 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ          | [Signature]              |

| #  | Անուն, ազգանուն/Name Surname | Կարգավիճակ/Status | Ստորագրություն/Signature |
|----|------------------------------|-------------------|--------------------------|
| 21 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 22 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 23 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 24 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 25 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 26 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 27 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 28 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 29 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 30 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 31 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |
| 32 | Կարսրյան Կարսրյան            | ԿԱՆԿԱՐԴ ԵՐԿՐ      | [Signature]              |



Հավելված 2՝ նկարներ Ջրածորի հանրային լսումից:





**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ**

**Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախտորյան գետ, Փուլ 1**

Հանրային լսումն անցկացվել է.

| N | Օր                 | Վայր                                  | Ժամ   |
|---|--------------------|---------------------------------------|-------|
| 2 | Դեկտեմբեր 14, 2018 | Արեգնադեմ, գյուղապետարան, Շիրակի մարզ | 12:00 |

**4. Օրակարգ**

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն՝ վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգ, փուլեր (չափագրում, գույքագրում, մարդահամար և գնահատում) և ժամկետները;
- Փոխհատուցման ենթակա իրավունքներ;
- Բողոքների համակարգման մեխանիզմ;
- Հարց ու պատասխան

Բանախոս՝ Արսեն Հայրիյան, Հողօգտագործման պլանավորող / վերաբնակեցման փորձագետ

**5. Ամփոփ նկարագիր**

2018 թ. դեկտեմբերի 14-ին ԲՍԱԳ-ի խորհրդատուի կողմից կազմակերպվել է հանրային հանդիպում Արեգնադեմ և Գտաշեն գյուղերում բնակվող ազգակիր անձանց հետ: Հանդիպումից մեկ շաբաթ առաջ ԱԱ-երը համայնքի ղեկավարների միջոցով տեղեկացվել են տեղի և ժամի մասին:

Բանախոսները ներկայացրել են ծրագրի նպատակները, շահառուներին, իրականացման ընթացակարգը, Հողօգտագործման և վերաբնակեցման գործողությունների պլանի նախապատրաստման ընթացքը, բողոքների համակարգման մեխանիզմի ընթացակարգը և ԱԱ-ին խնդրել ծրագրի հետ կապված լրացուցիչ հարցեր տալ: Հանդիպման հիմնական նպատակն էր ԱԱ-ին տեղեկացնել ուսումնասիրության մասին (չափագրում, գույքագրում, մարդահամար և սոցիալ-տնտեսական գնահատում) և հայտնել, որ փոխհատուցման տարբերակները քննարկվելու են հետագա հանդիպումներում՝ հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա:

Հանրային հանդիպման ընթացքում բարձրացվել են հետևյալ հարցերը.

**6. Բարձրացված հարցեր և պատասխաններ՝**

| N | Հարց, առաջարկ  | Պատասխան   |
|---|--|--|
| 1 | Գույքագրումից հետո հաջորդ քայլը ո՞րն է:  | Գույքագրումից հետո մշակվելու է հաշվետվություն, որտեղ մանրամասն կներկայացվեն փոխհատուցման տարբերակները: Այնուհետև կազմակերպվելու է հանրային քննարկում՝ առարկայական հարցերի շուրջ:     |
| 2 | Եթե արոտավայրը համայնքի սեփականությունն է, փոխհատուցումը համայնքի՞ն է տրվում:  | Եթե արոտավայրը համայնքին է պատկանում, այլ ոչ թե ֆիզիկական անձի, ապա հողամասը կարող է ձեռք բերվել կամ նվիրաբերվել ավագանու և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներին համապատասխան: |
| 3 | Արեգնադեմի բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, իսկ արոտավայրը մեծ կարևորություն ունի. եկամտի իմաստով նույնն է, ինչ վարելահողը: Ինչու՞ համայնքին | Եթե արոտավայրը համայնքին է պատկանում, այլ ոչ թե ֆիզիկական անձի, ապա հողամասը կարող է ձեռք բերվել կամ նվիրաբերվել ավագանու և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներին համապատասխան: |

| N | Հարց, առաջարկ  | Պատասխան   |
|---|--|--|
|   | պատկանող արոտավայրերի համար փոխհատուցում չի տրվելու:   |  |
| 4 | Արեգնադեն գյուղը չի օգտվելու ջրամբարից, որովհետև մեր վարելահողերը դրանից վերև են գտնվում, իսկ ջրամբարն այդ մասի ոռոգման համար նախատեսված չէ: | Բացի ջրածածկ հողերից, մյուս հողերը վերականգնվելու են և կիրառվելու են նախկին նշանակությամբ:                           |
| 5 | Գտաշենի ազդակիր տարածքը փոքր է, կարող եք որոշ փոփոխություններ անել նախնական նախագծում և գործ ունենալ ընդամենը 3 ՏՏ-ի հետ:                    | Շնորհակալություն: Կուսումնասիրենք նաև այդ տարբերակը:   |
| 6 | Դեպի գյուղ տանող ճանապարհը վերակառուցվելու է:  | Ըստ նախագծի՝ գյուղ տանող ճանապարհը, կրճատվելու է, քանի որ այն գնալու է պատնեշի վրայով, և, իհարկե, վերակառուցվելու է: |

**Հավելվածներ՝**



**Հավելված 1՝ մասնակիցների ցանկը;**

**Հավելված 2՝ նկարներ հանրային լսումից:**

**Հավելված 1՝ մասնակիցների ցանկը, դեկտեմբերի 14 2018, ժամը 12:00, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արեգնադեն գյուղի միջնակարգ դպրոց**

| #  | Անուն, ազգանուն/Name Surname | Կարգավիճակ/Status      | Ստորագրություն/Signature |
|----|------------------------------|------------------------|--------------------------|
| 1  | Պավել Հարությունյան          | F.ichter, Resettlement | Պ. Հարությունյան         |
| 2  | Անուշահ Մարգարյան            | ԳՊՈՏԻՐՔ այդ կարգի      | Անուշահ Մարգարյան        |
| 3  | Շիրվան Ավետիսյան             | Շիրվան Ավետիսյան       | Շիրվան Ավետիսյան         |
| 4  | Steffen Schülein             | Fichtner               | Steffen Schülein         |
| 5  | Կարգավիճակ                   | Կարգավիճակ             | Կ. Հարությունյան         |
| 6  | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 7  | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 8  | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 9  | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 10 | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 11 | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 12 | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 13 | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
| 14 | Կարգավիճակ                   | Կ. Հարությունյան       | Կ. Հարությունյան         |
|    |                              |                        |                          |
|    |                              |                        |                          |
|    |                              |                        |                          |
|    |                              |                        |                          |

## Հավելված 2՝ նկարներ Արեգնադեմում հանրային լսումից





## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

### Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ) / Ախտորյան գետ, Փուլ 1

Հանրային լսումն անցկացվել է.

| N | Օր             | Վայր                                 | Ժամ   |
|---|----------------|--------------------------------------|-------|
| 3 | Մարտի 20, 2019 | Ջրածոր, միջնակարգ դպրոց, Շիրակի մարզ | 12:00 |

#### 7. Օրակարգ

- Ծրագրի նպատակները, շահառուները, իրականացման ընթացակարգը և այլ տեղեկատվություն:
- Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացման ընթացակարգը, փուլերը և ժամկետները:
- Փոխհատուցման ենթակա իրավունքները:
- Բողոքների համակարգման մեխանիզմը:
- Հարց ու պատասխան:

Բանախոս՝ Արսեն Հայրիյան, Հողօգտագործման պլանավորող / վերաբնակեցման փորձագետ

#### 8. Ամփոփ նկարագիր

Հանրային քննարկման հիմնական նպատակը եղել է ազդակիր անձանց հետադարձ կապի ստանալը Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի վերաբերյալ, որը ԾԳՄ-ի կողմից ուղարկվել է համայնք հանրային քննարկումից մեկ ամիս առաջ: Հանրային քննարկումից առաջ մեկ այլ ներքին քննարկում է իրականացվել համայնքի ազգաբնակչության հետ և այդ քննարկման հիման վրա համայնքը պատասխանել է, որ ՎԲԾ-ի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունեն:

Բանախոսները ներկայացրել են ծրագրի նպատակները, շահառուներին, իրականացման ընթացակարգը, վերաբնակեցման քաղաքականության շրջանակը, փոխհատուցման շրջանակը, և ԱԱ-ին խնդրել ծրագրի հետ կապված լրացուցիչ հարցեր տալ: Հանդիպմանը քննարկվել են նաև գյուղի զարգացման, ենթակառուցվածքների հետ կապված հարցերը:

Հանրային հանդիպման ընթացքում բարձրացվել են հետևյալ հարցերը.

#### 9. Բարձրացված հարցեր և պատասխաններ՝

| N | Հարց, առաջարկ                                | Պատասխան  |
|---|--|---|
| 1 | Կարո՞ղ ենք իմանալ փոխհատուցման գումարի չափը: | Այսօրվա քննարկման առկան փոխհատուցման մեթոդաբանությունն է: Այս փուլում դեռ գումարի հաշվարկ չկա: Գումարի չափը կքննարկենք այն ժամանակ, երբ կառավարությունը կհաստատի ՀՁՎԳՊ հաշվետվությունը: |

| N | Հարց, առաջարկ   | Պատասխան  |
|---|---|---|
|   |   | Հաջորդ հանրային լսման ժամանակ ձեզ կներկայացնենք փոխհատուցման չափը:  |
| 2 | Եթե այս տարածաշրջանի համար է հաշվարկվում շուկայական գինը, միանշանակ այդ գումարը կտարբերվի Գյումրիի և Երևանի գներից: Դա շատ փոքր գումար է լինելու:<br>Եվ հետո գյուղում կան այլ ենթակառուցվածքներ, դրանք ի՞նչ են լինելու:   | Շուկայական գնով չի հաշվարկվելու, այլ՝ վերակառուցման գնով, որը կարող է ձեզ մոտ ավելի բարձր լինել, քան Գյումրիում: Ենթակառուցվածքները նույնպես պետք է փոխարինվեն:   |
| 3 | <b>Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Մելոյան Սարգիս</b><br>Մենք գիտենք, որ, եթե գյուղը վերակառուցվի, 72 տուն պետք է կառուցվի: Մեզ կարո՞ղ եք ներկայացնել ցուցակը, թե ովքեր են ընդգրկված:   | Այս գյուղում ոչ մեկի հողամասը և տունը գրանցված չեն, այսինքն՝ սեփականատեր չկա: Գույքերը պետք է գրանցվեն, և մենք առաջարկելու ենք կառավարությանը, որ գրանցման հարցում աջակցություն ցուցաբերի:<br>Գրանցումից հետո ով կդառնա սեփականատեր, ինքն էլ օրենքով սահմանված կարգով կստանա փոխհատուցում այն ամենի դիմաց, ինչը կկորցնի: Բայց կան նաև 31 ընտանիք, որոնք ընդգրկված են անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրում: Կարևոր է, որ նրանք չտուժեն, այսինքն՝ նրանց համար կատարվելու է ավելի բարդ հաշվարկ. հաշվարկվելու է այն փոխհատուցումը, որն ինքը կստանար այդ ծրագրի շրջանակներում, և որը նախատեսվում է ՎՔՇ-ով: Այդ երկու տարբերակներից ԱԱ-ին կառաջարկվի առավել շահավետ տարբերակը: |
| 4 | <b>Հարությունյան Արա՝ ավագանու անդամ</b><br>Այս գործընթացի հետ է կապված նաև մարդկանց գրանցումը, որովհետև գյուղի տները չունեն հասցեներ: Կան նաև ժառանգության հետ կապված հարցեր, որ ունեն, օրինակ, երկու եղբայրները: Ինչպիսիք են, որ առաջարկի մեջ անպայման ներառեք: | Մենք ներառել ենք. պետությանը առաջարկվում է աջակցել մարդկանց գրանցման գործընթացում: Մենք նախատեսել ենք ու առաջարկելու ենք պետությանը՝ մարդկանց աջակցություն ցուցաբերել և հոգալ գրացման հետ կապված ծախսերը: Ժառանգության ճանաչելը նույնպես մտնում դրա մեջ:  |
| 5 | <b>Մարտիրոսյան Հուսիկ՝ բնակիչ</b><br>Այսինքն՝ պե՞տք է ժառանգություն ճանաչվի, սեփականության վկայական տան, նոր որոշվի՞ ինչ փոխհատուցում պետք է տան:   | Մենք առաջարկում ենք, որ բոլոր գույքերի պարտադիր գրանցում արվի, որպեսզի վիճելի հարցեր չլինեն, որպեսզի իմանանք, թե ում ենք փոխհատուցում: Փոխհատուցումը տրվելու է սեփականատիրոջը: Իսկ ո՞նց իմանանք՝ ով է սեփականատերը. օրենքով սահմանված գործընթացը մարդը պետք է անցնի: Բնակիչները, որոնք սեփականատեր չեն կստանան վերաբնակեցման օժանդակություն, որոնք նախատեսված են Ծրագրով:   |
| 6 | Բնակիչներ կան, որ տուն են ուզում, ոչ թե գումար:   | Նման տերբերակ նախատեսվում է ՎՔՇ-ով:   |

| N  | Հարց, առաջարկ  | Պատասխան |
|--|--|----------|
| <b>Կազմակերպիչները ԱԱ-երից նաև հարցրեցին վերջիններիս կարծիքը համայնքի կենսամակարդակը բարելավելու հնարավոր միջոցառումների վերաբերյալ:</b> |  |          |
| 7  | Մեր գյուղում միայն անասնապահությունն է զարգացած, որովհետև ոռոգման խնդիր կա: Գյուղացին կարող է կարտոֆիլ և տարբեր մշակաբույսեր մշակել, եթե ոռոգման ջուր լինի: Ժամանակին գյուղն ունեցել է ոռոգվող հողատարածքներ, բայց երկրաշարժից հետո այդ ցանցը քայքայվել է: Այս գյուղում բոլորն աշխատող են, ցանկացած պահին կարող են հեկտարներով հող մշակել: |          |
| 8  | Այսօր գազաֆիկացման խնդիր կա գյուղում: Եթե հնարավոր լինի ներդրումների միջոցով արևային էներգիա ապահովել, շատ լավ կլինի: Ջեռուցման միակ աղբյուրն այսօր աթարն է, որը կարող էին օգտագործել՝ որպես պարարտանյութ:   |          |
| 9  | Այսօր այս տարածաշրջանում էկոլոգիապես ամենամաքուր միս և կաթն է արտադրվում, որի իսկական գինը պետք է 10 անգամ թանկ լիներ: Ես ինչքան գիտեմ՝ լիցենզիա է հարկավոր դրա համար, իսկ գյուղացին դրա հնարավորությունը չունի: Բայց եթե պետական մոտեցում լինի, այս էկոլոգիապես մաքուր ապրանքը գին կունենա:   |          |
| 10   | Մանկապարտեզի, մշակույթի տան, գյուղապետարանի, բուժկետի կարիք կա գյուղում:   |          |
| 11   | Գյուղում բացակայում են խաղահրապարակները: Ցանկալի է, որ նոր գյուղում բոլոր ենթակառուցվածքները լինեն:  |          |
| 12   | Պետք է անպայման կամուրջ կառուցվի, որ մարդիկ վերաբնակեցման վայրից կարողանան գերեզմանոց գնալ:  |          |


**Հավելվածներ՝**

**Հավելված 1՝ մասնակիցների ցանկը;**

**Հավելված 2՝ նկարներ հանրային լսումից:**



## Հավելված 2. Նկարներ հանրային լսումից Ջրածորում



# 18. ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՄ՝ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարցաթերթ N \_\_\_\_\_

Հարգելի պարոն/տիկին,

«Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ԶՌՀԿ)/Ախտորյան գետ, Փուլ 1, Կապսի ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում», ԶՌՀԿ/Ախտորյան գետ, Փուլ 1 ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը գնահատելու և ազդակիր տնային տնտեսությունների վերականգնման ռազմավարություն մշակելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել հետազոտություն, որի շրջանակներում խնդրում ենք պատասխանել Ձեր տնային տնտեսությանը վերաբերող մի քանի հարցերի և ազատ արտահայտել Ձեր կարծիքն ու դիրքորոշումը ծրագրի վերաբերյալ: Տվյալները կօգտագործվեն ընդհանրացված տեսքով՝ հետազոտության վիճակագրական վերլուծության համար:

Կանխավ շնորհակալություն համագործակցության համար:

|  |   |
|--|---|
| Ազդեցության ենթակա հողակտորի ԼՈՏ-կոդ         |   |
| Նույնականացման համարը տվյալների բազայում     |   |
| Ազդեցության ենթակա գույքի հասցեն             |   |
| Սեփականատիրոջ ազգանուն անուն հայրանուն       |   |
| Հեռախոսահամարներ /1.ՏՏ գլխավորի, 2.հարցվողի/ | 1.<br>2.  |
| Փաստացի բնակության վայրը                     | 1. Ջրածոր<br>2. Արեգնադեն<br>3. Գտաշեն<br>4. Այլ գյուղ/քաղաք/նշել/ _____<br>5. Այլ երկիր /նշել/ _____ |

|                          |  |
|--------------------------|--|
| Հարցազրուցավարի կոդ      |  |
| Հարցազրույցի ամսաթիվ     |  |
| Հարցազրույցի սկիզբ/ավարտ |  |



**Բլոկ1. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

| No  | <b>1.ՏՏ անդամի անունը</b><br><br><u>Հարցազրուցվա՛ր լրացնել ՏՏ քույր անդամների անունները՝ սկսած գլխավորից</u><br><br><u>Հարցազրուցվա՛ր՝ նշել հարցվողին՝ օղակելով հերթական համարը</u> | <b>2. Կապը ՏՏ գլխավորի հետ</b><br><br>1. Գլխավոր<br>2. Ամուսին/կին<br>3. Դուստր/որդի<br>4. Հայր/մայր<br>5. Քույր/եղբայր<br>6. Պապիկ/տատիկ<br>7. Փեսա/հարս<br>8. Թոռ<br>9. Սկեսուր/սկեսրայր<br>10. Զոքանչ/աներ<br>11. Այլ | <b>3.Սեռը</b><br><br>1. Արական<br>2. Իգական | <b>4. Ծննդյան ամսաթիվը</b><br><br>(Օր/ամիս/տարի) | <b>5.Ազգություները</b><br><br>1. Հայ<br>2. Ռուս<br>3. Եզդի<br>4. Այլ /նշել/ | <b>6. Կրթական մակարդակը</b><br><br>1. Չունի տարրական կրթություն<br>2. Տարրական<br>3. Թերի միջնակարգ<br>4. Միջնակարգ<br>5. Միջին մասնագիտական<br>6. Թերի բարձրագույն/ուսանող/<br>7. Բարձրագույն<br>8. Հետբուհական<br><br><b><u>97.Կիրառելի չէ մինչև 16 տարեկան</u></b> | <b>7.Ամուսնական կարգավիճակը</b><br><br>1. Չամուսնացած<br>2. Ամուսնացած<br>3. Ամուսնալուծված<br>4. Այրի<br><br><b><u>97.Կիրառելի չէ մինչև 18 տարեկան</u></b> |
|-----|---|--|---|--|---|---|---|
| 1.  |   |  |   |  |   |   |   |
| 2.  |   |  |   |  |   |   |   |
| 3.  |   |  |   |  |   |   |   |
| 4.  |   |  |   |  |   |   |   |
| 5.  |   |  |   |  |   |   |   |
| 6.  |   |  |   |  |   |   |   |
| 7.  |   |  |   |  |   |   |   |
| 8.  |   |  |   |  |   |   |   |
| 9.  |   |  |   |  |   |   |   |
| 10. |   |  |   |  |   |   |   |
| 11. |   |  |   |  |   |   |   |
| 12. |   |  |   |  |   |   |   |
| 13. |   |  |   |  |   |   |   |

| No | 8.Զբաղվածության կարգավիճակը  |             | 9.Աշխատանքի բնույթը   |             | 10.Ամսական միջին եկամտի չափը   |             | 11.Սոցիալական խումբը  |
|----|--|-------------|---|-------------|--|-------------|---|
|    | Հիմնական   | Երկրորդային | Հիմնական  | Երկրորդային | Հիմնական   | Երկրորդային |   |
|    | 1. Պետական ոլորտում աշխատող<br>2. Մասնավոր ոլորտում աշխատող<br>3. Ինքնազբաղված գյուղացիական տնտեսությունում<br>4. Ինքնազբաղված այլ ոլորտում / <u>նշել ոլորտը</u> /<br>5. Ձեռնարկատեր / <u>նշել ոլորտը</u> /<br>6. Արտագնա աշխատող<br>7. Կենսաթոշակառու ➡ 10-րդ հարց<br>8. Չի աշխատում և աշխատանք է փնտրում ➡ 11-րդ հարց<br>9. Չի աշխատում և աշխատանք չի փնտրում ➡ 11-րդ հարց<br>10. Ուսանող ➡ 11-րդ հարց<br>11. Հեռակա ուսանող ➡ 11-րդ հարց<br>12. Աշակերտ ➡ 11-րդ հարց<br>13. Պարտադիր զինծառայող ➡ 11-րդ հարց<br>14. Անաշխատունակ ➡ 11-րդ հարց<br><b><u>97. Կիրառելի չէ 16-ից գածը անդամների համար</u></b> |             | 1. Մշտական<br>2. Սեզոնային<br>3. Ժամանակավոր<br>4. Ժամանակ առ ժամանակ |             | <b><i>Հարցազրուցավար՝</i></b><br><br><i>Գյուղատնտեսությունից ստացված եկամուտը հարցնել SS-ի համար ընդհանուր (12-րդ հարց)՝ ամսական կամ տարեկան կտրվածքով</i> |             | 1. Հաշմանդ. 1-ին աստիճան<br>2. Հաշմանդ. 2-րդ աստիճան<br>3. Հաշմանդ. 3-րդ աստիճան<br>4. Բնածին հաշմանդամ<br>5. Ծնողազուրկ երեխա<br>6. Միայնակ ծնող<br>7. Միայնակ թոշակառու<br><br>97. Նշվածներից ոչ մեկը |
| 1. |  |             |   |             |  |             |   |
| 2. |  |             |   |             |  |             |   |
| 3. |  |             |   |             |  |             |   |
| 4. |  |             |   |             |  |             |   |
| 5. |  |             |   |             |  |             |   |
| 6. |  |             |   |             |  |             |   |
| 7. |  |             |   |             |  |             |   |



12. Խնդրում եմ նշել 2018թ. Ձեր/Ձեր SS-ի ստացած եկամուտը՝ հետևյալ աղբյուրներից

| SS եկամտի այլ աղբյուրներ  | ՀՀ դրամ |         |
|---|---------|---------|
|   | Ամսական | Տարեկան |
| 1. Եկամուտ անասնապահությունից (վաճառք, սեփական սպառում)                                     |         |         |
| 2. Եկամուտ հողագործությունից (վաճառք, սեփական սպառում)                                      |         |         |
| 3. Գույքի (տուն, հող, ավտոմեքենա) վարձակալությունից եկամուտ                                 |         |         |
| 4. Ընտանեկան նպաստ <b><u>/խնդրե՞ք և Ձեզ հետ վերցրե՞ք համապատասխան փաստաթղթի պատճեն/</u></b> |         | X       |
| 5. Այլ նպաստ/թոշակ  |         |         |
| 6. Երեխայի ծննդյան նպաստ  |         |         |
| 7. Միանվագ նպաստ, օգնություն  |         |         |
| 8. Դրամական օգնություն Հայաստանից   |         |         |
| 9. Դրամական օգնություն արտերկրից  |         |         |
| 10. Այլ /նշել աղբյուրը/   |         |         |

13. SS խոցելիության աստիճանը **/տվյալները սրուզում, ամբողջացնում և լրացնում է համակարգողը՝ ըստ հավելված 1-ի: Եթե պարզանում է խոցելի խմբերից մեկից ավելին, ապա բոլորը նշել/**

| Խմբեր | I     |      | II    |      | III   |      | IV    |      |
|-------|-------|------|-------|------|-------|------|-------|------|
|       | 1.Այո | 2.Ոչ | 1.Այո | 2.Ոչ | 1.Այո | 2.Ոչ | 1.Այո | 2.Ոչ |
|       |       |      |       |      |       |      |       |      |

Բլոկ 2. Սոցիալ-տնտեսական կարգավիճակ

14. Խնդրում եմ գնահատել Ձեր տան/շրջակայքի վիճակը 1-5 բալանոց սանդղակով (1-ը նշանակում է շատ անբարվոք/շատ վատ, իսկ 5-ը՝ լիովին բարվոք/շատ լավ)

| Նկարագրություն                      | Շատ անբարվոք/շատ վատ | Անբարվոք/վատ | Միջին | Բարվոք/լավ | Լիովին բարվոք/շատ լավ |
|-------------------------------------|----------------------|--------------|-------|------------|-----------------------|
| 1. Բնակելի տան տարածքը              | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 2. Տան լուսավորությունը             | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 3. Ջեռուցումը                       | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 4. Տանիքի վիճակը                    | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 5. Պատերի, հատակի վիճակը            | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 6. Խոնավության մակարդակը            | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 7. Լուսամուտների/շրջանակների վիճակը | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |
| 8. Շենքի ընդհանուր վիճակը           | 1                    | 2            | 3     | 4          | 5                     |

|                                 |   |   |   |   |   |
|---------------------------------|---|---|---|---|---|
| 9. Գյուղամիջյան փողոցների որակը | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 10. Աղբահանության հարցը         | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 11. Անվտանգությունը տարածքում   | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 12. Այլ/նշել/ _____             | 1 | 2 | 3 | 4 | 5 |

| 15. Առկա՞ են հետևյալ կոմունալ պայմանները Ձեր տան ներսում | Այո | Ոչ | 16.Նշե՛ք, խնդրե՛մ, ինչո՞վ եք ջեռուցում Ձեր տունը<br><i>Հարցազրուցավա՛ր, նշել հնարավոր բոլոր տարբերակները՝ ըստ ստացնահերթության</i><br>97.Կիրառելի չէ |
|--|-----|----|--|
| 1. Խմելու ջուր   | 1   | 2  | 1. Էլեկտրականություն   |
| 2. Տաք ջուր  | 1   | 2  | 2. Գազ   |
| 3. Բաղնիք  | 1   | 2  | 3. Փայտ  |
| 4. Զուգարան  | 1   | 2  | 4. Գոմաղբ  |

**17.Ցանկության դեպքում ի վիճակի՞ եք Դուք կամ Ձեր SS անդամները**

| Կենսապայմաններ  | Այո | Ոչ |
|---|-----|----|
| 1. Ապահովել տան բավարար ջեռուցումը                        | 1   | 2  |
| 2. Փոխել մաշված կահույքը                                  | 1   | 2  |
| 3. Իրականացնել տան ներքին/արտաքին հարդարում               | 1   | 2  |
| 4. Տարեկան կտրվածքով վճարել մեկ շաբաթյա հանգստի համար     | 1   | 2  |
| 5. Գնել հավ/միս/ծուկ առնվազն երկու օրը մեկ                | 1   | 2  |
| 6. Հյուրընկալել ընկերներին/բարեկամներին առնվազն ամիսը մեկ | 1   | 2  |

**18.Սեփականության հետևյալ տեսակներից որո՞նք ունի Ձեր SS-ն/Դուք**

| Սեփականության տեսակները  | Այո | Ոչ | 18.1.Եթե այո, քանի հատ/շինություն | 18.2.Ընդամենը քանի՞ քմ/հեկտար |
|--|-----|----|-----------------------------------|-------------------------------|
| 1. Սեփական տուն/առանձնատուն  | 1   | 2  |                                   | քմ                            |
| 2. Բնակարան  | 1   | 2  |                                   | քմ                            |
| 3. Առևտրային/արտադրական տարածք                                       | 1   | 2  |                                   | քմ                            |
| 4. Գյուղատնտեսական նշանակության շինություն (անասնազոմ, մարագ և այլն) | 1   | 2  |                                   | քմ                            |
| 5. Ավտոմեքենա  | 1   | 2  |                                   | X                             |
| 6. Գյուղատնտեսական տեխնիկա   | 1   | 2  |                                   | X                             |

|   |   |   |                 |    |
|---|---|---|-----------------|----|
| 7. Տնամերձ հողատարածք                                 | 1 | 2 |                 | քմ |
| 8. Գյուղատնտեսական նշանակության հող/խոտհարք           | 1 | 2 |                 | հա |
| 9. Այգի   | 1 | 2 |                 | քմ |
| <b>Հետևյալ իրերից որո՞նք կան Ձեր տանը և քանի՞ հատ</b> |   |   | <b>Քանի հատ</b> |    |
| 10. Հեռուստացույց                                     | X |   |                 | X  |
| 11. Ավտոմատ լվացքի մեքենա                             | X |   |                 | X  |
| 12. Սառնարան  | X |   |                 | X  |
| 13. Բջջային հեռախոս                                   | X |   |                 | X  |
| 14. Համակարգիչ  | X |   |                 | X  |
| 15. Օդորակիչ  | X |   |                 | X  |
| 16. Այլ /նշել/  | X |   |                 | X  |

**19.Նշված ընտանի կենդանիներից որո՞նք ունի Ձեր SS-ն/Դուք**

| Ընտանի կենդանիների ցանկ | Ունի | Չունի | 19.1.Եթե ունեն, քանի հատ |
|-------------------------|------|-------|--------------------------|
| 1. Կով                  | 1    | 2     |                          |
| 2. Հորթ                 | 1    | 2     |                          |
| 3. Ոչխար                | 1    | 2     |                          |
| 4. Այծ                  | 1    | 2     |                          |
| 5. Ընտանի թռչուն        | 1    | 2     |                          |
| 6. Խոզ                  | 1    | 2     |                          |
| 7. Էջ                   | 1    | 2     |                          |
| 8. Ձի                   | 1    | 2     |                          |
| 9. Մեղու /փեթակ/        | 1    | 2     |                          |
| 10. Նապաստակ            | 1    | 2     |                          |
| 11. Այլ /նշել/          | 1    | 2     |                          |

**20.Խնդրում եմ նշել Ձեր SS-ի միջին ամսական ծախսերը**

| Ծախս                                | Ամսական միջին ծախսերը /<< դրամ/ |
|-------------------------------------|---------------------------------|
| 1. Սնունդ                           |                                 |
| 2. Անձնական տրանսպորտ /գազ, բենզին/ |                                 |
| 3. Հանրային տրանսպորտ               |                                 |

|   |         |         |
|---|---------|---------|
| 4. Հագուստ  |         |         |
| 5. Առողջություն (դեղեր, ծառայություններ)  |         |         |
| 6. Կրթություն (ուսման վարձ, գրենական պիտույքներ)  |         |         |
| 7. Բջջային հեռախոսի ծառայություններ   |         |         |
| 8. Ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ   |         |         |
| 9. Էլեկտրականություն  |         |         |
| 10. Գազ   |         |         |
| 11. Իմեյլու ջուր  |         |         |
| 12. Միջոցառումներ (ծնունդ, կնունք, թաղում և այլն)<br><b><u>Նշել կա՛մ ամսական, կա՛մ տարեկան (2018թ.) կտրվածքով</u></b> | Ամսական | Տարեկան |
| 13. Գույքահարկ (տան, հողի, ավտոմեքենայի հարկ)   |         |         |
| 14. Տեխնիկայի ձեռքբերում (հեռախոս, համակարգիչ և այլն)   |         |         |
| 15. Վարկի/ապառիկի մարում  |         |         |
| 16. Գյուղատնտեսական ծախսեր (ոռոգման ջուր, գյուղտեխնիկա, պարարտանյութ, սերմեր և այլն)                                  |         |         |
| 17. Այլ ընթացիկ ծախսեր  |         |         |
| <b>Ընդամենը</b>   |         |         |

**21.Ներկայումս ունե՞ք որևէ վարկ կամ պարտք**

|                   | 21.1.Գումարի չափը | 21.2.Արժույթը                    | 21.3.Աղբյուրը  |
|-------------------|-------------------|----------------------------------|--|
|                   |                   | 1. Դրամ<br>2. Դոլար<br>3. Ռուբլի | 1. Բանկային/վարկային կազմակերպություն<br>2. Մասնավոր անձ |
| 1.Այո             |                   |                                  |  |
| Ընդհանուր գումարը |                   | << դրամ                          | X  |
| 1. Ոչ             |                   |                                  |  |

**22.Ասացե՛ք, խնդրե՛մ, Ձեր SS-ում կանայք ինչքանո՞վ են մասնակցում հետևյալ հարցերում որոշումների կայացման գործընթացին**

***Հարցազրուցավար՝ չհարցնել, եթե SS-ն բաղկացած է միայն կանանցից կամ միայն տղամարդկանցից***

| Հարցեր   | Ընդհանրապես չեն մասնակցում | Ավելի շուտ չեն մասնակցում | Ավելի շուտ մասնակցում են | Լիարժեք մասնակցում են |
|--|----------------------------|---------------------------|--------------------------|-----------------------|
| 1. Ֆինանսական ներդրումների հետ կապված հարցեր /վարկեր, պարտքեր,խնայողություններ և այլն/ | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 2. Երեխաների կրթության հետ կապված հարցեր   | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 3. Երեխաների առողջության հետ կապված հարցեր   | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 4. Ակտիվների ձեռք բերում՝ հող, մեքենա, կահույք, ոսկի և այլն                            | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 5. Ակտիվների վաճառք՝ հող, մեքենա, կահույք, ոսկի և այլն                                 | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 6. Բնակության վայրի ընտրություն  | 1                          | 2                         | 3                        | 4                     |
| 7. Կենցաղային հարցեր, նաև ամենօրյա գնումներ /սնունդ, հագուստ և այլն/                   | 1                          | 2                         | 3                        | 4                     |

**Բլոկ 3. ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**23.Ասացե՛ք, խնդրե՛մ, ի՞նչ դրական սպասելիքներ ունեք ծրագրից**

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_
4. \_\_\_\_\_
5. \_\_\_\_\_

97. Չունի 98. Դժվ. պատ.

**24.Ի՞նչ մտահոգություններ ունեք ծրագրի հետ կապված**

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_
4. \_\_\_\_\_
5. \_\_\_\_\_

97. Չունի 98. Դժվ. պատ.

**25.Ծրագրի իրականացման դեպքում ինչպիսի՞ փոխհատուցում կգերադասեք ստանալ**

| 1.Տնամերձ հողի և կից շինության դեպքում /Ջրածոր/             | 2.Հողի դեպքում /Ջրածոր, Արեգնադեմ, Գտաշեն/         |
|---|--|
| 1. Վերակառուցել գյուղը /հարցնել՝ որտե՞ղ, Հ26/               | 1. Ստանալ նույն կատեգորիայի հող                    |
| 2. Ստանալ դրամական փոխհատուցում օտարվող շինության/տան դիմաց | 2. Ստանալ դրամական փոխհատուցում օտարվող հողի դիմաց |
| 3. Այլ /նշել/ _____   | 3. Այլ/նշել/ _____                                 |
| 98. Դժվ. պատ.   | 98. Դժվ. պատ.                                      |

**26.Ասացե՛ք, խնդրե՛մ, որտե՞ղ կգերադասեք վերակառուցել գյուղը**

1. Ռեստորանին հարակից տարածքում (տե՛ս քարտեզը)
2. ....
3. Այլ վայրում (նշե՛լ քարտեզի վրա)

**27. Տեղյակ եք արդյո՞ք ծրագրի շրջանակներում Ձեր կողմից հնարավոր առաջարկների և բողոքների ներկայացման առկա կարգին**

1. Այո                      2. Ոչ

**28.Ի՞նչ առաջարկներ և լրացումներ ունեք**

1. \_\_\_\_\_
2. \_\_\_\_\_
3. \_\_\_\_\_

97. Չունի    98. Դժվ. պատ.

Շնորհակալություն

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

### ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿԻ

Սոցիալապես խոցելի տնային տնտեսություններն են.

- I. Տնային տնտեսությունները, որոնք ներառում են Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում գրանցված ընտանիքներ և ստանում են համապատասխան նպաստներ;
- II. Կանանց կողմից գլխավորած տնային տնտեսություններ, որտեղ չկան աշխատունակ տարիքի չափահաս անձինք, բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացինոր հիմունքներով;
- III. Տարեց (տարիքային կենսաթոշակառուներ) անձանց կողմից գլխավորած տնային տնտեսություններում, որտեղ աշխատանքային տարիքի այլ անձինք չկան, բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացինոր հիմունքներով;
- IV. Առաջին և երկրորդ հաշմանդամության կարգ ունեցող անձանց կողմից գլխավորած տնային տնտեսությունները, որտեղ աշխատանքային տարիքի այլ անձինք չկան, բացառությամբ տարեցների (տարիքային կենսաթոշակառուներ), ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայության մեջ գտվող, և առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 23 տարեկան ուսանողների, ովքեր կրթական հաստատություններում սովորում են ստացինոր հիմունքներով:

## 19. ՀԱՎԵԼՎԱԾ ՀԻՆԳ՝ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ

##### Գործընթացը կարգավորող փաստաթղթեր

Փոխհատուցումների հաշվարկի և միավորի գնի հաշվարկի մեթոդաբանությունը մշակվել է՝ ըստ հետևյալ փաստաթղթերի.

- (i) Բանկի չափանիշներ՝ ծրագրի համար մշակված և ՎՔՇ-ում ներկայացված փոխհատուցման մատրիցային համապատասխան;
- (ii) 2005թ-ի հոկտեմբերի 1-ին ընդունված «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-189-Ն);
- (iii) «Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի գնահատման ստանդարտը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում թիվ. 955-Ն առ 08.06.2006թ;
- (iv) ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008թ-ի «ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուն հաստատելու մասին» թիվ 09-Ն հրաման;
- (v) Գործող շուկայի պայմաններում նմանատիպ շենքեր և շինություններ կառուցելու կապալի պայմանագրեր (արժեքի որոշման համար):

##### Գնահատման Շրջանակ

Ծրագրի շրջանակներում գնահատվում են՝

- Ազդակիր ակտիվները՝ հողեր, շենքեր, շինություններ և բարելավումներ, որոնք առկա են ազդակիր հողամասի օտարվող և ընդհանուր հատվածի վրա;
- Ծառեր, թփեր, մշակաբույսեր, որոնք առկա են ազդակիր հողամասի օտարվող և ընդհանուր հատվածի վրա:

#### ՀՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

##### Ընդհանուր մոտեցում

ՎՔՇ-ի համաձայն, ազդեցության ենթակա հողի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեն հողամասի սեփականատերերը, վարձակալները, հողօգտագործողները, որոնց գույքի նկատմամբ համապատասխան իրավունքներն ենթակա են պետական գրանցման, ինչպես նաև անօրինական հողօգտագործողները: Յուրաքանչյուր խմբի համար սահմանվել է փոխհատուցման հաշվարկի հատուկ մոտեցում: Ընդհանրացված տեսքով այն ներկայացված է ստորև՝



**Աղյուսակ 1՝ Հողերի փոխհատուցում**

| Ազդեցության կատեգորիա | ԾԱԱ կատեգորիա               | Փոխհատուցում   |
|-----------------------|-----------------------------|--|
| Հողամաս               | Օրինական սեփականատերեր      | (ըստ ԱԱ-ի հայացողության) ԱՏՏ-ի համար ընդունելի կորցրած հողատարածքին համարժեք/հավասար արտադրողականության փոխարինող հողատարածք կամ դրամական փոխհատուցում՝ փոխարինման արժեքով, որը հավասար է շուկայական կամ կադաստրային (երկուսից առավել բարձրը) արժեքին գումարած 15% օժանդակություն: |
|                       | Օրինականացման ենթակա ԾԱԱ-եր | Կօրինականացվեն և դրանից հետո դրանց կորուստները պետք է փոխհատուցվեն այնպես, ինչպես սեփականատերին: Օրինականացման ենթակա հողերի գրանցման հետ կապված ծախսերը/վճարները պետք է վճարվեն Ծրագրի բյուջեի հաշվին:  |

**Հողի փոխարինման արժեքի գնահատում**

Հողի գնահատումն իրականացվում է փոխարինման արժեքով՝ հիմք ընդունելով շուկայական սակագները: Շուկայական սակագները գնահատվում են համեմատական մեթոդի միջոցով, ինչպես սահմանվում է ՀՀ կառավարության սահմանված կարգով: Սույն մեթոդի հիման վրա որոշվում է հողի արժեքը՝ հաշվի առնելով միևնույն տեղակայություն և նույն կիրառման նպատակ/հատկանիշներ ունեցող վերջերս վաճառված առնվազն երեք համեմատման ենթակա հողամասերի վաճառքի ճշգրտված միջին արժեքը: Եթե գնահատվող հողամասի նույն վայրում ընդունելի համեմատիչներ առկա չեն, մեկ կամ ավելի համեմատման ենթակա հողամասեր են ընտրվում այլ վայրերից:

Գնահատվող հողամասի և համեմատման ենթակա հողամասի հատկանիշների/որակի միջև փոքր տարբերություններն արտացոլելու նպատակով համեմատման ենթակա հողամասերի միջին շուկայական վաճառքի գները ճշգրտվում են՝ ըստ մի քանի համեմատության պարամետրերի և համապատասխան գործակիցների:

**Գնահատման ընթացակարգը**

Հողի գնահատման համեմատական մեթոդը կիրառվում է հետևյալ կերպով.

- i) Համանման անշարժ գույքի շուկաները վերլուծվում են:
- ii) Առնվազն երեք համեմատության միավորներ են սահմանվում:
- iii) Տարբերակվում են համեմատության անհրաժեշտ տարրերը:
- iv) Համեմատության միավորների արժեքը ճշգրտվում է՝ ըստ համեմատության տարրերի և համեմատվող անշարժ գույքի համար միջինացված մի քանի փոփոխված գնային ցուցանիշների:

v)Ստացված շուկայական արժեքը համեմատվում է կադաստրային արժեքի հետ:

vi)Որոշվում է հողի գինը:

### **Քայլ 1**

Համանման անշարժ գույքի համար շուկայական իրավիճակը վերլուծելու և վերլուծության համար արժանահավատ տեղեկատվություն ընտրելու նպատակով՝ գնահատողը օգտվում է հրապարակային աղբյուրներից (մասնագիտական ամսագրեր, կայքեր, արտաքին գովազդներ), անհատական տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ ԿԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից ձեռքբերված տեղեկատվությունից: Ստացված տեղեկատվության հիման վրա Գնահատողը օգտագործում է ամենահամադրելի/ համապատասխան տեղեկատվությունը (իր համեմատության տարրերով):

### **Քայլ 2**

Սկզբունքորեն համեմատիչ արժեքների աղբյուր են հանդիսանում կատարված վաճառքների արձանագրությունները՝ ստացված ՀՀ ԿԿ Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն ՊՈԱԿ-ից: Եթե որոշակի հողամասի համար արձանագրությունները չեն ներառել օգտագործելի համեմատիչներ, ապա համեմատիչների ձևավորման նպատակով օգտագործվում են ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված շուկայական գների ցանկը կամ հողամասի վաճառքի առաջարկները (լրատվական թերթերում ու կայքերում): Յուրաքանչյուր գնահատված հողամաս համեմատվում է առնվազն (3) երեք համեմատման ենթակա հողամասերի հետ:

### **Քայլ 3**

Համեմատման հողամասերի իդենտիֆիկացումից հետո մի քանի այլ լրացուցիչ պարամետրեր նույնպես հաշվի են առնվում՝ գնահատված հողամասերի և համեմատման հողամասերի հարաբերական որակի/հատկությունների համեմատության նպատակով: Գնային ճշգրտումների պարամետրերը և գործակիցները թվարկված են ստորև՝

### **Վաճառքի պայման և շուկայի վիճակ**

Սրանք շուկայական գնի փոփոխություններն են, որ տեղի են ունեցել համեմատվող հողամասերի շուկայական վաճառքների և գնահատման ժամանակահատվածի միջև: Գնահատողը նաև հաշվի է առնում գույքի՝ տարաժամկետ վճարման պայմանով գնվելու հանգամանքը: Քանի որ անշարժ գույքի իրականացված վաճառքների շուկայի ուսումնասիրությունն իրականացվում է թարմ և ճշգրտված տեղեկատվության հիման վրա, տարաժամկետ վճարման պայմանով դեպքերի բացակայության պարագայում կիրառվում է 1,0 գործակիցը:

### **Նպատակային և գործառնական նշանակությունը**

Այս տարրերը ցույց են տալիս, թե ինչպես կարելի է օգտագործել տվյալ հողամասը՝ բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման, գյուղատնտեսական նպատակով և այլն: Գնահատողն ուղղում չի կատարում, քանի որ գնահատումն իրականացվում է փաստացի նշանակությունից ելնելով՝ համաձայն ՀԲ ԳՁ-երի:

### **Փաստացի նշանակություն**

Սա ցույց է տալիս, թե ինչպես է օգտագործվում տվյալ հողամասն իրականում՝ անկախ դրա կադաստրային, նպատակային և գործառնական նշանակությունից: Գնահատողն ուղղում չի կատարում այն դեպքերում, երբ օրինակ գնահատվող հողամասի փաստացի նշանակությունն այգի է, սակայն հողամասը պաշտոնապես դասակարգվել է որպես բնակելի կառուցապատում, քանի որ գնահատողը հողամասերը դիտարկում է որևէ բարելավումներից ազատ, ինչպես նաև ծառերից ու մշակաբույսերից: Հողամասի փաստացի նշանակությունն այգի որակելով՝ գնահատողը ցանկանում է նշել, որ տվյալ հողամասի վրա առկա են ծառեր:

### **Տեղադրություն և դիրք**

Գնահատվող և համեմատման հողամասերը ներկայացվում են ըստ թաղամասերի: Գլխավոր ճանապարհից հեռավորությունը նույնպես ցույց է տրվում: Տվյալ դեպքում կիրառվում են 20% քայլով նվազեցնող կամ բարձրացնող գործակիցներ:

### **Տրանսպորտի հասանելիություն**

Սույն գործակիցը բնութագրում է գնահատվող և համեմատման հողամասերի հեռավորությունը տրանսպորտային գլխավոր հանգույցներից: Ընդունվում է, որ տրանսպորտի հասանելիությունը նույնն է գնահատվող և համեմատման հողամասերի համար, և որևէ գործակից չի կիրառվում:

### **Ընդհանուր մակերեսը**

Եթե ազդակիր հողամասի ընդհանուր մակերեսն էական տարբերվում է համեմատելի հողամասից, ապա կիրառվում է ճշգրտող գործակից: Այս դեպքում կիրառվում է 1.05 մեծացնող գործակից:

### **Ենթակառուցվածքների առկայությունը**

Բնութագրում է գնահատված հողամասի հեռավորությունը գլխավոր ենթակառուցվածքներից (ճանապարհ, ոռոգման և խմելու ջրատար, էլեկտրական հոսանքի գիծ, գազատար, կոյուղի): Եթե ենթակառուցվածքները մոտ են հողամասին կամ առկա են հողամասում, ապա նշվում է, որ տվյալ հողամասին ենթակառուցվածքները հասանելի են կամ հողամասը համարված է տվյալ ենթակառուցվածքով: Եթե հողամասը գտնվում է այնպիսի թաղամասում, որտեղ բացակայում է տվյալ ենթակառուցվածքը, և դրա առկայությունը քաղաքաշինական խնդիր է, ապա նշվում է, որ հողամասը չունի

տվյալ ենթակառուցվածքը: Եթե գնահատվող հողամասը համեմատման հողամասից՝ ենթակառուցվածքների առկայության տեսակետից, ավելի նպաստավոր դիրք ունի, ապա գնահատողը 15 %-ի ուղղում է կիրառում:

**Թեքություն**

Շուկայի համակարգված դիտարկումները ցույց են տալիս, որ թեքություն ունեցող և չունեցող հողամասերը տարբեր գներ ունեն: Եթե գնահատվող և համեմատման հողամասերը հարթ են, ապա տվյալ տարրի շտկման անհրաժեշտությունը բացակայում է:

**Գույքային իրավունքներ**

Կախված նրանից՝ տվյալ հողամասի նկատմամբ գույքային իրավունքը սեփականություն է թե վարձակալություն, կամ ընդհանրապես տվյալ հողօգտագործողը որևէ իրավունք չունի տվյալ գույքի նկատմամբ (անօրինական հողօգտագործող) հողամասի գները տարբերվում են: Գնահատողն իրավունքների ճշգրտման գործակից չի կիրառում, գնահատման ենթակա հողամասերը գնահատվում են որպես մասնավոր, այնուհետև, կախված իրավունքի տեսակից, կատարվում է փոխհատուցման գումարի հաշվարկ:

**Բարելավումներ**

Սա ցույց է տալիս, թե ինչ բարելավումներ ունի տվյալ հողամասը՝ բացի հիմնական շինություններից և ծառերից, օրինակ՝ մետաղական, փայտյա կամ քարե պարիսպ, բետոնապատված կամ ասֆալտապատ տարածք և այլն: Այս տարրով Գնահատողն ուղղում չի կատարում, քանի որ տվյալ բարելավումների արժեքն առանձին են հաշվարկվում և գումարվում փոխհատուցման արժեքին:

**Քայլ 4**

Հողամասերի շուկայական գնի միավորը ճշգրտվում է՝ ըստ թվարկված համեմատության տարրերի: Ճշգրտման տրամաբանությունը ներկայացված է ստորև աղյուսակում՝

**Աղյուսակ 2՝ Ընդհանուր հողամասի 1 քմ արժեքի հաշվարկը**

| Համեմատության տարրեր              | Գնահատվող անշարժ գույք | Համանման անշարժ գույք 1 | Համանման անշարժ գույք 2 | Համանման անշարժ գույք 3 |
|-----------------------------------|------------------------|-------------------------|-------------------------|-------------------------|
| <b>Մեկ քմ գին (ՀՀ դրամ)</b>       |                        | <b>27,500</b>           | <b>29,213</b>           | <b>27,163</b>           |
| <b>Սակարկում (Վաճառքի պայման)</b> |                        | <b>Վաճառք</b>           | <b>Վաճառք</b>           | <b>Վաճառք</b>           |
| Ճշգրտման գործակից                 |                        | 1.00                    | 1.00                    | 1.00                    |
| Ճշգրտումը ՀՀ դրամով               |                        | 0                       | 0                       | 0                       |
| <b>Ժամանակ (Շուկայի վիճակ)</b>    | <b>07.2017</b>         | <b>10.2016</b>          | <b>09.2016</b>          | <b>08.2015</b>          |
| Ճշգրտման գործակից                 |                        | 1.00                    | 1.00                    | 1.00                    |
| Ճշգրտումը ՀՀ դրամով               |                        | 0                       | 0                       | 0                       |
| <b>Նյատակային նշանակություն</b>   | <b>Բնակավայրերի</b>    | <b>Բնակավայրերի</b>     | <b>Բնակավայրերի</b>     | <b>Բնակավայրերի</b>     |
| Ճշգրտման գործակից                 |                        | 1.00                    | 1.00                    | 1.00                    |
| Ճշգրտումը ՀՀ դրամով               |                        | 0                       | 0                       | 0                       |
| <b>Գործառնական նշանակություն</b>  | <b>Բնակ. կառ.</b>      | <b>Բնակ. կառ.</b>       | <b>Բնակ. կառ.</b>       | <b>Բնակ. կառ.</b>       |
| Ճշգրտման գործակից                 |                        | 1.00                    | 1.00                    | 1.00                    |
| Ճշգրտումը ՀՀ դրամով               |                        | 0                       | 0                       | 0                       |
| <b>Փաստացի նշանակություն</b>      | <b>Բնակ. կառ.</b>      | <b>Բնակ. կառ.</b>       | <b>Բնակ. կառ.</b>       | <b>Բնակ. կառ.</b>       |
| Ճշգրտման գործակից                 |                        | 1.00                    | 1.00                    | 1.00                    |

|                                      |                 |                    |                    |                    |
|--------------------------------------|-----------------|--------------------|--------------------|--------------------|
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| <b>Տեղադրություն</b>                 | <b>Լավ</b>      | <b>Լավ</b>         | <b>Լավ</b>         | <b>Լավ</b>         |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.00               | 1.00               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| <b>Ղիտք</b>                          | <b>Բավարար</b>  | <b>Լավ</b>         | <b>Գերազանց</b>    | <b>Լավ</b>         |
| Ճշգրտման գործակից                    |                 | 0.90               | 0.80               | 0.90               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | -2,750             | -5,843             | -2,716             |
| <b>Տրանսպորտի հասանելիություն</b>    | <b>Լավ</b>      | <b>Լավ</b>         | <b>Լավ</b>         | <b>Լավ</b>         |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.00               | 1.00               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| Ֆիզիկական բնութագրեր՝ այդ թվում      |                 |                    |                    |                    |
| <b>Ընդհանուր մակերես (քմ)</b>        | <b>407.48</b>   | <b>400.0</b>       | <b>800.0</b>       | <b>800.0</b>       |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.05               | 1.05               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 1,461              | 1,358              |
| <b>Ենթակառուցվածքի առկայություն</b>  | <b>Լավ</b>      | <b>Բավարար</b>     | <b>Բավարար</b>     | <b>Բավարար</b>     |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.15               | 1.15               | 1.15               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 4,125              | 4,382              | 4,074              |
| <b>Թերություն</b>                    | <b>Հարթ</b>     | <b>Հարթ</b>        | <b>Հարթ</b>        | <b>Հարթ</b>        |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.00               | 1.00               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| <b>Գույքային հրավումներ</b>          | <b>Ապօրինի</b>  | <b>Սեփականութ.</b> | <b>Սեփականութ.</b> | <b>Սեփականութ.</b> |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.00               | 1.00               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| <b>Բարելավումներ</b>                 | <b>Առկա չեն</b> | <b>Առկա չեն</b>    | <b>Առկա չեն</b>    | <b>Առկա չեն</b>    |
| Ճշգրտման գործակից                    |                 | 1.00               | 1.00               | 1.00               |
| Ճշգրտումը ՀՀ դրամով                  |                 | 0                  | 0                  | 0                  |
| <b>Ընդհանուր ճշգրտում (ՀՀ դրամ)</b>  |                 | <b>1,375</b>       | <b>0</b>           | <b>2,716</b>       |
| <b>Ճշգրտված մեկ քմ գին (ՀՀ դրամ)</b> |                 | <b>28,875</b>      | <b>29,213</b>      | <b>29,879</b>      |
| <b>Կշռային գործակից</b>              |                 | <b>0.33</b>        | <b>0.34</b>        | <b>0.33</b>        |
| <b>Գնահատվող անշարժ գույք</b>        |                 | <b>29,321</b>      |                    |                    |

**Քայլ 5**

Անշարժ գույքի արժեքի վերաբերյալ վերջնական որոշումը սահմանվում է վաճառքների համեմատության միջոցով՝ վերլուծելով անշարժ գույքի համեմատման ենթակա վաճառքների ճշգրտված գները: Գնահատողը երեք համանման հողամասերի ճշգրտված գները միջինացնում է, եթե բոլոր երեք համանման հողամասերը գնահատվող հողամասին նմանություն ունեն, և տվյալների ստացման աղբյուրներն արժանահավատ են:

**Քայլ 6**

Այս մեթոդով ստացված շուկայական արժեքը համեմատվում է կադաստրային արժեքի հետ: Այն դեպքերում, երբ համեմատական մեթոդով ստացված շուկայական արժեքն ավելի բարձր է, քան հողամասի կադաստրային արժեքը՝ հիմք են ընդունվել համեմատական մեթոդով ստացված գները:

**Քայլ 7**

Այնուհետև հաշվարկվում է հողամասի շուկայական արժեքը հետևյալ բանաձևով՝

$$Հ_{\text{ԸԱ}} = Հ_{\text{Մ}} \times Ն_{\text{ԸԱ}}$$

որտեղ՝

ՀԵՍ –ն հողամասի շուկայական արժեքն է,

ՀՄ-ն հողամասի մակերեսն է,

ԼԵՍ-ն համանման հողամասերի 1 քմ շուկայական ճշգրտված արժեքն է:

### **ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

#### **Ընդհանուր մոտեցումը**

Օտարման ենթակա շենքերի և շինությունների փոխհատուցումը հաշվարկվում է օրինական շինությունների սեփականատերերի և ապօրինի շինությունների օգտագործողների համար: Յուրաքանչյուր խմբի համար ՎԲՇ-ով նախատեսվում է համապատասխան փոխհատուցում: Ընդհանրացված տեսքով վերջինս ներկայացվում է ստորև՝

**Աղյուսակ 3: Բնակելի և ոչ բնակելի շինությունների փոխհատուցում**

| <b>Ազդեցության կատեգորիա</b>    | <b>ԾԱԱ կատեգորիա</b> | <b>Փոխհատուցում</b>  |
|---------------------------------|----------------------|--|
| Բնակելի շենքեր                  | Բոլոր ԾԱԱ-երը        | Բնակելի շենքերի և շինությունների (տուն) դիմաց ԱԱ/ԱՏՏ-ներին կտրվի փոխհատուցում անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (ֆորմա) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից հետևյալ կերպ՝ (i) պատշաճ փոխարինող տնով (բոլոր հարմարություններով և կոմունալ ծառայություններով) Վերաբնակեցման տարածքում, կամ (ii) կամ փոխարինման արժեքով՝ համաձայն Բանկի չափանիշների, Տան գնման վկայագրով (ՏԳՎ): Փոխհատուցումից (ՏԳՎ-ում նշված) չեն նվազեցվի մաշվածության, պահպանված նյութերի արժեքը, ինչպես նաև պետական գրանցման հետ կապված գործարքի ծախսերը |
| Ոչ բնակելի շենքեր/շինություններ | Բոլոր ԾԱԱ-երը        | Ոչ-բնակելի շենքերի և շինությունների դիմաց ԱԱ/ԱՏՏ-ները կստանան դրամական փոխհատուցում փոխարինման արժեքով՝ անկախ շինության նկատմամբ նրանց օրինական (ֆորմա) իրավունքի առկայությունից կամ օրինական կարգավիճակից:  |

#### **Շենքերի/շինությունների փոխարինման արժեքի որոշում**

Շենքերը/շինությունները փոխհատուցվում են փոխարինման արժեքով: Փոխարինման արժեքը նշանակում է նմանատիպ վայրում, նյութերով և հատկություններով (ինչպիսին է փոխարինվող շենքը/շինությունը) շենքի/շինության կառուցման ամբողջ ծախսերը՝ զերծ մաշվածության և գործարքի ծախսերի համար նվազեցումներից: Փոխարինման արժեքի հաշվարկը հիմնվում է հետևյալ ֆակտորների վրա՝

- (i) Նյութերի ընթացիկ շուկայական արժեքը
- (ii) Նյութերի տեղափոխման ընթացիկ շուկայական արժեքը
- (iii) Ընթացիկ աշխատուժի արժեքը, և
- (iv) Ազդակիր շենքի հատուկ կառուցվածքային/ էսթետիկ հատկությունների արժեքը:

Հաշվարկը կատարվում է պաշտոնական գնահատման ինդիկատորներին և ճշգրտման գործակիցներին համապատասխան, որոնք հաստատված են ՀՀ ամբողջ տարածքի համար, ինչպես նաև Շինարարական Աշխատանքների Համախառն Ցուցանիշներին (ՇԱՀՑ) համապատասխան, որոնք սահմանված են շինարարական աշխատանքների գնահատման համապատասխան պարամետրերում:

Շենքերի և շինությունների փոխարինման ծախսերը որոշվում են հետևյալի հիման վրա՝

- (i) համապատասխան մասնագիտացված նորմատիվային տեղեկագրերում և այլ հավաստի աղբյուրներում ներկայացված տվյալներ
- (ii) շուկայական պայմաններում նմանատիպ կառույցների կապալի պայմանագրերում նշված ծախսերի վերաբերյալ տվյալներ:

Անշարժ գույքի գնահատման համար շենքերի/շինությունների փոխարինման ծախսերը հաշվարկվում են որպես ուղղակի, անուղղակի ծախսերի և բիզնեսի (շինարարի) շահույթի հանրագումար: Նույն նշանակության անշարժ գույքի մեկ քառակուսի մետրի կառուցման համար անհրաժեշտ ծախսերը սահմանվում են հետևյալ բանաձևով՝ +

$$Գ_{\sigma} = \text{Ու}_{\sigma} + \text{Ա}_{\sigma} + \text{Բ}_{\sigma}$$

որտեղ՝

**Գ<sub>σ</sub>** -նույն նշանակության անշարժ գույքի մեկ քառակուսի մետրի կառուցման համար անհրաժեշտ ծախսերը

**Ու<sub>σ</sub>**-ուղղակի ծախսերի հանրագումարը

**Ա<sub>σ</sub>** -անուղղակի ծախսերի հանրագումարը

**Բ<sub>σ</sub>**-բիզնեսի (շինարարի) շահույթը

Ուղղակի ծախսերը ներառում են շինարարության հետ ուղղակիորեն կապված ծախսերը.

- (i) նյութեր, արտադրանք, ինժեներական ցանցեր և համակարգեր ձեռք բերելու ծախսերը, ինչպես նաև շինարարների աշխատավարձերը;
- (ii) շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման ծախսերը;
- (iii) ժամանակավոր կառույցների, անվտանգության միջոցների հետ կապված և այլ ծախսերը, որոնք կապված են տրանսպորտի և շուկայի նորմերի պահպանման հետ;
- (iv) շինարարության ֆինանսավորման հետ կապված ծախսերը և;
- (v) կապալառուի վերադիր ծախսերը և շահույթը:

Անուղղակի ծախսերը սահմանվում են աշխատանքի և ծառայությունների շուկայական սակագների հիման վրա: Շինարարության կառուցվածքից բխող հետևյալ ծախսերը համարվում են անուղղակի ծախսեր և չեն ներառվում շինարարական արժեքի մեջ.

- (i) նախագծման, գնահատման պատրաստման, տեխնիկական և այլ հսկողության ծախսերը
- (ii) խորհրդատվության, իրավաբանական, հաշվապահական և աուդիտորական ծառայությունների հետ կապված ծախսերը
- (iii) գովազդի, մարքեթինգի և առարկայի վաճառքի հետ կապված ծախսերը

(iv) ձեռնարկատիրոջ վարչական և այլ ծախսերը:

Բիզնես շահույթի գումարը որոշվում է շուկայի վերլուծության հիման վրա: ՎՔՇ- ի համաձայն, մաշվածության նվազեցումները չեն կիրառվում: Այն դեպքում, երբ շինության 1 քառակուսի մետրի համար շուկայական գինը ավելի բարձր է համեմատական մեթոդով ստացված գնից, գործարար շահույթը կիրառվում է:

Կառուցվածքների փոխարինման ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$V_{\sigma} = C_{\sigma} \times U_{\sigma}$$

որտեղ՝

$V_{\sigma}$ - շինության վերակառուցման (փոխարինման) ծախսեր

$C_{\sigma}$ - գնահատվող շենքի/շինության մակերեսը

$U_{\sigma}$  - նույն նշանակության անշարժ գույքի մեկ քառակուսի մետրի կառուցման համար անհրաժեշտ ծախսերը

Շինության փոխարինման ծախսի հաշվարկի օրինակ ներկայացված է ստորև՝

**Աղյուսակ 4: Բնակելի շինության փոխարինման ծախսի հաշվարկ**

| N  | Շենքի/շինության անվանումը  | Չափի միավոր | Արժեք     |
|----|--|-------------|-----------|
| 1  | 1 միավոր ծախսերը անմիջականորեն կապված են աշխատանքների անմիջապես իրականացման հետ, ինչպես նաև ստացվել են վերլուծության արդյունքում և շինարարական ընկերությունների ներկայացրած գնացուցակի հիման վրա (բացարձակ արժեք)  | ՀՀ դրամ/քմ  | 208,120   |
| 2  | Բարձրությունը գնահատված անշարժ գույքի միջհարկային ծածկերի միջև   | մ           | 2.9       |
| 3  | 1 միավոր ծախսերը անմիջականորեն կապված են աշխատանքների անմիջապես իրականացման հետ, ինչպես նաև ստացվել են վերլուծության արդյունքում և շինարարական ընկերությունների ներկայացրած գնացուցակի հիման վրա՝ աշխատավարձի, նյութերի արժեքի, տրանսպորտային միջոցների և մեքենաների շահագործման ծախսերի, սոցիալական վճարների (բացարձակ արժեք)                     | ՀՀ դրամ/քմ  | 208,120   |
| 4  | Աշխատանքների իրականացման հետ անմիջապես կապված շինարարական նյութերի և շինարարական աշխատանքների գների տարբերությունը, որոնք ստացվել են վերլուծության արդյունքում և շինարարական ընկերությունների ներկայացրած գնացուցակի հիման վրա, և գնահատված անշարժ գույքի շինարարության ընթացքում օգտագործված գները, կախված որակի և / կամ ավարտվածության աստիճանից | %           | -<br>24.0 |
| 5  | Վերարտադրման ծախսերը (3+3*4/100) (բացարձակ արժեք),   | ՀՀ դրամ/քմ  | 158,171   |
| 6  | Շինության մակերեսից կախված ծախսեր  | %           | -         |
| 7  | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 6-րդ տողից  | ՀՀ դրամ/քմ  | 158,171   |
| 8  | Կառավարման անձնակազմի պահպանման (վերադիր) ծախսեր   | %           | 13.3      |
| 9  | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 8-րդ տողից  | ՀՀ դրամ/քմ  | 179,208   |
| 10 | Շինարարական աշխատանքների վրա կլիմայական պայմանների ազդեցության կապակցությամբ կատարվող լրացուցիչ ծախսերը  | %           | 0.3       |
| 11 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 10-րդ տողից   | ՀՀ դրամ/քմ  | 179,746   |
| 12 | Աշխատանքների իրականացման ծախսերը ծանրաբեռնված պայմաններում   | %           | 2.0       |



|    |   |            |         |
|----|---|------------|---------|
| 13 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 12-րդ տողից                | ՀՀ դրամ/քմ | 180,285 |
| 14 | Շինարարության ընթացքում ժամանակավոր կառույցների կառուցման հետ կապված ծախսեր | %          | 1.0     |
| 15 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 14-րդ տողից                | ՀՀ դրամ/քմ | 182,088 |
| 16 | Չնախատեսված ծախսեր  | %          | 5.0     |
| 17 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 16-րդ տողից                | ՀՀ դրամ/քմ | 191,192 |
| 18 | Հարկեր ԱԱՀ  | %          | 20.0    |
| 19 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 18-րդ տողից                | ՀՀ դրամ/քմ | 229,430 |
| 20 | Ձեռնարկատիրական շահույթ   | %          | 10.00   |
| 21 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր, որոնք բխում են 20-րդ տողից                | ՀՀ դրամ/քմ | 252,374 |
| 22 | Վերարտադրման (փոխարինման) ծախսեր (կլորացված արժեք)                          | ՀՀ դրամ/քմ | 252,000 |

## ԾԱՌԵՐԻ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի գնահատում

Տնկիների և հասուն ոչ պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը հաշվարկվում է ներդրված գումարի հիման վրա: Գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները՝

- (i) ծառատեսակ,
- (ii) ծառի տարիք,
- (iii) ծառի գտնվելու տարածաշրջանը:

### Տնկիների Գնահատման Գործընթաց

Տվյալ ծառատեսակի տնկիի գինը հստակեցվում է: Տնկիների շուկայական գինը որոշվում է ՀՀ-ում տնկիների շուկայական միջին գների հիման վրա: Իրականացվում է գների ուսումնասիրություն Ծրագրի տարածքում գործող տնկիների շուկայում, այնուհետև ստացված տեղեկատվության հիման վրա ստացվում է միջինացված գին:

Տնկիների գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$S_s = S_{cu} + S_{\sigma}$$

որտեղ՝

$S_s$  - Տնկիի (կանգուն) շուկայական արժեք,

$S_{cu}$  - Տնկիի շուկայական արժեք (առանց տնկելու),

$S_{\sigma}$  - Տնկիի տնկման ծախսեր:

### Ոչ պտղատու ծառերի գնահատման գործընթաց

Ոչ պտղատու ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\Sigma_{\text{ող}} = S_{\text{ՀԱ}} + S_{\Sigma} + \text{Պ}_{\text{ՀԱ}} \times S_{\text{Ք}}$$

որտեղ՝

$\Sigma_{\text{ող}}$  - Հասուն ոչ պտղատու ծառի շուկայական արժեք,

$S_{\text{ՀԱ}}$  - Տնկիի շուկայական արժեք,

$S_{\Sigma}$  - Տնկիի տնկման ծախսեր:

$\text{Պ}_{\text{ՀԱ}}$  - Հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսեր,

$S_{\text{Ք}}$  - Ծառի տարիքը:

Սահմանված ծառատեսակի տնկիի գինը որոշելուց հետո հաշվարկվում են հասուն ոչ պտղատու ծառի պահպանման համար անհրաժեշտ տարեկան միջոցառումների ծախսերը: Այդ ծախսերը սահմանվում են որպես այդ տարածքում ընդունված ծախսերի միակցություն, ինչն արտացոլված է ստորև աղյուսակում:

| #  | Գործողությունը       | Տարեկան քանակը                   |
|----|----------------------|----------------------------------|
| 1. | Ծառի էտ              | 1 անգամ                          |
| 2. | Ծառի բնի սպիտակեցում | 1 անգամ                          |
| 3. | Ոռոգում              | 3-8 անգամ (կախված տարածաշրջանից) |
| 4. | Պարարտագում          | 1 անգամ                          |
| 5. | Կուլտիվացիա          | 1 անգամ                          |
| 6. | Ծառի սրսկում         | 1 անգամ                          |
| 7. | Բաժակների փխրեցում   | 1 անգամ                          |

### **Պտղատու ծառերի գնահատման մեթոդաբանություն**

Պտղատու ծառերի դիմաց փոխհատուցումը պետք է տրամադրվի այնքան, որքան կազմում է մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքը՝ բազմապատկած այն տարիների քանակով, որքան անհրաժեշտ է նոր լրիվ պտղատու ծառ աճեցնելու համար: Պտղատու ծառերի գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ ելակետային տվյալները՝

- (iv) Ծառատեսակ
- (v) ծառի արդյունաբերական բերք տալու տարիք,
- (vi) բերքատվությունը,
- (vii) բերքի արժեքը,
- (viii) ծառի գտնվելու տարածաշրջանը:

### **Քայլ 1 Տարիք, երբ ծառը տալիս է բերք արդյունաբերական չափով**

Մասնագիտացված հաստատությունների կողմից իրականացված հետազոտությունները, մասնավորապես՝ Հայաստանի ազգային գյուղատնտեսական համալսարանի և մասնագիտական գրականությունը, օգտագործվում են տվյալ ծառի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ տարիների քանակը որոշելու համար:

### **Քայլ 2 Մեկ կիլոգրամ մրգի շուկայական արժեքը**

Մրգատու ծառի տարեկան զուտ արժեքը սահմանվում է որպես շուկայական եկամուտ ծառից ստացված տարեկան բերքից: Այսպիսով՝ որոշվում է տվյալ ծառատեսակից ստացվող 1 կիլոգրամ մրգի գինը: Հաշվարկները կատարելիս հաշվի են առնվում մի քանի գործոններ:

- (i) Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված Հայաստանի Հանրապետությունում (գյուղատնտեսական ապրանքներ) իրացման միջին տարեկան գների մասին տեղեկատվությունը՝ վերջին 7 տարիների համար:
- (ii) Անհատական հետազոտություն է իրականացվում որոշակի տիպի մրգերի գինը որոշելու համար, եթե հնարավոր չէ ճշտել դրանց գները վերը նշված պաշտոնական աղբյուրներից:

**Քայլ 3 Ծառատեսակի բերքատվությունը**

Որոշվում է ծառի բերքատվությունը: Բերքատվությունը որոշվում է՝ հիմք ընդունելով մասնագիտական գրականությունը, ինչպես նաև տարբեր մասնագիտացված հաստատությունների ուսումնասիրությունները (օրինակ՝ Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան):

**Քայլ 4 Փոխհատուցման հաշվարկումը**

Բերքատու ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը.

$$S_p = S_p \times S_{\text{շտ}}$$

Որտեղ՝

$S_p$  – Բերքատու ծառի շուկայական գինը

$S_p$  – Այն տարիների քանակը, որն անհրաժեշտ է նոր ծառը լիարժեք պտղատվության տարիքին աճեցնելու համար

$S_{\text{շտ}}$  – Տարեկան շուկայական զուտ եկամուտը:

**Փայտանյութ տվող ծառերի գնահատման մեթոդաբանություն**

Փայտանյութ տվող ծառերը գնահատվում են տարիքի կարգի հիման վրա (տնկիներ, միջին հասունության ծառեր, հասուն ծառեր), ինչպես նաև փայտի որակի ու ծավալի հիման վրա: Փայտանյութ տվող ծառերի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալներն են՝

- (i) Ծառատեսակ;
- (ii) ծառի տրամագիծը սմ-ով՝ չափված գետնից 1,3 մ բարձրությամբ, կեղևի հետ միասին;
- (iii) վերամշակման ենթակա բնի երկարությունը (բարձրությունը) (մ)<sup>25</sup>:

---

<sup>25</sup> Այս տվյալը անհրաժեշտ չէ բնի համար (ենթակա է գործընթացի), որի երկարությունը ավելի քիչ է, քան 1,0մ, ինչպես նաև այն ծառերի համար, որի տրամագիծը ավելի քիչ է, քան 13,0 սմ:

**Քայլ 1 Ծառի ծավալի սահմանում**

Ելակետային տվյալների հիման վրա փայտանյութ տվող ծառերը դասակարգվում են՝ ըստ ծավալի և տեսակի (շինարարության փայտանյութ և վառելիքի փայտանյութ): Ծավալը որոշելու նպատակով ծառերը դասակարգվում են՝ ըստ տրամագծի՝

- (i) մանր (տնկիներ)՝ 3,0-11,0 սմ,
- (ii) միջին (միջին հասունության ծառեր)՝ 12,0-24,0 սմ,
- (iii) խոշոր (հասուն ծառեր)՝ 25,0 սմ և ավել բնի հաստություն ունեցող ծառեր:

Ծառի դասակարգումը ցույց է տրված ստորև աղյուսակում: Թափոնները որոշվում են՝ որպես հաստման մնացորդների և կեղևի ծավալների գումար: Փայտանյութ տվող ծառերի վառելափայտի ծավալը հավասար է կեղևով բնի ծավալից հանած փայտանյութի և թափոնների ծավալները (սյունյակ 3-(7+8)):

Եթե ծառը լրիվ վառելափայտ է, բնի ընդհանուր ծավալը սյունյակ 3-ից տեղափոխվում է 9-րդի տակ: Այդպիսի ծառի ծավալը (11) կազմվում է բնի (9) և սաղարթի ծավալի (10) գումարից: Իսկ փայտանյութ տվող ծառի ընդհանուր ծավալը՝ ընդհանուր լիկվիրը՝ (11) կազմվում է 7-րդ, 9-րդ և 10-րդ սյունակների գումարից:

| Ծառի բնի չափերը |    |           | Հոծ ծավալը խորանարդ մետրերով |       |      |          |          |            |          |                  |
|-----------------|----|-----------|------------------------------|-------|------|----------|----------|------------|----------|------------------|
| D1,3            | H  | կեղևի հետ | Փայտանյութ                   |       |      |          | Թափոններ | Վառելափայտ |          |                  |
|                 |    |           | խոշոր                        | Միջին | Մանր | Ընդամենը |          | Բնից       | Սաղարթից | Ընդհանուր լիկվիր |
| 1               | 2  | 3         | 4                            | 5     | 6    | 7        | 8        | 9          | 10       | 11               |
| 12              | 15 | 0,084     | -                            | -     | 0,03 | 0,03     | 0,03     | 0,02       | 0,01     | 0,06             |

Սյունակ 1- ծառի բնի տրամագիծն է՝ կրծքավանդակի բարձրությունից հաշված. D1,3, այսինքն՝ գետնից 1,3 բարձրությամբ տրամագիծը՝ արտահայտված սմ-ով

Սյունակ 2- ծառի բնի բարձրությունն է, H՝ մ-ով

Սյունակ 3- ծառի բնի ծավալն է կեղևով՝ V, խորանարդ մետրով

Հղում. «Անտառապահի համառոտ ձեռնարկ», Հայկ Հախինյան, Վանաձոր, 1996

**Քայլ 2 Փայտանյութի շուկայական գնի սահմանումը**

Փայտանյութի շուկայական գինը սահմանվում է գնահատման պահի դրությամբ ՀՀ-ում փայտանյութի շուկայում առկա միջին արժեքի հիման վրա: Կատարվում է վառելանյութ հանդիսացող փայտի շուկայական գնի ուսումնասիրություն, և այն միջինացվում է մի քանի տարբեր վաճառողներից ստացված տեղեկությունների հիման վրա:

**Քայլ 3 Փոխհատուցման հաշվարկ**

Փայտանյութ տվող ծառերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$\Phi_{\text{ԾԵԳ}} = \Phi_{\text{ԽԾԳ}} \times \text{Շ}_{\text{ՕՄ}} + \text{Վ}_{\text{ԾԽ}} \times \text{Վ}_{\text{ՓՄ}}$$

Որտեղ՝

$\Phi_{\text{ԾԵԳ}}$  – Փայտանյութ տվող ծառի շուկայական գինը

$\Phi_{\text{ԽԾԳ}}$  – Շինարարության համար օգտագործվող 1 խորանարդ մետր փայտանյութի շուկայական գինը,

$\text{Շ}_{\text{ՕՄ}}$  – Շինարարության համար օգտագործվող փայտանյութի ծավալը,

$\text{Վ}_{\text{ԾԽ}}$  – Վառելանյութ հանդիսացող 1 խորանարդ մետր փայտի շուկայական գինը,

$\text{Վ}_{\text{ՓՄ}}$  – Վառելանյութ հանդիսացող փայտի ծավալը

## ՄՇԱԿԱՔՈՒՅՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակաբույսի փոխհատուցումը որոշվում է մշակաբույսի տարեկան զուտ շուկայական արժեքի հիման վրա: Ստորև բերված են գնահատված մշակաբույսի համար օգտագործված անհրաժեշտ ելակետային տվյալները՝

- (i) մշակաբույսի տեսակը,
- (ii) բերք,
- (iii) մշակաբույսի արժեքը,
- (iv) այն տարածաշրջանը, որտեղ մշակաբույս կա

### **Քայլ 1. Մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքի սահմանումը**

Մշակաբույսի մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքը մշակաբույսից ստացվող մեկ տարվա բերքի շուկայական արժեքն է: Մեկ տարվա եկամտի զուտ շուկայական արժեքի որոշման համար նախ որոշվում է տվյալ մշակաբույսից ստացվող բերքի 1 կգ շուկայական արժեքը: Հաշվարկները կատարելիս հաշվի է առնվում հետևյալը՝

- (i) Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությունից ստացված Հայաստանի Հանրապետությունում (գյուղատնտեսական ապրանքներ) իրացման միջին տարեկան գների մասին տեղեկատվությունը՝ վերջին 7 տարիների համար:
- (ii) Անհատական հետազոտություն է իրականացվում որոշակի տիպի մշակաբույսերի գինը որոշելու համար, եթե հնարավոր չէ ճշտել դրանց գները վերը նշված պաշտոնական աղբյուրներից:

### **Քայլ 2. Մշակաբույսի բերքի սահմանումը**

Բերքը սահմանվում է՝ հիմնվելով հետևյալի վրա՝

- (i) մասնագիտական գրականություն,
- (ii) միջին հաշվով բերքի ցուցիչներ՝ հրատարակված Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայության կողմից, որի վերլուծությունները կատարվում են վերջին 1 տարվա համար, ինչպես նաև.
- (iii) հետազոտություններ տարբեր մասնագիտացված հաստատությունների հետ, ինչպես օրինակ՝ Հայաստանի ազգային գյուղատնտեսական համալսարանն է: 1 կգ մշակաբույսի շուկայական գինը բազմապատկվում է բերքի ցուցիչով:

### **Քայլ 3 Փոխհատուցման հաշվարկ**

Մշակաբույսերի գնահատման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$U_{\text{ԸԳ}} = U_{\text{ՄԶԳ}} \times U$$

որտեղ՝

$U_{\text{ԸԳ}}$  – Մշակաբույսի շուկայական գինը

$U_{\text{ՄԶԳ}}$  – Մեկ միավորի տարեկան եկամտի զուտ շուկայական գինը

$U$  – Մշակաբույսեր ցանելու տարածքի մակերեսը

Բազմամյա մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցումը կներառի նաև մշակաբույսերը ցանելու հետ կապված ծախսերը, ի լրումն ազդակիր հողի վրա 1 տարվա միջին բերքի շուկայական միջին արժեքի:

$$U_{\text{ԸԳ}} = U_{\text{ՄԶԳ}} \times U + U_{\text{ՑԾ}}$$

որտեղ՝

**ՄՇԳ** – Մշակաբույսի շուկայական գինը

**ՄՄՁԳ** – Մեկ միավորի տարեկան եկամտի զուտ շուկայական գինը

**Մ** – Մշակաբույսեր ցանելու տարածքի մակերեսը

**ՄՑԾ** – Մշակաբույսեր ցանելու հետ կապված ծախս

### **ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ**

Տրանսպորտային ծախսերը որոշվում է՝ շուկայում առկա մի քանի բեռնափոխադրող ընկերությունների առաջարկած ծառայությունների միջին գնի հիման վրա: Գներն այնպես են հաշվարկվում, որ ԱԱ-ները կարողանան իրենց գույքը տեղափոխել 20 կմ շառավղի շրջանակներում՝ դրամով կամ տան վկայագրով փոխհատուցվելու տարբերակի համար, և 5 կմ՝ վերաբնակեցման տարածք տեղափոխվելու տարբերակի համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նմանատիպ կազմակերպություններն առաջարկում են բեռնատար փոքր մեքենաներ (ԳԱՁԵԼ) և մեծ բեռնատար մեքենաներ (ԳԱՁ-52 կամ ՋԻԼ 131՝ կահույք և կենցաղային իրեր տեղափոխելու համար, ՄԱՁ մակնիշի ավտոկոուսնկ և ԿԱՄԱՁ մակնիշի քարշակ՝ ՕԴԱՁ մակնիշի կիսակցորդով՝ ոչ ստանդարտ եզրաչափեր ունեցող գույք տեղափոխելու համար): Ծառայության արժեքը հաշվարկվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝

- (i) երթուղիների քանակը,
- (ii) տեղափոխման ենթակա ակտիվների/գույքերի քանակը,
- (iii) բնակարանի հարկը,
- (iv) վերելակի առկայությունը,
- (v) մեկ գույքի չափը:

### **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ**

Գործարքին առնչվող ծախսերը հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված անշարժ գույքի պետական գրանցման իրականացման դրույքաչափերի հիման վրա, նոտարական գրասենյակների համար սահմանված տուրքերի և վճարների հիման վրա: Նաև հաշվի են առնվում մի կտոր ակտիվի/գույքի՝ 2-3 մասերի բաժանվելու (ակտիվների/գույքերի մասնակի օտարման արդյունքում) հնարավորությունը:

## 20. ՀԱՎԵԼՎԱԾ ՎԵՑ՝ ԱՐՏԱՔԻՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի բնակչության ավելի քան մեկ երրորդը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 20-ից 30%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը կախված է ոռոգումից, որն էլ կարևոր նշանակություն ունի բերքատվության համար: Գետերի սեզոնային փոփոխական արտահոսքերը կարգավորելու համար, մինչ 1980-ական թվականները պատվարներ և ջրամբարներ են նախագծվել և կառուցվել: Դրանց թվին է պատկանում Ախուրյան գետի վրա Կապսի պատվարի և ջրամբարի կառուցումը:
2. Կապսի պատվարի շինաշխատանքները դադարեցվել են 1994թ.-ին: Այնուամենայնիվ, Ծրագիրն ավարտին հասցնելու նախագծման և կառուցման աշխատանքները վերսկսվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի կողմից: Ծրագրով ընդլայնվելու և վերազինվելու է Ախուրյան գետի առկա ոռոգման համակարգը:
3. Ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել Շիրակի մարզում Ախուրյան գետի սահմանափակ ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը՝ հաշվի առնելով մրցակցային պայմաններում տարբեր ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել սննդի անվտանգությանը, խթանել գյուղական շրջանների զարգացումը և բարելավել բնակչության կենսապայմանները, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, պահպանելով այդ շրջանի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնելով բնակչության անվտանգության ռիսկերը անավարտ Կապսի պատվարի և ջրամբարի հոսքի ուղղությամբ իրականացվող շինարարության պայմաններում:
4. Ծրագիրն իրականացվելու է երկու փուլով: Առաջին փուլով որպես անհապաղ միջոցառում նախատեսվում է նախնառաջ վերականգնել ջրի փոխադրման համակարգը, իսկ ոռոգման համակարգը կկառուցվի արդեն Ծրագրի երկրորդ փուլում:
5. Նախատեսված շինաշխատանքների հետևանքով անհրաժեշտություն է առաջանալու հողերի ձեռքբերման և ԱԱ/ԱՏՏ-ների վերաբնակեցման, մասնավորապես ջրամբարի տարածքից, ինչպես նաև այնպիսի օժանդակ կառույցների տեղափոխման, ինչպիսիք են ճանապարհները, որոգման ջրանցքները և էլեկտրամատակարարման օղային գծերը: Վերաբնակեցմամբ նախատեսված ամենամեծ միջամտությունը Ջրածոր գյուղի տեղափոխումն է (մասամբ դրամական փոխհատուցում, մասամբ ֆիզիկական վերաբնակեցում այլ տարածք): Այնուհետև հիմք ընդունելով Ծրագրի նախագիծը՝ Ծրագրի առաջին փուլի համար «KfW»-զարգացման բանկի (Ծրագրի ֆինանսավորող կազմակերպություն) և ՀՀ օրենսդրության համաձայն մշակվել է Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը: Սույն

<sup>26</sup> ՏԱ-ն ենթակա է լրամշակման մինչև Արտաքին մշտադիտարկման խորհրդատուի ծառայությունների մեկնարկը

Տեխնիկական առաջադրանքով իրականացվելու է Ծրագրի ՀՁՎԳՊ-ի իրականացման արտաքին մշտադիտարկումը:

## **ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ**

6. Առաջադրանքի նպատակն է իրականացնել Ծրագրի արտաքին մշտադիտարկումը և մշակել ՀՁՎԳՊ-ի իրականացման Համապատասխանության և ավարտական աուդիտի հաշվետվություններ՝ համաձայն Բանկի չափանիշների:
7. Համապատասխանության հաշվետվությունը կբացահայտի, թե արդյոք փոխհատուցման ծրագիրը իրականացվել է Ծրագրի վերաբնակեցման քաղաքականության շրջանակի, Բանկի չափանիշների, և ՀՁՎԳՊ-ի դրույթների համաձայն:
8. Ավարտական մշտադիտարկումը իրականացվելու է ՀՁՎԳՊ-ի իրականացման ավարտից կամ ԱԱ-երի նոր գյուղ վերաբնակեցնելուց հետո (կախված փոխհատուցման տարբերակից) երկու տարի անց: Ավարտական աուդիտը կբացահայտի Ծրագրի կողմից տրամադրված փոխհատուցումների նպատակային օգտագործումը, և կպարզաբանի, թե արդյոք ԱԱ-ների եկամուտը վերականգնվել է և արդյոք փոխհատուցումը բավարարել է ԱԱ-ների պահանջները:

### **II. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ**

9. Համապատասխանության և ավարտական աուդիտի հաշվետվությունների մշակման համար անհրաժեշտություն է առաջանալու իրականացնել դաշտային աշխատանքներ, ներառյալ Ծրագրի ԱԱ-ների և համայնքի այլ շահառուների (տեղական իշխանությունները և համայնքի բնակիչները, և այլն) հետ հարցազրույցներ և քննարկումներ: Արտաքին մշտադիտարկման խորհրդատուն պարտավորվում է.

## **Ա. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

- Ստուգաճշտել Ծրագրի ազդակիր անձանց և տնային տնտեսությունների քանակը, և պարզել, թե արդյոք մարդահամարն իրականացվել է բոլոր ԱԱ-ների համար;
- Ստուգաճշտել Նկարագրության արձանագրություններում նշված ազդեցությունների և փաստացի ազդեցությունների համապատասխանությունը;
- Ստուգաճշտել պայմանագրերով և համաձայնագրերով և ՀՁՎԳՊ-ի դրույթներով սահմանված փոխհատուցման միավոր գների համապատասխանությունները;
- Ստուգաճշտել, թե արդյոք փոխհատուցումը տրամադրվել է բոլոր ՏՏ-ներին, և եթե այո, ապա արդյոք դրանք տրամադրվել են ՀՁՎԳՊ-ի շրջանակներում կնքված պայմանագրերով/համաձայնագրերով սահմանված չափով
- Գնահատել փոխհատուցման գործընթացի/ համապատասխանությունը ՀՁՎԳՊ-ի դրույթներին և արդյունավետության չափանիշներին;
- Ուսումնասիրել բողոքարկման ընթացակարգերը և դեպքերը, ներառյալ գնահատել, թե արդյոք բողոքի կարգավորումն իրականացվել է ՀՁՎԳՊ-ի դրույթների համաձայն և բավարարել է ԱԱ-ների պահանջները;



- Գնահատել ԱԱ-ների գոհունակությունը փոխհատուցման և վերաբնակեցման ընթացակարգերից;
- Գնահատել հողերի ձեռքբերման բոլոր դեպքերի իրականացումն ու ավարտը;
- Գնահատել հանրային խորհրդատվությունների իրականացումը և տեղեկատվության հրապարակումը, և ԱԱ-ների հետ ընդհանուր հաղորդակցությունը կապված վերաբնակեցման քաղաքականության և ընթացակարգերի հետ;
- Գնահատել խիստ ազդեցության ենթարկված, խոցելի և վերաբնակեցված ԱԱ-ների նպաստների տրամադրման գործընթացը;
- Գնահատել Կենսաապահովման միջոցների վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացումն ու ազդեցությունը;
- Գնահատել կազմակերպչական մեխանիզմները և Ծրագրի կառավարումը՝ Ծրագրի վերաբնակեցման քաղաքականության շրջանակի և ՀԶՎԳՊ-ի դրույթների համաձայն;
- Բացակա ԱԱ-ների գնահատում, եթե այդպիսիք կան, նրանց քանակը, ներկայիս գտնվելու վայրը (եթե հայտնի է և այլն);
- Հատկորոշել իրականացման հետ կապված խնդիրները/բացերը և առաջարկել ուղղիչ միջոցառումներ:

10. Եթե ՀԶՎԳՊ-ի իրականացումը բավարար/գոհացնող չէ, կամ չի համապատասխանում Ծրագրի պահանջներին, համապատասխանության ուսումնասիրությամբ կներկայացվեն անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ: Համապատասխանության ուսումնասիրությունը նախապայման է հանդիսանում ջրամբարի լցման համար կամ Ծրագրով նախատեսված նոր բնակավայրում ցանկացած շինաշխատանքների մեկնարկի համար՝ գյուղը վերաբնակեցնելու դեպքում: Համապատասխանության մշտադիտարկումը կարող է իրականացվել 2 կամ ավելի փուլով, որպեսզի վերաբնակեցման վայրը հնարավորինս շուտ հասանելի դառնա՝ 2-րդ տարբերակի դեպքում:

**Բ. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՌԻԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

11. Ավարտական աուդիտը ներառելու է ԱԱ-ների զբաղվածության ուսումնասիրություն՝ ԱԱ-ների շերտավորված ընտրանքի կիրառմամբ, և համեմատություն ՀԶՎԳՊ-ով սահմանված ելակետային տվյալների հետ: Ավարտական աուդիտի շրջանակներում ի լրումն վերոնշյալ աշխատանքների՝ հորհրդատուն իրականացնելու է հետևյալ առաջադրանքները.

- Որոշել այն չափորոշիչները, որոնցով հատկորոշվելու են տարբեր ԱԱ-ների կատեգորիաները, ինչպես նաև բոլոր կենսաապահովման միջոցների ազդեցությունը;
- Գնահատել կենսաապահովման միջոցների վերականգնման մակարդակը գույքի փոխարինման, եկամտի վերականգնման, բարելավված կենսապայմանների տեսանկյունից;
- Ուսումնասիրել զբաղվածությունը և եկամուտը՝ շերտավորված ընտրանքի կիրառմամբ և համեմատել ելակետային տվյալների հետ;
- Գնահատել համապատասխանության հաշվետվությամբ ներկայացված առաջարկների իրականացման չափը;
- Հատկորոշել իրականացման հետ կապված խնդիրները/բացերը և առաջարկել ուղղիչ միջոցառումներ:

**III. ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՒ ԹԻՄԻ ԿԱԶՄԸ**

12. Խորհրդատուն պետք է զգալի փորձ ունենա զարգացման ծրագրերի (մասնավորապես ենթակառուցվածքային ծրագրերի- «KfW» բանկի և ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող առնվազն մեկ ծրագիր) համար ՀԶՎԳՊ-ի իրականացման համապատասխանության/աուդիտի հաշվետվության մշակման, ՀԶՎԳՊ-ի արտաքին մշտադիտարկման իրականացման ոլորտում:
13. ՀԲ Պաշտպանիչ միջոցառումների քաղաքականության և վերաբնակեցման հետ կապված ՀՀ օրենքների և կանոնակարգերի իմացություն:
14. Սույն առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել կոմպետենտ փորձագետներից բաղկացած փորձառու թիմ: Թիմում պետք է ներգրավված լինեն առնվազն հետևյալ հիմնական փորձագետները:
- Թիմի ղեկավար/Սոցիալական աջակցության մասնագետ. պետք է ունենա բակալավրի աստիճան հասարակական գիտությունների, տնտեսագիտության, վիճակագրության, ֆինանսների, իրավագիտության և այլ համապատասխան ոլորտում, ինչպես նաև 5 տարվա աշխատանքային փորձ համապատասխան բնագավառում: Նա առաջնորդելու է թիմին և պատասխանատու է լինելու բոլոր առաջադրանքների՝ որակով և պատշաճ կատարման համար:
  - Սոցիոլոգ/վերաբնակեցման մասնագետ. պետք է ունենա բակալավրի աստիճան սոցիոլոգիայի ոլորտում կամ այլ հասարակական գիտությունների բնագավառում և 5 տարվա համապատասխան աշխատանքային փորձ:
  - Տվյալների բազայի համակարգող. պետք է ունենա բակալավրի աստիճան մաթեմատիկայի, վիճակագրության, հասարակական գիտությունների ոլորտում և 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ: Նա պատասխանատու է լինելու տվյալների բազայի համակարգման աշխատանքների համար:
  - Հարցազրուցավարներ (երկուսը). ցանկալի է, որպեսզի հարցազրուցավարներն ունենան քանակական սոցիոլոգիայի, մարկետինգի կամ այլ համապատասխան ոլորտում դաշտային աշխատանքներ կատարելու 1 տարվա աշխատանքային փորձ: Գյուղական համայնքներում աշխատանքային փորձը կդիտարկվի որպես առավելություն: Հիմնական առաջադրանքը ազդակիր համայնքներում տվյալների հավաքագրումն է:
15. Խորհրդատուն նշանակելու է թիմի ղեկավար, ով պատասխանատու է լինելու աշխատանքների համակարգման համար, ապահովելով համապատասխան փորձագետների ներգրավումը, բարձրորակ արդյունքների ժամանակին ներկայացումը, ինչպես նաև ԾԳՄ-ի և ՀԶՎԳՊ-ի մշակման և իրականացման գործընթացում ներգրավված այլ շահառուների հետ փոխադարձ կապը:
16. Խորհրդատուն պետք է կարողանա աշխատել հայերեն և անգլերեն լեզուներով, և մշակել հաշվետվությունները գրագետ անգլերենով:
17. Սույն առաջադրանքի իրականացման համար Խորհրդատուն պետք է օգտագործի իր գրասենյակը, սարքավորումներն ու տրանսպորտային միջոցները:

**IV. ՓԱՏՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

18. Փաստաթղթային արդյունքներն են՝

- Համապատասխանության հաշվետվություն (2 կամ ավելի հաշվետվություն, եթե մշտադիտարկումն իրականացվի երկու կամ ավելի փուլերով),
- Ծրագրի ՀՁՎԳՊ-ի համար Ավարտական աուդիտի հաշվետվություն

19. Փաստաթղթային արդյունքները պետք է ընդունելի լինեն ԾԳՄ-ի և «KfW» բանկի համար և պետք է ներկայացվեն ԾԳՄ-ի և «KfW» բանկի դիտարկմանն ու հաստատմանը:

20. Փաստաթղթային արդյունքների ներկայացման նախնական ժամանակացույցը ներկայացված է ստորև աղյուսակում (փաստաթղթային արդյունքների ներկայացման ժամանակացույցը կարող է փոփոխվել՝ կախված ՀՁՎԳՊ-ի մշակմանն ու իրականացման առաջընթացից):

| Փաստաթղթային արդյունքներ  | Ներկայացման ժամկետ  |
|---|---|
| Փ1. ՀՁՎԳՊ համապատասխանության հաշվետվություն (հայերեն և անգլերեն լեզուներով) | Համապատասխանության աուդիտի աշխատանքների մեկնարկից հետո 3 ամսվա ընթացքում: Այդ աշխատանքները պետք է մեկնարկեն ամբողջ ազդակիր տարածքի կամ դրա որոշակի հատվածի համար ՀՁՎԳՊ-ի իրականացման ավարտից անմիջապես հետո (Համապատասխանության մշտադիտարկումը կարող է իրականացվել 2 կամ ավելի փուլով): |
| Փ2. Ավարտական աուդիտի հաշվետվություն (հայերեն և անգլերեն լեզուներով)        | Ավարտական աուդիտի աշխատանքների ավարտից հետո 3 ամսվա ընթացքում: Ավարտական աուդիտի աշխատանքները պետք է մեկնարկեն ՀՁՎԳՊ իրականացման ավարտից կամ ԱԱ-երին գյուղի նոր տեղանք վերաբնակեցնելուց հետո երկու տարի անց՝ կախված փոխհատուցման տարբերակից:  |

Խորհրդատուի աշխատանքները վերահսկվելու են ԾԳՄ-ի կողմից: Հաշվետվությունների պլանը պետք է մշակվի Խորհրդատուի կողմից և համաձայնեցվի ԾԳՄ-ի հետ:

## 21. ՀԱՎԵԼՎԱԾ ՅՈԹ՝ ՀՁՎԳՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

### I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի բնակչության ավելի քան մեկ երրորդը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ ապահովելով երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 20-ից 30%-ը: Գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը կախված է ոռոգումից, որն էլ կարևոր նշանակություն ունի բերքատվության համար: Գետերի սեզոնային փոփոխական արտահոսքերը կարգավորելու համար, մինչ 1980-ական թվականները պատվարներ և ջրամբարներ են նախագծվել և կառուցվել: Դրանց թվին է պատկանում Ախուրյան գետի վրա Կապսի պատվարի և ջրամբարի կառուցումը:
2. Կապսի պատվարի շինաշխատանքները դադարեցվել են 1994թ.-ին: Այնուամենայնիվ, Ծրագիրն ավարտին հասցնելու նախագծման և կառուցման աշխատանքները վերսկսվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի կողմից: Ծրագրով ընդլայնվելու և վերազինվելու է Ախուրյան գետի առկա ոռոգման համակարգը:
3. Ծրագրի ընդհանուր նպատակն է խթանել Շիրակի մարզում Ախուրյան գետի սահմանափակ ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը՝ հաշվի առնելով մրցակցային պայմաններում տարբեր ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել սննդի անվտանգությանը, խթանել գյուղական շրջանների զարգացումը և բարելավել բնակչության կենսապայմանները, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ, պահպանելով այդ շրջանի էկոհամակարգը և կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնելով բնակչության անվտանգության ռիսկերը անավարտ Կապսի պատվարի և ջրամբարի հոսքի ուղղությամբ իրականացվող շինարարության պայմաններում:
4. Ծրագիրն իրականացվելու է հետևյալ փուլերով՝

| ԾՐԱԳՐԻ ՓՈՒԼ | ԾՐԱԳՐԻ ԵՆԹԱՓՈՒԼ / ՏԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ | ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ   | ՈՌՈԳՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ  |
|-------------|---------------------------------|--|--|
| Փուլ 1      | Ենթափուլ 1<br>KfW               | Կապսի անավարտ պատվարի վերականգնում 25 մլն <sup>3</sup> ծավալով Արփի լճի փականային հանգույցի վերականգնում<br>SCADA համակարգ<br>Աջակցություն ջրի կառավարման բարելավման համար | Գոյություն ունեցող բոլոր ոռոգման համակարգերը և տարածքներ Ախուրյանի գետավազանում, որոնք ոռոգվում են Ախուրյանի աջափնյա ոռոգման ջրանցքով (ԱՈՋ) և Շիրակի մայր ջրանցքով (ՇՄՋ) (մոտավորապես 22,000 հա իշխման տարածք) |

<sup>27</sup> ՏԱ-ն ենթակա է լրամշակման մինչև ՀԶՎԳՊ Իրականացման խորհրդատուի մրցութային գործընթացի մեկնարկը

|               |                   |  |   |
|---------------|-------------------|--|---|
| <b>Փուլ 1</b> | Ենթափուլ 2<br>KfW | Ջրի փոխադրման և բաշխման համակարգ<br>Ներտնտեսային ոռոգման սարքեր (անձրևացում, կաթիլային)<br>Աջակցություն ներտնտեսային կառավարման բարելավման համար | Մոտավորապես 740 հա վերունշյալ իշխման տարածքի ներսում      |
| <b>Փուլ 2</b> | Սահմանված չէ      | Կապսի պատվարը մինչև 60մ <sup>3</sup> ծավալի բարձրացնելու հնարավորություն<br>Ջրատար համակարգ դեպի Թալինի/ Արմավիրի տարածքներ                      | Մոտավորապես 7,000 հա սկզբնական իշխման տարածքից դեպի հարավ |

5. Նախատեսված շինաշխատանքների հետևանքով անհրաժեշտություն է առաջանալու հողերի ձեռքբերման և ԱԱ/ԱՏՏ-ների վերաբնակեցման, մասնավորապես ջրամբարի տարածքից, ինչպես նաև այնպիսի օժանդակ կառույցների տեղափոխման, ինչպիսիք են ճանապարհները, որոգման ջրանցքները և էլեկտրամատակարարման օղային գծերը: Վերաբնակեցմամբ նախատեսված ամենամեծ միջամտությունը Ջրածոր գյուղի տեղափոխումն է (մասամբ դրամական փոխհատուցում, մասամբ ֆիզիկական վերաբնակեցում այլ տարածք): Այնուհետև հիմք ընդունելով Ծրագրի նախագիծը՝ Ծրագրի առաջին փուլի համար «KfW»-գարգացման բանկի (Ծրագրի ֆինանսավորող կազմակերպություն) և ՀՀ օրենսդրության համաձայն մշակվել է Հողերի ձեռքբերման և վերաբնակեցման գործողությունների պլանը: Սույն Տեխնիկական առաջադրանքով իրականացվելու է արդեն իսկ մշակված ՀՁՎԳՊ-ն

## II. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

6. Առաջադրանքը նախատեսում է ՀՏՀ-ի անմիջական ուղղորդմամբ և վերահսկմամբ ՀՁՎԳՊ-ի, ներառյալ սեփականության օտարման ընթացակարգերի ամբողջական իրականացում:
7. ՀՁՎԳՊ-ի իրականացման նպատակն է ՀՁՎԳՊ-ի, Ծրագրի իրավունքի մատրիցայի, ՀՀ օրենսդրության շրջանակի և «KfW» բանկի կողմից սահմանված պաշտպանիչ միջոցառումների համաձայն՝ իրականացնել ՀՁՎԳՊ-ով սահմանված փոխհատուցման միջոցառումները (դրամական և ոչ-դրամական), որը ներառում է նաև բոլոր ծանուցումների, հողերի ձեռքբերման/փոխարինման նախագծային և վերջնական պայմանագրերի պատրաստում ու ներկայացում, ԱԱ-ներին իրավաբանական խորհրդատվության տրամադրում, աջակցություն ԾԳՄ-ին ԲԿՄ կիրառման գործընթացում, իսկ բանակցությունների ծախսերի դեպքում՝ սեփականության օտարման իրականացում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գործողությունների իրականացում (մանրամասները ներկայացված են Աշխատանքների շրջանակը կետում): ՀՁՎԳՊ-ի իրականացման խորհրդատուի ծառայությունների մատուցման պայմանագրով որպես պատվիրատու հանդես է գալու ԾԳՄ-ը:

### III. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

8. Խորհրդատուն ապահովելու է ԾԳՄ-ի և ԱԱ-ների միջև կապը և աջակցելու է ԾԳՄ-ին ՀՁՎԳՊ-ի ամբողջական իրականացման գործում (ներառյալ օտարման գործընթացը), աջակցելով ԱԱ-ներին վերաբնակեցման և վերականգնողական գործընթացում և պետք է ապահովի օրինականացման և եկամտի վերականգնմանն ուղղված գործողությունների պատշաճ և արդյունավետ իրականացումը:

9. Առաջադրանքի իրականացման ընթացքում, Խորհրդատուն ԾԳՄ-ի ուղղորդմամբ և հսկողությամբ գործելու է ՀՀ Կառավարության անունից ԾԳՄ-ի կողմից տրամադրված լիազորագրի հիման վրա: ՀՁՎ-ի (հողերի ձեռքբերում և վերաբնակեցում) հետ կապված բոլոր գործողությունները, սակայն, պետք է նախապես հաստատվեն ԾԳՄ-ի կողմից: Խորհրդատուն պարտավորվում է

- Իրականացնել ՀՁՎԳՊ-ով սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն
- Կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ՀՁՎԳՊ-ով սահմանված օրինականացման/ճշգրտման և վերականգնման պլանների լիակատար իրականացման համար;
- Իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները ԱԱ-ների վերաբնակեցման և հնարավոր բիզնեսների տեղափոխման համար,
- Աջակցել ԾԳՄ-ին ազդակիր համայնքներում հանրային իրազեկման քարոզարշավներ կազմակերպել՝ կապված վերաբնակեցման քաղաքականության և փոխհատուցման տարբերակների/փաթեթների ներկայացման հետ
- Խորհրդատվություն տրամադրել և կրթել ԱԱ/ՍՏՏ-ներին՝ վերաբնակեցման պլանով սահմանված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ
- Աջակցել ԾԳՄ-ին ՀՁՎԳՊ-ով սահմանված փոխհատուցումների ամբողջական տրամադրման հարցում: Տարբերակների առկայության դեպքում, Խորհրդատուն պետք է խորհրդատվություն տրամադրի ԱԱ-ներին յուրաքանչյուր տարբերակի առավելությունների վերաբերյալ:
- Կազմակերպել և իրականացնել ՀՁՎԳՊ-ով նախատեսված կենսաապահովման միջոցների վերականգնմանն, ինչպես նաև համայնքի զարգացմանն ուղղված բոլոր միջոցառումները, ներառյալ աշխատանքի ապոհովման, ինքնազբաղվածության կազմակերպումը, և համապատասխան այլ միջոցառումներ, ինչպիսիք են դասընթացները, կոոպերատիվների հիմնումը, և այլն (ինչպես սահմանված է ՀՁՎԳՊ-ով)
- Աջակցել ԱԱ-ներին իրենց բողոքների կարգավորված գործընթացում, ՀՁՎԳՊ-ով սահմանված բողոքների կարգավորման մեխանիզմների միջոցով;
- Տրամադրել ԾԳՄ-ին անհրաժեշտ տեղեկատվություն ՀՁՎԳՊ-ի համապատասխանության հաշվետվության մշակման համար, ինչպես նաև իրականացնել Համապատասխանության հաշվետվություններով նախատեսված անհրաժեշտ ուղղիչ միջոցառումներ

- Հետևել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), «KfW»/ՀԲ պաշտպանիչ միջոցառումների (Բանկի չափանիշների), ՀՀ Կառավարության՝ Ծրագրի ՀՁՎԳՊ-ն հաստատելու մասին որոշման պահանջներին:
- Կազմակերպել դասընթացներ և կարողությունների զարգացման միջոցառումներ ՀՁՎԳՊ իրականացման վերաբերյալ ԾԳՄ-ի կարողությունները բարելավելու համար:
- Աջակցել և համակարգված կերպով համագործակցել ԾԳՄ-ի հետ և ամենօրյա կտրվածքով զեկուցել ԾԳՄ-ին:
- Իրականացնել ՀՁՎԳՊ և ՇՆՊ ներքին մշտադիտարկում (Առաջընթացի և կատարողականի մշտադիտարկում՝ ինչպես նշված է սույն ՀՁՎԳՊ-ում)
- Իրականացնել «ՀՁՎԳՊ շրջանակներում պայմանագրերի կնքման, փոխհատուցումների վճարման, տան գնման վկայագրերի տրամադրման կարգը և պայմանները»-ով (ՀՁՎԳՊ-ի Հավելված 10) ՀՁՎԳՊ ԻԽ-ին վերապահված գործառույթները:

10. Խորհրդատուի աշխատանքները և հաշվետվությունները համակարգվելու են ԾԳՄ-ի կողմից: ՀՁՎԳՊ-ի իրականացման առանձնահատուկ առաջարդրանքներն են՝

#### **Ա. ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԱԱ-ՆԵՐԻՆ**

- Պատշաճ կերպով ծանուցել համայնքների ղեկավարներին և Ծրագրի ազդակիր անձանց (այսուհետ ԱԱ-ներ) ՀՁՎԳՊ-ի մեկնարկի և իրականացման փուլերի, ընթացակարգերի վերաբերյալ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով ՀՁՎԳՊ-ի տեղեկատվական գրքույկների և այլ նյութերի տրամադրմամբ,
- Պատրաստել ձեռքբերման/փոխարինման պայմանագրերն ու համաձայնագրերը, ուղեկցող նամակները, վարել յուրաքանչյուր ԱԱ-ի ծանուցման ընթացակարգը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով (ներառյալ ԱԱ-ներին իրենց իրավունքների, պարտականությունների, և ձեռքբերման/փոխարինման պայմանագրերի ստորագրման համար պահանջված փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում): Ծանուցման ձևաթղթերը, նամակները և թռուցիկները պետք է նախապես համաձայնեցվեն ԾԳՄ-ի հետ:
- Աջակցել ԱԱ-երին ազդակիր անշարժ գույքի նկատմամբ իրենց գույքային իրավունքների (չգրանցված գույքի դեպքում) գրանցման հարցում: Խորհրդատուն նաև կաջակցի ՏՏ-երին, ովքեր նշել են պետականորեն սահմանված աղքատության մակարդակից ցածր եկամուտ և չեն համարվել խոցելի, ՀՀ ԱՍՀՆ անապահովության գնահատման համակարգում գրանցվելու հարցում:
- Եթե մարդահամարից հետո խոցելի ԱԱ-ներ են հայտնաբերվում, ապա ՀՁՎԳՊ ԻԽ-ն պետք է վարձի փորձառու և հմուտ իրավաբանների ամբողջ գործընթացում մարդկանց աջակցելու համար, կամ նրանց համար հանդես գալու որպես անկախ իրավաբան բողոքներին լուծում տալու նպատակով: Խոցելի ճանաչված անձանց աջակցություն կցուցաբերվի փոխհատուցման տարբերակներն ամբողջությամբ հասկանալու համար:

**Բ. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ԹԱՐՄԱՑՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

- ԱԱ-ների՝ ՀՁՎԳՊ-ով պահանջվող բոլոր փաստաթղթերի հավաքագրում և թարմացում: Այս առաջադրանքով ձեռքբերման պայմանագրերի ստորագրման նպատակով նախատեսվում է նաև աջակցել ԱԱ-ներին՝ իրենց թերի կամ սխալ փաստաթղթերի ուղղման, թարմացման, կամ վերականգնման գործընթացում (ներառյալ բոլոր համասեփականատերերի, ժառանգների/իրավահաջորդների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ հանգամանքների ստուգաճշտումը, օրինակ բոլոր համասեփականատերերի ներկայությունն ու համաձայնությունը, պահանջված փաստաթղթերի առկայությունն ու վավերականությունը, բացակայող փաստաթղթերի ցանկը և այլն):
- Թարմացված տվյալների հիման վրա յուրաքանչյուր ԱԱ-ի համար համապատասխան փաստաթղթերի փաթեթի պատրաստում՝ ՀՀ օրսենսդրությամբ սահմանված կարգով հողերի ձեռքբերման նպատակով համապատասխան կադաստրային և նոտարական գործողությունների իրականացման համար:

**Գ. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ (ՆԵՐԱՈՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ)**

- Կազմակերպել ԾԳՄ-ի անունից անշարժ գույքի առուվաճառքի, նախնական և փոխանակության պայմանագրերի ստորագրությունը նոտարական գրասենյակում համաձայն ՀՁՎԳՊ Հավելված 10-ում ներկայացված ընթացակարգի:
- Կազմակերպել ձեռքբերված հողերի պետական գրանցման գործընթացը ՀՀ Կադատրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում (միայն հողակտորի ազդակիր մասի ձեռքբերման դեպքում կազմակերպել պատշաճ տարանջատման և այդ մասի պետական գրանցման գործընթացը), տրամադրել պետական գրանցման համար անհրաժեշտ հայտերն ու հիմնավոր փաստաթղթերը, ինչպես նաև տարանջատման/բաժանման գործընթացից հետո աջակցել համասեփականատերերին և վարձակալներին կադաստրի տարածքային ստորաբաժանումներից հողատարածքի չձեռքբերված մասի սեփականաշնորհման վկայականների ստացման գործընթացում:<sup>28</sup>
- Եթե ԱԱ-ներն ընտրում են ոչ-դրամական փոխհատուցումը (նոր բնակելի տուն վերաբնակեցման տարածքում), ապա ՀՀ կադատրի կոմիտեում գործարքի գրանցում (սեփականության փոխարինման պայմանագիր/համաձայնագիր), և պետական գրանցման նպատակով հայտադիմումների և այլ պահանջված փաստաթղթերի տրամադրում:
- Կադատրի կոմիտեից ազդակիր սեփականության/անշարժ գույքի վերաբերյալ, ինչպես նաև դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների մասին միասնական տեղեկանքների ձեռքբերում

<sup>28</sup> Առանձնացման և տարանջատման և պետական գրանցման ընթացակարգը կարող է տարբեր լինել մասնավոր սեփականության և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի համար, և պետք է այն համապատասխանաբար պլանավորել



- Տեղեկացում ԾԳՄ-ին ազդակիր սեփականության համար համայնքի կամ պետական բյուջե կատարվող պարտադիր կոմունալ վճարումների մասով ԱԱ-ների պարտքերի առկայության վերաբերյալ և խրախուսում ԱԱ-ներին կատարել այդ իրավական պարտավորությունները
- ԱԱ-ների համար բանկային հաշիվների բացում և այս նպատակով ԱԱ-ներից անհրաժեշտ տվյալների ձեռքբերում
- Ձեռքբերման/փոխարինման պայմանագրերի կնքման նպատակով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում համապատասխան նոտարական գրասենյակ և ԱԱ-ների հետ այդ պայմանագրերի կնքում (եթե պայմանագիրը ստորագրվում է նոտարական գրասենյակում):
- ՀՏՁՀ-ին վճարման պահանջագրերի ներկայացում պայմանագրերից և ձեռքբերողի համաձայնագրերից բխող փոխհատուցումների վճարումը կատարելու համար (ներառյալ պայմանագրի/համաձայնագրի մեկ բնօրինակի ներկայացում ԾԳՄ-ին)
- Ձեռքբերման պայմանագրի ստորագրումից հետո ՀՀ սեփականության իրավունքի գրանցման ընթացակարգի կազմակերպում. ձեռք բերել և ԾԳՄ-ին ներկայացնել ՀՀ սեփականության իրավունքի գրանցման վկայականներն (կից քարտեզներով/նախագծերով) ու համապատասխան փաստաթղթերը:

## **Դ. ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ**

- ՀԶՎԳՊ-ի օրինականացման պլանի կազմակերպում և իրականացում, տրամադրելով ԱԱ-ներին համապատասխան իրավաբանական խորհրդատվություն, մասնավորապես աջակցություն ժառանգներին/իրավահաջորդներին ժառանգության ձևակերպման և համապատասխան պետական գրանցման, բացակա ԱԱ-ների համար լիազորագրերի ձեռքբերման, ինչպես նաև ԱԱ-ների անձնագրերի վավերականության ժամկետի երկարացման կամ նոր անձնագրերի ձեռքբերման գործընթացում; ձեռքբերման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերում առկա տեխնիկական սխալների ուղղում և պարզաբանում:
- Խորհրդատուին պետք է բոլոր հնարավոր ջանքերը գործադրի դատարանի միջոցով սեփականության օտարման դեպքերը նվազեցնելու համար՝ առաջնահերթությունը տալով երկկողմ համաձայնությամբ, բանակցությունների և անհրաժեշտ վերականգնողական միջոցառումների իրականացման միջոցով սեփականության օտարմանը:

## **Ե. ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

- Խորհրդատուին իրականացնելու է ՀԶՎԳՊ-ով նախատեսված կենսաապահովման միջոցների վերականգնմանն ու համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումները, ներառյալ համապատասխան կարողությունների զարգացմանն ուղղված այնպիսի աշխատանքների մշակում ու իրականացում, ինչպիսին են

| 217 | Հողամաս   | Հանքարդյունաբերական                   | 01-096-0371-<br>0001-01 | Համայնքային          | Մկոյան Լիպարիտ            | 1  |
| 218 | Հողամաս   | Հանքարդյունաբերական                   | 01-096-0371-<br>0001-03 | Համայնքային          | Հովակյան Վարդան           | 1  |
| 219 | Հողամաս   | Հանքարդյունաբերական                   | 01-096-0371-<br>0001-03 | Համայնքային          | Մկոյան Լիպարիտ            | 1  |
| 220 | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0315-<br>0022    | <<Ախուրյան ՀԷԿ>> ՍՊԸ |                           |  |
| 221 | Հողամաս   | Փոքր ՀԵԿ-ի կառուցման<br>համար         | 08-096-0315-<br>0023    | <<Ախուրյան ՀԷԿ>> ՍՊԸ |                           |  |
| 222 | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0315-<br>0024    | <<Ախուրյան ՀԷԿ>> ՍՊԸ |                           |  |
| 223 | Հողամաս   | Փոքր ՀԵԿ-ի կառուցման<br>համար         | 08-096-0315-<br>0025    | <<Ախուրյան ՀԷԿ>> ՍՊԸ |                           |  |
| 224 | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0971-<br>0020    | <<Մուսահա>> ՍՊԸ      |                           |  |
| 225 | Հողամաս   | Փոքր ՀԵԿ-ի կառուցման                  | 08-096-0971-            | <<Մուսահա>> ՍՊԸ      |                           |  |



| N   | Հողամաս կամ<br>Հողամաս + ոչ<br>բնակելի շինություն | Հողամասի գործառնական<br>նշանակություն | Կադաստրային<br>ծածկագիր   | Սեփականատեր         | Վարձակալ/ենթավ<br>արձակալ | ԱՏՏ-երի<br>քանակությ<br>ունը <sup>30</sup> |
|---|---|---------------------------------------|---------------------------|---------------------|---------------------------|--|
|   |   | համար                                 | 0022                      |                     |                           |  |
| 226   | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0305-<br>0234      | <<Մուսահա>> ՍՊԸ     |                           |  |
| 227   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | 08-096-0006-              | Հովակյան Գևորիկ     |                           | 1  |
| 228   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | 08-096-0019-<br>0013      | Մկրտչյան Ռաֆիկ      |                           | 1  |
| 229   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | 08-096-0007-<br>0001      | Ադամյան Ահարոն      |                           | 1  |
| 230   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | Ծածկագիր կամ<br>հասցե չկա | Մկրտչյան Մարտուն    |                           | 1  |
| 231   | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0516-<br>0023      | <<Ֆենհալ>> ՍՊԸ      |                           |  |
| 232   | Հողամաս   | Արոտավայր                             | 08-096-0516-<br>0024      | <<Ֆենհալ>> ՍՊԸ      |                           |  |
| 233   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | Ծածկագիր կամ<br>հասցե չկա | Մակարյան Արթուր     |                           | 2  |
| 234   | Հողամաս+շինություն                                | Բնակավայրերի                          | Ծածկագիր կամ<br>հասցե չկա | Ադամյան Վահագն      |                           | 2  |
| <b>ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Գտաշեն բնակավայր</b> |   |                                       |                           |                     |                           |  |
| 235   | Հողամաս   | Վարելահող                             | 08-035-0372-<br>0006      | Էգնատոսյան Սամվել   |                           | 1  |
|   |   |                                       |                           | Էգնատոսյան Հերիքնազ |                           |  |
| 236   | Հողամաս   | Վարելահող                             | 08-035-0373-<br>0003      | Հակոբյան Վլադիմիր   |                           | 1  |
|   |   |                                       |                           | Էմմա Զաքունց        |                           |  |
| 237   | Հողամաս   | Վարելահող                             | 08-035-0373-<br>0004      | Պողոսյան Սերգեյ     |                           | 1  |
|   |   |                                       |                           | Մանուկյան Նունուֆար |                           |  |
| 238   | Հողամաս   | Վարելահող                             | 08-035-0373-<br>0005      | Քալաշյան Իլյուշ     |                           | 1  |

| N  | Հողամաս կամ<br>Հողամաս + ոչ<br>բնակելի շինություն | Հողամասի գործառնական<br>նշանակություն | Կադաստրային<br>ծածկագիր | Սեփականատեր          | Վարձակալ/ենթավարձակալ | ԱՏՏ-երի<br>քանակությ<br>ունը <sup>30</sup> |
|--|---|---------------------------------------|-------------------------|----------------------|-----------------------|--|
| <b>ՀՀ Շիրակի մարզ, Մարմաշեն համայնք, Կապս բնակավայր</b>    |   |                                       |                         |                      |                       |  |
| 239  | Հողամաս+շինություն                                | Արոտավայրերի                          | 08-052-0201-<br>0018    | Մնացական Ալեքսանյան  |                       | 1  |
|  |   |                                       |                         | Ռոզա Անդրեասյան      |                       |  |
| <b>ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Արեգնադեմ բնակավայր</b> |   |                                       |                         |                      |                       |  |
| 240  | Հողամաս   | Արոտավայրերի                          | 08-018-0131-<br>0002    | <<Ախուրյան ՀԵԿ>> ՍՊԸ |                       |  |
| 241  | Հողամաս   | Արոտավայրերի                          | 08-018-129-0001-<br>02  | Համայնքային          | <<Մուսահա>> ՍՊԸ       |  |
| 242  | Հողամաս   | Արոտավայրերի                          | 08-018-129-0001-<br>03  | Համայնքային          | <<Մուսահա>> ՍՊԸ       |  |

## 25. ՀԱՎԵԼՎԱԾ ՏԱՍՆՄԵԿ՝ ՀԶՎԳՊ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ, ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՏԱՆ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### ԲԱԺԻՆ 1. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Սույն կարգով սահմանվում են «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախտության գետ, Փուլ 1» վարկային ծրագրի շրջանակներում ազդակիր անձանց փոխհատուցումների և օժանդակությունների տրամադրման պայմանները:
2. Փոխհատուցումների և օժանդակությունների տրամադրման աշխատանքները կազմակերպում և ղեկավարում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեն (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ իր կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով), մարզպետի կողմից ստեղծված աջակցող աշխատանքային խմբի և ՀԶՎԳՊ իրականացնող խորհրդատուի միջոցով:
3. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, մարզպետարանի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության և կադաստրի կոմիտեի մեկական ներկայացուցիչներ և համայնքի ղեկավարի համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարը կամ իր կողմից լիազորված անձը:
4. Մարզպետի կողմից ստեղծված աջակցող աշխատանքային խմբի կազմում պարտադիր կարգով ընդգրկվում է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչը:
5. Հանձնաժողովի գործառույթներն են՝
  - ա) վկայագրերի միջոցով փոխհատուցման տրամադրման կարգի իրականացման նկատմամբ վերահսկողությունը համաձայն սույն կարգի.
  - բ) սույն կարգով փոխհատուցում ստացող անձանց վերաբերող՝ ներկայացված փաստաթղթերի և փոխհատուցման տրամադրման պայմանների ՀԶՎԳՊ-ին համապատասխանության ստուգումը.
  - գ) հատկացվող բնակելի տների չափի որոշումը՝ համաձայն սույն ՀԶՎԳՊ-ի.
  - դ) հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին համապատասխան մարզպետներին և քաղաքացիներին իրազեկելը.
  - ե) անհրաժեշտության դեպքում վիճակահանությամբ տների բաշխման գործընթացի կազմակերպումը.
  - զ) սույն կարգով սահմանված այլ գործառույթներ:
6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի, այդ թվում՝ արտագնա նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության:
7. Արտագնա նիստերը հրավիրվում են ՀՀ Շիրակի մարզում: Դրանց կարող են մասնակցել համայնքների ղեկավարները (համաձայնությամբ) կամ նրանց կողմից լիազորված անձինք:
8. Հանձնաժողովի նիստերի որոշումները ձևակերպվում են արձանագրությամբ:
9. Հանձնաժողովի նիստերում հարցերի քննարկման արդյունքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն ստանալու պահանջի առաջացման դեպքում հարցերի քննարկումը հետաձգվում է մինչև ամբողջական փաստաթղթային փաթեթները ներկայացնելը:

**10.** Հանձնաժողովի գործունեության տեխնիկական և կազմակերպչական աշխատանքները կազմակերպվում են Լիազոր մարմնի աշխատակազմի միջոցով:

**11.** Աջակցող աշխատանքային խմբի գործառույթներն են՝

ա) վկայագրի միջոցով գնվող բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը մշտական բնակության համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու մասին եզրակացությունների տրամադրումը և դրանց գրանցումը.

բ) անշարժ գույքի շուկայում վաճառվող բնակարանների (բնակելի տների) մասին տեղեկատվական բազայի ստեղծումը և տեղեկատվության իրազեկումը:

**12.** ՀԶՎԳՊ իրականացնող խորհրդատուի առաջադրանքը կցվում է ՀԶՎԳՊ-ին՝ տես ՀԶՎԳՊ-ի **Հավելված 7:**

**13.** Տարբերակ 2-ի դեպքում նոր գյուղի շինարարական աշխատանքները կիրականացնի համապատասխան կապալառու կազմակերպությունը Լիազոր մարմնի/ԾԳՄ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն:

## **ԲԱԺԻՆ 2. ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. ՀՀՎԳՊ-ն, “KfW” բանկի, ԾԳՄ և ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո ԲՍԱԳ խորհրդատուն կազմակերպում է հանրային քննարկում, որի ընթացքում իրազեկում է ԱՏՏ-երին փոխհատուցման առաջարկվող տարբերակների մասին:

1.1. ՀՀՎԳՊ ԻԽ-ն կաջակցի ԱԱ-երին ազդակիր անշարժ գույքի նկատմամբ իրենց գույքային իրավունքների (չգրանցված գույքի դեպքում) գրանցման հարցում:

2. Հանրային քննարկումից հետո ԲՍԱԳ խորհրդատուն **1 ամսյա ժամկետում** ԱՏՏ-երին գրավոր ծանուցում է ՀՀՎԳՊ իրականացման մեկնարկի մասին, ինչպես նաև վերջիններիս է ուղարկում առաջարկվող տարբերակների համար պայմանագրերի նախագծերը:

3. ԱԵՏՏ-երին սույն կարգի 2-րդ կետում նշված ծանուցումը և պայմանագրերի նախագծերը ուղարկելուց հետո **3 ամսյա ժամկետում** ԱՏՏ-երի հետ կնքվում է փոխհատուցման համապատասխան տարբերակի վերաբերյալ պայմանագիրը: Տարբերակ 2-ի դեպքում ԱՏՏ-երի հետ գույքի փոխանակության մասին նախնական պայմանագիրը կարող է կնքվել միայն նոր գյուղի կառուցման համար նախատեսված վայրում (այսուհետ՝ Վերաբնակեցման վայր) անհրաժեշտ հողերն օտարելուց և գյուղի էսկիզային նախագիծը մշակելուց հետո:

### **4. Տարբերակ 1-ի դեպքում.**

4.1. Փոխհատուցման Տարբերակ 1-ի դեպքում ԱՏՏ-երի հետ կնքվում է սույն կարգի **Հավելված Ա-ում** ներկայացված պայմանագիրը: ՀՀՎԳՊ դրույթների համաձայն պայմանագրով նախատեսված փոխհատուցումը ներառում է տան դիմաց փոխհատուցում տան գնման վկայագրով (այսուհետ՝ Վկայագիր), և տանից բացի այլ գույքի համար (տնամերձ հողամաս, այլ շինություններ և այլն)՝ դրամական փոխհատուցում (այսուհետ՝ Դրամական փոխհատուցում): Վկայագիրը տրամադրվում է ԱՏՏ-ին նոտարական գրասենյակում պայմանագիրը կնքելու պահին: Նույն օրը ԱՏՏ-ի հետ կնքվում է նաև Լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագիրը (Լրացուցիչ համաձայնագիր), որը ներկայացված է սույն կարգի **Հավելված Դ-ում**: Լրացուցիչ համաձայնագիրը նոտարական վավերացման ենթակա չէ:

4.1.1. Բացառիկ դեպքերում դրամական փոխհատուցումը կարող է տեղին լինել, եթե ԱՏՏ-ն ԾԳՄ/ՀՀՎԳՊ ԻԽ-ին ներկայացրել է բավարար հիմքեր, որ նա ունի այլ կացարան կամ ԱՏՏ-ն մշտապես բնակվում է արտերկրում:

4.2. Եթե ազդակիր տանից և տնամերձ հողամասից բացի ազդեցության է ենթարկվում նաև նույն ԱՏՏ-ին պատկանող այլ հողամաս, ապա այդ ԱՏՏ-ի հետ կնքվում է նաև այդ հողամասի առուվաճառքի պայմանագիրը (սույն կարգի 6-րդ կետին համապատասխան):

4.3. ՀՀՎԳՊ ԻԽ-ն պայմանագրերը նոտարի կողմից վավերացնելուց հետո **30 օրյա ժեմկետում** ներկայացնում է կադաստր կոմիտե իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:

4.4. Վկայագիր ստացած անձը սահմանված ժամկետում ձեռք բերվող բնակարանը (բնակելի տունը) ընտրելուց հետո ՀՀՎԳՊ ԻԽ աջակցությամբ դիմում է մարզպետին՝ ընտրված տարբերակի մշտական բնակության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու մասին **եռօրյա ժամկետում** եզրակացություն տալու խնդրանքով:

4.5. Մարզպետի կողմից տրված դրական եզրակացությունն ստանալուց հետո վկայագիր ստացած անձը **մեկ շաբաթյա ժամկետում** կնքում է բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագիր, որի պատճենը **եռօրյա ժամկետում** ներկայացնում է ՀՀՎԳՊ ԻԽ-ին՝ կցելով իր և բնակարան (բնակելի տուն) վաճառողի գործակալ բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշիվների բանկային վավերապայմանները:

Ընդ որում, վկայագրում ամրագրված փոխհատուցման չափից ավելի բարձր արժեք ունեցող բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու դեպքում արժեքի տարբերությունը կարող է վճարվել ԱՏՏ-ին հասանելիք Դրամական փոխհատուցումից (տանից բացի այլ գույքի դիմաց տրվող փոխհատուցում):

4.6. ՀՀՎԳՊ ԻԽ-ն կատարված առուվաճառքի գործարքին վերաբերող՝ ներկայացված փաստաթղթերը **երկօրյա ժամկետում** ներկայացնում է Հանձնաժողով:

Հանձնաժողովը կատարված առուվաճառքի գործարքին վերաբերող փաստաթղթերն ստանալուց հետո **հինգ աշխատանքային օրյա ժամկետում** ստուգում է՝

ա) կատարված գործարքի համապատասխանությունը սույն կարգի և ՀՀՎԳՊ-ին պայմաններին.

բ) ձեռք բերված բնակարանի (բնակելի տան) արժեքի և տրամադրվող փոխհատուցման չափի համապատասխանությունը.

գ) վկայագրում նշված փոխհատուցման չափից ավելի բարձր արժեք ունեցող բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում, արժեքների տարբերությունը փակելու համար ԱՏՏ-ի հասանելիք Դրամային փոխհատուցման չափի բավարար լինելը:

4.7. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ստուգման արդյունքներով բացահայտված անճշտությունների դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ԱՏՏ-ին՝ դրանք փոփոխելու նպատակով:

4.8. Լիազոր մարմինը, հանձնաժողովի դրական որոշման հիման վրա, **3 բանկային օրվա** ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում վկայագրի միջոցով ձեռք բերված բնակարանի (բնակելի տուն) արժեքի, փոխհատուցման դրամային մասի ու լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության վճարման մասին հայտ՝ նշելով փոխհատուցում ստացողին ու բնակարան (բնակելի տուն) վաճառողին վճարման ենթակա գումարները:

4.9. Հայտի հետ միասին ներկայացվում են տրամադրված վկայագրերի, ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի և ազդկիր գույքի (երի) փոխհատուցման պայմանագրերի, լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագրի պատճենները, ինչպես նաև փոխհատուցում ստացողի ու բնակարան (բնակելի տուն) վաճառողի կողմից ընտրված բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշիվների բանկային վավերապայմանները:

4.10. Միաժամանակ, ՀՀՎԳՊ ԻԽ հայտում նշված անձանց վերաբերող փաստաթղթերը ներկայացնում է բանկ՝ կցելով տրամադրված վկայականների բնօրինակները:

4.11. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտն ստանալուց հետո **3 բանկային օրվա ընթացքում** փոխանցում է՝

ա) վաճառողի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ վաճառված բնակարանի (բնակելի տան) արժեքի 60 տոկոսին համապատասխանող գումար, իսկ մնացած 40 տոկոսը՝ վաճառողի կողմից վաճառված բնակարանի (բնակելի տան)՝ սահմանված կարգով ստորագրված հանձնման-ընդունման ակտն ստանալուց և ներկայացնելուց հետո.

բ) վկայագրի միջոցով փոխհատուցում ստացողի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ տան դիմաց տրամադրվող փոխհատուցման չափի (վկայագրում նշված փոխհատուցում) և ձեռք բերված բնակարանի (բնակելի տան) արժեքների տարբերությունը, պայմանագրով նախատեսված Դրամային փոխհատուցումը, ինչպես նաև լրացուցիչ փոխհատուցումը և օժանդակությունը՝ Լրացուցիչ համաձայնագրով նախատեսված:

4.12. Բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից փոխհատուցման գումարներն ստանալուն պես կատարում է համապատասխան վճարումներ:

4.13. Բանկը լիազոր մարմնին է ներկայացնում վճարված վկայագրերի բնօրինակները՝ վճարված գումարի նշամբ՝ կցելով քաղաքացու ցպահանջ ավանդային հաշվից քաղվածք:

4.14. ՀՀՎԳՊ ԻԽ-ն կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում է ներկայացնում ԱՏՏ-ի կողմից ձեռք բերված բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագրի, ԱՏՏ-ին փոխհատուցման փոխանցման անդորրագրի և Վկայագրով ձեռք բերված անշարժ գույքի վաճառողին անշարժ գույքի արժեքի փոխանցման անդորրագրի պատճենները:

4.15. Ազդակիր անշարժ գույքի նկատմամբ ՀՀ-ի իրավունքը ծագում է պայմանագիրը կադաստրում կոմիտեում գրանցելու և ԱՏՏ-ի կողմից ձեռք բերված բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագրի, ԱՏՏ-ին փոխհատուցման փոխանցման անդորրագրի և Վկայագրով ձեռք բերված անշարժ գույքի վաճառողին անշարժ գույքի արժեքի փոխանցման անդորրագրի պատճենները կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում ներկայացնելու պահից:

## **5. Տարբերակ 2-ի դեպքում**

5.1. Նկատի ունենալով այն, որ նախապատվությունը տրվում է Տարբերակ 2-ին, ՀՀ կառավարության կողմից Տարբերակ 2-ը կիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում, Վերաբնակեցման վայրում կնախագծվի գյուղի էսկիզային նախագիծը և դրա հիման վրա ՀՀՎԳՊ ԻԽ-ի կողմից կիրականացվի ազդակիր հողերի օտարում՝ սույն կարգի 6-րդ կետին համապատասխան:

5.2. Վերաբնակեցման վայրում անհրաժեշտ հողերը ձեռք բերելուց և նոր գյուղի էսկիզային նախագիծը մշակելուց հետո փոխհատուցման Տարբերակ 2-ի դեպքում ԱՏՏ-երի հետ կնքվում է սույն կարգի **Հավելված Բ-ում** ներկայացված ԱՏՏ-ի տունը տնամերձ հողամասով (այսուհետ՝ Փոխարինվող գույք) Վերաբնակեցման վայրում կառուցվելիք նոր տնով ու տնամերձ հողամասով (այսուհետ՝ Փոխարինող գույք) փոխարինելու վերաբերյալ նախնական պայմանագիրը (այսուհետ՝ Նախնական պայմանագիր): Նախնական պայմանագրով նաև նախատեսվում է, Փոխարինվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի միջև տարբերության վճարում ԱՏՏ-ին՝ ՀՀՎԳՊ դրույթների համաձայն: Նույն օրը ԱՏՏ-ի հետ կնքվում է նաև Լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագիրը (Լրացուցիչ համաձայնագիր), որը ներկայացված է սույն կարգի **Հավելված Դ-ում**: Լրացուցիչ համաձայնագիրը նոտարական վավերացման ենթակա չէ:

5.3. Եթե ազդակիր տանից և տնամերձ հողմասից բացի ազդեցության է ենթարկվում նաև նույն ԱՏՏ-ին պատկանող այլ հողամաս, ապա այդ ԱՏՏ-ի հետ կնքվում է նաև այդ հողամասի վերաբերյալ առուվաճառքի պայմանագիրը (սույն կարգի 6-րդ կետին համապատասխան):

5.4. Վերաբնակեցման վայրում գյուղի կառուցումն ավարտելուց հետո ՀՀՎԳՊ ԻԽ-ն ԱՏՏ-երի հետ կնքվում է գույքի փոխանակության մասին հիմնական պայմանագիրը (այսուհետ՝ Հիմնական պայմանագիր), որը ներկայացված է սույն կարգի **Հավելված Գ-ում**:

5.5. ՀՀՎԳՊ ԻԽ-ն պայմանագրերը նոտարի կողմից վավերացնելուց հետո **30 օրյա ժամկետում** ներկայացնում է կադաստր կոմիտե իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:

5.6. Նախնական և Հիմնական պայմանագրերը, ինչպես նաև Լրացուցիչ համաձայնագիրը կնքվում են Հանձնաժողովի դրական որոշման հիման վրա:

Հանձնաժողովը կատարվելիք գործարքին վերաբերող փաստաթղթերն ՀԶՎԳՊ ԻԽ-ի կողմից ստանալուց հետո **հինգ աշխատանքային օրյա ժամկետում** ստուգում է կատարվելիք գործարքի համապատասխանությունը սույն կարգին և ՀԶՎԳՊ-ին պայմաններին:

5.7. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ստուգման արդյունքներով բացահայտված անճշտությունների դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ՀԶՎԳՊ ԻԽ-ին՝ դրանք փոփոխելու նպատակով:

5.8. Լիազոր մարմինը, հանձնաժողովի դրական որոշման հիման վրա, **3 բանկային օրվա** ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում փոխանակման միջոցով ձեռք բերված բնակելի տների արժեքների տարբերության (փոխհատուցում) ու լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության վճարման մասին հայտ՝ նշելով փոխհատուցում ստացողներին վճարման ենթակա գումարները:

5.9. Հայտի հետ միասին ներկայացվում են անշարժ գույքի փոխանակման, լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագրի պատճենները, ինչպես նաև փոխհատուցում ստացողի կողմից ընտրված բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշվի բանկային վավերապայմանները:

5.10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտն ստանալուց հետո **3 բանկային օրվա ընթացքում** փոխանցում է՝ ԱՏՏ-ի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ Փոխանակվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի տարբերությունը, ինչպես նաև լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության գումարները:

5.11. Բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից փոխհատուցման գումարներն ստանալուն պես կատարում է համապատասխան վճարումներ:

5.12. Բանկը լիազոր մարմնին է ներկայացնում քաղաքացու ցպահանջ ավանդային հաշվից քաղվածքը:

5.13. ՀԶՎԳՊ ԻԽ-ն կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում է ներկայացնում Փոխանակվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի տարբերությունը ԱՏՏ-ին փոխանցելու անդորրագրի պատճենը:

5.14. Ազդակիր անշարժ գույքի նկատմամբ ՀՀ-ի իրավունքը ծագում է Հիմնական պայմանագիրը կադաստրի կոմիտեում գրանցելու և Փոխանակվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի տարբերությունը ԱՏՏ-ին փոխանցելու անդորրագրի պատճենը կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում ներկայացնելու պահից:

## **6. Առանց բնակելի տների ազդակի հողերի դեպքում.**

6.1. Բնակելի տներով չձանրաբեռնված հողերը ձեռք բերելու նպատակով ԱՏՏ-ին պայմանագրի նախագիծը ուղարկելուց հետո **3 ամսյա ժամկետում** վերջինիս հետ կնքվում է հողի առուվաճառքի պայմանագիր: Նույն օրը ԱՏՏ-ի հետ կնքվում է նաև Լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Լրացուցիչ համաձայնագիր), որը ներկայացված է սույն կարգի **Հավելված Դ-ում**: Լրացուցիչ համաձայնագիրը նոտարական վավերացման ենթակա չէ:



6.2. ՀՀ ԿԳՊ ԻԽ-ն պայմանագրերը նոտարի կողմից վավերացնելուց հետո **30 օրյա ժամկետում** ներկայացնում է կադաստրի կոմիտե իրավունքների պետական գրանցում իրականացնելու համար:

6.3. Հողի առուվաճառքի պայմանագիրը և Լրացուցիչ համաձայնագիրը կնքվում են Հանձնաժողովի դրական որոշման հիման վրա:

Հանձնաժողովը կատարվելիք առուվաճառքի գործարքին վերաբերող փաստաթղթերն ՀՀ ԿԳՊ ԻԽ-ի կողմից ստանալուց հետո **հինգ աշխատանքային օրյա ժամկետում** ստուգում է վերջիններիս համապատասխանությունը սույն կարգին և ՀՀ ԿԳՊ պայմաններին:

6.4. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ստուգման արդյունքներով բացահայտված անճշտությունների դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ՀՀ ԿԳՊ ԻԽ-ին՝ դրանք փոփոխելու նպատակով:

6.5. Լիազոր մարմինը, հանձնաժողովի դրական որոշման հիման վրա, **3 բանկային օրվա** ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում օտարման միջոցով ձեռք բերված հողի փոխարինման արժեքի (փոխհատուցում) ու լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության վճարման մասին հայտ՝ նշելով փոխհատուցում ստացողներին վճարման ենթակա գումարները:

6.6. Հայտի հետ միասին ներկայացվում են անշարժ գույքի առուվաճառքի, լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագրի պատճենները, ինչպես նաև փոխհատուցում ստացողի կողմից ընտրված բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշվի բանկային վավերապայմանները:

6.7. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտն ստանալուց հետո **3 բանկային օրվա ընթացքում** փոխանցում է՝ ԱՏՏ-ի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ ձեռք բերվող հողի փոխարինման արժեքը (փոխհատուցումը), ինչպես նաև լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության գումարները:

6.8. Բանկը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից փոխհատուցման գումարներն ստանալուն պես կատարում է համապատասխան վճարումներ:

6.9. Բանկը լիազոր մարմնին է ներկայացնում քաղաքացու ցպահանջ ավանդային հաշվից քաղվածքը:

6.10. ՀՀ ԿԳՊ ԻԽ-ն կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում է ներկայացնում հողի փոխարինման արժեքը (փոխհատուցում) ԱՏՏ-ին փոխանցելու անդորրագրի պատճենը:

6.11. Ազդակիր անշարժ գույքի նկատմամբ ՀՀ-ի իրավունքը ծագում է օտարման պայմանագիրը կադաստրի կոմիտեում գրանցելու և հողի փոխարինման արժեքը (փոխհատուցում) ԱՏՏ-ին փոխանցելու անդորրագրի պատճենը կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում ներկայացնելու պահից:

## **7. Հարկադիր օտարման ընթացակարգի նախաձեռնում (անհրաժեշտության դեպքում)**

7.1. Սեփականության հարկադիր (դատական կարգով) օտարումը հնարավոր է միայն հանրության շահը ՀՀ կառավարության որոշմամբ գերակա ճանաչելու դեպքում:

7.2. Եթե օտարման պայմանագրի նախագիծը ԱՏՏ-ին ուղարկելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, օտարման պայմանագիրը չի կնքվում, ապա Լիազոր մարմինը մեկ ամսվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարություն հայտ ուղարկելու միջոցով, նախաձեռնում է

սեփականության օտարման դիմաց փոխհատուցման ենթակա գումարի դատարանի կամ նոտարի դեպոզիտ հաշվին (այսուհետ՝ դեպոզիտ) փոխանցումը՝ այդ մասին եռօրյա ժամկետում պատշաճ ձևով տեղեկացնելով ԱՏՏ-ին:

7.3. Փոխհատուցման գումարի չափի հաշվարկը պետք է կատարված լինի այն դեպոզիտ հանձնելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջվա դրությամբ:

7.4. Եթե փոխհատուցման գումարը դեպոզիտ հանձնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում, չի կնքվում օտարման պայմանագիրը, ապա Լիազոր մարմինը ՀԶՎԳՊ ԻԽ-ի միջոցով մեկամսյա ժամկետում սեփականության օտարման հայցով դիմում է դատարան:

7.5. Դատարանը գործը քննում և վճիռը կայացնում է հայցադիմումը ստանալու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

7.6. Եթե գումարը դեպոզիտ հանձնելու մասին տեղեկությունն ԱՏՏ-ին ուղարկելուց հետո մինչև դատարանի կողմից սեփականության օտարման մասին վճռի կայացումը ԱՏՏ-ն սահմանված կարգով ստանում է դեպոզիտ հանձնված գումարը, ապա սեփականության օտարման պայմանագիրը համարվում է կնքված:

7.7. ՀԶՎԳՊ ԻԽ-ն կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում է ներկայացնում կնքված պայմանագիրը (կամ դատարանի վճիռը) և գույքի դիմաց փոխհատուցումը դեպոզիտ հաշվին փոխանցելու անդորրագրի պատճենը:

**ԲԱԺԻՆ 3. ԲՆԱԿԱՐԱՆ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ) ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՄԲ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Վկայագիր ստացած անձը սահմանված ժամկետում բնակարանի (բնակելի տան) ընտրված տարբերակը ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկի միջոցներ ներգրավելու ցանկություն հայտնելու դեպքում ՀԶՎԳՊ ԻԽ-ի միջոցով դիմում է լիազոր մարմնին՝ իր դիմումի համաձայն հիփոթեքային վարկի տրամադրման հարցի քննարկմանը միջնորդելու խնդրանքով:
2. Լիազոր մարմինը վկայագիր ստացած անձի դիմումի համաձայն նրա կողմից ընտրված բանկին է ներկայացնում ստացված դիմումը և միջնորդագիր-գրություն վկայագրում նշված փոխհատուցման չափը որպես կանխավճար վաճառողի ցպահանջ ավանդային հաշվին փոխանցելու վերաբերյալ՝ բանկի կողմից դիմողին վարկ տրամադրելու մասին ընդունված որոշման հիման վրա անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիր կնքելու դեպքում:
3. Բանկը, լիազոր մարմնի միջնորդությունն ստանալով, սահմանված կարգով ուսումնասիրում է դիմողի վճարունակության պայմանները դրանք բանկի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, և ուսումնասիրության արդյունքները դրական լինելու դեպքում գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին և դիմողին վարկ տրամադրելու ընդունված որոշման մասին, իսկ ուսումնասիրության արդյունքները բացասական լինելու դեպքում տեղեկացնում է վարկի տրամադրման մերժման վերաբերյալ:
4. Վկայագիր ստացած անձը բանկի կողմից ընդունված դրական որոշման հիման վրա կնքված անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրի ու տրամադրված վկայագրի բնօրինակները մեկօրյա ժամկետում ներկայացնում է ՀԶՎԳՊ ԻԽ-ին:
5. ՀԶՎԳՊ ԻԽ-ն կատարված առուվաճառքի գործարքին վերաբերող՝ ներկայացված փաստաթղթերը **երկօրյա ժամկետում** ներկայացնում է Հանձնաժողով:
6. Հանձնաժողովը կատարված առուվաճառքի գործարքին վերաբերող փաստաթղթերն ստանալուց հետո **երկօրյա ժամկետում** ստուգում է կատարված գործարքի համապատասխանությունը սույն կարգի և ՀԶՎԳՊ-ին պայմաններին:
7. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ստուգման արդյունքներով բացահայտված անճշտությունների դեպքում փաստաթղթերը վերադարձվում են ԱՏՏ-ին՝ դրանք փոփոխելու նպատակով:
8. Լիազոր մարմինը անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրն ստանալուց հետո, հանձնաժողովի դրական որոշման հիման վրա, **3 բանկային օրվա** ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում վկայագրի միջոցով ձեռք բերված բնակարանի (բնակելի տուն) արժեքի, փոխհատուցման դրամային մասի և լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության վճարման մասին հայտ՝ նշելով փոխհատուցում ստացողին ու բնակարան (բնակելի տուն) վաճառողին վճարման ենթակա գումարները:
9. Հայտի հետ միասին ներկայացվում են տրամադրված վկայագրի, ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրի, ազդկիր գույքի (երի) փոխհատուցման պայմանագրերի, լրացուցիչ փոխհատուցման և օժանդակության մասին համաձայնագրի պատճենները, ինչպես նաև փոխհատուցում ստացողի ու բնակարան (բնակելի տուն) վաճառողի կողմից ընտրված բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշիվների բանկային վավերապայմանները:

10. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտն ստանալուց հետո **3 բանկային օրվա ընթացքում** փոխանցում է՝

ա) վաճառողի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ փոխանցում է վարկառուի վկայագրում նշված փոխհատուցման չափին համապատասխանող գումարը.

բ) վկայագրի միջոցով փոխհատուցում ստացողի կողմից ընտրված բանկում բացված ցպահանջ ավանդային հաշվին՝ պայմանագրով նախատեսված Դրամային փոխհատուցումը, ինչպես նաև լրացուցիչ փոխհատուցումը և օժանդակությունը՝ Լրացուցիչ համաձայնագրով նախատեսված:

#### **ԲԱԺԻՆ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՎԿԱՅԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

1. Վկայագիրն անվանական փաստաթուղթ է, որը հավաստում է վկայագիր ստացած անձի կողմից ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից պատրաստի բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման համար ազդակիր տան դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը:
2. Վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար փոխհատուցում ստանալու իրավունք ունեն Ծրագրի շրջանակներում ազդակիր անձինք ում բնակելի տունը ենթարկվում է ազդեցության:
3. Վկայագիրը տրամադրվում է կամավորության սկզբունքով՝ որպես ազդակիր տան դիմաց փոխհատուցման տարբերակ:
4. Վկայագիրն արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագանձման ու այլ անձի փոխանցման:
5. Վկայագրի միջոցով ձեռք բերվող բնակարանը (բնակելի տունը) պետք է համապատասխանի մշտական բնակության համար սահմանված պահանջներին:
6. Վկայագրում նշվող փոխհատուցման գումարը հանդիսանում է փոխհատուցում ստացողի և նրա ընտանիքի անդամների ընդհանուր համատեղ սեփականություն (եթե փոխհատուցվող տունը ընդհանուր համատեղ սեփականություն է) կամ բաժնային սեփականություն՝ փոխհատուցվող տան բաժիններին համապատասխան (եթե այդ տունը ընդհանուր բաժնային սեփականություն է), որի չափով ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը՝ ձեռք բերվող բնակարանի նկատմամբ:
7. Վկայագրի միջոցով ձեռք բերված բնակարանը (բնակելի տունը) սեփականության իրավունքի գրանցման պահից հաշված՝ 2 տարվա ընթացքում չի կարող վաճառվել, նվիրաբերվել, գրավ դրվել (բացառությամբ այն դեպքերի, երբ վկայագիր ստացողը վկայագրով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ներգրավում է հիփոթեքային վարկի միջոցներ), տրվել վարձակալության կամ օտարվել այլ եղանակով:
8. Վկայագիրը տրամադրվում է մեկ անգամ, մեկ օրինակից:
9. Վկայագրի կորստի դեպքում, վկայագիր ստացած անձի դիմումի հիման վրա, կորցրած վկայագիրը սահմանված կարգով անվավեր է ճանաչվում և դրա փոխարեն այդ անձին տրամադրվում է նոր վկայագիր:
10. Վկայագիր ստացած անձի մահվան դեպքում, նրա ընտանիքի անդամների դիմումի համաձայն, վկայագիրը կարող է վերաձևակերպվել ընտանիքի այլ անդամի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձի անունով: Այդ դեպքում վկայագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով:
11. Վկայագիր ստացած անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորելու մեկ այլ անձի իր անունից կատարել բնակարանի (բնակելի տան) գնման գործողությունը:
12. Վկայագիրը պարունակում է հետևյալ պարտադիր վավերապայմանները՝
  - ա) վկայագրի թողարկման սերիան և համարը.
  - բ) վկայագիրը տրամադրող մարմնի անվանումը, տրամադրման ամսաթիվը.
  - գ) վկայագրի միջոցով փոխհատուցում ստացող անձի անձնագրային (փախստականի վկայականի) տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը և վայրը.
  - դ) փոխհատուցվող տան չափը՝ քառակուսի մետրով, և տան դիմաց տրամադրվող փոխհատուցման չափը.
  - ե) վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման ժամկետը:

**13.** Վկայագրով ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) չափը պետք է լինի ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված տան ընդհանուր մակերեսից ոչ պակաս: Վկայագրով ձեռք բերվող բնակարանը (բնակելի տունը) կարող լինել նախկինում զբաղեցված տան ընդհանուր մակերեսից մեծ:

**14.** Վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման ժամկետը սահմանվում է 1 (մեկ) տարի: Ժամկետը կարող է երկարաձգվել ևս 6 ամսով միայն մեկ անգամ:

**15.** Վկայագրի միջոցով փոխհատուցում ստացող անձի ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձեռք բերվող բնակարանի (բնակելի տան) չափը (քառակուսի մետրով) կարող է պակաս լինի ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված տան ընդհանուր մակերեսից:

**16.** Վկայագրում ամրագրված փոխհատուցման չափից ցածր արժողությամբ բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը մնում է փոխհատուցում ստացող քաղաքացու տրամադրության տակ, իսկ ավելի բարձր արժեք ունեցող բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը կարող է լրացվել տնից բացի այլ գույքի դիմաց հաշվարկված փոխհատուցման գումարից կամ փոխհատուցում ստացողի սեփական միջոցների հաշվին:

**17.** Վկայագրի միջոցով, անձի ընտանիքի անդամների համաձայնությամբ, կարող է գնվել երկու բնակարան (բնակելի տուն), որոնց ընդհանուր չափը՝ քառակուսի մետրով, չպետք է պակաս լինի ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցված տան ընդհանուր մակերեսից: Ընդ որում, երկու բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագրերը կնքվում են միաժամանակ: Երկու բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու դեպքում փոխհատուցում ստացողը և նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամ կարող են լինել վկայագրի միջոցով ձեռք բերված երկու բնակարանից (բնակելի տնից) միայն մեկի համասեփականատեր:

**18.** Վկայագրի ստացած անձանց ընտանիքների չափահաս անդամների համաձայնության դեպքում 2 վկայագրի միջոցով կարող է գնվել մեկ բնակարան (բնակելի տուն), որի չափը չպետք է պակաս լինի երկու վկայագրերում նշված բնակարանի (բնակելի տուն) չափերի հանրագումարից:

**19.** Վկայագրում ամրագրված ժամկետում բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման տարբերակ չընտրվելու դեպքում վկայագիրը մարվում է և լիազոր մարմնի հետ կնքված պայմանագիրը համարվում է լուծված: Պայմանագիրը լուծելու դեպքում ԱՏՏ պահպանում է անշարժ գույքի նկատմամբ մինչև պայմանագրի կնքելը եղած իր իրավունքները:

**20.** Վկայագրի միջոցով բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման դեպքում վկայագիրը մարվում է, իսկ վկայագրի ստացած անձը հանվում է բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակներից՝ այդ ցուցակում ընդգրկված լինելու դեպքում:

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան/Գյումրի

«\_\_\_» \_\_\_\_\_, 20\_\_ թվականի

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմ 1)՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, որի անունից կանոնադրության/լիազորագրի հիման վրա հանդես է գալիս \_\_\_\_\_-ը, մի կողմից, և \_\_\_\_\_-ը (անձնագիր/ՆՔ \_\_\_\_\_, տրված \_\_\_\_\_, \_\_\_\_\_ կողմից, ծնված \_\_\_\_թ, հաշվառված \_\_\_\_\_ հասցեում), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմ 2, առանձին՝ Կողմ, համատեղ Կողմեր), հիմք ընդունելով «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_, 20\_\_ թ. -ին հաստատված «Հողերի ձեռք բերման և վերաբնակեցման պլան» (այսուհետ՝ ՀՁՎԳՊ) հաշվետվությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1.1. **Ծրագիր՝** տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության վարկային միջոցներով՝ «KfW» բանկի աջակցությամբ, և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է Կապսի կիսակառույց ջրամբարի վերականգնում և կառուցում:

1.2. **ՀՀ ԿԿ՝** Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

1.3. **Անշարժ գույք՝** ՀՀ ԱԳԿԿ-ի «\_\_\_» տարածքային ստորաբաժանման կողմից \_\_\_\_\_ թ. -ին տրված թիվ \_\_\_\_\_ սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա \_\_\_\_\_-ին ընդհանուր բաժնային (\_\_\_ բաժնով)/համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Ծիրակի մարզ, Ամասիա համայնք, Ջրածոր բնակավայր \_\_\_\_\_ հեցեում գտնվող \_\_\_\_\_ քմ ընդհանուր մակերեսով հողամաս և \_\_\_\_\_ քմ մակերեսով բնակելի տուն: Անշարժ գույքի փոխարինման արժեքը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

1.4. **Փոխհատուցում՝** ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՁՎԳՊ դրույթների համաձայն փոխհատուցումը բախկացած է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ գումարից (այսուհետ՝ Դրամական փոխհատուցում) և \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ գումարին համապատասխան տան գնման վկայագրից (այսուհետ՝ Վկայագիր):

## **2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

2.1. Կողմ 2-ը վաճառում է, իսկ Կողմ 1-ը սեփականության իրավունքով ձեռք է բերում Պայմանագրի 1.3 կետում նշված Անշարժ գույքը:

2.2. Կողմ 1-ը պարտավորվում է սույն պայմանագրի կնքման օրվանից 15 աշխատանքային օրյա ժամկետում Կողմ 2-ին վճարել Պայմանագրի 1.4 կետում նշված Դրամական փոխհատուցումը \_\_\_\_\_ բանկում բացված \_\_\_\_\_ հաշվի համարի վրա: Պայմանագրի 1.4 կետում նշված Վկայագիրը Կողմ 1-ը հանձնել է Կողմ 2-ին Պայմանագիրը ստորագրելու պահին:

2.3. Համաձայն ՀՀ ԿԿ աշխատակազմի «\_\_\_\_\_» սպասարկման գրասենյակի կողմից \_\_\_\_\_ թ. տրված թիվ ՄՏ \_\_\_\_\_ միասնական տեղեկանքի Անշարժ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան:

## **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Կողմ 2-ը պարտավորվում է Անշարժ գույքը հանձնել Կողմ 1-ին սույն պայմանագրի կնքման օրվանից \_\_\_\_\_ աշխատանքային օրյա ժամկետում:

3.2. Պայմանագրի կնքման, վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Կողմ 1-ի կողմից:

## **4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

1.1 Կողմերն իրենց իրավասության սահմաններում ՀՀ օրենսդրության կամ Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Եթե Կողմ 2-ը ընդգրկված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրում, ապա Կողմ 1-ի կողմից Պայմանագրի 1.4 կետում նշված Փոխհատուցումը Կողմ 2-ին փոխանցելու պահից Կողմ 2-ը հանվում է այդ ծրագրի ցուցակներից:

5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման և նոտարական վավերացման պահից:

5.3. Պայմանագրով նախատեսված Անշարժ գույքի նկատմամբ Կողմ 1-ի իրավունքը ծագում է Պայմանագիրը ՀՀ ԱԳԿԿ-ում գրանցելու և Կողմ 2-ի կողմից ձեռք բերված բնակարանի (բնակելի տան) առուվաճառքի պայմանագրի, Պայմանագրի 1.4 կետում նշված Դրամական փոխհատուցման փոխանցման անդորրագրի և Վկայագրով ձեռք բերված անշարժ գույքի վաճառողին անշարժ գույքի արժեքի փոխանցման անդորրագրի պատճենները ՀՀ ԿԿ-ի համապատասխան ստորաբաժանում ներկայացնելու պահից:

5.4. «Գույքահարկի մասին» օրենքի 8 հոդվածի համաձայն նոր սեթականատերերին են անցնում օտարման պահի դրությամբ փոխանակվող գույքի համար չմարված հարկային պարտավորությունները:



5.5. Սույն պայմանագիրը կնքված և ստորագրված է 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին: Պայմանագրի օրինակները տրվում են կողմերին «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածին համապատասխան **30 օրյա ժամկետում** գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ՀՀ ԱԳԿԿ-ում գրանցման ներկայացնելու համար:

5.6. Վկայագրում ամրագրված ժամկետում բնակարանի (բնակելի տան) ձեռքբերման տարբերակ չընտրվելու դեպքում վկայագիրը մարվում է և սույն պայմանագիրը համարվում է լուծված:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Կողմ 1»

Հայաստանի  
Հանրապետություն

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

«Կողմ 2»

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

**ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Երևան/Գյումրի

«\_\_\_» \_\_\_\_\_, 20\_\_ թվականի

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմ 1)՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, որի անունից կանոնադրության/լիազորագրի հիման վրա հանդես է գալիս \_\_\_\_\_ -ը, մի կողմից, և \_\_\_\_\_-ը (անձնագիր/ՆԲ \_\_\_\_\_, տրված \_\_\_\_\_, \_\_\_\_\_ կողմից, ծնված \_\_\_\_\_թ, հաշվառված \_\_\_\_\_ հասցեում ), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմ 2, առանձին՝ Կողմ, համատեղ Կողմեր), հիմք ընդունելով «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_, 20\_\_ թ. -ին հաստատված «Հողերի ձեռք բերման և վերաբնակեցման պլան» հաշվետվությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

**1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1.1. **Ծրագիր՝** տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության վարկային միջոցներով՝ «KfW» բանկի աջակցությամբ, և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է Կապսի կիսակառույց ջրամբարի վերականգնում և կառուցում:

1.2. **ՀՀ ԿԿ՝** Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

1.3. **Փոխարինվող գույք՝** ՀՀ ԱԳԿԿ-ի «\_\_\_» տարածքային ստորաբաժանման կողմից \_\_\_\_\_ թ. -ին տրված թիվ \_\_\_\_\_ սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա \_\_\_\_\_-ին ընդհանուր բաժնային (\_\_\_ բաժնով)/համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ջրածոր բնակավայր \_\_\_\_\_ հեսցեում գտնվող \_\_\_\_\_ քմ ընդհանուր մակերեսով հողամաս և \_\_\_\_\_ քմ մակերեսով բնակելի տուն: Փոխարինվող գույքի փոխարինման արժեքը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

1.4. **Փոխարինող գույք՝** ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրածոր բնակավայրի վարչական տարածքում կառուցվելիք գույք, որի նկարագիրը և էսկիզային և տեղագրական գծագիրը տրված է սույն պայմանագրի Հավելված 1-ում: Փոխարինող գույքի արժեքը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

1.5. **«Վերջնաժամկետ»՝** \_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ը:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.4. Սույն Պայմանագրով կողմերը պարտավորվում են ապագայում՝ մինչև Վերջնաժամկետը, կնքել Փոխարինվող գույքը Փոխարինող գույքով փոխարինելու վերաբերյալ անշարժ գույքի փոխանակության պայմանագիր (այսուհետ՝ Հիմնական պայմանագիր)՝ սույն պայմանագրով նախատեսված պայմաններով:

2.5. Կողմ 1-ը պարտավորվում է Կողմ 2-ին վճարել Փոխարինվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի միջև տարբերությունը, որը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ: Վճարման ժամկետը կսահմանվի Հիմնական պայմանագրում:

2.6. Համաձայն ՀՀ ԿԿ աշխատակազմի «\_\_\_\_\_» սպասարկման գրասենյակի կողմից \_\_\_\_\_ թ. տրված թիվ ՄՏ \_\_\_\_\_ միասնական տեղեկանքի Փոխարինվող գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան:

2.7. Փոխանակությունից հետո Փոխարինող գույքը անցնում է Կողմ 2-ին ընդհանուր բաժնային (\_\_\_ բաժնով)/համատեղ սեփականության իրավունքով:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Կողմ 1-ը իրավունք ունի.

3.1.1. պահանջել Կողմ 2-ից պատշաճ կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները,

3.1.2. մինչև Վերջնաժամկետը Հիմնական պայմանագիրը չկնքելու դեպքում լուծել սույն Պայմանագիրը:

3.2. Կողմ 1-ը պարտավոր է՝

3.2.1. Կատարել սույն պայմանագրի և Հիմնական պայմանագրի կնքման, վավերացման հետ կապված ծախսերը:

3.2.2. ցանկացած ժամանակ՝ ըստ Կողմ 2-ի գրավոր պահանջի, տրամադրել Փոխարինող գույքի հետ անմիջապես կապված Ծրագրի ընթացքի վերաբերյալ տեղեկություն:

3.3. Կողմ 2-ը իրավունք ունի.

3.3.1. պահանջել Կողմ 1-ից պատշաճ կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունները,

3.3.2. մինչև Վերջնաժամկետը Հիմնական պայմանագիրը չկնքելու դեպքում լուծել սույն Պայմանագիրը:

3.4. Կողմ 2-ը պարտավոր է.

3.4.1. մինչև Վերջնաժամկետը ձեռնպահ մնալ Փոխարինվող գույքը երրորդ անձանց օտարելուց,

3.4.2. մինչև Վերջնաժամկետը թույլ չտալ Փոխարինվող գույքի նկատմամբ ցանկացած տեսակի սահմանափակումների կամ երրորդ անձանց իրավունքների ծագումը,

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ** Կողմերն իրենց իրավասության սահմաններում  
ՀՀ օրենսդրության կամ Պայմանագրի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ  
կատարման համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության  
օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

5.1. Եթե Կողմ 2-ը ընդգրկված է պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային  
շինարարության ծրագրում, ապա Կողմ 1-ի կողմից Փոխարինող գույքը Կողմ 2-ին  
տրամադրվելու պահից Կողմ 2-ը հանվում է այդ ծրագրի ցուցակներից:

5.2. Սույն պայմանագիրը հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածով  
նախատեսված նախնական պայմանագիր և ուժի մեջ է մտնում կնքման և նոտարական  
վավերացման պահից:

5.3. Սույն պայմանագիրը փոխարինում է կողմերի միջև բոլոր նախկին բանավոր և գրավոր  
պայմանավորվածություններն ու համաձայնությունները, որոնք վերաբերում են սույն  
պայմանագրի առարկային, և սույն պայմանագրի կնքմամբ բոլոր նման  
պայմանավորվածություններն ու համաձայնությունները համարվում են ուժը կորցրած:

5.4. Սույն պայմանագիրը կնքված և ստորագրված է 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր  
իրավաբանական ուժ, իսկ դրանց միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում  
է նոտարի մոտ պահվող օրինակին:

### **6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**«Կողմ 1»**

Հայաստանի  
Հանրապետություն

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

**«Կողմ 2»**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

ստորագրություն

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան/Գյումրի

«\_\_\_» \_\_\_\_\_, 20\_\_ թվականի

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմ 1)՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, որի անունից կանոնադրության/լիազորագրի հիման վրա հանդես է գալիս \_\_\_\_\_-ը, մի կողմից, և \_\_\_\_\_-ը (անձնագիր/ԼՔ \_\_\_\_\_, տրված \_\_\_\_\_, \_\_\_\_\_ կողմից, ծնված \_\_\_\_թ, հաշվառված \_\_\_\_\_ հասցեում), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմ 2, առանձին՝ Կողմ, համատեղ Կողմեր), հիմք ընդունելով «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից \_\_\_\_\_, 20\_\_ թ. -ին հաստատված «Հողերի ձեռք բերման և վերաբնակեցման գործողությունների պլան» հաշվետվությունը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. **Ծրագիր՝** տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության վարկային միջոցներով՝ «KfW» բանկի աջակցությամբ, և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Ջրային ռեսուրսների համատեղված կառավարում (ՋՌՀԿ)/ Ախուրյան գետ, Փուլ 1» ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է Կապսի կիսակառույց ջրամբարի վերականգնում և կառուցում:

1.2. **ՀՀ ԿԿ՝** Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

1.3. **Փոխարինվող գույք՝** ՀՀ ԱԳԿԿ-ի «\_\_\_» տարածքային ստորաբաժանման կողմից \_\_\_\_\_ թ. -ին տրված թիվ \_\_\_\_\_ սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա \_\_\_\_\_-ին ընդհանուր բաժնային (\_\_\_ բաժնով)/համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ջրաձոր բնակավայր \_\_\_\_\_ հեցեում գտնվող \_\_\_\_\_ քմ ընդհանուր մակերեսով հողամաս և \_\_\_\_\_ քմ մակերեսով բնակելի տուն: Փոխարինվող գույքի փոխարինման արժեքը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

1.4. **Փոխարինող գույք՝** ՀՀ ԱԳԿԿ-ի «\_\_\_» տարածքային ստորաբաժանման կողմից \_\_\_\_\_ թ. -ին տրված թիվ \_\_\_\_\_ սեփականության իրավունքի գրանցման վկայականի հիման վրա \_\_\_\_\_-ին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ջրաձոր բնակավայր \_\_\_\_\_ հեցեում գտնվող \_\_\_\_\_ քմ ընդհանուր մակերեսով հողամաս և \_\_\_\_\_ քմ մակերեսով բնակելի տուն: Փոխարինող գույքի արժեքը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.8.Սույն Պայմանագրով Կողմերը պարտավորվում են Փոխարինվող գույքը փոխանակել Փոխարինող գույքի հետ:

2.9.Կողմ 1-ը պարտավորվում է սույն պայմանագրի կնքման օրվանից \_\_\_\_ աշխատանքային օրյա ժամկետում Կողմ 2-ին վճարել Փոխարինվող գույքի փոխարինման արժեքի և Փոխարինող գույքի արժեքի միջև տարբերությունը, որը կազմում է \_\_\_\_\_ (գումարը տառերով) ՀՀ դրամ:

2.10. Համաձայն ՀՀ ԿԿ աշխատակազմի «\_\_\_\_\_» սպասարկման գրասենյակի կողմից \_\_\_\_\_ թ. տրված թիվ ՄՏ \_\_\_\_\_ միասնական տեղեկանքի Փոխարինվող գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան:

2.11. Համաձայն ՀՀ ԿԿ աշխատակազմի «\_\_\_\_\_» սպասարկման գրասենյակի կողմից \_\_\_\_\_ թ. տրված թիվ ՄՏ \_\_\_\_\_ միասնական տեղեկանքի Փոխարինող գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան:

2.12. Փոխանակությունից հետո Փոխարինող գույքը անցնում է Կողմ 2-ին ընդհանուր բաժնային (\_\_\_ բաժնով)/համատեղ սեփականության իրավունքով:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Կողմերը պարտավորվում են անշարժ գույքերը միմյանց հանձնել սույն պայմանագրի կնքման օրվանից \_\_\_\_ աշխատանքային օրյա ժամկետում:

3.2.Պայմանագրի կնքման, վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են Կողմ 1-ի կողմից:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

